

УНИВЕРСИТЕТ
ГРИГОР НАРЕКАЦИ



UNIVERSITY
GRIGOR NAREKATSY

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ
ՀԱՍՏԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ

*Հասարակական գիտությունների
հանդես*

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ

Հասարակական գիտությունների

հանդես

2022-2 (14)

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

*Գլխավոր խմբագիր՝ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

*Главный редактор: ВАРДАН АКОПЯН
Ответственный секретарь: АМАЛИЯ ГРИГОРЯН*

*Chief Editor: VARDAN HAKOBYAN
Executive Secretary: AMALYA GRIGORYAN*

© Հանդեսում գետեղված հեղինակներ, 2022
© Ստեփանակերտի «Գր. Նարեկացի» համալսարան, 2022
© «Դիզակ պլյուս» հրատարակչություն, 2022

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐՄԵՆ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԱՎԱՆԵՍՅԱՆ ՎԱԼԵՐԻ – պատմական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ պրոռեկտոր

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր

ԲԱԲՍՅԱՆ ԴԱՎԻԹ - պատմական գիտությունների դոկտոր, ԱՀ ԱԳ նախարար

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Արևմտահայերենի, հայագիտության գիտահետազոտական Լուտովիկա և Յակոբ Այնթապլեան կենտրոնի տնօրեն, Որակի ապահովման պատասխանատու

ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱԶԱՏ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի Հայ-ռուսական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ

ԹՈՎՍԱՍՅԱՆ ԱՐԿԱՂԻ – Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի մանկավարժության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

ԹՈՎՍԱՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի օտար լեզվի դասախոս

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՎԱԿ – իրավաբանական գիտությունների թեկնածու, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր

ՏԷՐ - ՄԱԹՈՍԵԱՆ ՊԵՏՐՈՍ – պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեբրասկա-Լինքոլնի համալսարանի դասախոս, Հայագիտական ուսմանը ընկերության նախագահ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ՄԱՆԱՍՅԱՆ ԱԼԵԶՄԱՆԴ – փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական քարտուղար

ՄԿՐՏՉՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ – Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀՈՎԻԿ – Բանասիրական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի դասախոս

ՄՈՒՐԱՂՅԱՆ ՍԱՄՎԵԼ – Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ-ի Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՐՔՄԵՆԻԿ – Բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՔԱՌԻ ՊԻՏԵՐ – ամերիկյան «ՅուՍիԷԼԵյ» (Լոս Անջելես, Կալիֆոռնիա) համալսարանի Նարեկացու անվան հայագիտության ամբիոնի ղեկավար, Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հայագետ:

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

АВАКЯН АРЦРУН – доктор филологических наук, профессор, декан филологического факультета ЕГУ

АВАНЕСЯН АРМЕН – кандидат филологических наук, старший научный сотрудник литературного института имени М. Абегяна НАН РА

АВАНЕСЯН ВАЛЕРИЙ – доктор исторических наук, проректор АрГУ

АРЗУМАНЯН ЛИЛИТ – доктор филологических наук, профессор, ректор Ереванского государственного института театра и кино

АКОПЯН СЕВАК – кандидат юридических наук, проректор по научной части и международного сотрудничества Степанакертского университета «Григор Нарекаци»

БАБАЯН ДАВИД – доктор исторических наук, министр иностранных дел РА

ГРИГОРЯН АМАЛИЯ – кандидат филологических наук, доцент, директор западно-армянского арменоведческого научно-исследовательского центра Лютовики и Акопа Айнтаплеан Степанакертского университета «Григор Нарекаци», ответственная по обеспечению качества

ДЕВРИКЯН ВАРДАН – доктор филологических наук, директор литературного института имени М. Абегяна НАН РА

ЕГИАЗАРЯН АЗАТ – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой армянского языка и литературы Ереванского армяно-русского университета

КАУ ПИТЕР – руководитель арменоведческой кафедры американского университета «ЮСиЭлЭй» (Лос-Анджелес, Калифорния) имени Нарекаци, доктор, филологических наук, профессор, арменовед.

МАНАСЯН АЛЕКСАНДР – доктор философских наук, член-корреспондент НАН РА, профессор кафедры философии и логики ЕГУ

МАРГАРЯН СИРАНУШ – кандидат филологических наук, научный секретарь литературного института имени М. Абегяна НАН РА

МКРТЧЯН ЭДУАРД – доктор филологических наук, профессор, преподаватель кафедры армянского языка и литературы Степанакертского университета "Григор Нарекаци"

МУРАДЯН САМВЕЛ – доктор филологических наук, профессор ЕГУ, заведующий кафедрой армянской литературы и истории имени академика Г. Тамразяна

МУСАЕЛЯН ОВИК – доктор филологических наук, преподаватель кафедры литературы и журналистики АрГУ

НИКОГОСЯН АРКМЕНИК – кандидат филологических наук, старший научный сотрудник
литературного института имени М. Абеяна НАН РА

ТОВМАСЯН АРКАДИЙ – преподаватель Степанакертского университета «Григор Нарекаци»,
кандидат педагогических наук, профессор

ТОВМАСЯН ЛУСИНЕ – кандидат филологических наук, доцент, преподаватель кафедры языков
Степанакертского университета «Григор Нарекаци»

ТЕР - МАТЕВОСЯН ПЕТРОС – доктор, исторических наук, профессор преподаватель
университета Небраски в Линкольне, председатель организации
арменоведческого исследования, США.

EDITORIAL COUNCIL

ARTSRUN AVAGYAN - Doctor of Philology, Professor, Dean of the Faculty of Philology of YSU.

ARMEN AVANESYAN - Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Institute of Literature after M. Abeghian of NAS of RA.

VALERI AVANESYAN - Doctor of Historical Sciences, ASU Vice-rector.

LILIT ARZUMANYAN - Doctor of Philology, Professor, Rector of Yerevan State Institute of Theatre and Cinematography.

DAVIT BABAYAN - Doctor of Historical Sciences, Minister of Foreign Affairs

AMALYA GRIGORYAN - Candidate of Philological Sciences, Docent, Director of Lutovica and Agob Aintablean Western-Armenian and Armenology Research Centre at Stepanakert «Grigor Narekatsy» University, in charge of Quality Assurance.

VARDAN DEVRIKYAN - Doctor of Philosophy, Rector at the Institute of Literature after M. Abeghian of NAS RA.

AZAT EGHIAZARYAN - Doctor of Philology, Professor, Head of the Armenian Language and Literature Chair at Armenian-Russian University.

ARKADI TOVMASYAN - Lecturer of the Chair of Pedagogy of "Grigor Narekatsi" University of Stepanakert, Candidate of Pedagogy Sciences, Professor

LUSINE TOVMASYAN - Candidate of Philological Sciences, Associate, Lecturer of Foreign Language at Stepanakert «Grigor Narekatsy» University.

SEVAK HAKOBYAN - Candidate of Law Sciences, Vice-Rector for Scientific-International Cooperation at Stepanakert "Grigor Narekatsy" University

PEDROS DER-MATOSSIAN-Doctor in Historical Science, Professor in the University of Nebraska-Lincoln, The United States of America, President of the Society for Armenian Studies

ALEXANDR MANASYAN - Doctor of Philosophy, Corresponding Member of NAS RA, Professor of the Chair of Theoretical Philosophy and Logic of YSU.

SIRANOUSH MARGARYAN - Candidate of Philological Sciences, Scientific Secretary at the Institute of Literature after M. Abeghian of NAS RA.

EDUARD MKRTCHYAN - Doctor of Philology, Professor, Lecturer of Armenian Language and Literature Chair at Stepanakert "Grigor Narekatsy" University

HOVIK MUSAELYAN - Doctor of Philosophy, Lecturer of the the Literature and Journalism Chair at ASU.

SAMVEL MURADYAN – Doctor of Philology, Professor, YSU, Head of the History of Armenian Literature Chair named after Academician Hr. Tamrazyan.

ARQMENIK NIKOGHOSYAN - Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Literature Institute after M. Abeghian of NAS of RA.

PETER QAU - Narekatsi Professor of Armenian Studies at UCLA, Doctor in Philological Sciences (Los Angeles, California), Professor, Armenologist.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրականագիտություն

Մենք Քումունց

Մովսես Խորենացին Ստեփանոս Օրբելյանի պատմության, Ղազար Փարպեցու «Թղթի» մեջ և ավանդազրույցներում 15

Հրաչյա Սարիբեկյան

«Փարվանա». Էզոթերի ընթերցում 28

Արքմենիկ Նիկողոսյան

Արևմտահայ պոեզիան՝ Վլադիմիր Գիրակոսյանի գնահատմամբ 33

Արմեն Ավանեսյան

Գուրգեն Խանջյանի արձակի պոետիկան ու գաղափարական հարցադրումները 38

Տաթև Սողոմոնյան

Սմբատ Շահագիրը և համաշխարհային ընդվզումն ու թախիծը 47

Զինաիդա Բալայան

Առաքել Կոստանդյանցի «Պատմություն Արցախի»-ն 54

Սոսե Բողոզյան

Նոր Զուղայի Սբ. ամենափրկիչ վանքի գրչագրության ու տպագրության ոսկեդարը 59

Լեզվաբանություն

Էդուարդ Մկրտչյան

Պատմական բառագիտություն (Ձևությաբանություն և տարրաբանություն) 68

Ելենա Գրիգորյան

Շեշտադրության առանձնահատկությունները ռուսերեն, անգլերեն և հայերեն լեզուներում 79

Մանկավարժություն

Էլլադա Բադդասարյան

Օքսանա Գասպարյան

Ուսուցման կազմակերպման խմբային եղանակից կոլեկտիվ եղանակի անցման դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները 86

Լիանա Սանթրյան

Հայերենի ուսուցման խնդիրները Շուշիի տեխնոլոգիական համալսարանի միջին մասնագիտական կրթական համակարգում 95

Հասմիկ Ստեփանյան

Հիբրիդային ուսուցումը՝ որպես կրթության շարունակականության ապահովման երաշխիք 101

Մեեր Հարությունյան

Գեղամ Միքայելյան

Նժդեհի ուսմունքը սերունդների հայրենասիրական
դաստիարակության մասին 107

Հռիփսիմե Մարոնյան

Պետրոս Մարոնյան

Հագուստի նախագծման և գծագրության միջառարկայական
կապի հիմնավորումը 114

Քաղաքագիտություն

Ալեքսանդր Մանասյան

Ժողովուրդների ազատ ինքնորոշման միջազգային իրավունքի
խեղաթյուրումները 120

Իրավագիտություն

Սոնա Համբարձումյան

Մարդասիրության, իրավախախտման և պատժի համաչափության
գաղափարները Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգության»
պոեմում (ԲԱՆ Ա- ԲԱՆ ԺԹ) 130

Վլադիմիր Հովսեփյան

Պետականության և իրավունքի հարցերն Արցախի վիճադրում 137

Գրետա Արզումանյան

Արմինե Քարդումյան

Անմեղության կանխավարկածի որոշ հիմնախնդիրները
ԱՀ քրեական դատավարությունում 156

Հովհաննես Բարդախյան

«Գայլեր-ռազմիկներ»-ը՝ որպես չինական դիվանագիտության և քաղաքական
վերնախավերի հատուկ ֆենոմեն Սի Յզինպինի կառավարման օրոք 166

Պատմություն

Մելանյա Բալայան

Աղվանից կաթողիկոսության էթնիկ պատկանելիության հիմնահարցի շուրջ 175

Տնտեսագիտություն

Մանուշակ Մկրտչյան

Գենդերային հավասարություն և տնտեսական աճ.
ցուցանիշների փոխկախվածություն 184

СОДЕРЖАНИЕ
Литературоведение

Мгер Кумунц

Мовсес Хоренаци в истории Степаноса Орбеляна, в «Письме» Газара
Фарпеци и в сказаниях 15

Грачи Сарибекян

«Парвана»: Эзотерическое чтение 28

Арменик Никогосян

Западноармянская поэзия в оценке Владимира Киракосяна 33

Армен Аванесян

Поэтические и идеологические вопросы прозы Гургена Ханджяна 38

Татев Согомонян

Смбат Шаазис и всемирное восстание, тоска 47

Зинаида Балаян

Аракел Констандянц и история Арцаху 54

Сосе Богозян

Золотой век искусства переписывания древних рукописей и печати
монастыря сурб аменапркич (св. всеспасителя) Новой Джульфы 59

Языкознание

Эдуард Мкртчян

Историческая лексика (морфемика и элементология) 68

Елена Григорян

Особенности ударения в русском, английском и армянском языках 79

Педагогика

Эллада Багдасарян

Оксана Гаспарян

Сложности перехода группового приема организации обучения в
коллективный и пути их преодоления 86

Лиана Сантрян

Проблемы преподавания армянского языка в системе среднего
профессионального образования Шушинского технологического университета 95

Асмик Степанян

Гибридное обучение как гарантия обеспечения преемственности образования 101

Мгер Арутюнян

Гегам Микаелян

Учение Нжде о патриотическом воспитании поколений 107

Рипсима Маронян

Петрос Маронян

Обосновани межпредметной связи между конструированием
одежды и черчением 114

Политическая наука

Александр Манасян

Искажения принципа международного права о свободном
самоопределении народов 120

Юриспруденция

Сона Амбарцумян

"Идеи человеколюбия и правонарушения и соразмерности наказания в поэме"
Книга скорбных песнопений" Григора Нарекаци" (Бан А- Бан ЖТ) 130

Владимир Осипян

Вопросы государственности и права в литографиях Арцаха 137

Грета Арзуманян

Армине Кардунян

Некоторые основы презумции невинности в уголовном судопроизводстве 156

Оганес Бардакчян

«Волки-воины» как особый феномен китайской дипломатии и политических
элит в годы правления Си Цзиньпина 166

История

Меланя Балаян

Об этнической принадлежности алуанского католикосата 175

Экономика

Манушак Мкртчян

Гендерное равенство и экономический рост: взаимообусловленность показателей 184

CONTENT

Literary Criticism

Mher Kumunts

Movses Khorenatsi in the History of Stepanos Orbelian, in the "Letter" of Gazar Parpetsi and in the Traditions 15

Hrachya Saribekyan

«Parvana»: Esoteric reading 28

Arkmenik Nikoghosyan

Western Armenian Poetry as Assessed by Vladimir Kirakosyan 33

Armen Avanesian

The Poetic and Ideological Questions of Gurgen Khanjian's Prose 38

Tatev Soghomonyan

Smbat Shahaziz and the Global Uprising and Melancholy 47

Zinaida Balayan

Araqel Kostandyants` "History of Artsakh 54

Soseh Boghוזian

The Golden Age of the Art of Rewriting of Ancient Manuscripts and Printing of Surb Amenaprkich Monastery (St. All-Saviour) of new Julfa 59

Linguistics

Eduard Mkrtchyan

Historical Lexicology (Morphemics and Elementology) 68

Yelena Grigoryan

Features of Stress in Russian, English and Armenian Languages 79

Pedagogy

Ellada Baghdasaryan

Oksana Gasparyan

The Difficulties of Transitioning from a Group Method of Teaching to a Collective Method and Ways to Overcome It 86

Liana Santryan

Problems of Teaching Armenian in the Secondary Professional Education System of Shushi University of Technology 95

Hasmik Stepanyan

Hybrid Training as a Guarantee to Ensure Continuation of Education 101

Mher Harutyunyan

Gegam Mikayelyan

Nzhdeh Teaching about the Patriotic Education of Generations 107

Hripsime Maronyan

Petros Maronyan

The Basis of the Interdisciplinary Connectedness Between Fashion Design and Sketching 114

Political Science

Alexander Manasyan

*Distortions of the Principle of International Law on the Free
Self-Determination of Peoples* 120

Jurisprudence

Sona Hambardzumyan

*The ideas of humanitarianism, proportionality of offense and punishment
in Grigor Narekatsi's poem "Book of Sorrows" (BAN A- BAN ZT)* 130
Vladimir Hovsepyan

The Questions of a Statehood and Law in Artsakh`s Inscriptions 137

Greta Arzumanyan

Armine Kardumyan

*Some Basic Issues of the Presumption of Innocence in Criminal Proceeding
in the republic of Artsakh* 156

Hovhannes Bardakchyan

*"Wolf-Warriors" as a special Phenomenon of
Chinese Diplomacy and Political Elites During the Reign of Xi Jinping* 166

History

Melanya Balayan

About the Ethnic Belonging of the Aluan Catholicosate 175

Economics

Manushak Mkrtchyan

Gender Equality and Economic Growth: Indicator Interdependence 184

**ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ,
ՂԱԶԱՐ ՓԱՐԱԴԵՑՈՒ «ԹՂԹԻ» ՄԵՋ ԵՎ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ**

Ս. Օրբելյանի «Սյունիքի պատմությունը» Սյունիքի քերթողական դպրոցի լավագույն ստեղծագործություններից է, որտեղ ներկայացված է նաև Պետրոս եպիսկոպոսը: Ս. Օրբելյանը չի ներկայացնում Ս. Խորենացու ծննդյան, մահվան և կյանքի հետ կապված մանրամասները:

Կասկածից վեր է, որ Պետրոս եպիսկոպոսը եղել է Ս. Խորենացու աշակերտը և կրթությունը ստացել Սյունիքում: Այս փաստը կարող է նպաստել Ս. Խորենացու կյանքին վերաբերող որոշ հարցերի պարզաբանմանը: Ս. Օրբելյանը հաստատում է, որ դպրոցի ամենահայտնի ներկայացուցիչը, կամ գուցե նույնիսկ հիմնադիրը Ս. Խորենացին է:

Համոզված ենք, որ Ղ. Փարպեցին «Թուղթ Վահան Մամիկոնյանի մասին» աշխատանքում խոսում է Մովսես Խորենացու մասին, որին անվանել է «երանելի փիլիսոփա», ինչը հաստատվում է Ստեփանոս Օրբելյանի կողմից:

Շատ հաճախ Ս. Խորենացու ծննդյան և մահվան վայրերը սահմանվում են բանավոր ավանդույթային, սակայն անտեսվել են բանավոր այն գրույթները, որոնք պահպանվել են Սյունիքում: Այստեղ բերված բանավոր պատմությունները վերաբերում են Ս. Խորենացու կյանքին և ստեղծագործությանը:

Սյունիքի ավանդազրույթներում պահպանված տեղեկություններն իրենց ժամանակագրական, տեղագրական և այլ նշանակություններով համընկնում են Ղ. Փարպեցու տեղեկություններին: Պահպանվել են տեղանուններ, հուշարձաններ և այլ գրույթներ, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ Ս. Խորենացին իր կյանքի վերջին տարիներն անցկացրել է Սյունիքում, որտեղ, ինչպես կարծում են, ծնվել է:

Բանալի բառեր՝ Մովսես Խորենացի, Ստեփանոս Օրբելյան, Ղազար Փարպեցի, քերթողական դպրոց, պատմություն, Սյունիք, Խորենա, Կոռնիձոր, բանահյուսություն:

1. Մուտք

Ս. Օրբելյանը միջնադարի այն հեղինակներից է, ովքեր քրիստոնեական առաջնորդությամբ անդրադարձել են այն բոլոր դեպքերին, որոնք հատկանշական են եղել Հայոց պատմության համար՝ Սյունիքի պատմության համատեքստում:

Հոգևոր և լուսավորչական գործունեությանը զուգահեռ Ս. Օրբելյանը ստեղծել է գիտական այնպիսի արժեքներ, որոնցում ընդգրկված փաստերն ու տեղեկությունները մինչ օրս գրեթե երկմտությունների տեղիք չեն տվել: Նրա «Պատմություն նահանգին Սիսական» կամ «Սյունիքի պատմություն» աշխատությունը կառուցվածքային և շարադրելու-փաստագրելու մեթոդաբանությամբ կրում է Սյունյաց քերթողական դպրոցի

ավանդությունները, որոնց ժամանակին հետևել են մատենագիտական մեծարժեք աշխատությունների հեղինակները և, անշուշտ, ինքը՝ Ս. Օրբելյանը: Ինչպես Խորենացին, այնպես էլ Ս. Օրբելյանը, հետևողական են եղել պատմության աղբյուրների ընտրության ու դրանց հավաստիության ճշգրտման առումով, ուստի հայ հեղինակների վկայություններով, տեղեկություններով ու մեկնաբանություններով չեն բավարարվել: Անհրաժեշտության և հնարավորության դեպքում օգտագործվել են նաև օտար պատմիչ-հեղինակների երկերը: Փաստերի ու իրադարձությունների համար հաճախ հիմնվել են վավերագրություն պարունակող փաստաթղթերի, թագավորների, իշխանների, կաթողիկոսների, եպիսկոպոսների՝ տարբեր ժանրերի գրվածքների, ժողովրդական ավանդապատում-գրույցների, հետագայում նաև՝ վիմական արձանագրությունների և այլ սկզբնաղբյուրների վրա¹:

Ինչպես Ս. Խորենացին, այնպես էլ Ս. Օրբելյանը, մեր պատմությունը աղերսել են աշխարհի արարչագործության հետ: Սա չափազանց ուշագրավ մեթոդ է կամ համահավաք պատմության շարադրանքի համար պարտադիր սկզբունք: Եվ եթե ուշադրություն դարձնենք նրանց շարադրանքների «մուտքի» գաղափարական խտացմանը, ապա կնկատենք, որ պատմական երկու երկերում էլ առանցքային է խորհելու, մտածելու կարողության բանաձևումը, որ հակամետ է պատմական երկ շարադրելու պատրաստականությանը: Մ. Խորենացին գրում է. «... մենք բանականության պատճառով, ինչպես ասվում է, Աստծու պատկերն ենք, և մյուս կողմից՝ բանականության արդյունքը խոհականությունն է»², Ս. Օրբելյանը, ըստ էության, բյուրեղացնում է խոհականության գաղափարական խտացումը «ծանթագրումով». «...բոլոր շնորհների սկիզբը խոհականությունն է...Խոհականությունն է շնորհների սկիզբը, որովհետև մարդկանց մեջ եղող բոլոր շնորհները՝ հոգեկան և մարմնական, խոսքով թե գործով, նախապես մտածվում են խոհականությամբ»³: Այս և այլ գուգադրումները խոսում են մի հետագծի մասին, որ սկզբունքորեն դիմագծում և շրջանակում է հայ քերթողական դպրոցի պատկերը: Ամենին էլ ջանքեր պետք չեն ապացուցելու, որ Ս. Օրբելյանը խորենացիական դպրոցի լավագույն սաներից մեկն է, ով ոչ միայն հետևել, այլև զարգացրել է պատմագիտական մոտեցումները. Տեղագրություն (Սյունիք և հարակից տարածքներ), վիմագրական տեղեկությունների և փաստաթղթերի հրապարակում, անդրադարձ այլ ժողովուրդների պատմությանը (մոնղոլներ, Այսրկովկասի ժողովուրդներ և այլն): Նշվածներով չեն սահմանափակվում Սյունյաց դպրոցի դերն ու նշանակությունը: Այս և սրան առնչվող հարցերի մասին հրատարակվել են բազմաթիվ աշխատություններ, քննական երկեր, եղել են արժևորումներ, և գիտության հարաշարժությունը ենթադրում է, որ կլինեն դեռ նորերը՝ նոր բովանդակությամբ, նոր փաստերով ու գնահատականներով:

¹ Ս. Օրբելյանի աշխատության համար աղբյուր հանդիսացած ցանկը կարելի է տեսնել այս հոման տակ՝ **Խորենացի Մ.**, Պատմություն հայոց, թարգմ., ներած. և ծանոթ. Ս. Մալխասյանցի, Եր., «Հայաստան», 1997, էջ 20-21:

² **Խորենացի Մ.**, Պատմություն հայոց, թարգմ., ներած. և ծանոթ. Ս. Մալխասյանցի, Եր., «Հայաստան», 1997, էջ 20-68:

³ **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթությունները՝ Ա. Աբրահամյանի, Եր., «Սովետ. գրող», 1986, էջ 65:

Դժվար է ասել, թե Ս. Օրբելյանի շրջանում ինչ տեսանկյունից է դիտարկվել Մ. Խորենացու պատմությունը, և որքանով են ծանոթ եղել պատմահոր կյանքի և գործի մանրամասներին: Ուշագրավ է նկատված, որ «ուշ ժամանակի հեղինակների հաղորդած տեղեկություններն (համենայն դեպս՝ մեծ մասամբ՝ Մ.Ք.) անարժեք են իբրև անստույգ, նույնիսկ հակասող հեղինակի հաղորդած տեղեկություններին»⁴: Ս. Օրբելյանը պատմությունը շարադրելիս բավականին հետևողական է եղել, և հենց դրա համար ինչպես Մ. Խորենացու, այնպես էլ Ս. Օրբելյանի երկն, անշուշտ, պիտի համարվի քննական: Հավանաբար՝ լավագույնս ծանոթ լինելով Մ. Խորենացու «Պատմությանը»՝ այնուամենայնիվ, ստուգել, զուգադրել է տեղեկությունը կամ շարադրանքը՝ անհրաժեշտության դեպքում նաև նշելով աղբյուրը կամ անուղղակի ձևով հղում տալով: Հավանական է, որ արդեն Ս. Օրբելյանի շրջանում Մ. Խորենացու կյանքին վերաբերող մանրամասները խնդրահարույց են եղել, և ինչպես հետագայում, իր օրոք էլ Սյունյաց պատմիչը չի նշում պատմահոր ծննդի մասին՝ հավանաբար, ստույգ տեղեկությունների բացակայության պայմաններում կամ էլ հոգևոր որոշակի հայացքներից ելնելով: Բայցևայնպես, նրա ուշադրությունից դուրս չի մնացել Մ. Խորենացու «Հայոց պատմությունը»: Հնարավոր է, ինչպես ասվեց, կրոնական որոշ ըմբռնումներ՝ քաղկեդոնականությանն առնչվող, որ հետագայում վերագրվել է Մ. Խորենացուն, հետ են պահել հոգևորական հայացքներին խստորեն հետևող Սյունյաց եպիսկոպոսին: Այս և նման հարցեր կարող են պարզաբանվել Ս. Օրբելյանի «Սյունիքի պատմության» այն հատվածներում, որոնք վերաբերում կամ անուղղակի աղերսվում են Մովսես Խորենացուն⁵:

2. Քերթողահայր Խորենացին և քերթող Պետրոս եպիսկոպոսը՝ ըստ Ս. Օրբելյանի «Պատմության»

Ս. Օրբելյանի «Պատմության» մեջ Մովսես Խորենացուն վերագրվող տեղեկությունների, նաև դրանց շուրջ մինչև օրս եղած ուսումնասիրությունների վերաբերյալ մեր քննությունը կարող է նաև նպաստել պատմահոր կյանքի ու գործի հետ կապված որոշ հարցերի լուսաբանմանը: Բնարկե, Մ. Խորենացուն նվիրված աշխատանքները բավականին շատ են, և ճիշտ է նկատված՝ «Ամեն մի բանասեր, որ զբաղվել է հայոց գրականությամբ, շատ կամ քիչ զբաղվել է և Խորենացիով, նրա պատմությամբ»⁶, բայց մեր նպատակն է Մ. Խորենացու՝ Սյունիքում ծնված կամ ապրած լինելու, այդտեղից՝ Խորենացի անունը կրելու տեսակետի ամրապնդումը: Մինչև օրս խնդրահարույց են Մ. Խորենացու՝ 6-րդ դարի Սյունյաց եպիսկոպոս Մովսեսին ուսուցչություն անելու, Սյունյաց քերթողական դպրոցի ստեղծման, կյանքին և գործին վերաբերող մի շարք հարցեր: Բնարկե, մեկ աշխատանքում հնարավոր չէ այդ ամբողջը պարզաբանել, բայց

⁴ **Խորենացի Մ.**, Պատմություն հայոց, թարգմ., ներած., և ծանոթ. Ս. Մալխասյանցի, Եր., «Հայաստան», 1997, էջ 5:

⁵ Մ. Խորենացու կյանքին և գործին վերաբերող հայ և օտար ուսումնասիրողների բոլոր աշխատանքները հնարավոր չէ քննել մեկ հոդվածի շրջանակներում: Օգտագործել ենք այն սկզբնաղբյուրներն ու ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են քննվող թեմային:

⁶ **Խորենացի Մ.**, Պատմություն հայոց, թարգմ., ներած., և ծանոթ. Ս. Մալխասյանցի, Եր., «Հայաստան», 1997, էջ 4:

փորձ է արվում համոզիչ դարձնել որոշ տեսակետներ, ինչպես նաև ներկայացնել մեկնաբանություններ, որ մինչև օրս չեն հանդիպել այլ աշխատանքներում:

Ս. Օրբելյանը **Մովսես** անունը հիշատակում է բազմիցս. Սյունիքի Մովսես եպիսկոպոս, Տուրտավի Մովսես եպիսկոպոս, Մովսես կաթողիկոս, Մովսես II Եղվարդեցի, Մովսես մարգարե, Մովսես և Մովսես (Մովսես Խորենացի): Վերջինս Ա. Աբրահամյանի թարգմանությամբ հրատարակված՝ Ս. Օրբելյանի «Սյունիքի պատմություն» գրքում նշվում է երեք անգամ: Ա. Աբրահամյանը Մովսես անունով անձնավորության համար մի դեպքում ծանուցում է Մ. Խորենացուն, մյուս դեպքում ուղղակի նշում է Մովսես⁷՝ «տե՛ս Խորենացի Մովսես» հղումով, իսկ մի դեպքում էլ հասցեագրում՝ «Խորենացի Մովսես»:

Այսպես՝ Ս. Օրբելյանը «Պատմության» ԿԹ գլխում, որտեղ հերթականությամբ նկարագրվում են նեստորականության և քաղկեդոնականության դեմ ժողովները, Դվինի ժողովի մասնակիցների շարքում նշում է նաև **քերթողահայր Մովսեսի** աշակերտ Սյունյաց մետրոպոլիտ Պետրոսին: Վերջինիս մասին տեղեկություններ տալու նպատակով ծանուցվում է, որ Սյունյաց մետրոպոլիտ Պետրոսը, ով մասնակցել է Դվինի 554թ. ժողովին, ուրիշ Մովսեսի աշակերտն է, որին Ս. Օրբելյանը համարել է քերթողահայր. «Սա Սյունյաց Մակար եպիսկոպոսին հաջորդած Պետրոս եպիսկոպոսն է (6-րդ դար), որ մասնակցել է Դվինի 554 թվականի ժողովին: Նրան պատմիչը համարում է քերթողահայր Մովսեսի աշակերտը: Ըստ երևույթին, այս «քերթողահայր Մովսես»-ը ուրիշ է, տարբեր 5-րդ դարի հռչակավոր պատմահայր Մովսես Խորենացուց»⁸: Ա. Աբրահամյանը նույն գրքի ծանոթագրության մեջ հղում է Հ. Աճառյանին, որ առանձին բառահոգվածով հիշատակում է «Մովսես քերթողահայր, ուսուցիչ Պետրոս եպիսկոպոսի Սիրնեաց»⁹:

Այս առումով մեր մոտեցումներն այլ են, և փորձենք եզրահանգումների գալ:

1. Կարծում ենք՝ Հ. Աճառյանը նշված Մովսեսին տարբերակել է Մ. Խորենացուց¹⁰, քանի որ հեղինակը հիմք է ընդունել Մ. Խորենացու՝ ծագումով Տարոնից լինելը¹¹: Բայց հետաքրքիր մոտեցում ունի Հ. Աճառյանը Մ. Խորենացու ծննդի և մահվան տեղի հետ կապված¹². ա/ նշում է, որ Մ. Խորենացին Տարոնցի է «ըստ ավանդության». «Ըստ ավանդության Մ. Խորենացին Ե Դարից է, Տարոնի Խորոնք գյուղից»¹³: Կարծում

⁷ Այս մասին տե՛ս **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթությունները՝ Ա. Աբրահամյանի, Եր., «Մովսես. գրող», 1986, էջ 571:

⁸ **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթությունները՝ Ա. Աբրահամյանի, Եր., «Մովսես. գրող», 1986, էջ 530:

⁹ **Աճառեան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 3, Եր., «Պետական Համալսարանի հրատարակչություն», 1946, էջ 434:

¹⁰ Այս մասին տե՛ս նաև Մ. Հասարայանի բանավեճը. **Հասարայան Մ.**, «Ո՞րն է Մովսես Խորենացու ծննդավայրը», Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 12, Եր., 1969, էջ 81-90:

¹¹ Հայոց անձնանունների բառարանում Մովսես Խորենացի բառահոգվածի ներքո որոշակի մանրամասնությամբ քննվում են Մ. Խորենացու հետ կապված բազմաթիվ հարցեր, հանգամանալից քննվում են որոշ աշխատանքներ, որ վերաբերում են պատմահորը, բայց չի ակնարկվում առկա այն տեսակետը, ըստ որի՝ Մ. Խորենացին Սյունիքից է կամ իր անունը ստացել է Հաբանդ գավառի Խորեա անունով գյուղից:

¹² Հ. Աճառյան, Մ. Արեղյան և այլք գրեթե չեն խոսել Մ. Խորենացու կյանքի մանրամասներից:

¹³ **Աճառեան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 3, Եր., «Պետական Համալսարանի հրատարակչություն», 1946, էջ 421:

ենք՝ եթե Հ. Աճառյանը Մ. Խորենացու ծննդի կամ մահվան տեղի վերաբերյալ հավաստի տեղեկություն կամ մատենագիտական աղբյուր ունենար, ապա հղումով կնշեր, բ/Հ. Աճառյանը հստակ նշում է, որ Մ. Խորենացուն վերաբերող ուսումնասիրությունների ամփոփումն են Ս. Մալխասյանցի երկու հիմնական աշխատությունները¹⁴. «Խորենացու մասին եղած գրականությունը չափազանց շատ է. կարևորագույններից հիշենք (նշվում են աղբյուրներ՝ Մ.Ք.), իսկ ամենավերջինն է Ստ. Մալխասեանի աշխարհաբար թարգմ. Խորենացու պատմության, ընդարձակ ներածությամբ, կենսագրությամբ և բազմաթիվ ծանոթություններով ճոխացրած... Կարող ենք ասել, որ Մալխասեանցի այս աշխատությամբ բացատրվում են Խորենացուն վերաբերյալ բոլոր հարցերը»¹⁵ (ընդգծումը մերն է՝ Մ.Ք.): Ս. Օրբելյանի «պատմության» թարգմանության «ծանոթություններից» հասկացվում է, որ Ա. Աբրահամյանը, հավանաբար, նույնպես հետևել է Մ. Խորենացու ծննդի հետ կապված ավանդությանը¹⁶, ըստ այդմ էլ հղում է կատարել Հ. Աճառյանից, բայց Ս. Մալխասյանցն էլ, փաստորեն, բարձրաժեշտ աշխատանք է կատարել խորենացիագիտության ասպարեզում¹⁷, որ արժանացել է նաև Հ. Աճառյանի հավանությանը¹⁸:

2. Ժամանակագրական առումով, կարծում ենք, անտրամաբանական ոչինչ չկա, եթե նույն Պետրոսը մասնակցած լիներ Դվինի ժողովին¹⁹ և համարվեր Մ. Խորենացու աշակերտը. «Ժամանակագրորեն այս տեղեկությունը ոչ մի դժվարության չի հանդիպում: 5-րդ դարի ութսունական թվականներին ապրող ծերունի Մովսես Խորենացուն կարող էր մանկության օրերում աշակերտ լինել Պետրոս եպիսկոպոսը, որ

¹⁴ «Հայոց պատմություն» երկի աշխարհաբար թարգմանությունը և «Խորենացու առեղծվածի շուրջը», Եր., 1940:

¹⁵ **Աճառեան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 3, Եր., «Պետական Համալսարանի հրատարակչություն», 1946, էջ 423:

¹⁶ Մեր քննությունից դուրս է ավանդության վերաբերյալ դատողություններ անելը, որոշելը նրա հավաստի կամ ոչ հավաստի լինելը, բայց և կարծում ենք՝ այն գիտական համարելը և դրանով եզրահանգման գալը շահեկան չեն խորենացիագիտության համար:

¹⁷ Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, ինչպես նկատում ենք, ըստ էության ընդունել են Ս. Մալխասյանցի բոլոր դիտարկումները: Մասնակի վերապահումներ ունեն քաղկեդոնականության հարցում. այս մասին տե՛ս **Աճառեան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 3, Եր., «Պետական Համալսարանի հրատարակչություն», 1946, «Մովսես Խորենացի» բառահոդվածի ներքո, **Աբեղյան Մ.**, Հայոց Հին գրականության պատմություն, Գիրք Ա, Եր., «ԳԱ հրատ.», 1944, էջ 258, որի շուրջ Ս. Մալխասյանցն ամբողջական գլուխ է առանձնացրել. **Մալխասյանց Ս.**, Խորենացու առեղծվածի շուրջը, Եր., «Արմֆան», 1940, էջ 130-144:

¹⁸ Ս. Մալխասյանցի կարծիքին հետևող կամ չհետևող (օրինակ՝ **Մուշեղյան Ա.**, Մովսես Խորենացու դարը, Եր., 2007 և այլն) այլ աշխատանքներ չենք նշում այստեղ՝ ավելորդ կրկնությունից խուսափելու և նյութից չշեղվելու համար:

¹⁹ Մյունխաց մետրոպոլիտ Պետրոսի աշակերտելու մասին մատենագիտական այլ աղբյուրներ առանձնապես տեղեկություններ չեն հաղորդում: Հ. Աճառյանը հիշատակում է այն նույն Պետրոսին. /տե՛ս **Աճառեան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 3, Եր., «Պետական Համալսարանի հրատարակչություն», 1946, էջ 242/, որի մասին պատմում է Ս. Օրբելյանը. «...սա վերցրել ենք Մյունխաց եպիսկոպոս երանելի Պետրոսի ներբողից, որ ստեղծել է վեհ Բաբիկի մասին...» (**Օրբելյան Ս.**, Մյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթությունները՝ Ա. Աբրահամյանի, Եր., «Մովսես. գրող», 1986, էջ 88), իսկ նրան վերաբերող աշխատանքների քննությունը սույն հոդվածում չի ընդգրկվում:

մատենագրեց 6-րդ դարի առաջին կեսում»²⁰։ Եթե ընդունենք, որ Մ. Խորենացին մահացել է 490-ական թվականներին²¹, ապա այդ ժամանակ Պետրոսը կարող էր աշակերտել Մ. Խորենացուն և հասուն տարիքում մասնակցել Դվինի ժողովին²²։ Այս և նման հանգամանքներ խնդիր են առաջացրել նաև պատմահոր ապրած ժամանակաշրջանի շուրջ։ Այս հարցը, կարծում ենք, բացարձակ լուծված չէ՝ մատենագրական աղբյուրներում հանդիպող հակասությունների հետևանքով։ Այս խնդրի լուծման համար ենթադրություններ ունի Մ. Օրբելյանը, և ամենևին հարկ չկա այդ մանրամասնությունները քննելը, որովհետև պարզ է դառնում, որ Պետրոսի ուսուցիչը եղել է նույն Մովսես Խորենացին, ինչը և նկատի է ունեցել Մ. Օրբելյանը։ Այս փաստը «Պատմության» հետագա էջերում ամրագրվում է։ Մ. Օրբելյանը բոլորի մասին նույն հիացմունքով չի խոսել այնպես, ինչպես Մ. Խորենացու աշակերտ Պետրոսի. «...բազմերջանիկ, մարդկանց հետ անհամեմատելի, քերթողահոր աշակերտ, հմուտ հռետոր ու անպարտելի փիլիսոփա՝ լի իմաստությամբ ու կատարյալ առաքինությամբ, հայոց վարդապետներից առաջնակարգ, քերթող ու թարգմանիչ»²³։ Ակնհայտ է, որ «քերթողահոր աշակերտ» լինելու հանգամանքը վստահեցրել է Մ. Օրբելյանին՝ գովաբանական խոսքեր շռայլի։

Բացի այս՝ մի այլ հատվածում Մ. Օրբելյանն ինքը հստակ նշում է, որ Պետրոսը եղել է քերթողահոր աշակերտը՝ վերջ դնելով կասկածանքին. «Ձայս ցուցան է մեզ սուղ ինչ Մովսես քերթողահայրն և զբովանդակն ճշգրիտ աշակերտ նորին՝ Պետրոս եպիսկոպոս Սինեաց»²⁴։

3. Մ. Օրբելյանի «Պատմության» մեջ, ըստ ծանոթությունների և անձնանունների ցանկի, **Մովսես** անվանումներից միայն երեքն են վերագրվում Մ. Խորենացուն (ըստ Ա. Աբրահամյանի)²⁵։ Քննենք դրանք առանձին-առանձին։ Մ. Օրբելյանը գրում է. «Ապա գնացեալ սոցա խնդրեցին իւրեանց առանջնորդ. եւ ետ (խոսքը Լուսավորչի մասին է՝ Մ.Բ.) այր մի տարօնաց Մօսես անուն...»²⁶ («Ապա սրանք գնացին և իրենց առաջնորդ խնդրեցին, և [Լուսավորիչը] տվեց մի տարոնացի մարդու՝ Մովսես անունով»²⁷)։ Ա. Աբրահամյանի ծանոթագրության մեջ վկայակոչվում է Մ. Օրբելյանի փարիզյան

²⁰ **Մալխասյանց Մ.**, *Խորենացու առեղծվածի շուրջը*, Եր., «Արմֆան», 1940, էջ 147։

²¹ Հայոց պատմությանը վերաբերող ակադեմիական գրականության մեջ կամ բացակայում, կամ էլ մոտավոր են նշվում Մ. Խորենացու ծննդի և մահվան թվականները, վայրը։ Չափազանց կարևոր այս հարցը մինչև օրս լուծված չի համարվում։

²² Պետրոսը եպիսկոպոս է եղել տասը տարի (546-556), և հետևելով նրա մահվան թվականին՝ մոտ 556թ, պետք է կարծել, որ նա մահացել է եպիսկոպոս եղած ժամանակ՝ խոր ծերության տարիքում՝ Դվինի ժողովից երկու տարի հետո։

²³ **Օրբելյան Մ.**, *Պատմություն նահանգին Սիսական, հատ. Ա., Փարիզ, «Ի գործատան Կ. Վ. Շահնազարեանց» 1859, էջ 131*։

²⁴ **Օրբելյան Մ.**, *Պատմություն տանն Սիսական, Մոսկվա, «Տպ. Լազարյան ճեմարան», 1861, էջ 39-40*։

²⁵ **Օրբելյան Մ.**, *Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթությունները՝ Ա. Աբրահամյանի, Եր., «Մովսես. գրող», 1986, էջ 571*։

²⁶ **Օրբելյան Մ.**, *Պատմություն նահանգին Սիսական, հատ. Ա., Փարիզ, «Ի գործատան Կ. Վ. Շահնազարեանց» 1859, էջ 62*։

²⁷ **Օրբելյան Մ.**, *Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթությունները՝ Ա. Աբրահամյանի, Եր., «Մովսես. գրող», 1986, էջ 77*։

հրատարակությունը²⁸: Կարծում ենք՝ շփոթություն է նշված Մովսեսին նույնացնելը Մ. Խորենացու հետ, կամ գուցե հիմք է վերցվել «**տարօնաց Մօսես**»-ը: Նշենք, որ որևէ այլ մասում Ս. Օրբելյանը Մ. Խորենացու մասին խոսելիս չի նշել «**տարօնացի**»: Փաստորեն՝ Ս. Օրբելյանի «Պատմության» «**տարօնաց Մօսես**»-ը որևէ կապ չունի Մ. Խորենացու հետ: Խոսքը բոլորովին այլ եպիսկոպոսի մասին է, որի հիշատակությունը, կարծում են, հակասական է, շփոթություն կա Գրիգորիսի՝ Սյունյաց առաջին եպիսկոպոսի հետ, ինչը մեր քննության առարկան չէ:

Մյուս երկու մասերում՝ «Պատմության» Ժ և ԺԷ գլուխներում, Ս. Օրբելյանը հղում է նույն Սյունյաց Պետրոսին՝ դարձյալ հիշատակելով, որ նա քերթողահոր աշակերտն է. «...գեկոյց մեզ ի ներքողմանն իւրում երանելին Պետրոս՝ Սիւնեաց եպիսկոպոս, քերթողահորն Մովսեսի աշակերտ»²⁹ և, ինչպես վերը նշեցինք, «...Զայս ցուցանէ մեզ սուղ ինչ Մովսես քերթողահայրն»³⁰: Այս առիթով Ս. Մալխասյանցը գրում է, որ «այս դարում (խոսքը 6-րդ դարի մասին է՝ Մ.Ք.) գրված է եղել Պետրոս Սյունյաց եպիսկոպոսի Պատմությունը, որ մեր ձեռքը չէ հասել: Նշանակելու է սակայն, որ Օրբելյանն իր Պատմության մեջ երեք անգամ առիթ է ունենում Պետրոս Սյունյաց եպիսկոպոս-պատմագրի անունը տալու և երեք անգամն էլ հիշում է, թե նա եղել է Մովսես Խորենացու աշակերտը, հավանորեն այս տեղեկությունը հանելով Պետրոս եպիսկոպոսի Պատմությունից»³¹:

Ընդհանրացնելով Ս. Օրբելյանի պատմության՝ Մ. Խորենացուն հիշատակած մասերը, պետք է նկատել, որ երեք անգամ է հիշատակել պատմահորը և նույնքան անգամ էլ նշել **քերթողահայր** մակդիրով: Ոչ մի անգամ չի նշել **քերթող**. այն տրվել է մյուս երևելիներին, ինչպես՝ «Վրդանես քերթող»³², «քերթողն Սիւննեաց Մաթուսաղայ»³³:

Եվ ինչպես Ս. Օրբելյանը, այնպես էլ մյուս հեղինակներն այս անվանումներում չափազանց զուսպ են եղել: Մեր մատենագրության մեջ **քերթողահայր** պատվանունը զարդարում է միայն Մ. Խորենացուն:

Ս. Օրբելյանը «Պատմությունը» գրելիս սահմաններ և սկզբունքներ է ունեցել: Արդեն երևելի անձանց համար ավելորդ է համարել նշել ծագումը: Ավելին՝ Ս. Օրբելյանը ոչ մի տեղ չի նշել Խորենացի անունը, այսինքն առավել հատկանշական է համարել հիշատակելու նրա վաստակը, որի շնորհով էլ ստացել է քերթողահայր մակդիրը: Վառ հոգևորականին բնորոշ դիմելաձևով հաստատել է, որ քերթողներ տվող դպրոցի ամենահայտնի ներկայացուցիչը Մովսես քերթողահայրն է՝ Մովսես Խորենացին:

²⁸ «Ինչպես նկատել է Կ. Շահնագարյանցը (փարիզյան հրատ., հ. 1-ին, էջ 318), սա հակասում է Օրբելյանի երկի Ե գլխում արված այն հիշատակությանը, ըստ որի՝ Գրիգոր Լուսավորիչը Սյունիքին տալիս է առաջին եպիսկոպոսը Գրիգորիս անունով, որը հիշվում է նաև պատմիչի երկի ՀԲ գլխում: Ե գլխում նա նշվում է, որ Սյունյաց եպիսկոպոսությունը սկզբնավորվել է Գրիգորիսից»։ **Օրբելյան Ս.**, *Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթությունները*՝ Ս. Աբրահամյանի, Եր., «Մովսես. գրող», 1986, էջ 422:

²⁹ **Օրբելյան Ս.**, *Պատմություն նահանգին Սիսական, հատ. Ա., Փարիզ, «Բ գործատան Կ. Վ. Շահնագարյանց» 1859, էջ 78:*

³⁰ **Օրբելյան Ս.**, *Պատմություն տանն Սիսական, Մոսկվա, «Տպ. Լազարյան ճեմարան», 1861, էջ 39-40:*

³¹ **Մալխասյանց Ս.**, *Խորենացու առեղծվածի շուրջը*, Եր., «Արմֆան», 1940, էջ 109:

³² **Օրբելյան Ս.**, *Պատմություն տանն Սիսական, Մոսկվա, «Տպ. Լազարյան ճեմարան», 1861, էջ 140, 143:*

³³ **Օրբելյան Ս.**, *Պատմություն տանն Սիսական, Մոսկվա, «Տպ. Լազարյան ճեմարան», 1861, էջ 156:*

2. Ղազար Փարպեցու՝ Մ. Խորենացուն վերաբերող տեղեկությունների հավաստիությունը՝ Ս. Օրբելյանի պատմության զուգադրությամբ

Ղ. Փարպեցու՝ Մ. Խորենացուն վերաբերող տեղեկությունները բազմիցս քննարկվել են, և, ինչպես նկատում ենք, այլևս կասկածից վեր է, որ պատմիչն իր «Թուղթ առ Վահան Մամիկոնեան»-ում խոսում է Մովսես Խորենացու մասին: Այս և սրա շուրջ ծավալված մեկնաբանություններին նույնպես չենք անդրադառնա: Միայն մեկ հարց կարող ենք դիտարկել. Ս. Օրբելյանին արդյոք ծանոթ չեն եղել Ղ. Փարպեցու տեղեկությունները, որ նրան հիշում է միայն մեկ անգամ ԺԷ գլխում՝ Վասակին վերաբերող պատմությունը հղելով: Սյունիքի պատմությամբ զբաղվող հեղինակները ճիշտ են նկատել, որ Ս. Օրբելյանը մեծամասամբ ներկայացրել է Սյունյաց հոգևոր կյանքը³⁴, քանի որ տեղեկությունները, ըստ հեղինակի, սուղ են, աղոտ՝ «պատմագիրք մեր լռեն»: Ս. Օրբելյանն, անշուշտ, տեղյակ է եղել նշված հեղինակների գործերին, և պատմության բովանդակությունից պարզ հասկացվում է դա: Եվ չնայած Սյունիքի մասին քիչ տեղեկություններ չեն հաղորդում Ղ. Փարպեցին և Մ. Խորենացին, այնուամենայնիվ, Ս. Օրբելյանը, «լինելով ողջանվեր հոգևորական»³⁵, այլ սկզբունքով է դիտարժան դարձրել դեպքերն ու դեմքերը: Նա առանձնապես չի քննել վաղ միջնադարի պատմիչների գործունեությունն ու կյանքի հետ կապված հարցերը: Այդուհանդերձ, եղած տեղեկությունների զուգադրմամբ որոշ հանգամանքներ պարզ են դառնում մեզ համար, որոնք էլ ենթադրել են տալիս, որ թե՛ Ղ. Փարպեցին, թե՛ Ս. Օրբելյանը իրենց երկերում խոսում են քերթողահայր Մովսես Խորենացու մասին: Օժանդակ դիտարկումները կարող են նպաստ բերել Մ. Խորենացու՝ Սյունիքում ապրած լինելու, Սյունյաց քերթողական և փիլիսոփայական դպրոցի հիմնադիրը համարվելու հետ կապված հարցերի լուսաբանմանը: Թե՛ Ղ. Փարպեցու, թե՛ Ս. Օրբելյանի պատմության մեջ, ըստ էության, Մ. Խորենացին համարվում է փիլիսոփա: Նորից հիշենք, որ այդ կոչումը, ինչպես քերթողը, շատերին բնութագրող մակդիր չի եղել: Այս հարցը տարբեր առիթներով քննարկվել է Մ. Խորենացուն վերաբերող աշխատանքներում: Այնուամենայնիվ, ցանկալի է հարցը մասնավորել Ս. Օրբելյանի և Ղ. Փարպեցու դիրքորոշումներում: Վերջինս միայն Մովսեսին է համարում փիլիսոփա. «Երանելի փիլիսոփոսն Մովսես, որ արդարև մենչդեռ էր ի մարմնի, ցանկ երկնային հզորացն էր քաղարակից. ո՛չ ապաքեն ի տեղուջէ տեղի արեղեանդ Հայոց հալածական արարիէն»³⁶՝ հստակեցնելով իր վերաբերմունքն ու գնահատականը: Ժամանակին գոյություն ունեցող կրոնական խնդիրներին քաջածանոթ Ս. Օրբելյանը փիլիսոփա է կոչում Պետրոսին, որ համարում ենք Մ. Խորենացու աշակերտը, և, անշուշտ, նույն դպրոցի հետևորդ Մաթուսաղային³⁷: Անուղղակի ձևով կամ ենթատեքստով Սյունյաց

³⁴ **Հայկվերդյան Ս.**, *Գորիսի ամփոփ պատմություն*, Եր., «Զանգակ-97», 2005, էջ 43-49:

³⁵ **Հայկվերդյան Ս.**, *Գորիսի ամփոփ պատմություն*, Եր., «Զանգակ-97», 2005, էջ 47:

³⁶ **Փարպեցի Ղ.**, *Պատմութիւն հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան*, Թիֆլիս, «Տպ. Ն. Աղանեանցի», 1907, էջ 436: Սա երկրորդ դրվագն է, որ վերաբերում է Մ. Խորենացուն. ծանոթագրության մեջ տարբերակված է՝ «Մովսես փիլիսոփա», «Մովսէս կրօնաւոր»։ **Փարպեցի Ղ.**, *Պատմութիւն հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան*, Թիֆլիս, «Տպ. Ն. Աղանեանցի», 1907, էջ 452:

³⁷ Ստեփանոս Սյունեցու մասին նշում է, որ նա «վարժէր զցայլ և զգերէկ ի գիրս եւ յարհեստս նոցա ըստ փիլիսոփայական ոճոյն» (**Օրբելեան Ս.**, *Պատմութիւն նահանգին Սիսական, հատ. Ա.*, Փարիզ, «Բ

պատմիչը նկատի ունի Ղ. Փարպեցու նշած այն փիլիսոփային, որ ապրել և ուսուցչություն է արել Սյունիքում. այդ ժամանակի համար միայն Մ. Խորենացուն աշակերտածը կարող էր կոչվել «աշակերտ քերթողահօրն, քաջ հոետորն եւ անյաղթ փիլիսոփայն, լի իմաստութեամբ եւ կատարեալ առաքինութեամբ, նախաթոռ վարդապետաց Հայոց, քերթող և թարգմանիչ», որոնք նաև Մ. Խորենացուն են վերագրվում:

Փաստորեն նկատում ենք, որ Ղ. Փարպեցին հենց Մ. Խորենացուն է նկատի ունեցել՝ հիշատակելով «երանելի փիլիսոփոս», որ ավելի պարզ և հստակ հաստատվում է Ս. Օրբելյանի կողմից՝ չնայած այն բանի, որ ոչ միշտ չի հղում քերթող-փիլիսոփային և, առավել ևս, անդրադառնում նրա կյանքին վերաբերող հարցերին:

3. Մ. Խորենացու մասին ավանդազրույցները և մատենագիտական տեղեկությունները

Մ. Խորենացու կյանքին և գործին վերաբերող ուսումնասիրություններում հաճախ ենք նկատում, որ իրական փաստերի կողքին գիտական և ոչ գիտական հարթակներում մեջբերում են նաև զրույցներն ու ավանդազրույցները: Օրինակ՝ Մ. Հասարթյանն իր՝ Խ. Դաշտենցին ուղղված հանրահայտ հոդվածում նշում է, որ «այս ամենից հետո պետք է, սակայն, ասել, որ Դաշտենցի ամենագորեղ կովանն այն է, որ **ժողովրդական ավանդությունը պատմահոր գերեզմանը համարում է Մշո Առաքելոց վանքը: Ահա, ա՛յս է, որ պետք է հարգել, գնահատել և միանգամայն հնարավոր համարել:** Ոչ ոք իրավունք չունի կասկածի տակ առնել այս մեկը: **Սյունիքում չկա այդ ավանդությունը** (ընդգծումը մերն է՝ Մ.Բ.), բայց գորավոր կերպով կա Տարոնացի Վարդան Մամիկոնյանի գերեզմանի ավանդությունը պատմական Անգեղակոթում: Կա Մխիթար սպարապետի գերեզմանի փաստն ու ավանդությունը, բայց չկա Սյունիքի հռչակված գորավար Դավիթ-Բեկի գերեզմանի մասին վկայություն կամ ավանդություն: Այո՛, **Պատմահոր և այլ մեծերի գերեզմանի տեղը պետք է համարել Մշո Առաքելոց վանքը** (մյուս ընդգծումները հեղինակինն են՝ Մ.Բ.)»³⁸: Եվ, ինչպես նկատում ենք, Մ. Հասարթյանը նախ նշում է, որ կասկածի տակ չպետք է առնել ժողովրդական ավանդությունը, որը պատմահոր գերեզմանը համարում է Մշո Առաքելոց վանքը, ապա՝ Սյունիքում չկա այդ ավանդությունը:

Իրապես ավանդազրույցները (ավանդություն, առասպել, պատմազրույց,

գործատան Կ. Վ. Շահնագարեանց» 1859, էջ 177), որ բնորոշ է Սյունյաց դպրոցին. «...էին և վարդապետք աշխարհիս Հայոց ընտրեալք և լուսաւորք՝ տէր Եփրեմ և Անաստաս և Խաչիկ և Դաւիթ Հռոմայրեցի, և մեծն իմաստասէրն Ստեփանոս Սիւնեցի, աշակերտ Մովսիսի» (**Գանձակեցի Կ., Պատմություն հայոց, Եր., «ԳԱ հրատ», 1961, էջ 72**): Սյունյաց փիլիսոփայական դպրոցի մասին խոսվում է նաև ԾԼ գլխում տեղի Հովհաննեսի մասին խոսելիս. «Այս բազմերջանիկ եպիսկոպոսս զարդարեաց գեպիսկոպոսարանն՝ զմեծ նախագահ տունն Սիւնեաց զՏաթև զանազան զարդուք եւ մեծամեծ սպասուք և գեղեցիկ կարգօք աստուածայնօք. և ելից բազմութեամբ կրօնաւորօք, անյաղթ փիլիսոփայիք եւ աննման երաժշտօք եւ բանիբուն վարդապետօք եւ աստուածագգեաց ճգնաւորօք, նաև յոգնապատիկ արհեստաւորօք» (**Օրբէկեան Մ., Պատմութիւն նահանգին Սիսական, հատ. Բ., Փարիզ, «Բ գործատան Կ. Վ. Շահնագարեանց», 1859, էջ 55-56**):

³⁸ **Հասարթյան Մ.,** Ո՛րն է Մովսես Խորենացու ծննդավայրը, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 12, Եր., 1969, էջ 82:

ավանդավեյ, գրուցավեյ, գրույց, ասք) կասկածի տակ առնելու խնդիր չկա, որովհետև դրանք շատ հաճախ հիմք են եղել անցյալի բազմաթիվ իրադարձությունները լուսաբանելու և պատմական հիմքերի վրա դնելու համար, ինչպես նշում են, ասենք, հայ հին գրականությամբ ու պատմությամբ զբաղվող գրեթե բոլոր հեղինակները, որ Խորենացին օգտագործել է նաև բանավոր շատ սկզբնաղբյուրներ՝ հայ և օտար առասպելներ, վիպերգեր և ավանդագրույցներ և այլն: Եթե շատ հաճախ որևէ հարց փաստելու համար կովան է բերվում ավանդությունը, ապա ցանկալի է հիշել, որ Մշո Առաքելոց վանքի և նրա հետ կապված բազմաթիվ առասպելների կողքին Սյունիքում էլ կան գրույցներ, պատումներ, որոնք վերաբերում են Մ. Խորենացու կյանքին և գործին³⁹: Դրանք առանձնապես չեն հրապարակվել և, որքանով տեղյակ ենք, քիչ են ուշադրության արժանացել խորենագիտության մեջ: Այնինչ, կան բազմաթիվ գրույցներ, որոնք վերաբերում են Մ. Խորենացուն և նրա կյանքի ու գործի հանգամանքներին: Մեր կողմից հավաքագրված բոլոր ավանդագրույցների շարադրմամբ և մատենագիտական տեղեկությունների, ուսումնասիրությունների զուգադրմամբ կփորձենք ընդհանրացնել Խորենացու հետ կապված որոշ հարցեր:

Խորեա կոչվող հին բնակավայրում կա մի մատչելի ժայռ, որ կոչվում է **Մովսեսի քերծ**, որին տեղացիները «հաճախ էլ **Խորենացու քերծ**» են կոչում⁴⁰: Հստ ավանդության՝ ժայռն իր անունը ստացել է դեռևս Մովսեսի կենդանության օրոք, երբ բնակիչները նրան ցերեկները տեսնում էին նստած գիր անելիս: Ասում են նաև, որ «Հայոց պատմությունը» հենց այդտեղ է գրել:

Հին Կոռնիձորի հարակից տարածքում կա մի ձոր, որ կոչվում է **Խորենացու ձոր**: Ասում են, թե իբր Խորենացին, ջորին նստած, գնալիս է եղել այդ ձորի եզրով, որ ջուր բերի: Դեռ ջրին չհասած՝ ջորին աղբյուրի թփուտներում անհասկանալի երևույթից խրտնել է, և Մովսեսը չի կարողացել իրեն պահել ու ընկել է ձորը: Այդ օրվանից այն կոչվել է **Մովսեսի կամ Մոսեսի ձոր**, որ, հավանաբար, հետագայում նաև կոչել են Խորենացու ձոր:

Ամենից տարածված գրույցը կապվում է **Սըռըեղցի**⁴¹ կոչվող սրբավայրի հետ: Ասում են, որ այն կառուցել է Մ. Խորենացին՝ ճգնության մեջ լինելու ժամանակ: Խորեա գյուղից մոտ 3 կմ հեռու նա կառուցել է այդ ճգնարանը և հենց այդտեղ էլ շարունակել գրել իր պատմությունը: Այն եղել է ամառանոց-կացարան, որ հետագայում վերածվել է մատուռի:

Մի այլ ավանդության համաձայն՝ Մ. Խորենացին սկզբնական շրջանում

³⁹ Սյունիքում՝ մասնավորապես Կոռնիձոր, Տեղ և Խնձորեսկ գյուղում, մարդիկ հաճախ են նշում Մ. Խորենացու պուրնեցի լինելը՝ հիշելով կցկտուր կամ ամբողջական պատմություններ՝ հաճախ չպատկերացնելով դրանց սերնդեսերունդ փախանցված և ավանդագրույց լինելը:

⁴⁰ **Միմոնյան Մ.**, Կոռնիձոր, Եր., «Գրիգոր Տաթևացի», 2006, էջ 29 (այս և որոշ ավանդություններ գրի են առնվել Կոռնիձորի դպրոցի տնօրեն Ս. Միմոնյանի կողմից, որոնց մի մասը ընդգրկված է նշված աշխատության մեջ: Մենք դրանք խմբագրել-համալրել ենք բանահավաքչության ժամանակ գրի առնված մանրամասներով և այլ պատմություններով):

⁴¹ **Սըռըեղցի** բառի բացատրությունն այսպես է՝ **սըռը** (Սյունիք-Արցախի բարբառներում՝ **սեռնը** // **սըռն** // **սեռն**) «ծայր, գագաթ, կատար», որ, հավանական է, ծագում է **սայր** բառից **այ > է**; ապա **ն** հանգի ազդեցությամբ **ը > ո**, **եղցի**-ն (յէխ/դծի) եկեղեցի բառի բարբառային տարբերակն է: **Սըռը** (սայր) բառը ունի հ. -ե. ծագում, որի համար Գ. Ջահուկյանը վերականգնում է ***ē(i)**- նախածնը «սրել» (Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Աստղիկ» հրատ., Երևան, 2010, էջ 666):

թաքնված ճգնելիս է եղել Հակարի գետի ափին մոտ գտնվող քարանձավներից մեկում: Քարանձավներից մեկը կոչվում է **Եղցի (եկեղեցի)**, որի շուրջ կան այլ քարանձավներ: Այստեղ ամռանը շատ տաք է լինում: Պատմում են, որ Մովսեսն այդտեղ մնացել է այնքան ժամանակ, մինչև մոտակա ձորերից մեկի սեռին՝ «ձորի առանցքում», հոգևորականների և բնակիչների օգնությամբ ճգնարան-սուրբ է կառուցվել, և Մովսեսն այնտեղ է տեղափոխվել ու մնացել մինչև կյանքի վերջ: Այս վայրը բավականին հին է, այստեղ կան նաև գերեզմանաքարեր, դամբարան, տաճարի պուրներ և այլն: Ասում են, որ այն ավելի մեծ է եղել, բայց հետո քանդվել է երկրաշարժից կամ քանդել են: Որևէ անուն չունի, հետագայում տեղանքի շնորհիվ ստացել է Սըռըեղցի անունը և մինչև օրս էլ համարվում է տարածքի բնակիչների ամենագորավոր սրբերից մեկը:

Ավանդազրույցում պատկերված տարածքն ուղղակիորեն համապատասխանում է Ղ. Փարպեցու՝ Սյունիք գալու և Մովսեսի հետ քարայրում մնալու նկարագրությանը. «Եւ զհետ այնորիկ, որպէս թէ ձանձրացեալ յաշխատութենէ շփոթիցն՝ կամեցալ պարապել աղօթից և հանգչել: Եւ երթեալ է **Սիւնիս՝ կեցի անդ ամս երկուս, զձմեռն ի քարայրի**, առ առն միում հռչակելոյ ի բնակչաց գաւառին յամենայն կրօնաւորութիւնս, որում անուն էր Մովսէս, **և տեղին անձուկ. և զամառն, յաղագս տօթոյ տեղոյն**, քահանայապետ աշխարհին տէր **Մուշէ** տանէր զիս առ ինքն՝ **ուր և լինէր ի հովու**» (ընգծումները մերն են՝ Մ.Ք.): Այդ տարածքն իսկապես շոգ է, իսկ քարանձավները բավականին հարմար են ձմռանը պատսպարվելու համար: Դրանցից մեկը գուցե հենց այդ ժամանակ, գուցե և հետագայում եկեղեցու է վերածվել և հիմա էլ պահպանվում է: Պատմիչ Ղ. Փարպեցու նշած Մուշեն էլ, ըստ էության, համապատասխանում է Ս. Օրբելյանի նշած «Տեր-Մուշե»⁴² եպիսկոպոսին: Եթէ Պետրոսը եպիսկոպոս է եղել տասը տարի՝ 546-556թթ., և նրանից առաջ եղել են նախ Մակար եպիսկոպոսը և Երիցակը, հետո՝ Մուշեն, ապա ստացվում է, որ Ղ. Փարպեցին Սյունիքում եղել է 480 թվականից հետո⁴³: Փաստորեն՝ ավանդազրույցում պահպանված տեղեկություններն, ըստ էության, ժամանակագրական, տեղագրական և այլ առումներով համապատասխանում են Ղ. Փարպեցու տեղեկություններին:

Կոռնիձոր և Խորեա բնակավայրերի շրջակայքում կա մի ձոր, որ կոչվում է **Կիրաձոր**: Ասում են, որ այն իր անունը ստացել է այստեղ եղած դպրանոց-անապատի անունից՝ գրի>գրչության, բարբառով՝ կիր>կրի+ձոր: Անվան հետագա փոփոխված տարբերակներից է Գրաձոր: Ձորնը, ըստ ավանդության, իր անունը ստացել է շատ հնուց, քանի որ ուրիշ դպրոց կամ անապատ այս տարածքում հայտնի չէ, ինչպես, ասենք, Տաթևի կամ Հալիձորի անապատները: Երբեմն էլ տեղացիներն ավելացնում կամ ենթադրում են, որ, հավանաբար, այստեղ դպրոց է եղել, որտեղ սովորել և հետագայում դասավանդել է Մ. Խորենացին: Կիրաձորով է անցնում Հարար-Ամարաս ամենակարճ ճանապարհը, որը դարեր շարունակ բանուկ է եղել:

Խորեա գյուղանվան համար էլ մի ուրիշ ավանդազրույց կա: Նշվում է, որ

⁴² **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթությունները՝ Ա. Աբրահամյանի, Եր., «Մովսես. գրող», 1986, էջ 385:

⁴³ Ըստ Ստ. Մելիք-Բախշյանի Ղ. Փարպեցին Սյունիքում եղել է ավելի ուշ՝ 484-486թթ. (**Մելիք-Բախշյան Ստ.**, Հայոց պատմության աղբյուրագիտություն, Եր., «Երևանի համալս. հրատ.», 1979, էջ 78):

նախկինում բնակատեղին կոչվում էր Խորյա, որովհետև շատ խոր ձորում է եղել գյուղը: Հետո երկրաշարժից փլվել են ձորը շրջապատող «յերդանները»⁴⁴, և ձորը փակվել-բարձրացել է: Բնակիչները տեղափոխվել են ուրիշ վայր: Հիմա նախկինի պես խորը չէ այդ ձորը: Այդ ժամանակից Խորյայից բացի հին բնակավայրը կոչվել է նաև Խորխուփ կամ Խուրխուփ (խորխուփին դուգէ), որ նշանակում է «խորը փակված», ոմանք կոչում են Խորխորին (Խուրխուրին, Խորխուրին տըխտըկնէ), որ տեղացիները բացատրում են «խոր խորացած» ձևով:

Բավականին դժվար և միևնույն ժամանակ, մեր կարծիքով, ոչ պատշաճ է ավանդազրույցից գիտական հետևություններ անելը: Հարցն առավել կնճռոտ է դառնում, երբ խոսքը վերաբերում է այնպիսի ավանդազրույցների, որոնց հիմքերը մոտ հազար հինգ հարյուր տարվա վաղեմության են և երբևէ գրի չեն առնվել⁴⁵: Հնարավոր ենք համարում, որ որոշ գրույցներ կարող էին ստեղծվել նաև այն ժամանակ, երբ շրջանառության էր դրվել պատմիչի ծննդավայրի հարցը: Ցավոք, մատենագիտական աղբյուրներում էլ բավականին երկար ժամանակ չենք հանդիպում նման տեղեկությունների: Այսինքն չեն եղել ժամանակներ, որ հարցի քննարկումով կամ վերհիշումով ուժ հաղորդեն ավանդազրույցներն, որպեսզի ամբողջովին պահպանվեն կամ հնարավոր մոռացությունից փրկվեն: Բայց պահպանվել են տեղանուններ, հուշարձաններ և որոշ տեղեկություններ, որոնք քիչ թե շատ համադրվում են գրավոր վկայություններին:

МОВСЕС ХОРЕНАЦИ В ИСТОРИИ СТЕПАНОСА ОРБЕЛЯНА, В «ПИСЬМЕ» ГАЗАРА ФАРПЕЦИ И В СКАЗАНИЯХ - МГЕР КУМУНЦ - «История Сюника» С. Орбеляна одна из лучших работ Сюникской школы созидающей (кертотакан, երրթողական), где епископом Петросом представлен также М. Хоренаци. С. Орбелян не представил подробностей относительно рождения, жизни и смерти М. Хоренаци.

Нет сомнений, что епископ Петрос был учеником М. Хоренаци и получил образование в Сюнике. Этот факт может способствовать освещению некоторых вопросов, связанных с жизнью М. Хоренаци. С. Орбелян подтвердил, что самым знаменитым представителем, или может даже основателем школы является М. Хоренаци.

Мы уверены, что Г. Фарпеци в своём труде «Письмо к Ваану Мамиконяну» говорит о М. Хоренаци. Г. Фарпеци назвал его «блаженным философом», что подтверждает С. Орбелян.

Часто места рождения и смерти М. Хоренаци определяют по сказаниям, но игнорированы те сказания, которые сохранились в Сюнике. Собранные наши устные истории относятся к жизни и деятельности М. Хоренаци.

Сохраненные в сказаниях сведения по своим хронологическим, топографическим и другим значениям совпадают со сведениями Г. Фарпеци. Сохранилось топонимы, памятники и другая информация, которые дают основание считать, что последние годы жизни М. Хоренаци провёл в Сюнике, где, как думают, он и родился.

⁴⁴ Հողի կտրտված շերտերը:

⁴⁵ Կոռնիձորից գրառված ավանդազրույցներ ունեն Ս. Խանգաղյանը (Խանգաղյան Ս., Հայրենապատում, Գիրք Ա, Եր., «Հայաստան», 1980, էջ 400) և ուրիշներ:

Ключевые слова: Мовсес Хоренаци, Степанос Орбелян, Газар Фарпеци, история, Сюник, Хорея, Корнидзор, фольклор.

MOVSES KHORENATSI IN THE HISTORY OF STEPANOS ORBELIAN, IN THE "LETTER" OF GAZAR PARPETS AND IN THE TRADITIONS - MHER KUMUNTS - S. Orbelian's "History of Syunik" is one of the best works of the Syunik school of poetry (qertokh, քերթոք), where Bishop Bishop Petros is also represented. Orbelian does not represent M. Khorenatsi's birth, death, and life-related details.

There is no doubt that Bishop Bishop Petros was a member of the National Assembly. Khorenatsi's pupil and his / her education received in Syunik. This fact can contribute to M. Covering some of Khorenatsi's life-related issues.

S. Orbeli confirmed that the most prominent representative of the school, or perhaps the founder, was Movses Khorenatsi.

We are convinced that K. Parpés speaks of Movses Khorenatsi in "Paper on Vahan Mamikonyan". Parpetsi called M. Khorenatsi "a blessed philosopher", which is confirmed by St. Orbelian:

Very often M. The places of birth and death of Khorenatsi are defined by oral traditions, but the traditions that have been preserved in Syunik have also been ignored. Our oral stories refer to M. Khorenatsi's life and work.

The information stored in the textbook corresponds to chronological, topographic and other aspects. Parpetsky's information.

Names, monuments and other information have been preserved, which give reason to believe that M. Khorenatsi spent his last years in Syunik, which he thought was his birthplace.

Key words: Movses Khorenatsi, Stepanos Orbelyan, Hazar Parpetsi, versifier school, history, Syunik, Khoreya, Khornidzor, folklore.

**«ՓԱՐՎԱՆԱ».
ԷԶՈԹԵՐԻԿ ԸՆԹԵՐՑՈՒՄ**

Հոդվածում Հովհ. Թումանյանի «Փարվանա» բալլադը մեկնաբանվում է որպես մարդու՝ մարմնական կրքերի ու տենչերի կրակից ազատվելու և աստվածային իմաստությանը կամ «սրբազան լույսին» հասնելու փորձություն, որ կտրիճներն անկարող են հաղթահարել: Նրանց կերպարանափոխությունը թիթեռների և կրակի մեջ այրվելու այլաբանությունը (պատահական չէ, որ հին հույները թիթեռ և հոգի հասկացությունները միևնույն՝ «պսիխե» բառով են արտահայտել) մեկնաբանվում է որպես հոգիների՝ մարմնական տենչերի մեջ այրվելու և այդ պատճառով իմաստությանը կամ Փարվանա դիցուհուն չարժանանալու փոխաբերություն:

Բանալի բառեր՝ Ալքիմիական սիմվոլներ, հոգի, ոգի, դժոխք, դրախտ, կրակ, սրբազան հուր, այլաբանություն, փոխաբերություն, կերպարանափոխություն:

Լեոնարդո դա Վինչիի «Սալամանդր» առակում կենդանիները հեռվից դիտում են հրդեհը, իսկ սալամանդրը սողոսկում է կրակի ամենաթեժ տեղը, «մինչդեռ, բացականչում է աքաղաղը, - մենք կրակի մեջ տապակվում ենք»¹: Գրող, քիմիկոս և փիլիսոփա Վադիմ Ռաբինովիչը, որ ալքիմիան դիտարկում էր իբրև որոշակի պատկերամտածողությամբ արտահայտված աշխարհայացք, իր հայտնի գրքի ալիքմիական մտածողության խորհրդապատկերների ուսումնասիրությանը նվիրված գլխում «մարդուն արտացոլող և մարդու մեջ արտացոլվող չափազանց պարզեցված և չափազանց ոգեղեն ալիքմիական տիեզերքի տարերքների հիերարխիան» այս կերպ է դասակարգում՝ «հրեշտակներ, դևեր, մոլորակների ոգիներ, մեռյալների ոգիներ, տարերային ստորակարգ ոգիներ, կրակի ոգիներ (սալամանդրեր), օդի ոգիներ (սիլֆեր, սիլֆիդաներ), ջրի ոգիներ (ունդինաներ), հողի ոգիներ (գնոմներ): Եվ վերջապես Homo Faber: Ամեն ինչ արտահայտված նրա մեջ, նրա համար, նրա միջոցով»²:

Արևմտաեվրոպական գրականության մեջ ալքիմիական տրակտատների գեղարվեստականացման և ալիքմիական սիմվոլների կերպավորման ավանդույթը ռոմանտիզմի գրականությամբ սկզբնավորվեց Հոֆմանի «Ոսկի ծաղկամանը» վիպակով (որի հերոսը, պարզվում է, սիրահարված է արխիվարիուսի դստերը, իսկ արխիվարիուսը սալամանդր է) և Հյուգոյի «Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպով: Ագրիպա Նետեսիայնցու «Գաղտնատեսական փիլիսոփայության» մեջ կարդում ենք. «Կենդանական ամեն ինչ և այն ամենը, ինչ կենդանի է, այդ թվում բույսերը, սնուցվում են ջերմությամբ, և այն ամենը, ինչ ապրում է, ապրում է կրակով, որ ամփոփում է իր մեջ»³: Ագրիպան, որ Գյոթեի Ֆաուստի նախատիպերից մեկն է, ըստ էության, խոսում է կյանքը վառ պահող ներքին կրակի մասին: Կրակ, որ մարդուն ներքուստ այրում է ցանկությունների, տենչերի ու կրքերի տեսքով, իսկ ալքիմիայում անագնիվ

¹ Լեոնարդո դա Վինչի, *Հեքիաթներ, լեգենդներ, առակներ*, Եր., Սովետական գրող, 1986, էջ 95:

² Рабинович В., *Алхимия, Санкт-Петербург, Издательство Ивана Лимбаха, 2012, стр. 111.*

³ Генрих Корнелий Агриппа, *Магия Арбателя, Нижний Новгород, Издатель А. Г. Москвичев, 2013, стр 78.*

մետաղներից ոսկի՝ այսինքն՝ ազնիվ մետաղ ստանալու համար կրակի օգտագործումը հայեցողական իմաստով մարդկային ներաշխարհի կատարելագործում ու մաքրագործում էր նշանակում, և սալամանդրն այս իմաստով խորհրդանշում էր այն էակներին, ովքեր հանգիստ կարող են մտնել մարդուն ներքուստ այրող կրակների մեջ և հանգիստ դուրս գալ դրանցից, այսինքն՝ հայտնվել տարերքի մեջ, բայց չայրվել, չտապալակվել, զգալ, բայց չթողնել, որ զգացողություններն այրեն:

Ուրնե Գենոնը Դանտեի էզոթերիզմին նվիրված ուսումնասիրության մեջ, մեջբերելով իտալացի մաթեմատիկոս և փիլիսոփա Արթուրո Ռեջինիին, նկատում է, որ «Աստվածային կատակերգությունն» ու «Էնեականը» մետաֆիզիկական-էզոթերիկ այլաբանություններ են, որ քողարկում ու ներկայացնում են հաջորդական այն փուլերը, որոնցով անցնում է հաղորդյալի գիտակցությունն անմահության հասնելու ճանապարհին»⁴: Այսինքն մարդը կա՛մ կենդանության օրոք կա՛մ էլ մահից հետո է իջնելու դժոխք, և դժոխքը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ հրով մաքրագործվելու ընթացք, այսինքն այն ոչ թե տարածության, այլ ժամանակի մեջ է: Եթե խոսելու լինենք հոգեվերլուծության լեզվով, ապա դժոխքը՝ մարդկային անգիտակցական, քավարանք ենթագիտակցական իսկ դրախտը գիտակցական ոլորտն է: Մեջբերելով Էլիֆաս Լևիին՝ Գենոնը գրում է, թե «Դանտեի Դժոխքն, ըստ էության, նեգատիվ Քավարան է»⁵: Այսպես կարելի է մեկնել նաև Քրիստոսի կենդանության օրոք դժոխք իջնելու հետևությամբ Դանտեի դժոխք իջնելու խորհուրդը: Այսպիսով, դժվար չէ պատկերացնել, որ դժոխքի կրակը ոչ այլ ինչ է, եթե ոչ այն, ինչ կյանքի օրոք մարդուն այրում է ցանկությունների, տենչերի կամ կրքերի ձևով, և անմտություն կլինի կարծել, թե դժոխքը տեղանք է, իսկ դժոխքի կրակը՝ նյութական սուբստանց, և մահից հետո մարմնից անջատված հոգին (մահը կարելի է բնորոշել և ստուգաբանել որպես հոգու անջատում մարմնից⁶) նյութական կրակի մեջ է այրվում: Պարզապես մարդուն կյանքի օրոք է տրվում սեփական ցանկությունների, տենչերի, կրքերի կրակը մարելու, անգիտակցական աշխարհը կամ խավարը ոգու լույսի միջոցով հայելու և մաքրագործելու հնարավորությունը, իսկ մահվան հետևանքով կորցնելով այն, ինչով մարում էր ներքին կրակները, հագուրդ տալիս ցանկություններին, տենչերին, կրքերին՝ այսինքն՝ մարմինը, մարդը զրկվում է այդ հնարավորությունից, և նրա հոգին սկսում է տապալակվել կյանքի օրոք իրեն այրած տարերքի մեջ, ու սարսափելին այն է, որ այդ կրակն այլևս անմարելի է: «Հակառակ սրան, երկնային կրակը,- դարձյալ Ագրիպպային հղենք,- չինչ կրակը քշում է խավարի ոգիներին, այն, ինչ անում է նաև մեր կրակը, որ ստանում ենք փայտով ունենալով նմանություն և մուտք վերին լույսին, որն ասում է. «Ես եմ աշխարհի լույսը, որ իրական կրակն է և լույսը իմ զավակն է»⁷:

Խորապես քրիստոնեական է մարդու՝ այրվելով լույս տալու կամ մոմավառության խորհուրդը, ըստ էության, մարդն ինքը մոմն է, որ այրելով իր ցանկությունները, տենչերն ու կրքերը՝ միով բանիվ մեղքերը («աստվածային կրակով մեղքի մոխրացում», այսպես է բնորոշվում մոմավառության խորհուրդն ըստ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի)⁸ լույս է տալիս, լույս, որ

⁴ Генон Р., Заметки об исламском эзотеризме и даосизме, Эзотеризм Данте, М., Изд. Беловодье, 2017, стр 144.

⁵ Լույն տեղում, էջ 148:

⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Միրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան, Վենետիկ, 1987, հ. 2, էջ 195:

⁷ Генрих Корнелий Агриппа, Магия Арбателля, Нижний Новгород, Издатель А. Г. Москвичев, 2013, стр 78.

⁸ Քրիստոնյա Հայաստան, Երևան, «Հայկական Հանրագիտարան հրատ.», 2002, էջ 593:

սրբապատկերներում պատկերված լուսապսակն է, այսինքն մտքից, ոգուց ճառագող լույսը: Եվ այս խորհուրդի պատկերագրողման ցայտուն օրինակը գրականության մեջ Հովհ. Թումանյանի հայտնի քառյակն է.

Քանի՜ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել լույս տվել,
Լույս տալով եմ ըսպառվել⁹:

Մարդուն այրող ցանկությունների, տենչերի, կրքերի կրակը հնարավոր է վերափոխել, եթե էկզոտերիկ, հոգեվերլուծական եզրով արտահայտվենք, սուբլիմացնել լույսի, որ միտքն է ճառագում: Ցանկությունները, տենչերն ու կրքերը մարդուն կապում են մարմնի, նյութեղեն իրականության ու վաղանցիկի, ոգին՝ հավերժի ու անմահության հետ, և դրա համար է հենց անցողիկի ու հավերժի մասին այդքան խորհած Թումանյանի «Փարվանա» բալլադի դիցուհին հրաժարվում գանձերից («Ինչի՞ս եմ պետք ոսկին, արծաթ / Եվ կամ աստղը երկրնքի / Ոչ էլ գոհար եմ պահանջում / Սեր-ընկերից իմ կյանքի»¹⁰), որ առաջարկում են կտրիճները («Գանձեր մի դիզեք երկրի վրա, ուր ցեցն ու ժանգն են ոչնչացնում...» (Մատթեոս 6.19)) և պահանջում «անշեջ հուրը»: «Անշեջ հրի» հետ Թումանյանը գործածում է «սրբազան» բառը՝ «Ես նըրանից հուր եմ ուզում, / Անշեջ հուրը սրբազան...»¹¹ Սա նույն երկնքի կրակն էր, որի մասին խոսում էր Ագրիպպան: Փարվանա դիցուհին սրբագործված հուրն է ուզում, հուր, որ ճառագվում է ոգուց, այսինքն իրեն արժանանալու համար տիրանալ իմաստությանը, իսկ կտրիճները պարզապես չեն հասկանում, թե ինչ է իրենցից պահանջում նա կամ էլ անկարող են մարմնական ցանկությունների, տենչերի ու կրքերի կրակը սրբագործել «անշեջ հրի», արժանանալ երկնքի ջինջ հրին, որ բնավ չի այրում, այսինքն ոգեղեն լույսին կամ իմաստությանը, և նրանք անգոր են հաղթահարել իմաստությանը կամ Փարվանա դիցուհուն արժանանալու համար պահանջվող փորձություններն ու խոչընդոտները՝ անցնել «մուլք աշխարհքն» ու «սև ջուրը», հաղթել «յոթգլխանի դևերին», այսինքն դուրս գալ դժոխքից: Մարիա-Լուիզա ֆոն Ֆրանցն իր «Հեքիաթների հոգեբանության» մեջ անդրադառնալով սրի ալքիմիական խորհրդանշին, գրում է. «Վիշապին, օրինակ, սրով են գլխատում, և դա նշանակում է բնագոյային մղումների մերկացում, որպեսզի դրանց անորոշ անգիտակցական բովանդակությունն էլ ավելի որոշակիանա»¹²: Հաճախ հեքիաթներում կինն առնանգվում է վիշապի կողմից: Կինը իմաստությունն է նշանակում, և բնավ պատահական չէ, որ հեքիաթներում, դյուցազնավեպերում, ասպետական վեպերում կինը համեմատվում է լույսի հետ: Ագրիպպան իր մեկ այլ տրակտատում պատմական, սուրբգրային և գաղտնագիտական մի ամբողջ իմացություն է կիրառում ապացուցելու համար «կնոջ սեռի արժանիքներն ու առավելությունները»: Կինը, ասում է նա, դրախտում հրեշտակների հետ է ստեղծվել, իսկ տղամարդը դրախտից դուրս»¹³ Սա մի նոր լույս է սփռում Դանտեի անմահ պոեմի երրորդ գլխում, դրախտում Բեատրիչենին հանդիպելու, այսինքն գիտակցության ոլորտ հասնելուն պես իմաստ-

⁹ Թումանյան Հովհ., *Երկերի լիակատար ժողովածու, Հայաստանի ԳԱ հրատ., 1990, հատ. 2, էջ 20:*

¹⁰ *Նույն տեղում, էջ 124:*

¹¹ *Նույն տեղում, էջ 124:*

¹² *Мария-Луиза фон Франц, Психология сказки. Толкование волшебных сказок, СПб., Изд. Б. С. К., 2004, стр. 187.*

¹³ *Агриппа Неттесгеймский, Речь о достоинстве и превосходстве женского пола, М., Эннеагон Пресс, 2010, стр. 18.*

նությանն արժանանալու տեսարանի վրա: Ապա Ագրիպյան գրում է. «Կինը նաև նյութով է գերազանցում տղամարդուն, քանի որ ստեղծված է ոչ թե անշունչ և ցածր հոդից, ինչպես տղամարդը, այլ մաքրագործված, կենսատու և շնչավոր նյութից, այսինքն բանական հոգուց, որ հաղորդակից է աստվածային ոգուն»¹⁴: Եվ դրա համար էլ կինը համեմատվում է լույսի հետ, ճառագում, կինն ինքը լույսն է, իմաստությունը, և սրտի տիրուհուն հասնելու այսինքն իմաստությանը արժանանալու ճանապարհին դյուցազունները կամ ասպետները բազմաթիվ փորձությունների միջով պիտի անցնեն: Ռուդոլֆ Շտայները, որին Թումանյանն, ի դեպ, ընթերցել և ուսումնասիրել է, իր դասախոսություններում քանիցս տարբեր ձևակերպումներով անդրադարձել է կնոջ՝ որպես մարմնավորված իմաստության և այդ իսկ պատճառով սիրո ձգտող և տղամարդու՝ որպես մարմնավորված սիրո՝ և այդ իսկ պատճառով իմաստության ձգտող էակի, տղամարդու սիրո ցանկասիրության և կնոջ սիրո մեջ: Շտայները գրում է. «Կնոջ մոտ սերն առհասարակ երևակայությունից է բխում և մշտապես կախված է պատկերի ձևավորման հետ: Կինը երբեք չի սիրում պարզապես ռեալ մարդուն, որը կանգնած է այստեղ՝ կյանքում: Տղամարդը սիրում է ցանկությամբ, տղամարդու սերը չարտահայտված ցանկասիրության բնույթ է կրում: Կնոջ սերը լոռում է երևակայության, տղամարդու սերը՝ ցանկասիրության մեջ»¹⁵: Փարվանա դիցուհին այդպես իր երևակայության մեջ էլ ապրում է, իսկ կտրիճներն՝ իրենց այրող ցանկությունների: Չմոռանաք բալլադի ամենակարևոր փոխաբերության մասին՝ թիթեռ և հոգի հասկացությունները հին հույները նույն՝ պսիխե բառով են արտահայտել, և հենց դրա համար են կտրիճները Թումանյանի բալլադում կերպարանափոխվում թիթեռների և այրվում կրակների մեջ:

Այսպես, Թումանյանի «Փարվանա» բալլադում, ինչպես շատ հեքիաթներում, դյուցազնավեպերում և ասպետական վեպերում, փորձությունների միջով կնոջը հասնելու ձգտումն անգիտակցական «խավարի» կրակներից մարդկային մտքից ճառագող լույսի միջոցով իմաստությանը՝ «անմահ հուրը» նվաճելու ձգտումն է, պարզապես դյուցազուններն այդպես էլ չեն հասկանում, որ դրա համար վճարվող գինը հրաժարումն է մարդկային հոգին այրող ցանկություններից, տենչերից ու կրքերից:

«ПАРВАНА»: ЭЗОТЕРИЧЕСКОЕ ЧТЕНИЕ - ГРАЧЬЯ САРИБЕКЯН - Баллада Ов. Туманяна "Парвана" в статье трактуется как испытание для освобождения от огня плотских страстей и достижение божественной мудрости и "святого пламени", которое не могут преодолеть удалцы. Аллегория их превращения в бабочек и сгорание в пламени трактуются как метафора сгорания душ в плотских желаниях (не случайно, что древние греки именовали бабочку и душу одним словом - психэ), по причине которой они не удастаиваются мудрости или принцессы Парвана.

Ключевые слова: Алхимические символы, душа, дух, ад, рай, огонь, священная пламя, аллегория, метафора, метаморфоза.

¹⁴ Նույն տեղում՝ էջ 19:

¹⁵ Энциклопедия духовной науки, http://bdn-steyner.ru/a1/parset1.php?id_page=203660&level=371

«PARVANA»: ESOTERIC READING - HRACHYA SARIBEKYAN - In the article the ballad of "Parvana", was written by H.Tumanyan, is interpreted as a personal attempt of liberation of human passions or efforts of achievement to divine wisdom or "sacred light" which is impossible for heroes. Their metamorphosis into butterflies and their burn in the fire which is an allegory (it is not contingency that ancient Greeks had expressed the terms of butterflies and souls with the same term of "psycho") is interpreted as a metaphor for souls burning in bodily desires and therefore not worthy of wisdom or the princess of Parvana.

Key words: *Alchemical symbols, soul, spirit, hell, heaven, fire, sacred fire, allegory, metaphor, metamorphosis.*

ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ՊՈԵԶԻԱՆ՝ ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Հոդվածում վերլուծվում և գնահատվում է Վլադիմիր Կիրակոսյանի «Արևմտահայ պոեզիան 1890-1907 թթ.» մենագրությունը՝ որպես արևմտահայ պոեզիայի համակարգված գնահատման օրինակ: Ընդգծված են այս մենագրության բոլոր առավելությունները նախորդ ուսումնասիրությունների համեմատ: Ցուցադրված են Վլադիմիր Կիրակոսյանի մեթոդաբանական նորամուծությունները, արևմտահայ պոեզիայի վերլուծության մոտեցումների առանձնահատկությունները:

Բանալի բառեր՝ գրականագիտություն, պոեզիա, շրջափուլ, համակարգ, սկզբունք, վերլուծություն, գնահատում, արժևորում, մենագրություն:

Խորհրդային գրականագիտության մեջ, տարբեր պատճառներով, արևմտահայ բանաստեղծությունը գրեթե բացառապես վերլուծվել է կոնկրետ հեղինակի կյանքի և ստեղծագործության պարագծով¹, ընդ որում՝ բացառապես հանրահայտ անունների, շատ հաճախ՝ անհատական ոճի սահմաններում, բացի այդ՝ անհրաժեշտ գույքահեռների մեջ դիտարկում-քննությունը սահմանափակելով լոկ հայտնի-տարածված անունների պարագրկմամբ:

Այս հանգամանքը մի կողմից՝ առկախել է արևմտահայ բանաստեղծության պատմության համակարգային-շրջափուլային վերլուծությունը, դրա՝ իբրև ստեղծաբանական-ավանդության-մտածողական ամբողջականության ընկալումը, մյուս կողմից՝ գնահատում-արժևորման ծիրից հանիրավի դուրս թողել բազմաթիվ անուններ, որոնցից մի քանիսն, ի դեպ, արևմտահայ բանաստեղծության ինքնացման-կայացման ու մանավանդ՝ տարբերակելիության տեսանկյունից բնավ երկրորդական դեմքեր չեն:

Անունների շրջանառման, արժևորման ու վերաարժևորման այդ բացը փոքր-ինչ շտկվեց Գիտությունների ազգային ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հրատարակած «Գրական դեմքեր» երկհատորյակի² մի քանի դիմանկար-ուսումնասիրություններում, ապա «Հայ նոր գրականության պատմություն» ակադեմիական հինգհատորյակի ու հատկապես հինգերորդ հատորի³ փոքրիկ գլուխներում ու ներածական հոդվածներում, որտեղ, Վլադիմիր Կիրակոսյանի գնահատմամբ, «ըստ էության առաջին անգամ դարասկզբի արևմտահայ

¹ Տե՛ս, օրինակ՝ **Հրանտ Թամրազյան**, Միամանթո, Երևան, «Հայաստան», 1969, **Հեկտոր Ռշտունի**, Դանիել Վարուժան, Երևան, «Հայպետհրատ», 1961, **Հեկտոր Ռշտունի**, Միամանթո, Երևան, «Սովետական գրող», 1979, **Լևոն Ասմադյան**, Վահան Թեքեյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971, **Վազգեն Գաբրիելյան**, Դանիել Վարուժան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1978, **Էդվարդ Զրբաշյան**, Միսաք Մեծարենց, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1977, **Ալբերտ Շարություն**, Պետրոս Դուրյան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1972, **Վաչե Սաֆարյան**, Մկրտիչ Պեշիկաշյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, և այլն, և այլն:

² Տե՛ս «Գրական դեմքեր», գիրք 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, գիրք 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988:

³ Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», հատոր 5, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979:

բանաստեղծությունը դիտվում է համազգային գեղարվեստական մշակույթի միասնական համակարգի մեջ»⁴:

Ահա այսպիսի գրականագիտական-վերլուծական հենքի վրա է ստեղծվել Վլադիմիր Կիրակոսյանի «Արևմտահայ բանաստեղծությունը 1890-1907թթ.» մենագրությունը, որը լույս է տեսել 1985 թվականին: Ճիշտ է, դրանից առաջ նա 1972-ին հրատարակել էր «Ռուբեն Սևակ» մենագրությունն⁵ ու մի քանի դիմանկար-ուսումնասիրություններ արևմտահայ բանաստեղծների մասին, սակայն այս մենագրությունն է, որ արտացոլում է Վլադիմիր Կիրակոսյանի արևմտահայ բանաստեղծության գնահատման ու արժևորման համակարգը:

Մենագրությունում Կիրակոսյանը ըստ արժանվույն և բավական նրբանկատորեն է գնահատում մինչ այդ ստեղծված աշխատությունները արևմտահայ բանաստեղծների մասին: «Ուսումնասիրության այս եղանակը (նկատի ունի մենագրական հետազոտության ձևը – Ա.Ն.) ըստ ամենայնի արդարացնում է իրեն հատկապես գիտության զարգացման այնպիսի մակարդակներում, երբ դեռևս առաջնահերթ խնդիրն է շրջանառության մեջ դնել հնարավորին չափ ծավալուն փաստանյութ, որոշակի համակարգի ենթարկել այն, գիտական հայացք մշակել երևույթների նկատմամբ, ճշգրտել հետազոտության առարկայի սահմաններն ու բնույթը, վերջապես հաստատել սկզբունքներ, որոնք հնարավորություն են ընձեռում ավելի ընդհանուր կարգի գիտական-տեսական հարցադրումների համար» (էջ 6), – գրում է նա:

Արևմտահայ բանաստեղծության գնահատման իր մեկնակետը, ահա, Կիրակոսյանը տեսնում է ընձեռած հնարավորության պարագծում, որտեղ գերիշխողը պետք է լինի տեսական-պրոբլեմային հարցադրումների տրամաբանությունը: Այս առումով, փոքր-ինչ առաջ անցնելով նշենք, որ միանգամայն բնական են գրապատմական իրողությունների խորապատկերում հատկապես արևմտահայ բանաստեղծության մեթոդին, ոճին, պատկերի կառուցման սկզբունքներին առնչվող վերլուծությունները: Ճիշտ է, այստեղ կան դեռևս տիրապետող մտայնությունների հետքեր, բայց Կիրակոսյանը մեծավ մասամբ սթափ է և ձգտում է հենվել ժամանակի տեսաբանների, հոգվածագիրների մտքերի տրամաբանության վրա, քան վերագրումներ անել, ինչպես ընդունված էր նախկինում:

Ու մանավանդ՝ այստեղ շատ կարևոր է նշել, որ Վլադիմիր Կիրակոսյանն ըստ էության առաջինն էր մեզանում, որ լայնորեն կիրառեց Հակոբ Օշականի «Համապատկեր արևմտահայ գրականության» կոթողային աշխատությունը՝ հատկապես տեսական գնահատումների ու ընդհանրացումների համար: Հանգամանք, որ հատուկ դիտավորությամբ մշտապես շրջանցվել է խորհրդահայ գրականագիտության մեջ՝ տարբեր պատճառներով:

Ընդ որում՝ Վլադիմիր Կիրակոսյանի մոտեցումն օշականյան խոսքին ու վերլուծության կերպին՝ իրոք գնահատելի է: Իրեն հատուկ նրբանկատությամբ նա շատ հաճախ դիտավորյալ շրջանցում է Օշականի կոնկրետ գնահատականները, որոնցում վիճելի շատ բան կա, վերցնելով միայն տեսական ընդհանրացումները, որոնցում Օշականն իրոք անգերազանցելի է և տարբեր ժանրերի, ժանրային իրո-

⁴ Վլադիմիր Կիրակոսյան, *Արևմտահայ բանաստեղծությունը 1890-1907 թթ.*, Երևան, ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1985, էջ 5: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջը կնշվի տեքստում, փակագծերի մեջ:

⁵ Տե՛ս Վլադիմիր Կիրակոսյան, *Ռուբեն Սևակ*, Երևան, ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1972:

⁶ Այս խնդրի շուրջ տե՛ս մեր «Հակոբ Օշականի ֆենոմենը» (մի քանի նկատառում) հոդվածը, «Հակոբ Օշական: Գիտաժողովի նյութեր», Երևան, «Նաիրի», 2011, էջ 79-83:

դությունների ձևակերպման տեսանկյունից մեկնակետային է եղել ու այսօր էլ է՝

Ուշագրավ է մենագրության կառուցվածքը, որը նույնպես նոր հայացքի արգասիք է: Երեք գլուխ, որոնցից յուրաքանչյուրում մեկ գլխավոր դեմք կա, թեպետ գրեթե չկա իր ընդգրկած ժամանակաշրջանում որևէ արևմտահայ բանաստեղծ՝ Հովհաննես Մեթյանից մինչև Կարապետ Ոսկյան, որոնց Վլադիմիր Կիրակոսյանը որևէ խնդրադրության շրջանակում չանդրադառնա:

Բայց եթե համապատասխանաբար՝ երկրորդ և երրորդ գլուխներում Բնտրայի ու Մեծարենցի կենտրոնականությունը տարակույս չի թողնում, ապա առաջին հայացքից փոքր-ինչ տարակուսելի է առաջին գլխում Արշակ Չոպանյանի՝ իբրև բանաստեղծի կենտրոնականությունը՝ ասենք՝ իբրև բանաստեղծ նրանից շատ ավելի տաղանդավոր Եղիա Տեմիրճիպաշյանի, թեկուզև Լևոն Շանթի ու Կարապետ Ոսկյանի գոյության պարագայում: Այստեղ ըստ ամենայնի մեծ դեր է խաղացել Չոպանյանի՝ բանաստեղծությունը տեսաբանելու կարողությունը, ընդ որում՝ և՛ հոդվածներով, և՛ սեփական բանաստեղծություններով: Մա կարևոր դրույթ է Կիրակոսյանի մենագրության էությունը և գնահատման սկզբունքներն ըմբռնելու համար: Եվ միտումն առավել ակնհայտ է դառնում, երբ նկատի ենք առնում, որ հաջորդ գլուխների կենտրոնականները՝ Բնտրան ու Մեծարենցը, հայտնի են նաև իրենց ինքնադատություններով՝ համապատասխանաբար՝ «Ներաշխարհ» և «Ծիածան» ժողովածուների առիթով:

Այս կերպ մենագրության մեջ որդեգրելով տեսաբանելու կարևորությունը՝ Վլադիմիր Կիրակոսյանն իր հերթին արևմտահայ բանաստեղծության պարագծում կենտրոնական դիրքավորում է հատկացնում այն բանաստեղծներին, որոնք հակված են պոեզիան տեսաբանելու՝ անկախ իրենց ստեղծածի մակարդակից ու արժեքից:

Եվ իսկապես, դիպուկ է ընդհանրացումը կոնկրետ Արշակ Չոպանյանի դեպքում, որ նրա ստեղծագործությունը դիտվում է «իբրև XX դարասկզբի բանաստեղծության բուռն տեղաշարժերի ելագիծ ու նախապատմություն» (էջ 22), և այստեղ կարևոր դերակատարում ունեն ոչ այնքան Չոպանյանի բանաստեղծություններն ինքնին, այլ բանաստեղծության նրա ըմբռնումները, որ մեծավ մասամբ արտահայտվել են նրա գրախոսականներում ու տեսական հոդվածներում: Այդ կերպ, ըստ էության, բյուրեղացավ (բնականաբար՝ այլ կարևոր բանաստեղծական անունների որոշակի դերակատարությամբ՝ Թովմաս Թերզյան, Կարապետ Ոսկյան, Եղիա Տեմիրճիպաշյան և ուրիշներ) բանաստեղծության նոր մտածողության ձևավորման ու կայացման ընթացքը, որը հետագայում մեծ դեր խաղաց արևմտահայ դարասկզբի ոսկե փառանգի գոյավորման հարցում:

Առանձնահատուկ շեշտադրելի է Վլադիմիր Կիրակոսյանի լայնախոհությունը, որը նույնպես արևմտահայ բանաստեղծության նախորդ գնահատումներում հաճախ հանդիպող երևույթ չէ: Խոսքը մասնավորապես վերաբերում է այն դեպքերին, երբ Կիրակոսյանը վերլուծում է արևմտահայ բանաստեղծության առնչությունները եվրոպական գրական ուղղությունների՝ մասնավորապես պառնասականների, սիմվոլիստների, իմպրեսիոնիստների հետ: Եթե նախկինում՝ սրանց հետադիմական բնորոշումն էին տալիս, կամ անպայման փորձում բանաստեղծներին խցկել կամ ռոմանտիզմի կամ ռեալիզմի «ճիրանները», ապա Կիրակոս-

⁷ Այս առումով Վլադիմիր Կիրակոսյանի՝ Հակոբ Օշականի գնահատումների կիրարկման արդյունավետ փորձը հետագայում բավական արդյունավետ ու կարևոր խնդրադրություններով կիրառեց գրականագետ Գրիգոր Հակոբյանը, հատկապես իր «Արևմտահայ նորավեպ. ժանրի տեսություն և պատմություն» (1995) և «Թերթոն վեպի տեսությունը. Երվանդ Օտյան» (2002) մենագրություններում:

յանը առավել նախապաշարմունքների է մոտենում այս հարցերին: Եվ դրա շնորհիվ է, որ նրա մենագրության մեջ մենք տեսնում ենք արևմտահայ պոեզիայի ամբողջ բազմազանությունը: Եվ սա է պատճառը, որ այսպես կոչված՝ ընթացիկ պոետների թույլ գործերի վերլուծություն անգամ հետաքրքիր է ու տրամաբանական: Այդ կերպ ցույց է տրվում որոնումների ընթացքը, բյուրեղացման պրոցեսը:

Թերևս փոքր-ինչ տարտղնված է թվում մենագրության վերնագիրն ու հետևաբար՝ ժամանակագրական ընդգրկումը: Եթե հենց 1890 թվականով սկսելը կարելի է հասկանալ նրանով, որ, Կիրակոսյանի խոսքով՝ մինչ այդ «պոեզիան... Պետրոս Դուրյանից հետո ավելի քան երկու տասնամյակ գոյատևում էր՝ առանց էական ազդեցություն թողնելու գրական կյանքի վրա» (էջ 16), ապա 1907-ով ավարտելը այն պարագայում, երբ մենագրության վերլուծական ծիրի մեջ չեն ընդգրկվում այդ շրջանում գրված այնպիսի գրքեր, ինչպիսիք են, ասենք՝ Վահան Թեքեյանի «Հոգերը» կամ Սիամանթոյի «Դյուցազնորենը», «Հայորդիները», «Հոգեվարքի և հույսի ջահերը», որոշ հարցականներ է թողնում: Կիրակոսյանը դա փորձում է բացատրել նրանով, որ 20-րդ դարասկզբին «90-ականների սկզբին ծայր առած բանաստեղծական վերածննդի շարժումը մեր դարի սկզբին որոշակիորեն երկփեղկվում է»՝ հիմնական գործոն համարելով 1896 թվականի կոտորածներից հետո արևմտահայ գրողների մի զգալի մասի հեռանալը Պոլսից և նրանց՝ գրականության հենքում ազգային ազատագրության գաղափարաբանության գերիշխումը: Սա, ըստ Կիրակոսյանի՝ «իր ամբողջ գեղարվեստական համակարգով զգալիորեն տարբեր բովանդակություն ունեւ, քան երկրի ներսում ծավալվող բանաստեղծական շարժումը» (էջ 8): Պետք է ասել, որ սա միանգամայն ստույգ հիմնավորում է, մանավանդ որ իսկապես, օրինակ՝ Սիամանթոյի գրական մտածողությունն ու գաղափարաբանությունը արևմտահայ պոեզիայում տիրապետող դարձան 1910-ականներին: Սակայն Կիրակոսյանի բացատրությամբ ստացվում է արևմտահայ, այսպես ասած, *դրսի* և *ներսի* գրականություն, որ նույնն է, ինչ Հովհաննես Թումանյանի տարբերակված *քնաշխարհիկն* ու *տաքաշխարհիկը*: Եվ մենագրության մեջ վերլուծված է *ներսի* պոեզիան: Կարծում ենք, այս խնդիրն առավել մանրամասն վերլուծության կարիք ունեւ մենագրության պարագծում և կարող էր երևան բերել չափազանց հետաքրքիր ընդհանրացումներ: Մյուս կողմից՝ Վլադիմիր Կիրակոսյանը նաև դրա հենքն է ստեղծել իր բազմաթիվ առումներով մեկնակետային ու իսկապես շատ արժեքավոր «Արևմտահայ բանաստեղծությունը 1890-1907թթ.» մենագրությունում:

ЗАПАДНОАРМЯНСКАЯ ПОЭЗИЯ В ОЦЕНКЕ ВЛАДИМИРА КИРАКОСЯНА - АРКМЕНИК НИКОГОСЯН - В статье анализируется и оценивается монография Владимира Киракосяна «Западноармянская поэзия 1890-1907 годов» – как пример системной оценки западноармянской поэзии. Выделены все преимущества данной монографии по сравнению с предыдущими исследованиями. Демонстрируются методологические новации Владимира Киракосяна, особенности его подходов к анализу западноармянской поэзии.

Ключевые слова: *литературоведение, поэзия, цикл, система, принцип, анализ, оценка, монография.*

WESTERN ARMENIAN POETRY AS ASSESSED BY VLADIMIR KIRAKOSYAN - ARK MENIK NIKOGHOSYAN - The article analyzes and evaluates the monograph of Vladimir Kirakosyan "Western Armenian Poetry of 1890-1907" as an example of a systemic assessment of Western Armenian poetry. All the advantages of this monograph in comparison with previous studies are highlighted. The methodological innovations of Vladimir Kirakosyan, the peculiarities of his approaches to the analysis of Western Armenian poetry are demonstrated.

Key words: *Literary science, poetry, cycle, system, principle, analysis, assessment, assessment, monograph.*

ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ

**ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆՁՅԱՆԻ ԱՐՁԱԿԻ ՊՈԵՏԻԿԱՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ
ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ**

Գուրգեն Խանջյանը ժամանակակից հայ արձակի ամենակարևոր ներկայություններից է: Կարողանում է հետաքրքիր պատմել, դինամիկ զարգացում ունեցող սյուժեներ կառուցել, կերպարները բազմազան են, բարձրացված հարցադրումները՝ համահունչ նոր ժամանակների հրամայականին: Այսինքն, հնարավորություն է ստեղծվում անդրադարձ կատարել նրա արձակի պոետիկային ու գաղափարական հարցադրումներին:

Խանջյանի պոետիկան և գաղափարական հարցադրումները գրականագետները կապեցին էկզիստենցիալ փիլիսոփայության և աբսուրդայնության հետ: Նրա բնագրում կան Գաֆկայի կերպարանափոխությանը հանգույն պատմվածքներ:

Այս կերպափոխումները երևակայական հնարանքներ են, որոնք, սակայն, ունեն նոր ժամանակները բնութագրող ռեալական երևույթների թաքնիմաստներ, որով էլ ամբողջանում է Խանջյանի պոետիկան:

Ընդհանրապես մարդու բնագոյային նկարագիրը շատ է հետաքրքրում Գուրգեն Խանջյանին: 1995 թ. լույս տեսած «Հիվանդանոց» վեպը տարակերպ մեկնաբանությունների առիթ դարձավ: Հիվանդանոցը շատերի կողմից մեկնաբանվեց իբրև Խորհրդային Միության խորհրդանիշ: Սակայն Խանջյանն այն անվանել է հիվանդանոց, քանզի այդ պատերից ներս տիրում են մարդկային հոգու ու մարմնի ամենաարատավոր բարքերն ու սովորույթները:

Գուրգեն Խանջյանի արձակում հետզհետե նոր գաղափարական շերտեր են բացվում: Հատկապես Հայաստանի՝ քրիստոնեության ընդունման 1600-ամյակի, 2000-ական թվականների աշխարհի վերջի ապոկալիպտիկ սպասումների, Հիսուսի երկրորդ գալստյան սպասման մթնոլորտում գրողի երրորդ աչքը բացվում է և սնեղվում քրիստոնեական թեմաների ուղղությամբ: Դավանաբանական ու հավատի հարցերն ու փիլիսոփայական-սուրբգրային թեմաները չեն, որ հետաքրքրում են հեղինակին, այլ՝ քրիստոնեության խոսք-պատմության բերած կենսականության և դրանից բխող հակասությունների շուրջ է ծավալվում գրողը:

Քրիստոնեական խաչելության միջի շուրջ կասկածամիտ վերաբերմունքը ոչ թե ընդդեմ հավատի աթեիստական մոտեցում է, այլ մարդկային ընկալման մեջ փոփոխություններ մտցնելու և մարդու հայացքն ավելի ընդլայնելու փորձ: Բացարձակ արժեքներն անգամ ենթակա են կազմաքանդման, որով էլ առաջնորդվում է գրողը: Բացարձակը կործանարար է, քանզի ընթացք ու զարգացում չի ենթադրում, իսկ Գուրգեն Խանջյանի մտածողությունն անընդհատ տեղաշարժերի մեջ է:

Խանջյանի ստեղծագործություններն առաջինն աչքի են ընկնում անկեղծությամբ, անմիջական զգացողություններով և այս պարագայում պետք է փաստեմ, որ Գուրգեն Խանջյանն այն հեղինակն է, որի բնագիրն ավելի իր ապրածի վերարտադրում է, քան հորինում: «Լուր չկա» վեպը, այդ առումով հարազատ է նրա գրչին:

Խանջյանի հերոսները հաճախ հեռացող են և նույնանում են Փոքր Միերի հետ, որն աշխարհից խռով՝ փակվեց ապառաժի մեջ:

Մնում է փաստել, որ Գուրգեն Խանջյանի արձակի պոետիկան նորարարական է, բարձրացված հարցադրումներն արդիական ու մեր օրերին համահունչ: Հենց սրանով

Էլ Խանջյանի արձակը դառնում է նոր ժամանակների մարդու կյանքի ուղեկիցը:

Բանալի բառեր՝ ժամանակակից, հայ արձակ, սյուժե կառույց, կերպար, բազմազան, հարցադրում, պոետիկա, գաղափարական, էկզիստենցիալ, փիլիսոփայություն, աբսուրդայնություն, բնագիր, Կաֆկա, կերպարանափոխություն, պատմվածք, վեպ, երևակայական, մեկնաբանություն:

Գուրգեն Խանջյանը ժամանակակից հայ արձակի ամենակարևոր ներկայություններից է: Կարողանում է հետաքրքիր պատմել, դինամիկ զարգացում ունեցող սյուժեներ կառուցել, կերպարները բազմազան են, բարձրացված հարցադրումները՝ համահունչ նոր ժամանակների հրամայականին: Այսինքն, հնարավորություն է ստեղծվում անդրադարձ կատարել նրա արձակի պոետիկային ու գաղափարական հարցադրումներին:

Դեռևս ԽՍՀՄ-ը չէր փլուզվել, բայց հիմքերն արդեն խաբխվել էին, երբ մամուլում երևացին Գուրգեն Խանջյանի պատմվածքները: Ապա դրանք ամբողջական լույս տեսան առանձին գրքով՝ «Շարժասանդուխք» (Երևան, 1994) վերնագրով, որը Խանջյանի առաջին գիրքն է:

Այն միանշանակ չընդունվեց և քննադատության մեջ, ինչպես գրական միջավայրում հակասական կարծիքներ հնչեցին: Ամեն դեպքում Խանջյանի պոետիկան և գաղափարական հարցադրումները կապվեցին էկզիստենցիալ փիլիսոփայության և աբսուրդայնության հետ: Այս գրքում կան Կաֆկայի կերպարանափոխությանը հանգույն պատմվածքներ: «Առնետը» պատմվածքում մարդն ու առնետը այնքան են ապրում իրար կողքի, որ մարդը կամաց-կամաց վերածվում է առնետի ու սկսում ապրել կրծողների կյանքով՝ հագուրդ տալով իր բնագոյներին:

Մեկ այլ՝ «Ճարպայի կերպարանափոխությունը» պատմվածքում Ճարպոն, ով աչքի է ընկնում իր ագահությամբ և ոչ մի բանի առջև կանգ չի առնում իր «Մեծ բուտեբբրոտին» տիրանալու համար, կորցնում է իր դեմքը, ավելի ճիշտ՝ դեմքը ձևափոխվում է հետույքի. «Հաճախ, զուգարանում պետքն ավարտելուց հետո նա թուղթը մեքենայորեն տանում էր դեմքին: Իսկ ճաշելիս կատարվում էր հակառակ երևույթը՝ անձեռոցիկը բերանին տանելու փոխարեն, անսպասելիորեն իջեցնում էր ցած նստատեղին: Նույնակերպ անհեթեթություններ էին պատահում նաև երբ ձեռքն էր առնում սանրը, ատամի խոզանակը, օձառը կամ ակնոցը»¹:

«Արագիլ» պատմվածքում ճամփորդությունների սիրահար հերոսը, որին ծաղրաբար բոլորն Արագիլ էին անվանում, հանկարծ վերածվում է արագիլի ու չվում-հեռանում իր հայրենի գյուղից:

Այս կերպափոխումները երևակայական հնարանքներ են, որոնք, սակայն, ունեն նոր ժամանակները բնութագրող ռեալական երևույթների թաքնիմաստներ, որով էլ ամբողջանում է Խանջյանի պոետիկան: Մարդկությունը վերածվում է առնետների խմբի, քանզի չարիք է դարձել Երկիր մոլորակի և ինքն իր համար, առաջնորդվում է միայն բնագոյներով, մարդը կորցրել է իր հոգևոր նկարագիրը, դարձել է աննպատակ և ագահորեն մտածում է սոսկ իր ստամոքսի մասին: Ի վերջո հայ մարդը վերածվել է արագիլի, քանզի «որտեղ հաց, այնտեղ կաց» ասացվածքի հանգույն առանց ցավի և զղջման լքում է իր բնորրանն ու հայտնվում օտար երկրներում: Մա էլ հիմնական գաղափարադրումն է գրողի:

¹ Խանջյան Գուրգեն, Շարժասանդուխք, Երևան, 1994, էջ 94:

Ընդհանրապես մարդու բնագոյային նկարագիրը շատ է հետաքրքրում Գուրգեն Խանջյանին: 1995 թ. լույս տեսած «Հիվանդանոց» վեպը տարակերպ մեկնաբանությունների առիթ դարձավ:

Հեղինակը պատկերում է աշխարհից մեկուսացված մի շինություն, որտեղ փախում են գլխավոր կերպարին՝ Գրիգորին: Այս շինությունը շատերի կողմից մեկնաբանվեց իբրև Խորհրդային Միության խորհրդանիշ: Սակայն Խանջյանն այն անվանել է հիվանդանոց, քանզի այդ պատերից ներս տիրում են մարդկային հոգու ու մարմնի ամենաարատավոր բարքերն ու սովորույթները: Կրքերի, սեռական անհագուրդ ակտերի այդ իրականությունից փախչելու ելք է որոնում Գրիգորը: Սակայն նրա հոգին այդ իրականության մեջ արդեն իսկ խեղվել էր և երբ հասկանում է, որ իր հետ անգամ ինքեստի դեպք է տեղի ունեցել, մի տեսակ անտարբեր է արձագանքում այդ իրողությանը, չնայած իր մարդկային բարձր նկարագիրը կորցրած Գրիգորին արդեն իսկ սպասում էր առաստաղից կախված կեռը, որից վաղ թե ուշ կախաղանի պարանն իր ձեռքով պիտի կապեր: Խանջյանը հենց կեռի պատկերով էլ ավարտում է վեպը, իր վրա դատավորի պարտավորություն չվերցնելով և վերջնական հանգուցալուծումը թողնելով ընթերցողին:

Այնուհետև լույս տեսավ «Սովերներ խամաճիկների փողոցում» գիրքը (Երևան, 1996), որտեղ զետեղված են Խանջյանի մի քանի պատմվածքներ և գրքի համանուն վիպակը:

Այդ պատմվածքներում դարձյալ պատկերվում են նոր ժամանակների արատավոր բարքերը, որն անգամ ծայրահեղության է հասնում «Բիբի» պատմվածքում: Այս գործում պատկերվում է միայնակ կնոջ և շան կապը, որը հատկապես ֆիզիկական դրսևորում ունի: Այս պատմվածքը թերևս ածանցվել է «Հիվանդանոց» վեպի մի պատկերից, երբ Գրիգորը հիվանդանոցից աղբատարի միջով փախչելիս տարբեր սենյակներում տարաբնույթ այլանդակությունների է ականատես լինում, այդ թվում նաև մի պառավ կնոջ և ածառիա շան կենակցումի տեսարանին է հանդիպում:

«Սովերներ խամաճիկների փողոցում» վիպակն առանձնակի պատկերում է մարդու դիմագծի աղավաղման գաղափարը: Լուսանցքում հայտնված, հասարակությունից (խամաճիկներ) չհասկացված մարդը վերածվել է սովերի, կորցրել է իր ուժն ու կորուվը, չի հարմարվում նոր իրողություններին, քանզի դարը գիշատիչ է, իսկ մարդը՝ խիղճ: Խիղճը բերում է խեղճության, և իր ես-ը կորցրած մարդը փորձում է վայրագության օրենքով մեծացնել որդուն, որ նրա միջից դուրս վռնդի խիղճն ու խեղճությունը: Դաժանության թատրոնին հատուկ պատկեր է ստեղծում Խանջյանը, երբ ներկայացնում է մարդուն, ով շան ձագին կապել է ծառից և ստիպում է որդուն քարկոծելով սատկացնել վերջինիս: Սա նոր ժամանակների արատավոր երևույթների բացահայտ պատկերում է:

Գուրգեն Խանջյանի արձակում հետզհետե նոր գաղափարական շերտեր են բացվում: Հատկապես Հայաստանի՝ քրիստոնեության ընդունման 1600-ամյակի, 2000-ական թվականների աշխարհի վերջի ապոկալիպտիկ սպասումների, Հիսուսի երկրորդ գալստյան սպասման մթնոլորտում գրողի երրորդ աչքը բացվում է և սևեռվում քրիստոնեական թեմաների ուղղությամբ: Դավանաբանական ու հավատի հարցերն ու փիլիսոփայական-սուրբգրային թեմաները չեն, որ հետաքրքրում են հեղինակին, այլ քրիստոնեության խոսք-պատմության բերած կենսականության և դրանից բխող հակասությունների շուրջ է ծավալվում գրողը:

«Սպանել Փրկչին» (Երևան, 2001) գիրքն այդ առումով թարմ, հանդուգն ու նորարարական հայտնություն ունեցավ հայ արձակում: Գրքում զետեղված են երեք

վիպակներ՝ «Սպանել Փրկչին», «Հիստերիաներ», «Խրամատային գրառումներ»:

Առաջինը պատմական նովելի արտաքին կառուցվածքով, բայց նոր ժամանակների փիլիսոփայական հատվածքով մի յուրօրինակ երկ է: Պատմական հիմքը Աբգար արքայի նամակն է Հիսուսին, իսկ բուն բովանդակությունը ծավալվում է հայ քրմերի կողմից Երուսաղեմ լրտես-մարդասպան Չունակին ուղարկելու պատմության շուրջ, ով պետք է հայտնաբերեր ու սպաներ Հիսուս Նազովրեցուն: Սկսվում են Չունակի որոնումները, և տենդագին կերպով փնտրում է նա Փրկչին: Լինում է «Նոր կտակարանից» մեզ հայտնի տեղանքներում, հանդիպում կերպարներին, սակայն Փրկչին հանդիպել այդպես էլ չի հաջողվում: Անընդհատ լսում է նրա մասին, հետևում լուրերի հետագծին, սակայն այդպես էլ չի կայանում նրանց հանդիպումը:

Այս վիպակի պոետիկայի ակունքները գալիս են դեռևս «Ստվերներ խամաճիկների փողոցում» գրքում զետեղված «Դռներ, աստիճաններ, դռներ» պատմվածքից: Այս պատմվածքում անդամ մի մարդ հայտնվել է կիսախավարի մեջ անորոշ մի շենքում ու փնտրում է Մանվելին: Տարբեր դռներ է ծեծում, բարձրանում-իջնում աստիճաններով, հարցումփորձ անում Մանվելի մասին, սակայն բոլորը թեև տեղյակ են Մանվելից, այնուհանդերձ, ոչ ոք չի տեսել նրան: Անգամ հանդիպում է Մանվելի գոյությունը փաստող գրության. «Պատի վրա կավիճով գրված է. «Ուզեմ՝ կգամ, չուզեմ՝ չեմ գա»: Կողքին՝ մի ուրիշ գրություն՝ «Խաբեբա»»²: Սակայն մինևույն է, Մանվելի հետքերը կարծես կան, բայց նա չկա: Մանվելը աստվածաշնչյան Մանուելն է, Փրկիչը, որի գալստյանն արդեն երկու հազարամյակ սպասում է մարդը: Ուստի պարզ է, թե ում է փնտրում պատմվածքի հերոսը:

Այդպես էլ Չունակի փնտրտուքները ձախողվում են և միայն վերջում, թվում է՝ ուր որ է պիտի հանդիպի Փրկչին, դա էլ է խաթարվում, պատվում առեղծվածով ու մշուշով:

Քրիստոնեական խաչելության միֆի շուրջ նման կասկածամիտ վերաբերմունքը ոչ թե ընդդեմ հավատի աթեիստական մոտեցում է, այլ մարդկային ընկալման մեջ փոփոխություններ մտցնելու և մարդու հայացքն ավելի ընդլայնելու փորձ: Բացարձակ արժեքներն անգամ ենթակա են կազմաքանդման, որով էլ առաջնորդվում է գրողը: Բացարձակը կործանարար է, քանզի ընթացք ու զարգացում չի ենթադրում, իսկ Գուրգեն Խանջյանի մտածողությունն անընդհատ տեղաշարժերի մեջ է:

Նմանատիպ մոտեցում ունի գրողը նաև «Հիստերիաներ» վիպակում: Սա կարծես Հիսուսի վկայությունը լինի նորկտակարանային վերջին օրերի իրողությունների վերաբերյալ:

Կարելի է ասել՝ գրողը ստեղծել է պարականոն ավետարան:

Պատումը առաջին դեմքով է, և պատմողը հաճախ դիմում է հորը՝ վերինին: Կերպարները ևս ծանոթ են Աստվածաշնչից՝ Պետրոս, Սիմոն, Հակոբ և այլք: Կա նաև Խորհրդավոր ընթրիքի տեսարանը: Սակայն սա սովորական պատմություն է մարդու մասին, ով նույնիսկ, կարելի է ենթադրել, տառապում է շիզոֆրենիայով:

Թեման հետագայում ևս շարունակվում է: «Մարդկանց տուն ուղարկիր» (Երևան, 2004) գրքում զետեղված «Թզենու մասին» էսսեում Հիսուսը երևում է որպես մի հարբեցող, ով առավոտյան խումհարից ելնելու համար ձեռքը զգում է թզի ծաղին, որ պտուղ քաղի և փոխի չորացած բերանի մթնոլորտը, սակայն թզենին գարնանը չէր կարող պտուղ ունենալ, ուստի զայրացած, ինչ-որ տեղ նաև չարացած Հիսուսը անիծում է, և թզենին չորանում է: Այ քեզ բա՛ն, Հիսուսի մեջ չարություն: Սա նորմալ է,

² Խանջյան Գուրգեն, Ստվերներ խամաճիկների փողոցում, Երևան, 1998, էջ 43:

Եթե դիտարկում ենք այն տեսանկյունից, որ Հիսուսն էլ մարդ էր, ուստի զերծ չէր մարդկային թուլություններից ու թերություններից: Նրա մեջ ևս հավասարապես գոյակցում են լույսն ու ստվերը, չարն ու բարին, ճիշտն ու սխալը:

Գուրգեն Խանջյանի «Լուր չկա»³ վեպը Հայկ Համբարձումյանի Գրական թերթում լույս տեսած գրախոսականով և ԳՄ կլոր սրահում կազմակերպված քննարկումով կարծես թե փակված էտապի վերածվեց: Այնինչ, այս վեպը բազմաթիվ հարցադրումներ է բարձրացնում, արդիական է և տարբերությունների ու զանազան մեկնությունների տեղիք է տալիս: Հայ արդի գրականության մեջ հենց վեպի երևույթները պետք է ընթացք տան արձակյին և ելակետային լինեն նոր գեղարվեստական մտայնության, նոր ձևաբովանդակային կառուցումների համար: Այս իմաստով «Լուր չկա» վեպի կարևորությունն առավել քան ուշադրության արժանի է:

Գուրգեն Խանջյանի «Լուր չկա»-ն, հենց սկզբից կարևոր հարցադրում է առաջադրում՝ **ի՞նչ չկա:**

Բնականաբար, տրամաբանությունը հուշում է, որ եթե իմանաս ամբողջի մեջ ինչ չկա, ուրեմն կիմանաս նաև թե **ի՞նչ կա:**

Ինչ կա-ի մասին քիչ անց, իսկ հիմա՝ այն, թե ինչ չկա:

Խանջյանի ստեղծագործություններն առաջինը աչքի են ընկնում անկեղծությամբ, անմիջական զգացողություններով, և այս պարագայում պետք է փաստեն, որ Գուրգեն Խանջյանն այն հեղինակն է, որի բնագիրն ավելի իր ապրածի վերարտադրում է, քան հորինում: Այս վեպն այդ առումով հարազատ է նրա գրչին, բայց առանձնանում է գեղարվեստական և փիլիսոփայական հեղինակային **ի՞նչ չկա** հարցադրումով:

Եթե նախորդ ստեղծագործություններում Խանջյանը փնտրում է կամ փորձում է ցույց տալ, թե ինչ կա այսօր մարդու շուրջը, այս վեպում հակառակ ճանապարհն է բռնում, որը, Չարենցի խոսքով՝ «վերադարձը դարձ չէ, ոչ էլ անցյալի կրկնությունը»:

Այս իմաստով վեպը լուրի, նորության, արտասովորի, հետաքրքիրի... փնտրտուք է: Լուր եզրը սրանց պայմանական-հավաքական փիլիսոփայական կողի է վերածում հեղինակը:

Եթե ուշադիր հետևենք վեպի սկզբին, որը լուրերի թվարկում է, ապա մոտավոր կծանոթանանք խանջյանական լուրի բովանդակությանը:

Առաջին անգամ հոգեկան հիվանդին հանդիպելը, առաջին անգամ եկեղեցի մտնելը, առաջին անգամ բաղնիքում մերկ կանանց տեսնելը և «դեղնավուն աչքերի խումար հայացքով» շան թուլան: Սրանք սովորական միջադեպեր են, սակայն իրականում ձևավորել են մարդուն, և այս երևույթները յուրաքանչյուր մարդու հետ պատահել են, բնական է այլ դեպքերի տեսքով:

Առաջինը՝ **վախն** է, երկրորդը՝ **հավատը**, հաջորդը **սեռի**, իսկ մյուսը **խղճի** գոյացումներն են որպես լուր: Սրանք պատահական ընդգծում-շեշտադրումներ չեն հեղինակի կողմից, քանզի մարդու յուրաքանչյուր արարք այսպես թե այնպես ուղղակիորեն ելակետ ունի այս հոգեբանական հատույթներից: Հեղինակը նույնիսկ լուրի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունք ունի և սրանք մարդու էությունը սահմանափակող երևույթներ է համարում. «Կյանքի նենգությունից է՝ կեղծ լուրեր է շարում ճամփին, որպես ծուղակ, փորձելով արագորեն կաղապարել, ենթա-

³ Գուրգեն Խանջյան, Լուր չկա, Երևան, ՀԳՄ հրատ., 2006, էջ 3: Վեպից մյուս քաղվածքները կարվեն նույն հրատարակությունից, էջերը կնշվեն մեջբերումից հետո՝ փակագծերում:

կել շենքը նոր անցած անփորձ մարդուկին:» (էջ 7): Մարդու ճանաչողության բաղադրությունը կազմող այս չորս լուրերը գոյավորում են մարդու գիտակցականը և նրա ապրելու, ինչ-որ բան անելու, գործելու նախապայման են հանդիսանում:

Ստացվում է, մարդն ամբողջ կյանքի ընթացքում մեծ իմաստով կամ վախենում է, կամ հավատում է, կամ սիրում է, կամ խղճում է, և անընդհատ նույնը կրկնվում է շրջապատյոթի նման:

Գուրգեն Խանջյանը «Բոլերո» պիեսում բարձրացնում է «ամեն ինչ ասված է, էլ ոչինչ չկա ասելու» փիլիսոփայական-գաղափարական հարցադրումը: Այս վեպը կենսական-փիլիսոփայական ավելի խորքեր է տնտղում՝ «ամեն ինչ արված է, էլ ոչինչ չկա անելու»։ «... երբ կյանքը զուգորդելի էր աշնանային լողափի սոթիկ, գորշ քարերի միապաղաղ հաջորդականությանն ու թվում է՝ անակնկալներ այլևս չունեք պահած...» (էջ 5):

Ամեն ինչ արածի մտորումներ ու հոգեբանություն սովորաբար ունենում է կյանքի մեծ մասն ապրած, երիտասարդությանը հրաժեշտ տված, ծերության նախաշեմին գտնվող մարդը: «Լուր չկա»-ի հերոսը այդ մարդն է. «...գոնե ինձ համար՝ արդեն մոտ տասնութ հազար օրվա պատմություն է» (էջ 3): Հանրահաշվից տարրական հաշվարկի շնորհիվ պարզ է դառնում, որ հերոսն հիսունն անց է: Գրականագետ Արամ Խաչատրյանը նկատում է. «Առաջին դեմքով գրված վեպում, բնականաբար, շատ են ներքին մենախոսություններն ու մտածմունքները տարբեր հարցերի շուրջը»⁴: Սա ծերածող մարդու նկարագիրն է, որ դարակես ապրել է, չի հանդուրժում իր վիճակը, ծերության հետ չի հաշտվում:

Մարկեսի «Մերը խղերայի ժամանակ» վեպում հերոսներից մեկը՝ բժիշկ Ուրբինոն, ծերության հոտ է առնում իրենից և օժանդակով փորձում խեղդել իր մարմնից տարածվող հոտը: Հոգեբանական այս վիճակը բնորոշ է նաև Խանջյանի հերոսին, սակայն այստեղ ծերացող մարդու զգացողությունների, ապրումների, ընդգրկումն ավելի խորն է վերարտադրված:

«Լուր չկա»-ի հերոսը՝ Մուրենը, իր մտորումների մեջ գիտակցության հոսքի պահին, թվում է, անիմաստ հաշվարկ է անում. «Մտովի հաշվեցի, թե ինչքան եղունգ եմ կտրել կյանքիս ընթացքում, ստացվեց երեք մետր. սա մեկ մատի հաշվարկն է, տասը մատի հաշվարկով, բնականաբար՝ երեսուն մետր: Հաշվեցի նաև կտրած եղունգային զանգվածի քաշը. երեք գծամետրը՝ մեկ կիլոգրամ, տասը մատների դեպքում՝ տասը կիլոգրամ: Այսպիսով, կյանքիս ընթացքում ես իմ ձեռքի մատներից օտարել եմ մոտ երեսուն գծամետր եղունգ, մոտ տասը կիլոգրամ քաշով: Փորձեցի նաև մազերի հաշվարկն անել, սակայն շատ արագ ընկա հիշողությունների որոգայթը...» (էջ 8): Եղունգի, մազի արտադրություն-կորուստը՝ անցած օրերի, կորուստների, և ներկայում անցյալ դարձած հաջողությունների-ձեռքբերումների (որոնք ևս կորուստ են, քանի որ անցյալում են) ընդգրկումն ունեն և մի ծավալուն վեպ կարող էին դառնալ:

Այս հերոսի կենսական տարածք է մուտք գործում հուշը, որը վեպի սկզբում **լուրի** արժեք ունի: Խանջյանի վեպը ներկայի և վերհուշի ձուլապատումի է վերածվում:

Վերհուշը հայ արձակ թափանցեց դեռևս 70-ականների վերջին, 80-ականների սկզբին և առաջնային էր մինչև 90-ականների վերջը: Սակայն վերհուշի կիրառումն այդ տարիներին որպես **գեղարվեստական ձև** և **պատմելաժ** էր հանդիսանում:

Խանջյանը հուշի նոր կիրառում է գտնում: Բանն այն է, որ նրա հերոսի կյանքում վերհուշը ներկային համարժեք իմաստ է ստանում: «Լուր չկա» վեպում ոչ թե

⁴ Տե՛ս, <http://gretert.com/14-2017-4/>

գործողություններն են վերհուշի ձևով վերարտադրվում, այլ վերհուշը դառնում է ներկայի գործողությունների մասնակից: Խախտվում են տարածաժամանակային բոլոր սահմանները, և սա Խանջանը կատարում է *գիտակցաբար*. «Եվ զեկուցում են, և պարզվում է՝ բոլոր ժամանակները եղել են այսօր, հենց հիմա, միաժամանակ: Խախտվում են նաև տարածական բաժանումները, պարզվում է՝ բոլոր ծանոթներդ քեզ հետ նույն մանկապարտեզն են հաճախել, նույն դպրոցում են սովորել, նույն ճամբարում հանգստացել, նույն բանակում ծառայել...» (էջ 139):

Խանջանի հուշ-ներկա զուգակցումը ժամանակակից կյանքի և 70-ականների հիպիական շարժման հակադրումն է դառնում: Հեղինակը կարողանում է 70-ականների կենսական թրթիռները նրբորեն հյուսել այսօրվա իրականությանը և մարդու ներքին ազատության խնդիրը կարևորել:

Վերհուշը սոսկ մերկապարանոց հիշողությունների շղթա չէ Խանջանի բնագրում: Հեղինակը կարողանում է տեսիլի, հալուցիանացիաների, երազների և անցյալի ֆոտոների միջոցով մոգական բնույթ հաղորդել անցյալին և վերախմաստավորել:

Ներկան՝ արցախյան պատերազմին մասնակից, լուսանցքում հայտնված, ինքնասպան եղած Դանդ Արշոյի և օտարության ճամփան բռնած, տուն, կին, երեխա բախտի քմահաճույթին թողած նրա եղբոր կենսագրություններում է խտանում:

Նկարիչ Սուրենը խճճվել է ներկայի և անցյալի իր ապրումների համակարգում: Պատահական չէ Խանջանի կողմից Հերման Հեսսեի գայլի հիշատակումը: Ներքին բնագրում «Տափաստանի գայլի» հերոսն ու «Լուր չկա»-ի հերոսը զգացողությունների հարազատություն ունեն:

Ինքնադիմանկարը հիշեցնում է «Դորյան Գրեի դիմանկարը». «Սակայն մահվան հոտ, այնուամենայնիվ, գալիս է այս ինքնանկարից: Ճիշտ է՝ ինքս ինձ շատ առաջ էի ուղարկել ժամանակի մեջ, բայց՝ ոչ այսքան, հիմա՝ է փոխվել՝ նախորդ անգամ տեսնելուց հետո» (էջ 151): Իր դիմանկարը մեղքի զգացողության արտահայտություն է դառնում և հեռավոր կոնտակտ է ստեղծում Ուալդի բնագրի հետ:

Վեպի ավարտը գտնված է: Թվացյալ *լուր* հիշողությունները Սուրենի կյանքի ընթացքը հանգեցնում են նոր շրջապատույթի՝ *վախի* (քրեական պատասխանատվություն), *հավատալքման* (անընդհատ ազատության փնտրտուքը, հավատի կապանքներից ձերբազատվելու ճիգը), *սեռի* (Փառոյի հետ սեռական կապը) և *խղճի դեմ մեղքի զգացողության* (Լինչի հետ բարեկամությունը):

Այս շրջապատույթում Խանջանի հերոսի մոտոցիկլետով հեռացումը նույնանում է Փոքր Միերի ապառաժի մեջ փակվելուն:

Ինքն էր հորինել Դանդ Արշոյի ինքնասպանությունը, նրա թողած նամակը, քննիչ Լևոն Գասպարյանի հետաքննությունը, Փառոյին, բայց *լուր* չէր գտել իր համար: Թերևս *լուրի* փնտրտուք է նաև նրա հեռացումը, որը բազմիմաստ մեկնաբանությունների առիթ կարող է հանդիսանալ: Այնուհանդերձ, հեռացումին ինչ-որ նորը պիտի հաջորդի, որին սպասում է Խանջանի ընթերցողը:

Մնում է փաստել, որ Գուրգեն Խանջանի արձակի պոետիկական նորարարական է, բարձրացված հարցադրումներն արդիական ու մեր օրերին համահունչ: Հենց սրանով էլ Խանջանի արձակը դառնում է նոր ժամանակների մարդու կյանքի ուղեկիցը:

ПОЭТИЧЕСКИЕ И ИДЕОЛОГИЧЕСКИЕ ВОПРОСЫ ПРОЗЫ ГУРГЕНА ХАНДЖЯНА - **АРМЕН АВАНЕСЯН** - Гурген Ханджян – одна из важнейших фигур современной армянской прозы. Он умеет интересно рассказывать, строить сюжеты с динамичным развитием, где персонажи разнообразны, а поднимаемые вопросы соответствуют велениям нового времени. Иными словами, есть возможность задуматься над поэтическими и идейными вопросами его прозы.

Литературоведы связывали поэтику и идеологические вопросы Ханджяна с экзистенциальной философией и абсурдом. В его оригинальных работах есть рассказы, похожие на превращения Кафки. Эти превращения являются мнимыми изобретениями, но в них есть тайны реальных явлений, характеризующих новое время, что обобщает поэзию Ханджяна.

Вообще Гургена Ханджяна очень интересует инстинктивный портрет человека. Опубликованный в 1995 году роман «Больница» стал поводом для различных комментариев. Больница воспринималась многими как символ Советского Союза. Однако Ханджян назвал ее больницей, потому что в тех стенах царят самые порочные нравы и привычки человеческой души и тела.

В прозе Гургена Ханджяна постепенно раскрываются новые идейные пласты. Особенно в атмосфере 1600-летия принятия христианства в Армении, апокалиптических ожиданий конца света в 2000-х годах, а также ожидания второго пришествия Иисуса открывается третий глаз писателя и обращается к христианской тематике. Автора интересуют не богословско-вероведческие вопросы и философско-библейские темы, а жизненность, которую несут словесность и история христианства, и вытекающие из нее противоречия.

Скептицизм вокруг мифа о христианском распятии — это не атеистический подход против веры, а попытка внести изменения в человеческое восприятие и расширить человеческий кругозор. Разрушению подлежат даже абсолютные ценности, чем и руководствуется писатель. Абсолют деструктивен, потому что не предполагает процесса и развития, а мышление Гургена Ханджяна постоянно находится в движении.

Произведения Ханджяна выделяются прежде всего своей искренностью и непосредственными чувствами, и в данном случае нужно констатировать, что Гурген Ханджян является автором, оригинальное произведение которого является скорее воспроизведением его опыта, чем выдумкой. Роман «Нет новостей» в этом отношении связан с его пером.

Герои Ханджяна часто отчуждены и отождествляют себя с Маленьким Мгером, который закрылся от мира в скале.

Остается констатировать, что поэтика прозы Гургена Ханджяна новаторская, поднятые вопросы актуальны и соответствуют нашим дням. Именно благодаря этому проза Ханджяна становится спутником современной жизни.

Ключевые слова - Модерн, армянская проза, сюжетная структура, персонаж, многообразный, вопрошание, поэтика, идейный, экзистенциальный, философия, абсурд, оригинал, Кафка, метаморфоза, новелла, роман, воображаемый, интерпретация.

THE POETIC AND IDEOLOGICAL QUESTIONS OF GURGEN KHANJIAN'S PROSE - ARMEN AVANESIAN - *Gurgen Khanjyan is one of the most important figures in contemporary Armenian prose. He knows how to tell interesting stories, build plots with dynamic development, where the characters are diverse, and the questions raised correspond to the dictates of the new time. In other words, there is an opportunity to reflect on the poetic and ideological issues of his prose.*

Literary scholars have linked Khanjyan's poetics and ideological issues with existential philosophy and absurdity. His original works contain stories similar to Kafka's transformations. These transformations are imaginary inventions, but they contain the secrets of real phenomena that characterize the new time, which completes Khanjyan's poetry.

In general, Gurgen Khanjyan is very interested in the instinctive portrait of a person. Published in 1995, the novel "Hospital" raised various comments. The hospital was perceived by many as a symbol of the Soviet Union. However, Khanjyan called it a hospital, because the most vicious customs and habits of the human soul and body reign within those walls.

In the prose of Gurgen Khanjyan, new ideological layers are gradually revealed. Especially in the atmosphere of the 1600th anniversary of the adoption of Christianity in Armenia, the apocalyptic expectations of the end of the world in the 2000s, as well as the expectation of the second coming of Jesus, the writer's third eye opens and turns to Christian themes. The author is not interested in theological and religious questions, and philosophical and biblical topics, but in the vitality that the literature and history of Christianity carry, and the contradictions arising from it.

Skepticism around the myth of the Christian crucifixion is not an atheistic approach against faith but an attempt to change human perception and expand human horizons. Even absolute values are subject to destruction, which guides the writer. The absolute is destructive because it does not imply a process and development, and Gurgen Khanjyan's thinking is constantly in motion.

Khanjyan's works stand out primarily for their sincerity and direct feelings, and in this case, it must be stated that Gurgen Khanjyan is the author, whose original work is more a reproduction of his experience than an invention. The novel "No News" in this respect is associated with his pen.

Khanjyan's characters are often alienated and identify themselves with Little Mher, who has closed himself off from the world in the rock.

It is left to state that the poetics of Gurgen Khanjyan's prose is innovative, the questions raised are relevant and correspond to our days. It is due to this that Khanjyan's prose becomes a companion of modern life.

Keywords - *Modern, Armenian prose, plot structure, character, diverse, questioning, poetics, ideological, existential, philosophy, absurdity, original, Kafka, metamorphosis, novella, novel, imaginary, interpretation.*

ՄՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶՆ ՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԸՆԴՎՁՈՒՄԸ

Հայ նոր պոեզիայի հիմնադիրներից մեկը հանդիսացող Սմբատ Շահազիզը նաև հայ-համաշխարհային մշակույթ առնչության ներկայացուցիչներից է: Նրա քաղաքացիական բարձր գիտակցությանն ու ազատասիրական ոգուն հարազատ էին Չեռնիշևսկու, Դոբրոյուբովի, Նեկրասովի, Լերմոնտովի, Պուշկինի և Բայրոնի գեղա-գիտական հայացքները, որն էլ իր ազդեցությունն է թողել նրա աշխարհայացքի ձևավորման և գաղափարական զարգացման և, բնականաբար, գրական ժառանգության վրա:

Հոդվածում փորձ է արվում թեմատիկ և ժանրային զուգահեռներ բերելով խոսել գրական առնչությունների մասին:

Բանալի բառեր¹ գրական առնչություններ, չափածո վեպ, ժանրային առանձնահատկություն, թեմատիկ աղերսներ, որակական տարբերություն, քաղաքական պոեմ, բայրոնիզմ, ենթագիտակցություն, զուգահեռ, բնաբան:

Հայ մտավոր կյանքի ու գրականության աշխարհականացումը 19-րդ դարի 50-60-ական թվականներին թևակոխում է զարգացման մի նոր շրջան: Ընդլայնվում է ազգային լուսավորական շարժման բովանդակությունը: «Լուսավորության շարժման ոգին և ուղղությունը ազգության գաղափարն էր: Ազգության գաղափարը մեր կյանքի գաղափարն է,- ասում է Բաֆֆին,- ինչ մարդ որ չի ճանաչում և չի սիրում յուր ազգությունը, նա վերջանում է մարդ լինելուց»: Հինը ենթարկվում է վերագնահատության, հասարակական միտքը ստանում քննադատական ուղղություն:

«Այժմ կրիտիկայի դար է», - այսպես է բնորոշում Նալբանդյանը ժամանակաշրջանը: Առանձնանում են պահպանողական և ազատամտական հոսանքները: Վերջիններս պահանջում էին արմատական փոփոխություններ եկեղեցու լեզվի և ազգային կրթության ասպարեզներում: Զարգանում են հրապարակախոսությունը, ազգային ազատագրական գաղափարախոսությամբ լի պոեզիան:

Ասպարեզ են գալիս Միքայել Նալբանդյանը, Մկրտիչ Պեշկյաշյանը, Սմբատ Շահազիզը, ովքեր հայ և համաշխարհային ազատասիրական պոեզիայով ներշնչված և սեփական ազգի ապագայով մտահոգված ստեղծում են հայրենասիրական փայլուն ստեղծագործություններ:

Ռուս հեղափոխական-դեմոկրատների, հատկապես Չեռնիշևսկու, Դոբրոյուբովի, Նեկրասովի ստեղծագործությունների նկատմամբ ակտիվ հոսաքրքրություն է հանդես բերել 60-ական թթ. հայ անվանի բանաստեղծ Սմբատ Շահազիզը: Նա իր գրական գործունեությունը սկսել է «Հյուսիսափայլի» էջերում, որի իշխող ոգին է եղել Միքայել Նալբանդյանը: Նալբանդյանի ազդեցությունը ևս նկատելի է Շահազիզի վրա: «Նալբանդյանից հետո, - գրում է Գ. Հովնանը, - Շահազիզը երկրորդ անվանի հեղինակն է հայ իրականության մեջ, որն իր ստեղծագործություններում մեջբերում է կատարում Չեռնիշևսկու երկերից, հրապուրվել է Դոբրոյուբովի ու Նեկրասովի պոեզիայով և նույնիսկ թարգմանել այդ հեղինակներից որոշ բանաստեղծական տողեր»:¹

¹ Հովնան Գ., Ն. Ա. Նեկրասովը և հայ պոեզիան, Երևան, Հայկ. ՄՍՌ ԳԱ հրատ., էջ 37:

Շահագիզը նշում է, որ «Սովրեմեննիկ»-ն իր վրա ևս մեծ ազդեցություն է թողել: 1859 թ. «Սովրեմեննիկից» է առնված «Լևոնի վշտի» երգերից մեկի բնաբանը:

«Կարդալով Դոբրոլյուբովի «Милый друг, я умираю» բանաստեղծությունը, ինձ մոտ միտք հղացավ գրելու սեփական մի բանաստեղծություն, որն ինձ մոտ սկսվում է գրեթե նույն բառերով, բայց հետո արդեն այլ բնույթ է կրում և անմիջապես վերաբերվում է հայերի վիճակին», - գրել է Սմբատ Շահագիզը:

«Սովրեմեննիկի» ամենանշանավոր բանաստեղծը Նեկրասովն էր, նրա ազդեցությամբ սկսեց իր պոետական գործունեությունը Ս. Շահագիզը:²

Այստեղ մենք պետք է առանձնացնենք «Պոետն ու քաղաքացին» բանաստեղծությունը.

Поэтом можешь ты не быть,
Но гражданином быть обязан
А что такое гражданин?
Отечества достойный сын.³

Այս տողերը մանիֆեստային արժեք ունեն և սերունդներ են դաստիարակել: Շահագիզն արձագանքեց Նեկրասովին, փորձեց դառնալ նրա քաղաքացիական պոեզիայի արտահայտիչը հայ գրականության մեջ («Բռնավոր սուլթան»):

Եվ ահա այս խոսքս թնդում է քնար,
Նախ քաղաքացի, և ապա՝ պոետ:⁴

Այս կարգախոսն ուղեկից է եղել Շահագիզ-բանաստեղծի համար («Լևոնի վիշտը»): Պատահական չէ, որ պոեմի նախերգանքում հեղինակը գրում է, «իմ մտածության նյութը հասարակական ծանր պիտույքն է», ժողովրդի վիճակը, անարդարությունների դեմ պայքարելու միտումը:

Գրողի հասարակական դերի մասին Շահագիզը հաճախ է խոսել, գրողը պետք է պայքարի թե՛ գրչով, թե՛ խոսքով: «Հասարակության անկեղծ բարեկամը,- գրում է Շահագիզը,- չպիտի խնայի ոչ մի միջոց, մինչև անգամ, եթե պահանջում է հանգամանքը, և զինվորի պես, սուրը ձեռքին, ընկնել կովի դաշտում»: Այս տողերն արժեքավոր են այն իմաստով, որ նա հայ գրողների ուշադրությունը հրավիրում է դեպի իրական կյանքը, դեպի ժամանակի հասարակական հուզող հարցերը: Դա որոշակի կոչ էր՝ հետևելու Նալբանդյանի օրինակին, նրա պես կովելու և նրա պես ընկնելու կովի դաշտում:

Ո՛վ ազատություն, սուրբ աքսորական,
Զոհելու եմ քեզ իմ անձս հավիտյան:
Թո՛ղ ստրկացած դարերով մարդիկ
Դնեն իմ վերա նզովքի կնիք:
Թո՛ղ սրե չար լեզուն անգոր թշնամին,
Թափելով վերաս թունավոր սլաքներ.
Ես պիտի խնդրեմ, ա՛գգ իմ, լալագին,
Ոտնակոխ՝ եղած քո իրավունքներ:
Ոչ որ չէ՛ կարող հոգուս նպատակ
Ճնշել, խորտակել բռնության զենքով.
Ոչ սո՛ւր, ոչ արյո՛ւն, ոչ բա՛նտ, ոչ կայծա՛կ,

² Նույն տեղում, էջ 40:

³ Н.А. Некрасов, *Лирика стихотворения поэмы, Москва, 2004г. ст. 77.*

⁴ Սմբատ Շահագիզ, *Երկեր, Երևան, Հայպետհրատ., 1961թ. էջ 90:*

Ոչ նո՛ւյնիսկ գեհեն մշտավառ բոցով:⁵

Շահագիզը դեմ է, այսպես կոչված, մաքուր արվեստի տեսությամբ: Նա միշտ պնդել է, որ գեղարվեստը պետք է ծառայի հասարակական կարիքներին: Իր ստեղծագործություններում նա ձգտել է պատկերել ժողովրդի կյանքը, երգել նրա արդար աշխատանքը:

Նեկրասովի քնարով ներշնչված՝ 1864 թվականին գրել է.

Ես լսեցի խոր հառաչանք,
Ե՛վ վիշտ հոգու, և՛ գանգատ,
Եվ լաց, և՛ սուգ, և՛ աղաչանք,
Այն էր ա՛զգ իմ հարագատ

Ես ուխտեցի լինել մշակ
Հասարակաց պիտույքի.
Երգե՛լ ուսա գործ և վաստակ,
Արդար հացը այս կյանքի:⁶

Շահագիզի գրական գործունեության վրա մեծ ազդեցություն են գործել նաև Պուշկինը և Լերմոնտովը:

Յու. Վեսելովսկուն ուղղված մի նամակում նա գրել է. «Ռուս պոետներից ամենաուժեղ ազդեցությունն են ունեցել ինձ վրա, իհարկե, Պուշկինն ու Լերմոնտովը: Ինչ վերաբերվում է Լերմոնտովին, ապա նրա ստեղծագործությունները (օրինակ՝ «Մեր ժամանակի հերոսը») միշտ էլ արթնացրել են իմ մեջ բազմաթիվ խոհեր, ազդել են ինձ վրա իրենց ներքին բովանդակությամբ, մշակելու համար տվել են հայտնի մոտիվներ և թեմաներ («Լևոնի վիշտը» պոեմի բնաբանը վերցված է «Մեր ժամանակի հերոս»-ից, «Մի քանի խոսք իմ ընթերցողներին» գրքում քաղվածք է բերում Լերմոնտովից): «Ակնհայտ է, որ Լերմոնտովի պոեզիայի ազդեցությունը Շահագիզի վրա բնութագրվում է ոչ այնքան ձևական, որքան գաղափարական, իդեական հատկանիշներով»,- գրում է Ս. Դանիելյանը⁷:

Լերմոնտովի պոեզիայի հմայքը Շահագիզը զգացել է նաև իր հրապարակախոսական գործունեության ընթացքում: Իր ելույթներում նա հաճախ է մեջբերումներ կատարել Լերմոնտովից: Դիմելով նոր սերնդին՝ նա հորդորում է չմոռանալ հայրենի արմատները, ոգեկոչել անգամ ավերակ եկեղեցիներն ու սրբավայրերը, և բերում է ռուս բանաստեղծից մի հատված. «Ամայի տաճարն՝ էլի տաճար է, Կործանված բազին՝ էլի բազին է»: Այս տողերը վերցված են Լերմոնտովի «Расстались мы, но твой портрет» լիրիկական ինտիմ բանաստեղծությունից:

Ուշագրավ է Շահագիզի «Ազգային վիճակ» բանաստեղծությունը, որի մեջ նույնիսկ կարելի է տեսնել Լերմոնտովի «Պոետի մահը» բանաստեղծության հայտնի տողերը: Լերմոնտովի քաղաքական լիրիկան այստեղ ստանում է ազգային երանգ:

Սմբատ Շահագիզի պոետական կյանքի հանրագումարը կարելի է համարել «Լևոնի վիշտը» քնարաէպիկական, ծրագրային պոեմը, որում սինթեզված են հեղինակի ազգային գաղափարախոսությունն ու գեղագիտական հայացքները և որտեղ առավել ցայտուն կերպով են դրսևորված բանաստեղծի աշխարհայացքն ու ստեղծագործական կորողությունները: Պոեմը, որը Շահագիզն անվանել է ժամանակակից վեպ, կազմված է չորս գլուխներից և վեպի գաղափարական իմաստը

⁵ Նույն տեղում, էջ 48:

⁶ Նույն տեղում, էջ 63:

⁷ Դանիելյան Ս., Լերմոնտովը և հայ մշակույթը, Հայկ. ՄՍՈՒ ԳԱ հրատ., Երևան, 1960, էջ 85:

մարմնավորող նախերգից: Իբրև բնաբան դրված են Լերմոնտովի «Մեր ժամանակի հերոսը» վեպի հայտնի տողերը. «Բավական է, ինչքան մարդկանց քաղցրեղենով կերակրեցին, դրանից փչացել է նրանց ստամոքսը, պետք են դառն դեղեր, դառն ճշմարտությունը»:

«Լերմոնտովի՝ իրավացի գայրությունով գրված այս տողերը Շահագիզն ուղղում է հայի «մեծության», «օսկե երազներով» սնվող, «բարոյապես անչափ հետ ընկած» և «խավարի մեջ մինչև գլուխ թաղված» հնամուկների դեմ»,⁸ - գրում է Ա. Մանուկյանը⁹:

Պետք է արթնացնել ժողովրդին դարավոր քնից, սին երազներից, նրան ազատել նախապաշարումներից, տգիտության կապանքներից, այլապես նրան սպասվում է կործանում: Հին գաղափարները կրողները ժողովրդի մեջ ստրկամտություն են սերմանել: Նրանք լուսավոր գաղափարների մոլեգին հակառակորդներ են: Եվ պոեմի հերոսը պատրաստվում է վճռականությամբ պայքարել նրանց դեմ:

Հայ գրականության մեջ «Լևոնի վիշտը» բնութագրվում է որպես առաջին քաղաքական պոեմ, իր ժանրային առանձնահատկություններով այն նորություն էր, քանզի Շահագիզն առաջինն էր հայ նոր գրականության մեջ, որ ժամանակակից իրական կյանքը դարձրեց պոեմի նյութ: Գրականագիտության մեջ հաճախ է խոսվել «Լևոնի վիշտը» պոեմի և համաշխարհային մշակույթ առնչությունների մասին: Սյուժեով, միակ հերոսի որոշ խորհրդածություններով և պոեմի կառուցման ձևով «Լևոնի վիշտը» նմանվում է նաև «Չայլո Հարոլդին», թեև, իհարկե, և՛ բովանդակության, և՛ հերոսների դատողությունների մեջ որակական տարբերություն կա: «Համաշխարհային թախծի տրամադրությամբ համակված և հայրենիքի հասարակական հարաբերություններից դժգոհ ու հեռավոր էկզոտիկ երկրներ ձգտող բայրոնական հերոսի դիմաց Շահագիզը ներկայացրել է «ազգային վիշտը» կրող և ժողովրդի դրությունը բարելավելու գաղափարով դեպի հայրենիք ձգտող անհատին»,¹⁰ - գրում է Ա. Մանուկյանը⁹:

Բայրոն-Շահագիզ գուգահեռի մասին է խոսում նաև այն, որ հեղինակի գաղափարակից Լևոնը Մոսկվայից հեռանալիս իր հետ վերցնում է Բայրոնի, Շեքսպիրի, Հայնեի, Գյոթեի, Մրվաճյանի, Նալբանդյանի երկերը, համաշխարհային ու հայ գրականության այն դեմքերի, որոնք հռչակված են իրենց ստեղծագործական հանճարով: Ազդեցության գործում, անշուշտ, մեծ դեր են խաղացել նաև Ալիշանի՝ Բայրոնի «Չայլո Հարոլդից» կատարած թարգմանությունները, որոնց առաջին կարդացողներից մեկը եղել է Սմբատ Շահագիզը: «Համաշխարհային պոետ պանծալի, դու քեզ կանգնեցրիր երկնահաս արձան»,¹¹ - այսպիսի տողեր է գրել Շահագիզը Բայրոնին:

«Բայրոնից որոշ ազդեցություն ժամանակին կրել է նաև Սմբատ Շահագիզը (1841-1907),¹² - գրում է Խ. Դաշտենցը, սակայն այդ ազդեցությունն ավելի շատ Պուշկինից է գալիս, քան թե Բայրոնից: Շահագիզի «Լևոնի վիշտը» պոեմն իր՝ հեղինակի խոստովանությամբ, գրված է ոչ թե «Չայլո Հարոլդ»-ի, այլ «Եվգենի Օնեգին»-ի ազդեցությամբ:

«Պուշկինով ես միշտ հրապուրվել եմ ամենից առաջ իբրև բազմակողմանի և ճշմարտացի արվեստագետ-բանաստեղծով, որի ստեղծագործությունը զգայուն ընթերցողի համար կարծես մի հիանալի ծաղկուն այգի է, որը փայլում է դրախտային գեղեցկությամբ... Նայեք, թե նա ինչպես է նկարագրում բազմազան բնությունը, ինչպես է կարողանում երգել սերը, ինչքան նրբագեղություն ու գույների հարստություն կա

⁸ Հայ նոր գրակ. պատմ., հ. 2-րդ, Հայկ. ՍՍՏ ԳԱ հրատ., Երևան, 1962, էջ 302:

⁹ Նույն տեղում, էջ 314:

նրա լավագույն երկերի մեջ», - գրել է Շահագիզը Յու. Վեսելովսկուն:

Տարբեր առիթներով հայ բանաստեղծն իր հիացմունքն է արտահայտել Պուշկինի տաղանդի, բանաստեղծության հարստության և ձևի գեղեցկության մասին:

Իմ սրտիս սիրած պոետ դու անգին,
Որ դուրս ես ինձ սիրո գգվանքով,
Տաճել ես հոգիս ոսկե քնարով՝
Կեցցե՛ս հավիտյան, կեցցե՛ս դու, Պուշկին:¹⁰

Սա հայոց լեզվով Պուշկինին ձոնված առաջին բանաստեղծությունն է:

Անդրադառնանք Պուշկինի ազդեցությանը Շահագիզի գեղարվեստական մտածողության վրա:

Իր առաջին՝ «Ազատության ժամեր» փոքրիկ ժողովածուի մեջ, որը լույս է տեսել 1860թ. Ս. Շահագիզը երեք բանաստեղծության համար իբրև բնաբան ընտրել է պուշկինյան տարբեր տողեր՝ տալով նրանց հայերեն թարգմանությունը («Երգ», «Երգ» և «Այցելություն»):

Ավելի ուշ տպագրված ստեղծագործություններում Պուշկինի ներկայությունն զգացվում է այլ ձևերով:

Երբեմն Շահագիզը քաղվածքներ է կատարում Պուշկինից և Լերմոնտովից՝ նրանց տողերը ներմուծելով իր բանաստեղծության մեջ («Պոետ»):

Պոետ, հեռու կաց ծափից ամբոխի,
Երբ քեզ տիրում է ոգևորություն,
Նա ծանր ցնորք է մի հիվանդ սրտի,
Մի խախտ ևտ խելքի թելադրություն:¹¹

Առաջին տողը Պուշկինի «Поэты» բանաստեղծության սկիզբն է՝ «Поэт, не дорожи любовью народной», շարունակությունը մեզ հիշեցնում է Լերմոնտովի «Բել մի հավատա» բանաստեղծության սկիզբը՝ Не верь, не верь себе, мечтатель молодой...

1879թ. Շահագիզը բանաստեղծություն է նվիրել Ստեփանոս Նազարյանի հիշատակին՝ ելակետ ունենալով պուշկինյան «Հուշարձանը» («Я памятник себе воздвиг нерукотворный»):

Անձեռակերտ դու մահարձան քեզ կանգնեցրիր,
Ոչ հողանյութ, որպես երկաթ կամ որձաքար.
Հրգոր գրչով, սուրբ վաստակով և անձանձիր
Շունչն կենդանի և հետ մահվան հանդիսացար:¹²

Այսպիսի զուգահեռները քիչ չեն, որոնք վկայում են, որ «*ռուսական պոեզիան՝ հանձին ամենից առաջ Պուշկինի և Լերմոնտովի, շատ դեպքերում ուղղակի մասնակցել են արևելահայ բանաստեղծական դպրոցի ձևավորման ընթացքին՝ հաճախ կողմնորոշելով մեր հեղինակներին՝ տալով նրանց թեմաներ և պատվերներ*», - գրում է Էդ. Ջրբաշյանը¹³:

Խոսելով «Եվգենի Օնեգին»-«Լևոնի վիշտը» զուգահեռի մասին՝ նշենք, որ գրականագիտությունը արձանագրել է արտաքին այսպիսի մի նմանություն. «Եվգենի Օնեգինի» մեջ գլխավոր հերոսի ձևավորման ընթացքն ու հոգեկան նկարագիրը ներկայացնելու համար Պուշկինը հաճախ է հիշում նրա ընթերցած գրքերը՝ անտիկ աշխարհի հեղինակներից մինչև իր ժամանակի արևմտաեվրոպական գրողները:

¹⁰ Մմբատ Շահագիզ, Երկեր, Երևան, Հայպետհրատ., 1961թ. էջ 8:

¹¹ Նույն տեղում, էջ 60:

¹² Նույն տեղում, էջ 182:

¹³ Ջրբաշյան Էդ., Պուշկինը և հայ բանաստեղծությունը, ՀՀ ԳԱԱ, Երևան, 1999, էջ 35:

Գեղարվեստական նույն հնարանքն ենք տեսնում «Կոմս Նուլին» պոեմում:

Հերոսին ուղեկցող գրքերի և թերթերի հատուկ թվարկման հանդիպում ենք նաև Ս. Շահագիզի պոեմում: Ժանրային կառուցվածքով ավելի շատ հարելով բայրո-նիզմին՝ «Լևոնի վիշտը» նկատելի առնչություն ունի Պուշկինի չափածո վեպի հետ:

Սկզբունքային տարբերություններով հանդերձ՝ («Եվգենի Օնեգինը» ռեալիստական-հոգեբանական ստեղծագործություն է, ունի քնարական ուժեղ տարերք, պոեմատային ամուր հիմք և ակտիվ գործող անձիք) Շահագիզի պոեմի գեղարվեստական հյուսվածքի մեջ առկա են այնպիսի հատկանիշներ և առանձին մանրամասներ, որոնք զգալի չափով ներշնչված են Պուշկինի չափածո վեպից: Երկուսում էլ կան մեծ քանակությամբ քնարական շեղում-դատողություններ, երկուսն էլ նախընտրում են ընթերցողի հետ անմիջական զրույցի ոճը: Հավանաբար, Պուշկինի ազդեցությամբ է ծնվել նաև Շահագիզի «Ժամանակակից վեպ» բնորոշումը: Ինչքան էլ իրենց բովանդակությամբ ու տաղանդի չափով անհամատեղելի լինեն այս երկու գործերը, այնուամենայնիվ, վստահորեն կարելի է ասել, որ «Լևոնի վիշտը» գրելիս հեղինակն օրինակելի նմուշ է ունեցել Պուշկինի վերոնշյալ պոեմը: Ռուս մեծ տաղանդի օրինակով Շահագիզը փորձել է ստեղծել ժամանակակից հայ կյանքի քաղաքական, հոգևոր, մշակութային և լեզվական խնդիրներն ընդգրկող մի համապարփակ ստեղծագործություն: Իրոք, «Լևոնի վիշտը» կարելի է համարել յուրօրինակ հանրագիտարան, որն իր անփոխարինելի տեղն ունեցավ մեր ազգային գրականության պատմության մեջ:

Ակնհայտ նմանություն կա Շահագիզի պոեմի նախերգանքի (Մոսկվայի տեսարժան վայրեր, փողոցներ և այլն) և Պուշկինի վեպի 7-րդ գլխում առկա մոսկովյան քաղաքային տեսարանների նկարագրության միջև:

Այսպիսի նմանությունները պատահական չեն: Բնական է, որ գրական նախորդի կերտած որևէ պատկեր կամ զգացողություն տպավորվում է մի ուրիշ ստեղծագործողի հոգում, «պատսպարվում» նրա ենթագիտակցության մեջ և ակնհայտ կամ տարերայնորեն մղում նրան ստեղծելու համանման տողեր, հիշենք նաև պոեմների վերջը:

Իր գրական մտորումներով Շահագիզը հաճախ էր կիսվում Վեսելովսկու հետ, «Անկախ դրանից (Լևոնի վշտից)», ես մի ժամանակ ծրագրեցի և սկսեցի մի պոեմ հայոց նոր կյանքից, որը լինելու է մասամբ նմանություն «Եվգենի Օնեգինին», հատկապես պոեմի վիպական հանգույցին, Տառյանայի պատմությանը»:

Այս մտահղացման մասին մեզ ոչինչ հայտնի չէ, բայց խոստովանությունն ինքնին առնչության փաստ է՝ անկախ տաղանդից և իրականացրած ծրագրերից:

Անփոփելիվ՝ նշենք, որ Սմբատ Շահագիզը հայ գրականության մեջ մնացել է որպես 19-րդ դարի 60-ականների հայրենասեր բանաստեղծ, և որպես այդպիսին նա մեծ ազդեցություն է թողել հետագա սերնդի վրա:

SMBAT SHAHAZIZ AND THE GLOBAL UPRISING AND MELANCHOLY - TATEV SOGHOMONYAN - Smbat Shahaziz is also the representative of Armenian and world cultural relation being considered to be one of the founders of new Armenian poetry. The aesthetic visions of Chernishevsky, Dobrolyubov, Nekrasov, Lermontov , Pushkin and Byron were familiar to his high civic understanding and libertarian spirit which influenced on the formation and development of his viewpoint and on his literary heritage as well.

We have tried to speak about the above mentioned literary relations by bringing thematic and genre parallels in the article.

Key words: *literary relations, poetic novel, genre peculiarities, thematic relations, qualitative diversity, civic poem, Byronism, sub-consciousness, parallel, naturalist*

Смбат Шахазиз также является представителем армянской и мировой культурных связей и считается одним из основоположников новой армянской поэзии. Эстетические воззрения Чернышевского, Добролюбова, Некрасова, Лермонтова, Пушкина и Байрона были близки его высокому гражданскому пониманию и свобододолюбивому духу, что повлияло на формирование и развитие его мировоззрения, а также на его литературное наследие.

Мы попытались рассказать об указанных выше литературных связях, проводя в статье тематические и жанровые параллели.

Ключевые слова: *литературные отношения, поэтический роман, жанровые особенности, тематические отношения, качественное разнообразие, гражданская поэма, байронизм, подсознание, параллель, натуралист.*

ԱՌԱՔԵԼ ԿՈՍՏԱՆԴՅԱՆՑԻ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ»-Ն

XIX դարի հայ գրականության մեջ Արցախի թեման ներկայացրած հեղինակներից, Գոչավանքի վանահայր վարդապետ Առաքել Կոստանդյանցի «Պատմություն Արցախի» գիրքն իր տեսակի մեջ բարձրարժեք գյուտ կարելի է համարել՝ առանձնացող առանձնահատկությունների պսակով, տիպաբանական, մեթոդաբանական, փիլիսոփայական մտահանգումներով շաղախված:

Բանալի բառեր՝ Դիզակ, Գոչավանք, ձեռագիր մատյաններ, Դիզափայտ, մելիք Եսայի, գաղթականություն, Մելիք Ավան-Եզան, Գանձասար, Պարտավ, Տող, Թաղուտ:

Առ. Կոստանդյանցի «Պատմություն Արցախի» եզակի գիրքը (երկու ձեռագիր մատյանների՝ թիվ 7822, 7823-ի համարակալությամբ պահպանված) թեև հայտնվել է գրական մշակների, ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, բայց միմիայն հղումներ կատարելու կարգով: Այս տեսանկյունից մեր քննությունը կարելի է գրականագիտական առաջին անդրադարձը համարել հայ գրականության պատմության մեջ:

Արդի ժամանակաշրջանի անբարո և դաժան մարտահրավերներին, թշնամական ոտնձգություններին, ամենայն լրջությամբ, կարող են դիմակայել նաև Կոստանդյանցի երկերը՝ առավելապես դեռևս անտիպ վիճակում գտնվող ձեռագրերը և աշխարհաբարի վերածված, եզակի արժեք ունեցող մի քանի գործերը: Առաքել Կոստանդյանցի «Պատմություն Արցախի»-ն գրաբարից աշխարհաբար փոխադրելու աշխատանքը՝ սեղմ առաջաբանով, գիտական բարձր կուլտուրայով, մեծ ջանադրությամբ և անչափելի պատասխանատվությամբ, ընդգծված հոգատարությամբ, բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով սկսել և ավարտին է հասցրել ծնունդով խճաբերդի, մեծ լեզվաբան-գիտնական, հայրենական, հոգևոր արժեքների հանդեպ նախանձախնդիր հայագետ-արցախագետը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Մկրտչյանը: Նրա կողմից փոխադրության վերածված գիրքը բաղկացած է 232 էջից, հրատարակվել է Երևանի «Արմավ» հրատարակչությունում, 2019 թվականին:

Հայոց Դիզակի թշնամին անասելի ոխերիմ էր. երկրորդ տարվա նրանց հարկապահանջ գալուստը ներկայացնում էր հազար զինյալ, իսկ արքունի հարկերը՝ առաջինից կրկնապատկված՝ ավելի խստագույն ենթակետերով:

Եվ թշնամիներն ահասարսուռ զորաց բազմությամբ ելան-եկան դեպի Դիզակ ու ահարկությամբ քաջ Եսայու զորաց դեմն ելան:

Եսային անհողորդող էր և նրա հերոսականության ջիղը ուսանելի՝ բոլոր ժամանակների զորավարների համար: Եսային հարկահաններին. «Մի՞ թե արծաթագին և ստրուկ ծառաներ ենք անհավատ պարսից ազգին, սրանից հետո պարսից տերությանը պարտական չենք դրամ տալու: Եվ դուք ըստ արքունի հրամանի ինչ որ կամենում եք, կատարե՛ք»¹, - ապա յուրայիններին հավաքի հրավերը կարդաց. միայն Տողից հավաքված ռազմիկների թվաքանակը երկու հազար հինգ-ը հարյուր էր...

Եսայու ռազմակոչին «.... բնակիչներից նույն վայրկյանին ելան կորովի և քա-

¹ Առաքել Կոստանդյանց, Արցախի պատմություն, Երևան, «Արմավ» հր., 2019, էջ 73:

ջամարտ այրեր՝ յուրաքանչյուրի ձեռքին սուր և հրացան.... Երբ պարսիկները տեսան, սրտաբեկ եղան, գունատվեցին, առաջիկա գործի համար մնացին թուլացած, որովհետև պարսից բոլոր զինվորները և նախարարները լավ գիտեին մեր զորապետի վարքը,- հիրավի Եսային անմրցակից էր,- Ելե՛ք այստեղից և գնացե՛ք, եթե այսուհետև կամենաք մի բարի կամ չար բան խոսել, ձեր դիակը կնետեմ գազաններին ու շներին»²:

Պարսիկները.... հետ գնալով իրենց երկիր, ամեն բան պատմեցին իրենց արքային. Նադիր շահը փրփրել էր մելիք Եսայու հանդգնության վրա. **«Գնալով կջնջեմ բոլոր կենդանիներին՝ մարդուց մինչև այնտեղ, որտեղ կենդանի շունչ կա»**³:

....Պարսից զորքը որերորդ անգամ հարձակվեց դիզակցիների վրա և պարտվեց ու ամոթահար, գլխիկոր հետ չվեց. «.... Պարսից ազգից ընկածները ավելի քան **հազար վեց հարյուր** էին, հայոց ազգից՝ **հարյուր տասը**:

Ամենայն կորովի այրերը ազգի պոռններ էին քաջ ու մեծ Եսայու օրինակով: Սակայն մեր զորապետը չէր հանդարտվում, անմխիթարական հոգով ընկնում էր դիակների վրա, դառնապես լացում. աջ թևը արմատից բեկվել ընկել էր»⁴,- պատմագրում է պատմիչը՝ հիշեցնելով դիզակցիների հերոսականության ու ազատ ապրելու և անպարտ մելիքի հզոր ոգու ողիսականի մասին:

Պատմիչը հրաշալի ու մանրակրկիտ գրով մեծ գովեստների է արժանացնում Եսայու քաջազնական կերպարը, նրա խիզախ, անվեհեր վարքը, մղած կռիվները թշնամյաց դեմ և.... ավա՜ղ, խաբեությամբ հասած նրա վախճանը:

Մինչև այդ հզոր բախում տեղի ունեցավ պարսիկների հետ: Պարսից զորքի բյուրավոր, կատաղի գրոհները հետ շարտվեցին, հայերը՝ արյունալի պատերազմով հանդերձ, չնայած անդառնալի կորուստներին, իրենց քաջարի զորավարով մնացին աննվաճ. «.... Այս պատերազմում այլազգիների զորքին բազմաթիվ հարվածներ հասան: Տեսնելով, որ ոչինչ չի վճարվում, բացի մեծամեծ վնասներից, ողջ մնացածները գլխիկոր հետ դարձան: Եվ գնալով բանակը՝ որքան վերադարձի քննություն արին, ոչ մի վճարի հնար չեղավ, չվեցին գնացին իրենց երկիրը»⁵ :

.... Այնտեղ, որտեղ թշնամուն չէր հաջողվում սրով հաղթել, հաղթում էր խորամանկությամբ, մատնությամբ, բայցև խարդախությամբ՝ Հաբանդ գավառից դավաճան անանուն իշխանի օգնությամբ: Վերջինս, վաղուց հանձնատու, սատանայական կերպով ծառայում էր պարսիկներին՝ պարսից գավառի թելադրանքով, Ավետարանը և խաչը ձեռքն առնելով, մի քահանայի ուղեկցությամբ գնաց Եսայու բերդը՝ ներկայանալով որպես բարեկամ... Եսային, ավա՜ղ, հավատաց սուրբ Ավետարանին և ... մեծամեծ իշխաններով գնաց պարսից զորակայան, ներկայացավ զորապետին... Վերջինս, ներքուստ առինքնվելով քաջ մելիքի հզորահաղթ տեսքից, չէր կամենում մահապատժել քաջին. այդուհանդերձ «.... բազմաթիվ հարցաքննություններից հետո ակնարկեց շրջապատի զորքին, և բռնելով նրան, կապեցին երկաթի շղթաներով ու տարան այլ վրան: Այնտեղ պահեցին երեք օր և երեք գիշեր և ապա շնչասպառ արեցին»⁶:

Չնայած մելիք Եսային չէր հավատում հաշտություն առաջարկող թշնամու նենգամիտ խոստումներին՝ ասելով, թե **«Հաշտության ու խաղաղության օր չէ սա, այլ իսկ հենց քաջության և հաղթության, արյան և մարտի»**,- այդուհանդերձ, հավատաց ավետարանը ձեռքին, վաղուց հանձնառու հայ իշխանի հավատացումներին, թե

²Նույն տեղում, էջ 73-74:

³Նույն տեղում, էջ 74:

⁴Նույն տեղում, էջ 76:

⁵Նույն տեղում, էջ 76:

⁶Նույն տեղում, էջ 76:

պարսիկները պատրաստվում են համաձայնության գալ, ու բացեց բերդի դռները. ավա~ղ, դառնալով դաժան մատնության զոհ:

Ինչպես արաբները խաբեությամբ Սմբատ արքային հանեցին բերդից և մահվան դատապարտեցին, այսպես էլ պարսիկները՝ Հաբանդ գավառից ավետարանը ձեռքին նենգ իշխանի միջոցով, սուտ երդումներով քաջ Եսայուն հանեցին բերդից և... հատկապես նենգ իշխանի հանձնարարականով մահվան դատապարտեցին **Հայոց ՌՄ - 1200 թվականին**⁷:

Երբեք չպետք է հավատալ արյուն հեղող թշնամիների սուտ երդումներին. պատմիչը մտահոգ կերպով գրում է հետևյալը. «.... Մեր նախարարի մահը խոր խոցեց ամենքի սրտերը. ողբը բերաններում, արտասուքը աչքերում՝ բոլորը անմխիթար լացում էին: Հարգանքով չընդունեցին պարսից զորապետի խոսքերը, որովհետև իսկապես գործի հանգամանքներով գիտեն, որ վրեժխնդիր են լինում, գերում մանուկներին, աղջիկներին, կանանց, մյուսներին բնաջինջ անում: Դրա պատճառով չկամեցան հաշտություն և խաղաղություն անել (կնքել): Պարսիկները մի քանի անգամ պատգամավորներ առաքեցին, հայերը չկամեցան ընդունել նրանց խոսքը, որի համար չվեցին գնացին իրենց երկիրը»⁸:

Պատմիչը ցավով է արձանագրում պարսիկների ռիսակալության մանրամասները, կատարած չարագործությունները. «.... Մարդ որսալու՝ գողանալու չար սովորությունը բազմացավ մեր երկրում, տարան բազմաթիվ հայ մանուկներ, մնաց այլասեռը, և բազում ծնողներ իրենց որդիներից անգավակ դարձան...»⁹:

Առաքել պատմիչի պատմությունները՝ ականատեսի, ականջալուրի կատարած հաղորդումները, հիմնականում են դաժել Դիզակի մելիք Եզանի ու նրա հետագա տոհմակիցների մասին եղած հիշատակությունները մեկ առ մեկ գրառելու ստեղծվելիք պատմության մեջ: Կերպավորված են Ղարաբաղի տխրահոյակ խան կոչեցյալները՝ Փանահը, որդին՝ արյունարբու Իբրահիմը (վերջինիս՝ արու գավակներով հանդերձ, սատկեցրել է Մելիք Շահնագարի որդին՝ հոր հակառակ հայրենապահ ճանապարհը բռնած, հայրենավատ մելիք Ջուլշուղը: Մեհտի Ղուլին, հոր համար վրեժխնդիր լինելով, մահացու վիրավորել է մելիք Ջուլշուղին), վերջինիս հարբեցող ու խարդախ որդին՝ Ղարաբաղի հողերը իր և իր տոհմակիցների վրա սուտ փաստաթղթերով (թաղլարներով) հաստատած, բանսարկու Մեհտի Ղուլին և ուրիշներ: Բաղդասար մետրոպոլիտին հաջողվել է դատերի միջոցով հետ վերադարձնել եկեղեցուց խլված վանքապատկան հողերը և մնացած մասերը՝ տերերին՝ ըստ պատկանելիքի:

Ընթացիկ և Լեոն անձամբ հանդիպել են Կոստանդյանցին, խնդրել, տեսել նրա ձեռագրերը, հաստատապես օգտվել պատմիչի արժանահիշատակ ձեռագիր մատյաններից՝ այդ մասին հիշատակություն թողնելով¹⁰:

Մեծագույն քաղաքական հանցագործ, սատանաներին գերազանցող Իբրահիմ խանը, օգտվելով հայերի անմխաբանությունից, Արցախը դարձրել էր դժոխք ու վարում էր իր գործերը մեծագույն խարդախությամբ՝ բռնության ու հալածանքների, կրոնափոխության ենթարկելով, մահվան դուռը հասցնելով Դիզակի ժողովրդին, քաջարի մելիքներից շատերին: Առաքել պատմիչը ցավով նշում է հետևյալը. «.... Այդ ժամանակ մեր Աղվանից երկրում ելավ **Իբրահիմ խանը**՝ բոլոր չարերից չարը:

⁷Տե՛ս նույն տեղում, էջ 77-78:

⁸Նույն տեղում, էջ 78:

⁹Նույն տեղում, էջ 79:

¹⁰Տե՛ս նույն տեղում, էջ 5:

Օրըստօրե զինվում էր, զորանում, մինչև անգամ բռնությամբ նվաճեց և իր իշխանության ենթարկեց Արցախյան երկիրը: Հայոց և այլազգի մեծամեծ նախարարներից ոչ ոք չկարողացավ ընդդիմանալ նրան, առաջ գնալ և դիմաբանել. այդ ամենը նրան զորություն էր տալիս: Թեպետ բռնացած տիրում էր Արցախյան երկրին և նվաճել էր ամենը՝ պահելով ի ներքո յուր իշխանության, սակայն ոսկու և արծաթի, հարստության կարոտություն ուներ: Դրա պատճառով, ըստ իր անվան մեծության, իշխանությունը վարել չէր կարողանում: Ուստի սկսեց նեղել ու չարչարել Ադվանից երկրի մեծատուններին, կոդոպտում էր ունևորների տանը գտած արծաթը, ոսկին և այլ ազնիվ իրեր, բազմաթիվ քրիստոնյաների հավատափոխ էր անում, դարձնում մահմեդական կրոնի. դա երևում է հենց Արցախ երկրի բոլոր բնակավայրերում.... սկսեց սաստիկ չարություններ հասցնել հայոց ազգին»¹¹:

Թվարկելով արցախցիներին հասած դժբախտությունները Իբրահիմի երեսից, Կոստանդյանցը մեծագույն ցավով նշում է հետևյալը. «Երբ հայերը տեսան նրա անտանելի չարագործությունները և անգույթ տանջանքները, որ իրենք ազատության հնար չունեն, մնացին տրտմության ու տարակուսանքի մեջ, թե, արդյոք, որտեղի՞ց կունենան փրկություն: Երբ անճարացած մնացին բոլոր կողմերից, սկսեցին խորհուրդ տեսնել մեծամեծերի, իշխանների, իշխանական ծագման մարդկանց հետ, թերևս ազատության ելք ու հնար գտնել: Այս քննության մեջ էր մեր առաջընթաց ազգասեր նախարար մելիք Բախտամը, թե՛ «Օ՛ն, վերկացե՛ք երդումով հաստատենք աղերսանքի թուղթը, հավատարիմ պատգամավորների միջոցով առաքենք ռուսաց կայսրին, թերևս գա, մեր ազգն ազատի այս անտանելի չաչարանքներից»»¹²:

Հայոց իշխանները մելիք Բախտամի գլխավորությամբ օգնության հանրագիր ուղարկեցին ռուսաց ցարին...., սակայն հայկազուն, բայց չարագործ մարդու կողմից մատնության ենթարկվեցին. գաղտնիքը բացվեց, նորից մի այլ մատնությամբ, մելիքները, փորձելով ազատվել Իբրահիմի անընդմեջ կատարվող չարագործություններից, ստիպված մելիք Բախտամին Իբրահիմի ճանկը գցեցին. վերջինս հայրենավառ մելիքին շղթայակապ ուղարկեց Պարսից Դուռը: Մելիք Բախտամին շղթայակապ ուղարկեցին Արդաբիլի բանտ: Անցան յոթ երկար ու վշտահարույց տառապանքներով լի տարիներ քաջագնացույն իշխանի բանտարկվելուց հետո:

Գթառատ էր Արդաբիլի բանտապետը: Հայ ծարնահոգս նախարարի հանդեպ հարգանք տածելով՝ որոշեց բարեխոսել նրա համար: 1797 թ. պատմական իրադարձություններն էին մատնանշված Առաքել պատմիչի կողմից. «Նաղիի Շահի մահից հետո եկավ նրա հաջորդը, կատարեց իրենց նախնիների սովորությունը: Ըստ **նրա (մելիք Բախտամի՝ ընդգծ.՝ Ջ. Բ.)** աղերսանքի, բանտապետը գնաց և թախանձանքով ու պաղատանքով պարսից **թագավորին (որը տվյալ դեպքում Աղա Մահմեդ շահն էր, Կոստանդյանցը չի նշում, թե որ շահի մասին է խոսքը, ընդգծ.՝ Ջ. Բ.)**, խնդրեց արձակել մեր նախարարին: Ըստ տանջանքների առաջադիր եղանակին՝ հրամայեց նույն ժամին արձակել նրան և բերել իր մոտ. կատարեցին ըստ արքունի հրամանի: Երբ բերեցին նրա մոտ, բազում մխիթարական խոսքերով մխիթարեց բանտարկվածի բեկված սիրտը, նրա մերկ մարմնի համար պարզեց նորագույն թանկագին հանդերձանք, որովհետև ազգաբանությամբ ճանաչում էր, որ Մեծ Եզանի ազգից է, որին սիրել էր: **Շահը (Աղա Մահմեդը, ընդգծ.՝ Ջ. Բ.)** սիրահորդոր խոսքերով և մխիթարական շողորորոտությամբ ասում է. «**Եթե փոխվես հայոց դավանությունից և ծառայես մահմեդական դեմին (= հավատին), մեծամեծ բարություններ կտեսնես,**

¹¹Նույն տեղում, էջ 79:

¹²Նույն տեղում, էջ 80:

ինչպես նաև պարսից երկրի վրա կկարգեն մեծ իշխան և դատավոր (= կառավար)»:

Նա հրաժարվեց այնպիսի անսպասելի արարմունքից՝ ասելով, որ ծերության վերջում իրեն բարվոք ու հարմար չէ այդ բանը, միայն եթե շնորհ գտնի նրա առջև, նրա արքունի հրամանով հրովարտակ տա իրեն առանց մեղսակրության գնալ սուրբ Էջմիածնի մայր Աթոռ: Ըստ խնդրանքի՝ անցագիրը դրեց իր ծոցում և դիմեց-գնաց Էջմիածնի սուրբ Աթոռ և այնտեղ կատարեց իր սրտի փափագը՝ ընդունելով կատարյալ ապաշխարհություն (**= զղջում**) յոթ տարվա ընթացքում պահք չկատարելու, անգիտությամբ մեղքեր գործելու համար»¹³:

Իբրահիմը, յոթ տարուց հետո հայրենիք վերադարձած Դիզակ երկրի մեծ հայրենասեր մելիք Բախտամին իր ամենագորեղ թշնամին համարելով, մահադեղով թունավորել և չարաչար սպանել տվեց: Բռնավորը Արցախի մելիքին «չկարողացավ հայտնապես ինչ-որ վնաս հասցնել: Խորհուրդ անելով իր նախարարների հետ՝ [որոշեց] մեջտեղից վերացնել մահադեղով: Այդ նպատակով սիրով իր մոտ կանչեց և խոստացավ կրկին դարձնել իշխան հայրենիքի վրա, պարգևներ տվեց, սիրահորդոր խոսքերով խրախուսեց նրան:

Ըստ առաջներում տրված պատվիրանների՝ երեկոյան հրավիրեց ճաշի: Ծառաները մահադեղ տվեցին...»¹⁴: Իր հայրենի օջախ վերադարձած հայրենապաշտ մելիք Բախտամին այսպես դառնորեն վրա հասավ մահը՝ նյութված քաղաքական մեծ հանցագործ Իբրահիմի կողմից, 1797 թ., ում և նրա որդիների, ազգականների ջանքերով Արցախ աշխարհին, ավա՛ղ, դարձել էր ավազականոց, որտեղ, ինչպես Ապրես Բեկնազարյանի հերոսն էր ասում՝ տիրում էր դեղին գլորը՝ ոսկին...

АРАКЕЛ КОНСТАНДЯНЦ И ИСТОРИЯ АРЦАХА - ЗИНАИДА БАЛАЯН- Из авторов, представивших тему Арцаха в армянской литературе XIX века, книгу настоящего Гтчаванка архимандрита Аракела Костандянца «История Арцаха» в своем роде можно считать ценным изобретением, увенчанным венцом отличительных особенностей и типологическими, методологическими, философскими умозаключениями.

Ключевые слова: Дизак, Гтчаванк, рукописи, Мелик Есаи, эмигрант, Мелик Аван-Еган, Гандзасар, Партав, Тог, Тагут.

ARACHEL KOSTANDYANTS' "HISTORY OF ARTSAKH" - ZINAIDA BALAYAN - Among the authors who presented the theme of Artsakh in the Armenian literature of the 19th century, the book "History of Artsakh" by the abbot of Gtchavank, Arakel Kostandants, can be considered a valuable invention of its kind, crowned with unique features, mingled with typological, methodological, and philosophical thoughts.

Key words: Dizak, Gtchavank, manuscripts, Dizapayt, Melik Yesayi, emigration, Melik Avan-Yegan, Gandzasar, Partav, Togh, Taghut.

¹³Նույն տեղում, էջ 82:

¹⁴Նույն տեղում, էջ 82-83:

**ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ
ԳՐԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՍԿԵԴԱՐԸ**

Նոր Զուղայի պատմության մեջ 17-րդ դարը հայտնի է որպես այդ գաղթօջախի ոսկեդար, որն առաջին հերթին պայմանավորված է նրանում գրչագրության և տպագրության զարթոնքով:

Մեր ուսումնասիրության առարկան են Նոր Զուղայում գրչագրության և տպագրության պատմությունը, այս երկու արվեստի սկզբնավորման հանգամանքները, նշանակությունը և ազդեցությունը 17-րդ դարի հայ գրականության պատմության վրա:

Իր տնից աքսորված մի ժողովուրդ օտարի հողի վրա ավելի ամուր է կառչում իր պապերի հավատին ու արվեստին, և բռնագաղթից մեկ տարի անց սկսում է ստեղծել նոր գրչագիր մատյաններ՝ սկիզբ դնելով Նոր Զուղայի գրչության արվեստին: Վերջինս երեք ու քառորդ դարերի ընթացում հայ գրչագրության պատմությանն է թողնում մեծ ժառանգություն:

Զարթոնքի երկրորդ հանգրվանի մեկնարկը տրվեց Սբ. Ամենափրկիչ Վանքի տպարանի ստեղծումով: Խաչատուր Կեսարացին, վանքի ամբողջ միաբանության հետ միասին, զրոյից ստեղծում է տպարան և սկսում տպագրել սրբազան գրականությունը: Այսպիսով՝ հիմնադրվում է Իրանի և Միջին Արևելքի առաջին տպարանը:

Հողվածում հետաքրքիր փաստեր են ներկայացվում, որոնք ավելի են արժևորում Նոր Զուղայի ու նրա գործիչների դերը հայ գրականության ու մշակույթի պատմության մեջ:

Բանալի բառեր՝ Նոր Զուղա, Սբ. Ամենափրկիչ Վանք, Նոր Զուղայի Սբ. Ամենափրկիչ Վանքի Մատենադարան, Ներսես Շնորհալի Մատենադարան, հայ գրչության արվեստ, Նոր Զուղայի գրչագիր մատյաններ, հայկական տպագրություն, հայ տպագրիչներ, Խաչատուր Կեսարացի, Հովհաննես վարդապետ Զուղայեցի (Քթրեշենց), Խաչատուր Կեսարացի թանգարան, հայ գիրքը, Նոր Զուղայի տպագիր գրքեր:

Սուրբ

Նոր Զուղայի պատմության մեջ 17-րդ դարը հայտնի է որպես Նոր Զուղայի ոսկեդար: Բռնագաղթված և օտար հողում հայտնված ժողովուրդը, հակառակ գաղթական լինելու հանգամանքին, անմիջապես սկսում է կյանք տալ իր կիսամեռ գոյությանը՝ զարգանալով ոչ միայն վաճառականության ոլորտում, այլև ծաղկեցնելով ու նոր փայլ տալով գրչագրությանը, մանրանկարչությանը, որմանկարչությանը, կազմարարությանը, ապա նաև ձեռնամուխ լինելով տպագրությանը, որ առաջինն էր ոչ միայն Իրանում, այլև ողջ Միջին Արևելքում:

Նույն 17-րդ դարի բեղուն գործունեության արգասիքն է նաև Սուրբ Ամենափրկիչ վանքի կրթական բարձրագույն ուսումնական կենտրոնը, որտեղից դուրս եկած հոգևորականներից մի քանիսը հետագայում բազմեցին Ամենայն Հայոց կաթողիկոսական գահին, իսկ ոմանք իրենց արժանի տեղը գտան հայ գրականության, փիլիսոփայության ու մշակույթի պատմության մեջ:

Գրչության արվեստը Նոր Ջուղայում

Հայ գրչության արվեստի բնօրրանը եղել է Հայոց Առաքելական Եկեղեցին։ Կրոնական հաստատություններում և վանքերում գլխավորապես հոգևորականները դարեր շարունակ արտագրել, ծաղկել ու զարդարել են մեր հավատի ու մշակույթի պատմության առհավատյանները՝ գրչագիր մատյանները։

Ջուղայի ժողովուրդը, հավատարիմ մնալով իր նախնիներին, գաղթի դժվարին ճանապարհով իր հետ Պարսկաստան տեղափոխեց նաև սրբազան մատյաններ։ Իսկ ուղիղ մեկ տարի անց՝ 1607 թվականից ձեռնամուխ եղավ գրչագրերի ստեղծման նվիրական գործին՝ առաջին հերթին ավարտին հասցնելով և ծաղկելով անավարտ ձեռագրերը։ Այսպիսով՝ սկիզբ դրվեց Նոր Ջուղայի գրչության արվեստին։

Նոր Ջուղայի պատմիչ Հարություն Տեր-Հովհանյանը իր «Պատմութիւն Նոր Ջուղայի» երկում գրում է. «Ջուղայեցիք կամ Հայաստանի ուրիշ գաղթականներ գրականության հանդէպ սէր ունենալով եւ իմանալով մատենաների յարգը, իրենց հետ բերեցին դրանց, որ ունէին Հայաստանում, ուստի չեմ սխալի ասելով, որ հայ ժողովրդի Պարսկաստան գաղթելուց յետոյ Ջուղան եղաւ Հայաստանի մատենադարանը»։¹

Այս պնդումը չափազանցություն չի թվում, երբ Վանքի Մկրտիչ Առաջնորդի՝ 1785 թվականին Աստրախանի իշխան Մկրտումին ուղղված մի նամակում կարդում ենք հետևյալը. «Սրբազանը² կարծում է՝ Ջուղան կամ Վանքը նորից այն է, որ ինչ գիրք ուզենանք ձարւի»։³ Բանն այն է, որ պարսից թագավորության ոչ բարենպաստ ժամանակներում՝ 1770-1790 թթ., Նոր Ջուղայում սկիզբ առան հարստահարություններ, որոնք ծանր հետևանքներ ունեցան նաև գրչագրերի ճակատագրի վրա։ Այդ դժբախտ ժամանակներում բազմաթիվ մատյաններ անհետացան, «քանզի մատնւելով տգէտների ձեռքը՝ դասւեցին անպէտքների շարքում, նաեւ ոչնչով վաճառեցին»։⁴ Բախտի քմահաճությին մատնված մատյանները մեծ քանակով և շատ չնչին արժեքով վաճառվեցին խանութպաններին, որոնք, ժամանակակիցների վկայությամբ, օգտագործվեցին իր փաթաթելու կամ վառողի պայթուցիկներ պատրաստելու համար։⁵

Գրականության պատմաբանների մոտ բազմիցս մեծ հիացմունք ու զարմանք է առաջացրել այն փաստը, թե ինչպես է բռնագաղթի դաժան հետևանքները կրող այս ժողովուրդը կարողացել կարճ ժամանակահատվածում վերակազմավորվել որպես համայնք և հիմնադրել կրոնական, մշակութային ու կրթական այս հզոր օջախը։

Մեսրոպ Թադևոսյանի «Գրագիտութիւն Նոր Ջուղայ» հոդվածաշարում բարձր է գնահատվում Նոր Ջուղայում «հայերէն գրագիտութիւն ծաղկացանելոյ» աշխատանքը, որտեղ ջուղայեցիները համեմատվում են այլ ազգերի հետ. «Ո՞վ չի զարմանալ, որ մին ժողովուրդ աշխարհաւեր և տնաքանդ եղած, այնքան հեռի ճանապարհէ գերի վարած, յանդուրմ Ազգէն Պարսից չարչարված, կեղեքված և ոչխարի պէս թշնամեաց ծախված ժամանակում, երբ որ միւս քրիստոնէայ ազգեր՝ որպէս Փերիոյ Վրացիքն, Պարսից տառապանքէ ազատ մնալոյ համար՝ իւրեանց հաւատն կորուսին. սոքա ամէն կերպ տանջանաց արիաբար տանելով, անաղօտ Արևի պէս մութ և տխուր ամպերի միջէն ևս

¹ Տեր-Յովհանէան Յ., Պատմութիւն Նոր Ջուղայի, Նոր Ջուղա, 2008, էջ 419։

² Աստրախանի Առաջնորդ Հովսէփ Վարդապետ։

³ Տեր-Յովհանէան Յ., նույն տեղը, էջ 419։

⁴ Տեր-Յովհանէան Յ., նույն տեղը։

⁵ Տէ՛ս Միհայրան Լ., Գրչութեան արւեստը Նոր Ջուղայում, Նոր Ջուղա, 1991, էջ 17։

իրեանց ուսումնասիրական լուսոյ ճաճանչն այսքան արձակ տարածեն»:⁶ Այդ ժամանակաշրջանում Սբ. Ամենափրկիչ Վանքը այնքան է զարգանում գրչության և կազմարարության արհեստում, որ անգամ Սբ. Էջմիածնից գրքերն ուղարկվում էին Նոր Զուղա՝ կազմելու և կրկին Սբ. Էջմիածին վերադարձնելու նպատակով:

Համաձայն Նոր Զուղայի հիշյալ պատմագրի՝ մինչև 1840-ական թվականները գրչագրերի համար չի եղել հատուկ տեղ: Դրանք գտնվել են Վանքի տարբեր սենյակներում ու խցերում՝ տարբեր միաբանների մոտ, ուստի չեն պահպանվել անհրաժեշտ պայմաններում, ինչը մեծ վնասների ու կորուստների պատճառ է դարձել: 1842 թ. Հովհ. Եպս. Սուրենյանի ջանքերով առաջին անգամ հավաքվել ու ցուցակագրվել են գրչագրերը, այնուհետև 1844 թ. հատկացվել է առանձին պահեստամատենադարան: Միայն 1906 թվականին Զուղայի պատմագիր Հարություն Տեր-Հովհանյանի որդին իր հոր հիշատակին մատենադարանի համար կառուցել է տվել առանձին շենք, որտեղ վերջապես հավաքվել և ամփոփվել են Նոր Զուղայի գրչագրերն ու տպագիր գրքերը: 1971 թ. Վանքի թանգարանի կառուցումից հետո միայն մատյանները գտնում են իրենց վերջին հանգրվանը Նոր Զուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի Մատենադարանում:⁷

Նոր Զուղայում պահպանվող մատյանների՝ տարբեր թվականներին կազմված ցուցակներում հանդիպում են հետզհետե աճող տարբեր թվեր: Սա պայմանավորված է նրանով, որ տարիների ընթացքում գտնվել են նոր մատյաններ, կամ եկեղեցիների ու անհատների կողմից հանձնվել, նվիրվել են Վանքի մատենադարանին: Նոր Զուղայեցի բանասեր Լևոն Մինասյանը իր «Գրչության արվեստը Նոր Զուղայում» աշխատության մեջ գրչագրերի թիվը հասցնում է 744-ի, որտեղ նշում է նաև, որ մատյաններից բացի՝ առկա են 44 հմայիլներ, շուրջ 70 պատառիկներ և 118 նոր գրչագրեր:⁸ Գրչագրերի ամբողջական ցուցակը, որը բանասիրության համար ծառայում է որպես աղբյուր, «Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի»⁹ աշխատությունն է՝ տպագրված երկու հատորով, ուր կարելի է գտնել 716 մատյանների մասին մանրամասն տեղեկություններ: Նոր Զուղայում գրված գրչագրերի մեծ մասը գտնվում է տեղի վանքում, այնուհետև՝ Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում:

Նոր Զուղայի գրչության դպրոցը երեք և քառորդ դարերի պատմություն ունի: Այստեղ գրված առաջին մատյանը մի Ավետարան է, որ ավարտվել է հայերի գաղթի հաջորդ տարում՝ 1607 թվականին, մանրանկարիչ Հակոբ Երեցի ձեռքով՝ «Ի թվականիս Հայոց ՌԾԶ (1607) ամի եղև աւարտ ի Ծօշ քաղաքս, որ է Ասպահան»¹⁰: Հիշատակարանում գրիչը ականատեսի աչքերով պատմում է բռնագաղթի ենթարկված ժողովրդի չարչարանքների մասին՝ «...առաւ զմեզ եբեր մինչ ի Ծաւշ քաղաքն, որ կոչի Ասպահան եւ եղաք նոր քաղաք եւ նոր շինուածք եւ կոչեցաւ Նոր Զուղայ»¹¹: Այս արձանագրությունից պարզ է դառնում, որ գրիչը դեռ Հին Զուղայում է սկսել «Աւետարանի» արտագրությունը: Այն շարունակել և ավարտին է հասցրել Նոր Զուղայում:

Վերջին գրչագիրը գրվել է 1930 թվականին: Այն նույնպես Ավետարան է և

⁶ Գրագիտություն Նոր Զուղայ, Ազգասեր, №2, 1845, էջ 13:

⁷ Տեր-Յովհաննէան Յ., Նույն տեղը, էջ 16, 17: Տեղի մատենադարանը այժմ կոչվում է Ներսէս Շնորհալու անունով, թէև պատմության մեջ այն հայտնի է Սբ. Ամենափրկիչ Վանքի Մատենադարան անունով:

⁸ Այս մասին մանրամասն տե՛ս Տեր-Յովհաննէանի գրքում, էջ 17-22:

⁹ Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Բ, Վիեննա, 1970, 1972:

¹⁰ Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, էջ 150:

¹¹ Նույն տեղը, էջ 149:

պատկանում է Հակոբ Հայրապետյան անունով մի ջուղայեցու, որ, ըստ վկայությունների՝ եղել է «...արհեստով վարպետ հիւսն, որ անգամ պատրաստում էր ջուղակ և մանդոլին»:¹²

Հիշյալ երկու նմուշներն էլ այսօր ցուցադրվում են Վանքի Խաչատուր Կեսարացու անվան թանգարանում՝ գրչագրերին հատկացված ցուցափեղկում՝ որպես Նոր Զուղայի գրչագրության արվեստի առաջին և վերջին նմուշներ:

Կազմված հայտնի ցուցակների տպագրությունից հետո ի հայտ եկած մի շարք ձեռագրերի մասին Լևոն Մինասյանի աշխատասիրությամբ հրատարակվել է «Ցուցակ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ Վանքի նոր ստացված գրչագրերի»¹³ գրքում, որը մինչ օրս տպագրված վերջին աղբյուրն է: Սակայն, մեզ փոխանցված տեղեկության համաձայն՝ վերջին տասնամյակում նույնպես Նոր Զուղայի Ազգային առաջնորդարանին են վերադարձվել մի շարք մատյաններ, որոնք դուրս են մնում առկա ցուցակներից:

Տպագրությունը Նոր Զուղայում

Գուտենբերգյան գյուտից վաթսուն տարի անց՝ 1512 թ., Հակոբ Մեղապարտի ջանքերով եվրոպական տպագրության կենտրոն Վենետիկում լույս տեսավ հայ առաջին տպագիր գիրքը՝ սկիզբ դնելով հայ տպագրության պատմությանը: Այնուհետև տարբեր հայկական համայնքներում ստեղծվեցին տպարաններ՝ իրենց դրոշմը դնելով քաղաքակրթության պատմության այդ կարևոր շրջափուլում:

Նոր Զուղայում հայկական տպագրության սկզբնավորումը պայմանավորված էր մի շարք գործոններով, որոնցից առաջինը և հիմնականը դավանաբանական պայքարն էր ընդդեմ կաթոլիկադավանության: Հռոմն Հայոց Առաքելական եկեղեցու դեմ արդեն իր պայքարն էր ծավալում Արևելյան Եվրոպայից՝ տպագրությունը ծառայեցնելով որպես միսիոներական գործունեության կանոնագրային միջոց: Ուստի Հայոց եկեղեցին սկսում է գիտակցել գրքի ու տպագրության կարևորությունը իր դավանաբանական քարոզչական պայքարում: Ըստ Վարդան Դերիկյանի՝ «Նոր Զուղայի տպարանի հիմնումը պայմանավորված էր Ս. Էջմիածնի կաթողիկոս Մովսես Գ Տաթևացիով սկզբնավորված հոգեմտավոր վերանորոգության շարժմամբ»:¹⁴

17-րդ դարում Արևելքի և Արևմուտքի միջև առևտրական կապ պահող Նոր Զուղան դարձել էր մեծ հարստության կենտրոն: Տնտեսական բարեկեցիկ վիճակն ու իշխող դիրքն ինքնին բարենպաստ պայմաններ էին ստեղծում տպագրության կազմակերպման համար: Այստեղ էին կենտրոնացված Եվրոպայում հայ գրատպության ամենամեծ հովանավորն ու հայ գիրքը տարածող ամենաընդարձակ ցանցը՝ վաճառականությունը: Իսկ նույն շրջանում արդեն մեծ վերելք էին ապրում Նոր Զուղայի գրչության, մանրանկարչության, կազմարարության և այլ արվեստները: Գործում էր Սր. Ամենափրկիչ Վանքի դպրոցը, որտեղ զանազան գիտություններ էին դասավանդում և ունեին հարուստ գրադարան: Մի խոսքով՝ Նոր Զուղան ուներ ամեն ինչ՝ դառնալու հայ տպագիր գրքի հաջորդ արարողը, իրացնողն ու տարածողը:

Սր. Էջմիածնից նվիրակի պաշտոնով Նոր Զուղա ժամանած Խաչատուր Վար-

¹² Մինասյան Լ., *Գրչութեան արւեստը Նոր Զուղայում, Նոր Զուղա, 1991, էջ 12:*

¹³ Մինասյան Լ., *Ցուցակ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ Վանքի Նոր Ստացված գրչագրերի, Լիբանան, 1994:*

¹⁴ Դերիկյան Վ., *Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, Եր., 2014, էջ 237:*

դապետ Կեսարացին¹⁵ 1620 թ. ժողովրդի խնդրանքով հաջորդեց Մովսես Կաթողիկոսին՝ դառնալով տեղի հոգևոր առաջնորդը. «Գովասանքով է պատմում նրա գործերի մասին, որովհետև նրա մեջ վառ էր ազատասիրական եռանդը, նա ուներ նաև գիտություն եւ մաքուր վարք»¹⁶ Այս նվիրյալ հոգևորականի մասին բազմաթիվ գովասանական արտահայտություններ է արել նաև Նոր Զուղայեցի պատմիչ Խաչատուր Զուղայեցին՝ կոչելով նրան բոլորի հայրը. «...պատճառ կրկին լուսաւորութեան ազգիս արամեան եւ նախասկիզբ հեղինակ սրբոյ տանս շինութեան եւ բարեգործութեան՝ որ ի Նոր Զուղա, եւ արմատ անմահութեան, վայելչութեան եւ պայծառութեան ազգիս մերոյ»¹⁷

1630 թվականին Կեսարացին որպես նվիրակ գնում է Հունաստան և Լեհաստան Նիկոլ Թորոսովիչի վեճերին վերջ տալու համար։ Եվրոպայում տեղեկանալով տպագրված գրքերի մասին՝ հղանում է Նոր Զուղայում տպարան ստեղծելու գաղափարը։

Լեհաստանից վերադառնալով՝ նա համոզված էր, որ կաթոլիկ քարոզչության հսկա վարչամեթոդային դեմ պայքարելու համար հայ հոգևորականությունը պետք է ավելի զարգացած լիներ։ Ու թեև հայ եկեղեցու վանքերում ու եկեղեցիներում կային մատյաններ, սակայն բավարար չէին կրոնական և հայեցի դաստիարակության համար։ «Խաչատուր Կեսարացիի նման արթնամիտ մեկը չէր կրնար այլ եւս անտարբեր մնալ իր ազգին լուսաւորութեան գործին հանդէպ»¹⁸։ Ժամանակն էր, որ տպագիր գրականության միջոցով աշխարհասփյուռ հայ ժողովրդին փոխանցվեին մեր կրոնական, ազգային ու մշակութային գանձերը, որպեսզի հայ մարդը իր հայրենի հողի վրա և հայրենիքից դուրս միշտ կառչած մնար իր արմատներին։

Հռոմում հայկական տպարան հիմնելու ջուղայեցի վաճառականների փորձը ձախողվել էր. «Նրանք 1630 թականին արդեն պաշտօնապէս դիմել էին պապին՝ Հռոմում իրենց սեփական ծախսով տպարան հիմնելու համար, որին, դժբախտաբար, ընթացք չէր տրվել»¹⁹։ Ուստի, հույսը կտրած Հռոմից, նրանք աջակից ու հովանավոր եղան իրենց սիրելի առաջնորդի այս հանդուգն ծրագրի իրականացմանը։

1636 թ. Խաչատուր Կեսարացին իր վանքի միաբանության հետ միասին ձեռնարկեց հիմնելու Պարսկաստանի և Միջին Արևելքի առաջին տպարանը Սբ. Ամենափրկիչ Վանքում։

Վանքի ողջ միաբանությունը լծվում է ծանր ու դժվարին աշխատանքի՝ զրոյից կազմակերպելով տպագրության գործը։ Պատրաստվում են թուղթ, մելան, տառեր և բոլոր այլ անհրաժեշտ պարագաները։ «Ամենքը մէկ, ձեռք ձեռքի տուած փորագրեցին, ձուլեցին, մելան ու տառ պատրաստեցին, շարեցին, ի չգոյէ իգոյ ածին թուղթը, փորձեր սրբագրեցին, պրակներ խմբեցին»²⁰։

Ռաֆայել Իշխանյանը ճշմարիտ է բնորոշում այս տպարանն ու իր տպագրիչներին. «Նոր Զուղայի հայկական տպարանը ինքնահնար էր. տպագրական արվեստին անտեղյակ մարդիկ տառերն ու մյուս պարագաները պատրաստելու ընթացքում էին դառնում տպագրիչներ»²¹։ Վերջապես մեկ տարի և հինգ ամիս աշխա-

¹⁵ Թեև նա հետագայում դարձավ եպիսկոպոս, բայց պատմության մեջ մնաց վարդապետ անունով։

¹⁶ Տեր-Շովհանեան, նշվ. աշխ., էջ 423։

¹⁷ Խաչատուր արեղայ Զուղայեցի, Պատմություն Պարսից, Վաղարշապատ, 1905, 116։

¹⁸ Թեղդիկ, Տիպ ու տառ, Կոստանդնուպոլիս, 1901, էջ 160։

¹⁹ Կորիւն Արք. Պապեան, Ուսումնասիրական Յօղւածաշարք, Նոր Զուղա, 2015, էջ 36։

²⁰ Թեղդիկ, նշվ. աշխ., էջ 161։

²¹ Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, Եր., 1977, էջ 354։

տեղում հետո 1638 թվականին տպագրվում է Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ Վանքի տպարանի երախայրիքը «Սաղմոս ի Դաւիթ»:

Խաչատուր Կեսարացու տպագրած առաջին գիրքը շուրջ 330 տարի մնացել է անհայտ և գտնվել է միայն 1968 թ.: Ուստի միջև այդ հրատարակված բոլոր աշխատություններում, ինչպես նաև Տեր-Հովհանյանի պատմության մեջ, 1641 թվականին տպագրված «Հարանց Վարքն» է ներկայացվում որպես Նոր Ջուղայի Վանքի տպարանի առաջին գիրքը:

«Սաղմոսարան»-ի հայտնության մասին առաջին հրապարակումները արել է Նոր Ջուղայի բանասեր, այդ տարիների Սբ. Ամենափրկիչ Վանքի մատենադարանի պատասխանատու Լևոն Մինասյանը իր «Նոր Յայտնություն իրանահայ տպագրական գործում»²² հոդվածում: Վերջինս հետագայում հեղինակել է Նոր Ջուղայի տպարանի մասին մի ամբողջ աշխատություն:²³

Օքսֆորդի Բողեյան գրադարանի արևելագիտական բաժնի հայերեն գրքերի պատասխանատու Դեյվիդ Բարեթը²⁴ 1968 թ. պատրաստում էր գրադարանի հայերեն ձեռագրերի և տպագիր գրքերի ցանկերը, երբ հանկարծ տպագիր գրքերի մեջ հանդիպում է մի ձեռագիր մատյանի, որի հիշատակարանը բացահայտում է երեք ու կես դար իր մասին գաղտնի մնացած ճշմարտությունը. «Եւ յաւուրս եղև տպագրութիւնս ի քաղաքն Շօշ. յանապատն Ջուղայոյ. ի ԹՎին ՌՁ եւ է (1638). Ձեռամբ նուաստ Խաչատուր Վարդապետին Կեսարացոյ. որ տարի մի է եւ հինգ ամիս, որ զցայգ եւ զցերեկ անդադար աշխատիմք հանդերձ միաբան ուխտիւս զի ոչ եմք տեսեալ ի վարպետէ եւ ոչ ունիմք ուսուցիչ. բայց միայն զհոգի սուրբ. եւ զկոճս եւ զկենդանի աղօթս հոգևոր հօրն մերոյ գնացելոյ առ Տէր....»:²⁵

Այս սաղմոսարանը պատկանել է Բիշոփ (Bishop) Փոքոքի հաւաքածուին, որը գրադարանին է նվիրել 1690 թվականին, վերջինիս մահից հետո: Գրքի գտնվելու տարին Օքսֆորդի համալսարանի ուսանող էր, հետագայում Նոր Ջուղայի շուրջ 25 տարիների առաջնորդ Կորյուն Արք. Պապյանը, ով, մոտիկ լինելով Բարեթի հետ, առաջիններից էր, որ իմանում է այս նորության մասին: Նա իր «Ուսումնասիրական Յօղաճաշարք» աշխատության մեջ հետաքրքիր մանրամասնություններ է պատմում այս մասին:²⁶

Այսպիսով՝ Նոր Ջուղայի Վանքի տպարանում 17-րդ դարում տպագրված չորս գրքերը՝ ըստ թվականների, հետևյալն են.

1. «Սաղմոս ի Դաւիթ», 1638 թ.
2. «Հարանց Վարք», 1641 թ.
3. «Խորհրդատետր», 1641 թ.
4. «Ժամագիրք Ատենի», 1641 թ.²⁷

Կեսարացին մեծ ցանկություն ուներ Նոր Ջուղայում զարգացնել հայ տպագրությունը, ուստի 1639 թ. Եվրոպա է ուղարկում իր աշակերտներից մեկին՝

²² Այլք, Թեհրան, հոկտ. 18, 1969, № 232, էջ 1:

²³ Մինասյան Լ., Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը, Նոր Ջուղա, 1972:

²⁴ David Barrett:

²⁵ Մինասեան Լ., նշվ. աշխ., էջ 20:

²⁶ Կորյուն Արք. Պապեան, նշվ. աշխ. էջ 8-12:

²⁷ Նշված թվականները դրանց ավարտման տարեթվերն են:

Հովհաննես Ջուղայեցուն²⁸, որպեսզի նա այնտեղ ուսումնասիրի տպագրական գործը, նոր տառեր ձուլել տա և տպագրական անհրաժեշտ պարագաներով վերադառնա. «... որպեսզի ուսեալ ի նոցանէ եւ եկեալ ուղղեսցէ եւ հաստատեսցէ զատ ի մէջ Հայաստանեաց» (Հիշատակարան «Ատենի Ժամագիրք»-ի):²⁹

Մեկ տարվա պանդխտությունից հետո Հովհաննես Վարդապետը հասնում է Իտալիա. «... վասն զի իմացած էր թէ հայերէն ձուլուած տառեր այդ երկիրը գոյութիւն ունէին: Վենետիկի մէջ գտնուած գիրերուն չհանելով, կ'անցնի Հռոմ, ուր, սակայն, արգելքներու կը բախի. հակառակ ատոնց կ'աշխատի սկիզբ մը տալ գործին.»³⁰: Նա ստիպված է լինում տեղափոխվել Լիվորնոյ քաղաք՝ իր հետ տանելով տպագրության արհեստի գիտակներ. «3 տարի և 3 ամիս՝ գիշեր ցորեկ իր աշխատանոցին մէջ կապարով ու մելանով պարապող այս աննկուն վարդապետը կ'աջողի հուսկ ուրեմն 1643-ին դրոշմել հայ տպագրական արուեստին լիովի պատիւ բերող գեղատիպ մատենան մը՝ Սաղմոսք Դաւթին³¹»³²

Հովհաննես Վարդապետը 1646 թվականին վերադառնում է Նոր Ջուղա՝ իր հետ բերելով մամուլ ու տառեր: Սակայն մինչև նրա վերադարձը վախճանվում է Խաչատուր Կեսարացին՝ թողնելով նրան առանց հովանավորության: Հակառակ խոչընդոտներին, Կեսարացու աշակերտը կարողանում է մեծ դժվարությամբ տպագրել երեք գիրք:

1. «Գիրք տումարաց, որ եւ պարգատումար կոչի», 1650 թ.
2. «Աստուածաշունչ», 1650 թ.
3. «Պօղոսի թուղթ», 1650 թ.

Հովհաննես վարդապետի Նոր Ջուղայից հեռանալուց հետո դադարում են տեղի տպագրական աշխատանքները մինչև 1687 թ., երբ Ստեփանոս առաջնորդի օրոք կաթողիկե և Հայոց Առաքելական եկեղեցիների միջև ծայր առած վեճերի ու անհամաձայնությունների պատճառով կրկին վերսկսվում է տպագրության գործը, և Հովհաննես Ջուղայեցու Եվրոպայից բերված մամուլով տպագրվում է երեք գիրք.

1. «Գիրք ատենական որ ասի վիճաբանական», 1687 թ.
2. «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց», 1688 թ.
3. «Գիրք համաոստ վասն իսկապէս և ճշմարիտ հաւատոյ», 1688 թ.:

1688 թվականից հետո անգործության է մատնվում մամուլը՝ փակելով հնատիպ գրքի շրջանը Նոր Ջուղայում³³: Այսպես է ավարտվում նաև Նոր Ջուղայի ոսկեդարը՝ հայ գրչության ու տպագրության պատմությանը որպես իր երբեմնի փառքի վկա թողնելով հսկայական ժառանգություն:

²⁸ Յովհաննէս վարդապետ Ջուղայեցի (Քթեշէնց). Ոսկան Երևանցու օգնական Թէոդորոս Քթեշէնցի եղբայրն է: Չպետք է շփոթել Յովհաննէս Մրքուզ Ջուղայեցու հետ:

²⁹ Մինասեան Լ., նշվ. աշխ., էջ 37:

³⁰ Թէոդիկ, Տիպ ու տառ, Կոստանդնուպոլիս, 1901, էջ 56:

³¹ Գրքի ճշգրիտ անվանումն է «Գիրք եւ սաղմոսք Դաւթի, որ եւ Սաղմոսարան կոչի», որի տպագրությունը ավարտվել է 1644 թվականին, և դրանից մի օրինակ անմիջապես ուղարկվել է Խաչատուր Կեսարացուն:

³² Տե՛ս նույն տեղը:

³³ Խաչատուր վրդ. Կեսարացու և Հովհաննէս վրդ. Ջուղայեցու տպարաններին պատկանող իրերը դարերի կողոպուտների ու աղետների հետևանքով անհետացել են գրեթէ ամբողջությամբ: Պահպանվել են միայն Հովհաննէս վարդապետի պատրաստած երկու տպատախտակներ:

*ЗОЛОТОЙ ВЕК ИСКУССТВА ПЕРЕПИСЫВАНИЯ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ И ПЕЧАТИ МОНАСТЫРЯ СУРБ АМЕНАПРКИЧ (СВ. ВСЕСПАСИТЕЛЯ) НОВОЙ ДЖУЛЬФЫ - **ՏՕՏԷ ԲՈԳՈԶՅԱՆ** - В истории Новой Джульфы XVII век известен как золотой век этой колонии, что в первую очередь обусловлено расцветом здесь искусства переписывания древних рукописей и книгопечатания.*

Предметом нашего исследования является история искусства переписывания древних рукописей и книгопечатания в Новой Джульфе, обстоятельства их возникновения, их значение и влияние на историю армянской литературы XVII века.

Народ, изгнанный с родной земли, на чужой земле сильнее цепляется за веру отцов и их искусство, и через год после изгнания начинает создавать новые рукописные книги, положив начало искусству переписывания древних рукописей в Новой Джульфе. Здесь за три с четвертью века создается богатое наследие в истории армянского рукописного искусства.

Началом второго расцвета становится создание типографии монастыря Сурб Аменапркич. Хачатур Кесарацци вместе с монастырской братией обители создает с нуля типографию и начинает печатать священную литературу. Таким образом создается первая типография Ирана и Среднего Востока.

В статье представлены интересные факты, которые придают еще большее значение роли Новой Джульфы и ее деятелей в истории армянской литературы и культуры.

Ключевые слова: *Новая Джульфа, монастырь Сурб Аменапркич, матенадаран монастыря Сурб Аменапркич Новой Джульфы, матенадаран Нерсеса Шнорали, армянское искусство переписывания древних рукописей, рукописи Новой Джульфы, армянское книгопечатание, армянские книгопечатники, Хачатур Кесарацци, вардапет Ованнес Джугаецци (Ктрешенц), музей Хачатура Кесарацци, армянская книга, печатные книги Новой Джульфы.*

*THE GOLDEN AGE OF THE ART OF REWRITING OF ANCIENT MANUSCRIPTS AND PRINTING OF SURB AMENAPRKICH MONASTERY (ST. ALL-SAVIOUR) OF NEW JULFA - **ՏՕՏԷ ԲՈԳՈԶՅԱՆ** - In the history of New Julfa, the 17th century has been known as the golden age of this colony, which is primarily conditioned by the flourishing of the art of rewriting of ancient manuscripts and book printing.*

The subject of our research is the history of the art of rewriting of ancient manuscripts and book printing in New Julfa, the circumstances of their emergence, their significance and influence on the history of the Armenian literature of the 17th century.

The people expelled from their native land cling more strongly to the faith of their fathers and their art in a foreign land, and a year after the expulsion they begin creating new manuscript books, laying the foundation for the art of rewriting of ancient manuscripts in New Julfa. A rich heritage has been created here in the history of the Armenian manuscript art for three and a quarter of centuries.

The beginning of the second flourishing was the creation of the printing house of the Surb Amenaprkich Monastery. Khachatur Kesaratsi, together with the monastic brethren of the monastery, has established the printing house from the very beginning and started printing sacred literature. Thus, the first printing house of Iran and the Middle East has been created.

The article has presented interesting facts that give more importance to the role of New Julfa and its figures in the history of Armenian literature and culture.

Key words: *New Julfa, the Surb Amenaprkich Monastery, the Matenadaran of the Surb Amenaprkich Monastery of New Julfa, the Matenadaran of Nerses Shnorhali, the Armenian art of rewriting of ancient manuscripts, the manuscripts of New Julfa, the Armenian book printing, the Armenian book printers, Khachatur Kesaratsi, vardapet Hovhannes Jughaetsi (Ktreshents), the museum of Khachatur Kesaratsi, the Armenian book, the printed books of New Julfa.*

**ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
(ԶԵՎՈՒՅԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐԲԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)**

Հոդվածում ցույց ենք տվել, որ հայերենի բառակազմության պատմական քննության առաջին փորձը կատարել է Մարտ Մուրադյանը 1970-ականին: Այդ հայեցակետով բացահայտվում են բառերի կառուցվածքային տարրերը և ամեն մի փոխում կատարված փոփոխությունները, ինչպես նաև երկու տեսակ փոփոխակ միավորները՝ գործուն և ոչ գործուն փոփոխա տարրերը, նրանց ձևային բանական և իմաստային դրսևորումները, տարրորոշման սկզբունքը, օժանդակ տարրերի գործառնությունը և այլն:

Բանալի բառեր¹՝ հայագիտություն, լեզվի հին, միջին, արդի փուլեր, հնդեվրոպական նախալեզու, պատմական քննություն, համաժամանակյա և տարաժամանակյա մեթոդներ, ստուգաբանություն, ձևային բանականություն, տարրաբանություն, հնչյունական ածանցներ, գործուն և ոչ գործուն փոփոխակներ, տարրորոշում, գլխավոր, օժանդակ և սին տարրեր:

Հայերենի բառագիտությունը հետաքրքրական և սովորաձուլ գիտակարգ է, որի բաժիններն են՝ իմաստաբանություն, ստուգաբանություն, բառակազմություն, դարձվածաբանություն և բառարանագրություն, որոնց առանձնակի ուսումնասիրությունները բերում են ընդհանրական արժեքավոր արդյունքներ:

Մինչև 1970-ից 80-ական թվականները համաժամանակյա քննադատական կատարվել են բազմաթիվ և բազմապիսի գիտական ուսումնասիրություններ, որոնք խոր հետք են թողել հայոց լեզվի և հայ մշակույթի պատմության մեջ: Ուշագրավ է, օրինակ, որ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ձեռնարկել է հայոց լեզվի ամբողջական պատմության ստեղծումը: Եվ Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» երկհատորյակից (1940-1951) և «Հայերեն արմատական բառարան» քառահատորից հետո հանձնարարվել են 4 գրքեր.

1. Նախագրային ժամանակաշրջան (հեղինակ՝ Գ. Բ. Զահուկյան).
2. Հին շրջան (հեղինակ՝ Լ. Ս. Հովսեփյան).
3. Միջին շրջան (հեղինակ՝ Պ. Կ. Վարդապետյան).
4. Նոր շրջան. արևելահայերեն (Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան), արևմտահայերեն (հեղինակ՝ Ա. Ե. Սարգսյան)՝:

Ընթերցողներին հայտնի՝ արժեք ունեցող բազմաթիվ ուսումնասիրությունների շարքում բացառիկ ուշադրության արժանի են ժամանակակից բառագիտությանը վերաբերող Էդուարդ Աղայանի քննարկումները 1980 և 1984 թթ.: Տարբեր գրքերում նույնական վերլուծություններ ու բնութագրումներ են. միայն երկրորդ հրատա-

¹ Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Ե., 1987, էջ 5-6:

րակությունում կառուցվածքային փոփոխություն է արված. բաժանված են ութ գլուխները²:

Բառագիտության բոլոր բաժիններն առանձին-առանձին մանրակրկիտ քննության են ենթարկված. լեզվի զարգացման առանձին շրջաններում, ենթաշրջաններում, փուլերում նրանց գործառնությունները բացահայտված են, և հայտնի են մեզ, բառագիտությանն առնչվող խնդիրներն ըստ փուլերի լուծվում են ստուգաբանությունների և ձևությաբանական վերլուծությունների միջոցով: Բոլոր բաժիններն էլ արժանի են պատմական վերլուծության, նրանցից առավել դուր են գալիս բառակազմության պատմական վերլուծություններն ու բնութագրումները, որովհետև դրանցով բացահայտվում են բառերի կառուցվածքային տարրերը պատմական քննության հայեցակետից, երկու տեսակ փոփոխակ միավորները գործուն և ոչ գործուն փոփոխակ տարրերը, նրանց ձևությաբանական և իմաստային դրսևորումները, փոփոխակ տարրերի դասակարգումը և տարրորոշման սկզբունքը, օժանդակ տարրերի գործառնությունը և այլն:

Մարո Հայրիկի Մուրադյանը 1975 թվականին հրատարակած իր ուսումնասիրության մեջ գրում է. «...հայագիտության ասպարեզում առայժմ թեկուզ մեկ լեզվական ժամանակահատվածի ձևությային համակարգ պատմական վերլուծության ենթարկված չէ»³: Շարունակելով իր խոսքը՝ հավելում է. «Բառերի կառուցվածքը պատմական վերլուծության ենթարկելու պրակտիկա մեզանում դեռևս չկա. բառերի բաղադրիչ միավորները առայժմ քննվել են կա՛մ համաժամանակյա, կա՛մ ստուգաբանական եղանակով»⁴:

Ուրեմն՝ բառագիտության պատմական ուսումնասիրությունը ենթադրում է բառերի կառուցվածքը վերլուծելու պատմական եղանակ, որը ա) նկատի է առնում ստուգաբանական վերլուծության արդյունքները, բ) խստորեն հետևում է լեզվի ամեն մի փուլում կատարված փոփոխությունները հաշվի առնելու սկզբունքին (ՄՄ, 5):

Հեղինակի կարծիքով՝ համաժամանակյա մեթոդի որոշ ըմբռնումներ մակերեսային են. օրինակ՝ համաժամանակյա ըմբռնումով գալար և գլոր բառերը իրար հետ կապ չունեցող բառեր են՝ միավորներ են, իսկ պատմական ըմբռնմամբ միևնույն բառի ոչ գործուն փոփոխակներն են, որոնք դեռևս իմաստային կապի մեջ են և դադարած օրինաչափությունների արգասիք են:

Տարրաբանությունը էական միջոց է ստուգաբանական և ձևությաբանական վերլուծությունների հարցում, ուստի անհրաժեշտ է բառակազմական կառուցվածքային տարրերը դասակարգել՝ ըստ բառերի ներսում նրանց կատարած դերի, որոնք երբ խումբ են ներկայացնում՝ գլխավոր, օժանդակ և սին:

1. **Գլխավոր տարրերը** բառարմատներն են՝ արմատական ձևայինները՝ այգ, լի, ջուր/ջր, խօս, ըստ, ու, ե/է: Կիրառական հնարավորություններով երկու տեսակ են՝ ա) **Անկախ տարրեր**՝ սուր, թուր, սէր, բ) **Կախյալ տարրեր**, որ միայնակ չեն կիրառվում իբրև բառ, օր.՝ բերձ (բարձ-ր-ա-բերձ), եղ (եղ-ն-իկ, եղ-ջ-եր-ու), երփ (երփ-ն-երանգ): Իրենց արտահայտած իմաստով՝ ա) **Հասկացական**՝ տուն, հող, քոյր, բիւր, մաւտ (մոտ), բ) **Հարաբերական**՝ բայց, իսկ, թե, ընդ, գ, ի (յ), ու, և:

² Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Է. Բ. Աղայան, Վ. Ղ. Ստաբեյյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Ներածություն, հնչյունաբանություն, բառագիտություն, դարձվածաբանություն, Ե., 1980, էջ 187-524:

Նույնի (Է. Բ. Աղայանի), Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, 371 էջ:

³ Տե՛ս Հայոց լեզվի պատմական քերականություն, II, 1975, (5-158), [Մ. Հ. Մուրադյան, Բառագիտություն (5-158), հետադարձ՝ ՄՄ]:

⁴ Տե՛ս Մ. Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 7:

2. **Օժանդակ տարրեր.** երկրորդական ձևայիններն են՝ ին (լոյս-լուսին), ակ (տուն-տնակ):

3. **Մին տարրեր.** բառերի այն բաղադրիչներն են, որոնք տրոհելի են, սակայն կորցրել են իրենց նշանակությունը: Հին հայերենում՝

Օր.՝ **ի** բաղադրիչը **տեղի** բառում, երբ գուգահեռ կա **տեղ** բառը.

ն բաղադրիչը **եկն** «գալուստ» բառում, երբ կա **եկ** «գալուստ».

ջ բաղադրիչը **գաղջ** բառում՝ **գոլ** բառի մոտ.

ձ բաղադրիչը **դեղձան** բառում, երբ կա **դեղին**.

ծ բաղադրիչը **պուրծ** միավորում, երբ կա **պուր**:

Միջին հայերենում՝ **-ջ, -ն** բաղադրիչները **բողջն** «գունդ» բառում, երբ կա **բուլ** «գունդ», **բուրդել** «կլորացնել».
-տ բաղադրիչը **մօրտ** «ճահիճ» բառում, երբ կա **մօր** «ճահիճ», **ա (յ)** բաղադրիչը **հիմայ** բառում, երբ կա **հեմ** «այծմ»:

Արդի հայերենում՝ **-բ** բաղադրիչը **ձեքբակալել** բառում, երբ կա **ձեռ**. **-յ** բաղադրիչը **կայ, գոյ** միավորներում, երբ կան **կա, գո** (կայք և մոտակա. **գոյ** և **ինքնագո**):

Նախագրային ժամանակներից հայերենի բառակազմության խնդրում նոր ձևայինների առաջացման պատմական կարևոր իրողություն էր հնդեվրոպական նախալեզվի վերջին ձայնավորի անկման, վերացման երևույթը: Նախ այդ իրողությունը վճռական դեր է ունեցել հոլովման բարդ համակարգի ձևավորման հարցում, որից հայերենը հրաժարվել է՝ ձևավորելով իր համակարգը, իսկ հայերենի բառակազմական ձևայինների առաջացման գործում լիարժեք կարգով ազդեցություն է ունեցել, հատկապես ածանցակերտմամբ:

Հայերենի մեկ ածանցը կարող է սերել հնդեվրոպական թե՛ մեկից և թե՛ երկուսից, երեքից: Այժմ նշենք մի քանիսը, հետո վկայենք օրինակներ:

Ածանցներ՝ -ն < հնդեվր. -no//n	- ին < հնդեվր. -ino
-ր < հնդեվր. -ro//ra//ri, նաև er	- ի < հնդեվր. -yo
-մ < հնդեվր. -mo	- ղ < հնդեվր. -lo

Ն ածանցը՝ 1. Անվանակերտ նշանակությամբ. **բա** բայարմատից (բա-մ «խոսում եմ», բա-ս, բա-յ) **բա-ն** «խոսք».
թա բայարմատից (թա-ն-ա-մ «թրջում եմ»..., թա-ց-ի «թրջեցի»...) կազմվում է **թա-ն** «թաց ուտելիք, ջրալի կերակուր» բառը. **կեա** բայարմատից **կեա-ն-ք** «կենդանություն, գոյություն» բառը. **ջերմ** «տաք, տաքուկ» (ջերմ-ային, ջերմ-ան-ամ) բառից՝ **ջերմն** «տենդ» բառը. **այր** արմատի **ար** փոփոխակից (գրաբ. ար-ա-հետ, ար-ու, ար-ի «քաջ»)՝ **առ-ն** «արու ոչխար» բառը. **սեռ** «շառավիղ, սերունդ, ազգ, ցեղ, տոհմ» բառից՝ **սեռ-ն** «հարազատ, պարզ, հստակ, ջինջ, բուն, անխառն, անկեղծ» բառը:

2. Որոշ դեպքերում **ն** ածանցը որպես բաղադրիչ թեև տրոհելի է, սակայն այդ բառերում նրա ձևային իմաստը մթազնաձ է:

Օրինակ՝ **ձմեռ-ն** (հմմտ. ձմեր-ք, ձմեր-ոց, ձմեր-ային, ձմեր-ե-մ, ձմեր-ուկ).

ձեռ-ն (հմմտ. ձեռ-ք, ձեռ-բ-ազատ, ձեռ-բ-ա-կալ).

ոտ-ն (հմմտ. ոտ-ք). **ծունկ-ն** (հմմտ. ծունկ, ծնկ-ի-մ, ծնկ-ան-ա-մ).

ակ-ն (հմմտ. առ-ակ). **դուռ-ն** (հմմտ. դուր-ք, դր-աց-ի, դր-անդ-ի):

3. **Ն ածանցը** շատ բառերում բաժանելի չէ և իբրև բաղադրիչ գիտակցվում է.

Օրինակ՝ շուրթն, եղեգն, եգն, խուփն, գմբեթն, երփն, կայծակն և այլն:

4. Որոշ բառերում ոչ միայն տրոհելի՝ բաժանելի չէ **ն** ածանցը, այլև չի գիտակցվում:

Օրինակ՝ **գին** (= գի-ն < ues-no). **քեն** (= քե-ն < kuei-no).
քուն (= քու-ն < suop-no). **մուն** (= մու-ն < mus-no).

Ն ածանցի իմաստի կորստին հաջորդում է նրա հնչյունային անկման պատմական գործընթացը հետքադաձայնային դիրքում:

Գրաբ. – սունկն//սունկ, սառն//սառ, կողմն//կողմ, կնճիռն//կնճիռ, տուտն//տուտ.

Միջ. հայ. – **բողջն** «գունդ»//բողջ «պալար» (**բղջ**-ուն «պալարոտ»).

մառն «մշուշ, խավար» (հմմտ. **մար**-ել «հանգցնել» **մո**-այլ «մշուշ, մթնշաղ»).

ջերմն//**ջերմ** «տենդ, հիվանդություն». **թոռ-ն** // **թոռ**, **ձեռ**, **ձուկ**, **գառ**, **հարս...**

Ն ածանցի կամ **ն** հնչյունի անկման գործընթացն ավարտվում է ժամանակակից հայերենի գրական տարբերակներում (արևելահայերեն, արևմտահայերեն) և բարբառների մեծ մասում (ամառ, ձմեռ, լեռ, անձ, թոռ, մուկ, ձուկ, մատ, մաս, հարս, շուրթ, եգ, բեռ, նուռ...):

Մակայն արդի գրական լեզվից իսպառ չի վերացել, հանդիպում է որպես սին տարր, ձևական բաղադրիչ, ինչպես **դո-ն-փակ**, **մատ-ն-ա-ցույց**, **լեռ-ն-ա-խոտ**, **հարս-ն-ա-քար**, **մաս-ն-ա-կից** և այլն, հոգնակի կազմություններում՝ **ձկ-ն-եր**, **թոռ-ն-եր**, **դո-ն-եր**, **եգ-ն-եր**...

Ն բաղադրիչը լիովին մթագնել-ձուլվել է **ան** հոլովիչի մեջ, օրինակ՝ **թոռ** – **թոռ-ան** (= **թոռ-ա-ն**), **նուռ** – **նո-ան** (= **նո-ա-ն**), **դուռ** – **դո-ան** (= **դո-ա-ն**):

Գրաբարի **բա-ն**, **թա-ն** բաղադրություններն արդի հայերենում նվազագույն նշաններ են՝ **բան**, **թան**, քանի որ **բա**, **թա** արմատները կորցրել են ձևային արժեքը, և նրանցում **ն** ածանցը չի գիտակցվում, ինչպես **գին**, **քուն**, **քեն**, **մուն** բառերում գրաբար փոխվում չէր գիտակցվում:

Հ. Աճառյանը նշում է, որ հնդեվրոպական **ro//ra//ri** և **er** ածանցները հայերենում արտահայտվում են **ր** նշանով⁵:

Գրաբարում **լի**, **լու**, **դ(ի)դի**, **տու** արմատները ստանում են **ր**՝ անվանակերտ նշանակությամբ.

լի «լեցուն, ամբողջ, առատ» + **ր** > **լի-ր** «ամբողջություն, լրիվություն».

լու (լու-այ «լսեցի», հ-լու) + **ր** > **լու-ր** «լսողություն, ունկնդրություն, համբավ».

տու (ե-տու «տվեցի», արարչատու) + **ր** > **տու-ր** (ք) «տվչություն, տալու բան».

դի (դ(ի)-ն-ե-մ «դնում եմ», ե-դի «դրեցի») + **ր** > **դի-ր** (ք) «դրություն, վիճակ»:

Ո բառարմատ (**ո-մն**, **ո-ք**) + **ր** > **ո-ր**՝ **որ** «նա որ, այն որ».

Ի արմատ (**ի-ք**, **գ-ի**, **ի-մն**, **ի-ն-չ**) + **ր** > **ի-ր**՝ **իր** «մի բան, իր, գործ».

Յամ «ուշ» բառարմատ + **ր** > **համ-ր** «դանդաղ, դանդաղորեն» (մակբայ).

Այս բառ + **ր** > **այս-ր** «դեպի այստեղ, այս կողմ» (մակբայ).

Այդ բառ + **ր** > **այդ-ր** «այդ վայրում, այդտեղ» (մակբայ).

Անդ «այն վայրում» բառարմատ + **ր** > **անդ-ր** «դեպի այն կողմ, այնտեղ, մի կողմ»:

Ր ածանցը մի շարք բառերում ձուլվել է արմատին և չի գիտակցվում, որ ածանց է, օրինակ՝ **սեր** (= **սե-ր** < **k'ei-ro**), **սուր** (= **սու-ր** < **ko-ro**), **ոսկր** (= **ոսկ-ր** < **ostu-er**), **լար** (= **լա-ր** < **ula-ro**), **կոր** (= **կո-ր** < **go-ro**), **նոր** (= **նո-ր** < **nou-ro**) և այլն:

Միջին հայերենը նոր բաղադրություններ չի վկայում **ր** մասնիկով. **ր**-ն այս փուլում արդեն գործուն չէ, միայն հնուց ավանդված որոշ բառերում գիտակցվում է որպես բաղադրիչ: Օրինակ՝ **լի-ր**, հմմտ. **լի**, **լի-ց**, **լե-ցուն**. **տու-ր(ք)**, հմմտ. **բեր-ք-ա-տու**. **լու-ր**, հմմտ. **հ-լու**:

⁵ Տե՛ս Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն*, հ. 3, էջ 110 (ՄՄ, 14):

Արդի հայերենը ևս պահպանում է նման գործառնություններ: Օրինակ՝ լի-ա-լի-ր, բերան-ա-լի-ր, լի-ություն. ան-լու-ր «չլաված» և հ-լու «լսող, հնազանդ». մեծ-ա-դի-ր, բարձր-ա-դի-ր և դ(ի)-ն-ե-լ. բն-ա-տու-ր և կեն-ս-ա-տու...

Հ. Աճառյանը նշում է նաև, որ հնդեվրոպական **-mo** ածանցով հայերենում արտահայտվում է **մ** միավորը⁶, և գրաբարում նվազագույն կիրառություն ունի: Օրինակ՝ **ջեր-մ**, արմատը՝ **ջեր** (ջեր-ին, ջեր-ի-մ). **կող-մ**, արմատը՝ **կող** (կող, կող-մն). ան-գ-գա-մ, արմատը՝ **գա** (գ-գա-յ-ուն). **թուր-մ** «թաց» հիմքը՝ **թու-ր**, արմատը՝ **թու/թա** (թուր-ջ, «թրջոց», թու-ք, թա-ն-ա-մ, թա-ց).). **մեղ-մ** «փափուկ» և **մեղ**-կ-ե-մ «թուլացնել»:

Արդի հայերենում տարբերակելի են հետևյալ կառույցները.

ջեր-մ-ոց, ջեր-մ-ա-չափ և ջեր-ոց, ջեր-ա-չափ.

կող-մ և կող-ք, կող-եր.

կա-մ-ք և կա-յ-ուն.

ան-զգա-մ և զգա-լ, զգա-յ-ուն...

Ին միավորը (< հնդեվր. -ino ածանցից) գրաբարում գործուն է գիջ-ին «թաց», ջեր-ին «տաք», բիր-ին, արտաք-ին, լուս-ին: **Դարբին**, **մարմին** բառերում ածանցը չի գիտակցվում, նախալեզվում նրանց արմատներն են՝ գործառնությունից զրկված **դարբ** (< dhabr), **մարմ** (< mrm):

Ի միավորը (< հնդեվր. -yo ածանցից) գրաբարում ակտիվ գործառնությամբ է՝ աղ-ի/աղ, ար-ի/այր, ձր-ի/ձիր, մոլ-ի/մոլ, աստ-ի «հաստատուն» /աստ-ել «հաստատել», սակայն որոշ բառերում այն չի գիտակցվում՝ որդի (< por-ti-yo), ալի (< pl-yo), քենի (< suen-yo), ոզնի (< og hin-io):

Մն միավորը հանդիպում է՝ սեր-մն/սեր-ել, կող-մն/կող, ջեր-մն/ջեր-իմ, ո-մն/ո: **Մն**-ն չի գիտակցվում՝ ատամն (< dn-mn < ed արմատից), գեղմն (< vel-mn):

Եղ-ը գործուն է՝ **ուծ-եղ**/ոյժ, **սե-եղ**, **շք-եղ**/շուք, **գոր-եղ**/ գոր-ություն, բայց **ասեղ-ն** բառի մեջ **ասեղ** միավորում չի գիտակցվում՝ **աս** (< ak՝ «սուր») արմատի մոտ:

Առ նախամասնիկը որպես բաղադրիչ գիտակցվում է՝ **առ-աջ**/աջ, **առ-ողջ**/ողջ, **առ-աք-ե-մ**/աք (ընդ առ տանիմ), **առ-ակ**/ակ-ն, իսկ **առաստաղ** (= առ-ա-ստաղ < stl «դնել, բարձրացնել, կանգնեցնել»), **առասպել** (= առ-ա-սպել < spel «խոսել, պատմել») բառերում մեռած **ստաղ**, **սպել** արմատների մոտ չի գիտակցվում:

Նի նախամասնիկը գրաբարում գործուն չէ, միայն **ն(ի)-շող-ե-մ** «փայլեցնել, լույս դուրս տալ» և **շող** բառերը համեմատելիս կնկատենք բաղադրիչ լինելը, իսկ **նիստ** բառի **ստ/սիտ** (< sed) արմատի մոտ, որ արժեզրկված է, **նի**-ն որպես բաղադրիչ չի գիտակցվում:

• Ուրեմն՝ լեզվի որևէ ժամանակահատվածում երբ բաղադրությունը մթազնում է նրա **հիմնական ձևույթի**՝ տվյալ համակարգում այլևս չգործառնվելու դեպքում, ապա երբեմնի արմատը անբաժանելիորեն ձուլվում է երկրորդական բաղադրիչին, և միասնաբար ընկալվում են որպես նվազագույն նշան: Այդպիսի նշաններ են՝ ատյան, դարբին, մարմին, ատամն, գեղմն, ասեղ, առաստաղ, առասպել, նիստ, որդի, ալի, քենի, ոզնի և այլն:

• Բաղադրությունը մթազնում և նվազագույն նշանի է վերածվում նաև բաղադրիչ միավորների հնչյունափոխությամբ և ձուլմամբ: Այս երևույթը հատկապես բնորոշ է միջին հայերենին, թեև նկատելի է և գրաբարում, օրինակ՝ տեր (= տի+այր), այժմ (= այս+ժամ), միւս (= մի+ես), մխիթար (= մի+խիթար) և այլն:

⁶ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 109-110 (ՄՄ, 16):

Միջին հայերենում՝ դորդ/ըդորդ «ուղիդ, ճիշտ» (= ուղիդ+որդ), զերդ/զեդ/զետ/զերթ// զեթ «որպես, ինչպես» (= զի+արդ), դոր «ուր, որտեղ» (= ընդ+որ), դունչ «բերանը և ծնոտը միասին» (= ընդ+ունչ), ջաղաց (= ջր+աղաց), այլվի/ալվի/ալվա «կրկին» (= այլ+վայր), լման «լրիվ» (= ի լրման) և այլն:

Բառերի պատմական փոփոխություններով նոր նվազագույն նշաններ են ձևավորվում, օրինակ՝ գրաբարի **այն** դերանվան հոգնակի սեռական, տրական **այնց** հոլովածնից միջին հայերենում կազմվում են հանց/հենց/էնց/ոնց նշանները, **հասանել** բայից արդի հայերենում՝ **հասցե**, **գո-մ** բայի ապառնուց՝ **գուցե** բառը, **կեա-մ** բայի ապառնուց՝ **կեցցե-ն**, **ազնիվ** բառը գրաբարի **ազն** բառի եզակի գործիականից:

Տարրորոշման սկզբունք

Բառերը կարելի է տարրորոշել պատմականորեն՝ հենվելով միայն բուն լեզվի զարգացման հաջորդական փուլերի ընձեռած հնարավորությունների վրա: Խիստ կարևոր են՝ ա) բառերի ստուգաբանական կազմությունը և բ) առանձին փուլերում կատարված փոփոխությունները:

Գ. Զահուկյանը տարրորոշման օրինակ է վկայում. Հին հայերենում **դիրապուր**, **մագապուրծ**, **պրծնում**, **սպրդիմ** բառերն ունեն ընդհանուր միավոր՝ **պուր-**, որի հիման վրա **պուրծ** և **սպ(ու)րդ** միավորները կարելի է ձևականորեն տրոհել այսպես՝ **պուր-ծ**, **ս-պուր-դ**: Սա ճիշտ տարրորոշում է, քանի որ ստուգաբանորեն ևս **պուր** արմատից անջատելի են բառասկզբի **ս** և բառավերջի **-ծ**, **-դ** տարրերը⁷:

Բառերի տարրորոշումը պատմական հիմքերի վրա դնելով՝ հնարավոր է դառնում հաշվի առնել առանձին փուլերում կատարված փոփոխությունները: Հստակ օրենք է. եթե որևէ միավոր ստուգաբանորեն բաղադրյալ է, բայց լեզվի մեջ կատարված փոփոխությունների հետևանքով նրա բաղադրյալ լինելը չի գիտակցվում, ուրեմն տվյալ փուլում տվյալ միավորը տրոհելի չէ, այսինքն՝ բաղադրյալ չէ:

Օրինակ՝ ստուգաբանորեն բաղադրյալ են, բայց հին հայերենում տրոհելի չեն.

Բառ	Արմատ	Իմաստ	Բաղադրիչ
տաւն	տա dθ	«անջատ»	-ւ -ն տա < da > տաւն > տոն > տոն
ձիւն	ձի g hi	«ձմեռ, ձյուն»	-ւ -ն ձի – g heyod -y -m այծ – g hiadoθ
հովիւ	հովի oui	«ոչխար»	-ւ -pa «սնել, բուծել»
հիւղ	հիւ (ծ)keu	«ծածկ»	-ղ -lo
տեղ	տե ded	«նիստ»	-ղ -lo
ըմպել	պ(ի) pi	«խում»	ըմ՝ նախամասնիկ՝ ըմ-բեր-ել = «համբերել» ըմ + pi = «խմել» ումպ-ը հետո ձևավորվեց
նեարդ	նեա δneu	«դարձ»	-ր -դ -er -t

- Գրաբար փուլում տրոհելի են հետևյալ կազմությունները (ՄՄ, 23-25).

Աստ = աս + տ. արմատ՝ **այս** (այ/ա հերթագայություն), ինչպես՝ այր և ար-ու.

Անդ = ան + դ. արմատ՝ **այն**.

⁷ Դ. Բ. Джаукян, Очерки по истории дописменного периода армянского языка, էջ 128-129 (ՄՄ, 21):

Երկիւղ = երկ + իւղ, հմմտ. երկ-չ-ոտ, երկ-ն-չ-ի.

Ոլորտ = ոլոր + տ. արմատ՝ **ոլոր**.

Սերտ = սեր + տ, «խիտ, հարագատ, ընտիր», հմմտ. սեր-ել, սեր-ունդ, սեր «կաթի խիտ, թանձր մասը».

Գաղտ = գաղ + տ, «թաքուն», հմմտ. գող-ունի, գող-տ-ուկ.

Պտույտ = պիտ կամ պուտ + ոյտ, հմմտ. պատ-ել «փաթաթել» «պտտել»՝ ի/ա, ու/ա.

Շփոթ = շփ կամ շուփ + ոթ, հմմտ. շփ-ք «շփոթություն» և շուփ «կասկած, խառնակ».

Ողբ = ող + բ, հմմտ. ող-ող-ան-ալ, ող-իկ ող-իկ գալ «ողբալ».

Ղեղք «ղեղին» = ղեղ + ք, հմմտ. ղեղ-ին.

Խուճապ = խուճ + ապ, հմմտ. խուճ «վախեցնող բան».

Սարսափ = սարս + ափ և սարս-իմ.

Փաղփ «փայլ» = փաղ + փ, հմմտ. փող-փող-եմ «փայլփլեցնել», փայլ.

Շռայլ = շիռ + ալլ, հմմտ. արք-շիռ.

Դրոյլ «դռնապան» = դուր + ոյլ, դուր-ք, դր-ան-իկ.

Կուղիս = կուղ + իս, «կլանող, լափող», արմատ՝ կուղ. լ/ղ հերթագայության համար հմմտ. փայլ և փող-փող-ալ, ալլ և աղ-ալ-աղ, ան-ալ-ի և աղ-ի.

Ուղիս = ուղ + իս, «հեղեղատ», հմմտ. ող-ող-ել, հեղ-եղ-ատ.

Շաղախ = շաղ + ախ, հմմտ. շաղ-ել.

Գոյ «գոյություն» = գո + յ, հմմտ. գո-մ «կա».

Բայ «խոսք» = բա + յ, հմմտ. բա-մ.

Կայ «գոյություն» = կա + յ, հմմտ. կա-մ.

Բառ «խոսք» (բարբառել «խոսել») = բա + ռ, հմմտ. բա-մ.

Լուռ = լու + ռ, հմմտ. հ-լու «լսող».

Ուր = ու + ը, հմմտ. յ-ն «ղեպի ուր».

Իր = ի + ը, հմմտ. ի-ք, ի-մն.

Որ = ո + ը, հմմտ. ո-ք, ո-մն, ո:

• Ածանց + արմատ կաղապարով, որոնք մակբայակերտ ածանցներ, նախդիրներ են.

Զգոյշ = զ + գոյշ, հմմտ. գուշ-ան-ամ «զգուշանալ», գո՛յշ «զգուշացիր».

Զի՛ = զ + ի՞, հմմտ. ի՞-ւ, ի՞-մ.

Զուարթ «մշտարթուն» = զու + արթ, հմմտ. արթ-ուն.

Հախուռն = հա + խուռն, հմմտ. խուռն.

Յակիրճ = յա + կիրճ, հմմտ. կրճ-ատ, կարճ.

Նշոյլ = նի + շոյլ «երևացող լույս», հմմտ. ն-շող-եմ «լույս ցայտել», շող «լույսի շառավիղ».

Նհատ = նի + հատ, «պակաս, թերի» հմմտ. հատ-ան-ել.

Նախանձ = նա + խանձ, հմմտ. խանդ-ել.

Նամանավանդ = նա + մանավանդ/մանավանդ.

Մփռել = ս + փիռ + ել, հմմտ. փռ-ել.

Մուրալ = ս + ուր + ալ, հմմտ. յուր-ալ.

Մտածել = ս + տած + ել, հմմտ. տած-ել (ՄՄ, 24):

• Ածանց + արմատ + ածանց կաղապարով (ՄՄ, 24).

Յաչաղ «աչքածակություն» = յ + աչ + աղ, հմմտ. աչ-ք.

Յապաղիմ = յ + ապ + աղ + իմ, հմմտ. ապա.

Հուժկու = հ + ոյժ + կու, հմմտ. ոյժ.

Յաճախ = յ + աճ + ախ, հմմտ. աճ-ել.

Ընկղմիմ = ըն + կուղ + մ + իմ, հմմտ. կուլ:

• Արմատ + ածանց + ածանց կաղապարով (ՄՄ, 25).

Մտերիմ = միտ + եր + իմ, հմմտ. մէտ, միտ-ել և ռիտ-իմ, ուշ-իմ.

Բարձր = բար + ձ + ր, հմմտ. բար-ձ-ի, բառ-ն-ամ.

Կեանք = կեա + ն + ք, հմմտ. կեա-մ, կեն-դ-ան-ի.

Հանգրուան = հանգ + ր + ուան, հմմտ. հանգ-իստ. **ք** ածանցի համար հմմտ. յամ-ք «դանդաղ»:

• Ածանց + արմատ + ածանց + արմատ (կամ ածանց) կաղապարով.

Խրախճան = խ + ուր + ախ + ճան, հմմտ. ուր-ախ, տ-խ-ուր, խ-ր-ախ-ան-ալ.

Համբարձումն = համ + բար + ձ + ումն, հմմտ. բառ-ն-ամ:

• Քննված բառերից մի քանիսը գործածությունից դուրս են գալիս միջին հայերենում, դրանցից են **դեղը, դրոյլ, նհատ, փաղփի**, արդի հայերենում բացի դրանցից նաև **յաչաղ** «աչքածակություն» բառը:

Փոփոխակ տարրեր

Եթե լեզվի նշանային համակարգի որևէ ոլորտում ձևային հնչույթային կազմը փոփոխություն է կրում, ուրեմն այդ ձևային գործառնում է մեկից ավելի արտահայտություններով, այսինքն՝ **փոփոխակներով**: Այլ կերպ ասած՝ **ձևային փոփոխակներ** կամ **փոփոխակ կառուցվածքային տարրեր** անվան տակ պետք է հասկանալ **ձևային իր հնչույթային կազմի փոփոխվող արտահայտություններով**:

Օրինակ՝ գրաբարում մեկ արտահայտությամբ գործառնող տարրեր են՝

արմ. հմմտ. արմ-ատ, գ-արմ, ընդ-արմ-ան-ալ.

արկ. հմմտ. արկ-ան-ել, ակ-ն-արկ, ենթ-արկ-ումն:

Երևում է, որ ընդգծված տարրերը տարբեր դիրքերում իրենց հնչույթային կազմը անփոփոխ են պահում:

Հակառակ սրանց, փոփոխակներով են գործառնում հետևյալ տարրերը.

սեր//սիր. մարդ-ա-սեր, մարդ-ա-սիր-եմ.

այր//ար//առ. քեռ-այր, ար-ամ-բ-եմ, առ-ն-ա-քաջ.

այս//աս//ս. այս-պէս, աս-տ, գերի-ս (ցուց. հոդ).

արեւ//արեգ. արեւ-ա-կէգ, արեգ-ակ-ն-ա-կերպ.

հուր//խուռ. յա-հուր//յա-խուռ-ն.

ի//յ. ի գետոյ, յ-արքայէ.

ին//յն. նո-ր-ին, նո-յն.

եք//ոք. կեղ-եք-ումն, բորբ-ոք-ումն.

եմ//իմ//ում//ամ//մ. խոհ-եմ, ուշ-իմ, ճոռ-ում, թարշ-ամ, ջեր-մ.

Փոփոխակներ ձևավորվում են հնչույթների հերթագայությամբ՝ ե/ի, ա/ա, ր/ռ, լ/գ, հ/խ, ի/յ, ե/ի/ո/ա:

Ձևային փոփոխակների առաջացման հիմքերը տարբեր են պատմականորեն՝ 1) կան փոփոխակներ, որոնց գոյացման աղբյուրը հենց նույն համակարգում գործող օրենքներն են. դրանք **գործուն փոփոխակներ** են, 2) կան փոփոխակներ, որոնց գոյացման աղբյուրը նախորդ համակարգում գործած և դադար առած, մի որևէ տերիտորեալ տարբերակում (բարբառ, խոսվածք) գործող, բայց գրական լեզվի համակարգին ոչ հատուկ օրենքները կամ օտար ազդեցություններն են. դրանք էլ **ոչ գործուն փոփոխակներ** են (ՄՄ, 32-53):

Գործուն փոփոխականներ. – Հայերենի գրավոր շրջանի երեք փուլերի յուրաքանչյուր համակարգում գործուն փոփոխականներ առաջ բերող պայմանները երկուսն են՝

ա) ձևային և շեշտակիք և շեշտագուրկ լինելը,

բ) հնչյունային ոլորտի որոշ ազդեցությունը, որ մեծ դեր ունի գրաբարում:

Ա. **Հին հայերենում**՝ է/ի. է գ/իգ (իգ-ակա՛ն), քէ՛ն-քինո՛ւ,

-իջ//չ (գր-ի՛չ, գր-չ-ութի՛ւն)

ն յ//ու -ոյթ//ութ (երեւ-ո՛յթ, երեւ-ութ-ական),

ա՛/(ը). արմ-ա՛տ, արմ-(ը)տ-ի՛ք,

ա՛ւ/ա. մա՛ւտ/մատ (մատ-չ-ի-մ), արտա՛ւր/արտաս-ո՛ւք.

Միջին հայերենում՝ ո՛ւ/(ը). պո՛ւրճ//պ(ը)րճ (պ(ը)րճ-ե՛ր),

ի՛/Օ. -ի՛ճ//ճ (կտր-ի՛ճ, կտր-ճ-ե՛ր),

ո՛ւ/վ. առո՛ւ/առվ (առվ-ո՛ւ),

ա՛/Օ. դանա՛կ/դանկ (դանկ-ի՛կ),

ո՛ւ/Օ. ժողո՛վ//ժողվ (ժողվ-ել), ո՛ւ/վ. (խոր-ո՛ւ, խոր-վ-ած):

Արդի հայերենում՝ ե՛/ի. դե՛զ/դիզ-ե՛լ,

ի՛/ը. գի՛ր/գ(ը)ր-ել,

ո՛ւ/Օ. անասո՛ւն/անաս-ն-ական...

Բ. Որոշ ձևային հնչյունային որևէ ոլորտում ենթարկվում են լեզվի տվյալ համակարգին բնորոշ հնչյունափոխության:

Օրինակ՝ **Ին//յն** ձևային փոփոխականներից առաջինը՝ **ին**, գործառում է բաղաձայնից հետո, իսկ **յն**-ն **ո** և **ա** ձայնավորներից հետո, ինչպես՝ նո-ր-ին և նո-յն, սո-ր-ին/սո-յն, կամ՝ դիւր-ին, ջեր-ին, վերջ-ին, ամեն-եւ-ին և ողջ-ո-յն, ան-ա-գոր-ո-յն, իսկ-ո-յն, երկ-ա-յն, մի-անգամ-ա-յն, նոյն-ժամ-ա-յն:

Եռանդամ ձևային փոփոխականներ՝

որդի//որդե//որդւ (որդի-ք, որդե-ակ, որդւ-ոյ), արք-ունի-ք, արք-ունե-աց, արք-ունւ-ոյ.

ոսկի//ոսկե//ոսկւ (ոսկի-ք, ոսկե-այ, ոսկւ-ոյ), թագ-ուհի-ք, թագ-ուհե-աց, թագ-ուհւ-ոյ.

ար//առ (արա՛, ար-ար-իչ, առ-ն-եմ).

ար//առ (ար-ա-հետ, ար-ու, առ-ն-ական).

ան//ամ (փոքր-կ-ան, փոքր-կ-ամ-բ).

աց//աս (զգ-աց-ումն, զգ-աս-ց-ես):

Նկատելի է, որ առնմանությամբ և տարնմանությամբ փոփոխականներ են ձևավորվում.

Տարնմանությամբ՝ կիծ//կիս (կծ-ու, կս-կիծ), վեց//վեշ (վեշ-տասան).

Առնմանությամբ՝ ծուն – ճան (ծան-ալթ, ճան-աչ-եմ):

Միջին հայերենում եռանդամ փոփոխականները երկուսի են փոխվում՝ որդի//որդե, ոսկի//ոսկե և այլն:

Ոչ գործուն փոփոխականներ. – Լեզվի տարբեր համակարգերում ոչ գործուն

փոփոխականները, որոնց գոյությունը նույն համակարգում գործող օրենքներով չի պայմանավորվում: Օրինակ՝ **գրաբարում** հնարավոր չէ բացատրել, թե ինչու մի քանի ձևայիններում **այ** երկբարբառը հերթագայում է **ա** ձայնավորով, ինչպես՝ այս > աս-տ, այն > ան-դ, այր > ար-ա-հետ, կամ ինչո՞ւ **վ/ւ/ու** հնչյունախումբը հերթագայում է **զ**-ով, ինչպե՞ս՝ կով > կոզ-ի, հեւ > հագ-ագ, արեւ > արեգ, չու > չոգ, կամ ինչո՞ւ **տալ** բայի **ա** ձայնավորը որոշ բայաձևերում հերթագայում է **ու** ձայնավորով, ինչպես՝ տա-մ > ե-տու, այդպես էլ **միջին գրական լեզվում** չի բացահայտվում, թե ինչո՞ւ կան ծիլ//ճեղ, կեռ//կոռ, ճուտ//ճետ, յերջ//որջ, կոթ//կանթ, յեմո//յամառ, յեղմ//մեղմ,

հարհանդ/մարմանդ, թալալ/թապալ, անթայր/անթեղ, խալասա/խալիս, բուրգ/պուրճ, թագ/թաջ, լազվարդ/լաջվարդ, ժողւլ/մշղոլ, միրաթ/միրաս, թորկել/թարկել փոփոխակաները, կամ **արդի հայերենում** ինչո՞ւ **ձեռ** ձևույթին զուգահեռ ձեր-բ-ա-կալ-ել բառում կա նրա **ձեր** փոփոխակը և այլն:

Ոչ գործուն փոփոխականեր են ստուգաբանական այնպիսի փոփոխակաները, որոնք դիտվող համակարգում պահպանում են իրենց ձևական և իմաստային կապը: Օրինակ՝ տա-մ, ե-տու բառաձևերի **տա//տու** փոփոխականերում **տ**-ն ընդհանուր հնչույթ է՝ երկուսից մեկը, **կին**, **կան**-այք բառաձևերի **կին/կան** փոփոխականերում **կ**, և հնչույթներն ընդհանուր են, ապահովում են ձևական կապը:

Իմաստային կապը երեք տեսակ է՝ **իմաստային նույնություն, մոտիկություն, հեռվություն**:

Իմաստային նույնություն. – Գրաբարում՝ **ագ/գե** (ագ-ան-իմ, գ-գե-ն-ում), **գաղ/գեղ** (գաղ-ձ-ն, գեղ-ձ «գայլուկ»), **կեր/կուր** (կեր շանց. կուր արկանին), **տեղ/եսող**, **փող/փաղ/փայլ**, **ո/ու** (յ-ո, յ-ու, հմմտ. ու-ր), **աղտ/աղծ**, **ջեր/ջեռ**, **այր/ար** (ար-ու), **դալ/դեղ** (դալ-ուկ-ն, դեղ-ին): Միջին հայերենում՝ **պեղծ/պիղծ**, **որջ/յերջ**, **խոշոր/խաշար**: Արդի հայերենում՝ **այր/ար/առ**, **բարձ/բերձ**, **թառ/թարշ/թոռ/թորշ/թոշ**, **ջեր/ջեռ**, **կեր/կուր**:

Իմաստային մոտիկություն. – Գրաբարում՝ **այլ/աղ**, **գաղ** (գաղ-տ)//**գող**, **դի/դա** (դի-ել, դա-լ), **թա/թու**, **կիթ/կութ**, **լերկ/ռդորկ**, **չոզ/չու**, **յորդ/յորձ**: Միջին հայերենում՝ **քենթ/քոնթ**: Արդի հայերենում՝ **բույծ/բուտ**, **գյուտ/գիտ**, **խոր/խար**, **հորդ/հորձ**, **կոթ/կանթ**...

Իմաստային հեռվություն՝ բարբառի կամ այլ լեզվի ազդեցությամբ հնչույթային փոփոխություն՝ **հրաման/ֆարման**, **թշնամի/դուշման**, **թագ/թաջ**, **լազվարդ/լաջվարդ**, **բուրգ/բուրջ** (պուրճ)...

Կարևոր է նաև «Օժանդակ տարրերի գործառությունը» (ՄՄ, 53-94):

ИСТОРИЧЕСКАЯ ЛЕКСИКА (МОРФЕМИКА И ЭЛЕМЕНТОЛОГИЯ) - ЭДУАРД МКРТЧЯН - В статье мы показали, что первая попытка исторической экспертизы армянского словообразования была предпринята Маро Мурадяном в 1970-х годах. С этой точки зрения выявляются структурные элементы слов и производимые на каждом этапе изменения, а также два типа переменных единиц: активные и неактивные переменные элементы, их морфо-семантические проявления, принцип декомпозиции, функция вспомогательных элементов и др.

Ключевые слова: арменоведение, древний, средний, современные этапы языка, индоевропейский праязык, историческая экспертиза, синхронные и межвременные методы, этимология, морфология, элементология, фонетические суффиксы, активные и неактивные модификаторы, дефиниция, главные, вспомогательные и пассивные элементы.

*HISTORICAL LEXICOLOGY (MORPHEMICS AND ELEMENTOLOGY) - **EDUARD MKRTCHYAN** -In the article, we have shown that the first attempt at the historical examination of Armenian word formation was made by Maro Muradyan in the 1970s.*

From this point of view, there are revealed the structural elements of words and the changes made at each stage, as well as two types of variable units: active and inactive variables, their morphemic and semantic manifestations, the principle of distinction, the function of auxiliary elements, etc..

Key words: *Armenology, old, middle, modern stages of the language, Proto-Indo-European, historical study, synchronous and asynchronous methods, etymology, morphemics, elementology, phonetic suffixes, active and inactive variables, distinction, main, auxiliary and passive elements.*

ОСОБЕННОСТИ УДАРЕНИЯ В РУССКОМ, АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

В данной статье было проанализировано и рассмотрено такое фонетическое явление, как ударение. В результате чего выяснилось, что в русском языке, также как и в английском и армянском, все типы ударения играют важную роль в оформлении речи: они являются средством проявления структурирующей, тестообразующей и экспрессивно-эмоциональной функции.

Когда носители языков слушают своих собеседников, они ожидают услышать ударные слова, потому что дают важную информацию. Следовательно, для фонетической грамотности говорящего важно:

во-первых, умение расставить фразовые ударения;

во-вторых, способность не нарушить ритмический строй речи. Изучение и дальнейшее овладение такими средствами оформления речи, как ударение, является важным этапом в формировании навыков владения языками. Для правильного оформления речи необходимо знать особенности расстановки ударения в русском, английском и армянском языках ритмических структур фраз. Ведь в разных языках ударение складывается из различных фонетических компонентов. При этом чаще всего выделение ударного гласного происходит с использованием всех указанных компонентов ударения(интенсивности, высоты тона, длительности).

Ключевые слова: ударение, интонация, произносимые слоги, разноместность и подвижность произносительных норм, словоформы, парадигма, звуковая цепь, аффиксация, словоизменение, грамматическая форма.

Как известно, наша речь с ритмико-интонационной точки зрения членится на отдельные законченные по смыслу высказывания, каждому из которых соответствует особый отрезок речи. Каждый отрезок речи объединен между собой интонацией, указывающей на его смысловую законченность, и отделен от других подобных отрезков паузой. Само высказывание в свою очередь может члениться в ритмико-интонационном отношении на более мелкие отрезки- так называемые такты или синтагмы. Речевые такты в свою очередь делятся на слова. Следовательно, слова делятся на еще более мелкие и уже только фонетические единицы - слоги, а последние на звуки(фонемы), являющиеся пределом фонетического членения речи. Слоги, составляющие слово, бывают неодинаковы, если в слове больше одного слога. Один из слогов двусложного или многосложного слова выделяется теми или иными фонетическими средствами среди других. Такое выделение представляет собой то, что называется ударением.¹ Ударение- сложное явление. Существует множество подходов и в плане выявления его типологии, и в плане выявления его многочисленных функций.

В языкознании существует два способа категоризации статуса ударения: фонологический и фонетический. При первом подходе ударение обычно трактуется как

¹ Р.И. Аванесов *Фонетика современного русского литературного языка. Изд.: Московский Университет, 1956г.*

выделение одного из слогов слова, воспринимаемое на слух. Различия в степени ударения, различное количество ударений в основе создают акцентные типы слов, а распределение ударений по слогам слова образуют акцентные структуры слов. Иными словами, словесное ударение, выделяя тот или иной слог слова, реализуется в акцентной структуре слова и связано с вариативностью ее характеристик в речевом потоке. Также ударение относится к супraseгментным или сверхсегментным средствам языка, как ритм и интонация.

Обратим внимание на ударение в русском, английском и армянском языках. Русское ударение – сложная область русского языка для усвоения. Ударение в русском языке динамическое (силовое), то есть гласные звуки под ударением произносятся с напряжением и отчетливо. Феноменом русского ударения является то, что оно характеризуется разномастностью и подвижностью. Разноместность – это способность ударения падать на любой слог русского слова: на первый – икОнопись, на второй слог-экспЕрт, на третий – жалюзИИ, на четвертый слог-апартаменты.

Подвижность – это свойство ударения перемещаться с одного слога на другой при изменении одного и того же слова: вода-в Оду, хожУ-хОдишь. Большая часть слов русского языка (около 90%) имеет подвижное ударение. Ударение помогает различить слова-омонимы и разные грамматические формы одного и того же слова: зАмок-замОк, засЫпать-засыпАть.

Разноместность и подвижность произносительных норм приводят к появлению у одного слова акцентных вариантов. На их образовании также влияют диалекты, профессиональные варианты слов и другое. Иногда один из вариантов санкционируется словарями как соответствующей норме, а другой – как неправильный. Ср.: магАзин – неправильно; магазИИ – правильно.²

Разноместность русского ударения в некоторых случаях является единым способом различения разных слов или разных форм слова: зАмок и замОк, жаркОе и жаркОе, мУка и мука.

Подвижность ударения может служить вспомогательным средством, сопровождающим аффиксацию, при образовании различии грамматических форм. Например, словоформа гор-у (В.п. ед.ч. слова гора) образована при помощи флексии –у и дополнительно перемещением ударения с флексии на основу: гОр-у, но гор-А, гор-Е, гор-ОИ.

В словоизменении все словоформы в зависимости от места ударения разделяют на две категории. Первую образуют словоформы с ударением на основе – с наосновным, неконечным ударением (дорогА, гОлову), вторую – с ударением на флексии – с конечным ударением (берегУтО домАми). В категории словоформ с ударением на основе, в свою очередь, выделяют словоформы с ударением на первый слог основы (мАленький) и с ударением не на первый слог основы (хорОший).

Отдельную группу составляют словоформы неразличением неосновного и конечного ударения. В нее включают словоформы с неслоговыми основами (злОй, ткУ) и словоформы с нулевыми флексиями (стол, был).

В таких словоформах ударение на основе или флексии является вынужденным. Для них применимо понятие «условное ударение», которое можете

² Горбачевич К.С. Словарь трудностей произношения и ударения в современном русском языке – С-Петербург, 2002.

совпадать с действительным. Например, считается, что условное ударение в словоформе *кот* является ударением на флексии, поскольку во всех словоформах слова *кот* без нулевой флексии отмечается постоянное конечное ударение: *кота*, *котУ*, *котОм*, *о котЕ*, *котЫ*, *котОв*, *котАм*, *котАми*, *о котАх*.

По одинаковым позициям места ударения в словоформах изменяемых слов определенной части речи в РЯ выделяют акцентные типы. Они характеризуют классы словоформ с неподвижным ударением на основе, с неподвижным ударением на флексии и с подвижным ударением, в котором отличаются различные комбинации ударных основ и ударных флексий. У небольшой группы слов в РЯ возможна также подвижность ударения в пределах основы: *Озеро*, *Озеру-озЕра*, *озЕрам*. Акцентные характеристики словоформ разных акцентных типов могут полностью не совпадать друг с другом по всей парадигме (*спОр*, *спОра*, *спОру...стОл*, *столА*, *столУ...*), могут отличаться половиной парадигмы: *кАрта*, *кАрты*, *кАрте...кАрты*, *кАрт*, *кАртам...*), а также могут отличаться ударением только в одной словоформе: *сАд*, *сАда*, *сАду*).³

Некоторые русские слова, которые пишутся одинаково, имеют разное значение в зависимости от того, куда падает ударение. Сравним:

- замОк-зАмок
- большАя-бОльшая

Такие слова называют омографами. В русском языке существует также группа слов, которые можно назвать «ложные» омографы. Это слова с буквой ё, которые становятся омографами, если их записать с буквой «е». К примеру слово «берёг», будучи записанным как «берег».

Что касается английского языка, то здесь ударение более сильное, чем русское и армянское, с более напряженной артикуляцией.

Определение словесного ударения в английском слове представляет определенную трудность.⁴

Во-первых нужно определить наличие в слове префиксов (приставок) и суффиксов, так как префиксы глаголов, прилагательных, наречий, предлогов не принимают на себя ударения (смещают его на корень), а некоторые суффиксы влияют на положение ударения в слове.

Во-вторых, в английском языке, особенно в многосложных словах, существует расхождение между количеством графических слогов и количеством произносимых слогов. Распределение ударения зависит от произносимых слогов. Например: *literature*, *interesting*. Однако большинство наиболее употребительных английских слов одно-трехсложных и распределение ударения в них подчиняется следующим правилам:

- ударение в подавляющем большинстве английских двусложных слов падает на начальный слог, если он не представляет префикс;
- в большинстве трехсложных и многосложных слов ударным слогом является третий слог от конца.

Для правильного определения ударения нужно знать суффикс и префикс английского языка. В словах, оканчивающихся на суффикс *-ion*, ударение падает на слог, предшествующему суффиксу. Всегда ударен слог, предшествующий суффиксу *-ic(ical)*: *republic-periodical*. Ударение сохраняет свое место в словах, образованных с

³ Касаткин Л.Л., Клобуков Е.В., Левант П.А. Краткий справочник по современному русскому языку. М., 1991

⁴ Учебное пособие по фонетике для студентов лингвистических фактов.

помощью суффиксов и окончаний: -ly, -ful, -less, -ism, -ing, -er, -or. Приставки встречаются часто у глаголов, прилагательных, наречий и предлогов. Эти префиксы остаются безударными: about, along, be-begin, for (forget), mis (mistake), re (repeat), un (unhappy).⁵

В английском языке существуют глаголы с префиксами, графически не отличающиеся от существительных. Единственным средством различия служит ударение, которое в глаголе падает на корень, а в существительном – на префикс, например: prEsent-presEnt, dIctate-dictAte, cOnduct-condUct.

Рассмотрим некоторые правила постановки словесного ударения английского языка:

1. Существительные и прилагательные с двумя слогами (когда существительное или прилагательное образовано из двух слов, ударение обычно падает на первый из них.

Пример: table (ta-ble)

Pretty (pre-tty)

Исключение: Hotel (ho-tel)

Extreme (ex-treme)

2. Трехсложные слова, оканчивающиеся на “er” и “ly”

Пример: orderly (or-der-ly).

3. Слова, оканчивающиеся на “ty”, “phy”, “al”.

4. Слова nuance или message ударение допускают на любом из слогов, а в словах parachute и pigeon ударение сместилось на первый слог.⁶

В отличие от русского разноместного ударения в армянском языке ударение в слове имеет свое постоянное место – оно становится над гласной последнего слога, например:

- ւիշւի՛ւն [матнт] карандаш
- վազե՛լ [вазэл] бегать
- բերե՛լ [бэрэл] приносить
- դիւսիւրի՛ւ [дасаран] класс

Из этого правила есть одно исключение: если в последнем слоге стоит гласный *ը*, то ударение падает на предпоследний слог, например:

- ւի՛ւր [сан@р] расческа
- ւոնի՛ւր [тун@] дом (этот)

В дальнейшем ударение указывается только в случаях отклонения от этого общего правила, например: ւոնի՛ւն [нуйнпэс] 'также'.

В соответствии с общим правилом при словоизменении и словообразовании ударение перемещается на последний слог, например:

ւի՛յր [майр] мать — ւիշրեւի՛ւ [майрени] родной — ւիշրիւիւ՛ւ [майракан] материнский
դիւ՛ւ [дас] урок — դիւսիւրի՛ւ [дасаран] класс — դիւի՛ւ [даси] урока

⁵ Шевченко Т.И. Теоретическая фонетика английского языка. - М.: Высшая школа, 2006.,

⁶ Леонтьева С.Ф. Теоретическая фонетика современного английского языка. М., 2011

տնի՛ն [тун] дом — տնե՛ր [т@нер] дома (множ. Число) — տնայի՛ն [т@наин] домашний.

Предположительно вследствие такого перемещения ударение может произойти чередование и выпадение гласных, о чем уже было сказано вначале при описании звуков [h, n, t].

В армянском языкознании нет единого мнения о видах и характере армянского ударения. Большая часть армянского лингвистов признает два типа армянского ударения: словесное и смысловое. Что касается характера армянского ударения, то здесь разногласий нет. Арменисты все сходятся на том, что армянское ударение силовое, динамическое.

В современном армянском языке слог, образованный с помощью гласного ր (за исключением нескольких слов), не может быть ударным.

Словесное ударение армянского языка имеет силовой характер, однако ударный слог не обязательно самый сильный в слове, хотя он всегда сильнее предшествующих ему слогов. Что касается длительности, то он наиболее долгий из всех слогов длинного слова.⁷

В словах типа: տրվի, տնի, քրի, где словообразование происходит за счет звука ր, очень низкие показатели интенсивности. Не случайно, что в армянском языкознании об этих слогах говорится как о «полторосложных словах».⁸

В многосложных словах выделяется дополнительное ударение, которое регулирует ритмику многосложного слова. К словам со вторичным ударением относятся такие, например, как: գիտահետազոտական, գյուղատնտեսական, փրկուի, շուկայի: Многосложные слова произносятся быстрее, чем короткие слова, и это касается слов, которые имеют всего одно ударение и всегда на последнем слоге. Например: փառք, փառքի, փառավոր, փառավորել, փառավորություն:

Исследуя ударения, М. Абебян и Г. Ачарян подразделяли слова с точки зрения их смысла на более и менее значимые. Более значимые – это знаменательные слова, несущие в себе более сильное ударение (по М. Абебяну, это глагол) и менее значимые-служебные и второстепенные слова, имеющие слабое ударение. Например, в предложении Մերենան շարժվեց- главное ударяемое слово «շարժվեց», а в словосочетании կարմիր մատիտ – сильное ударение на слове «մատիտ».⁹

Как известно, ударение в языках отличается не только по характеру, но и по месту. В армянском языке ударение постоянно, на конце слова, то есть оно на последнем слоге, если даже слово получает новое окончание или частицу «ր», которая в армянском языке не может быть носителем ударения (դարձ ր). В этом смысле ударение в армянском языке получает словоразличительное значение, благодаря которому в звуковой цепи определяется слово как единое целое. В армянском языке есть небольшая группа слов, имеющих не окончательное ударение, как например: գրե՛թե, մի՛ թե, մա՛նավանդ, իհա՛րկե, ո՛րնէ՛:¹⁰

При наличии отрицательных слов или частиц ударение также может падать не на основное слово. В этих случаях отрицание перетягивает на себя ударение: մի՛ գնա, մի՛ խոսիր, չե՛մ գա.

⁷ [Htt\|easypronunciation.com](http://easypronunciation.com)

⁸ Աբեղյան Մ., Հայոց լեզվի տաղաչափություն:

⁹ Առաքելյան Վ. Դ., Խաչատրյան Ա.Լ., Էդրյան Ս.Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե.1979թ., հատոր I

¹⁰ Թոխմախյան Ռ.Մ. Ժամանակակից հայերենի շեշտադրություն., Ե.1983

Ударение на последнем слоге стараются сохранить и заимствованные слова. Обратим внимание на то, что в большинстве случаев иноязычное слово подвергается изменению в соответствии с акцентологическим обликом армянского слова. В некоторых случаях, в частности в порядковых числительных и указательных местоимениях, наблюдается постановка ударения то на конечном, то на начальном слоге (ե՛րկրորդ, ան՛հավերժ).¹¹

Подводя итоги, можно сказать, что для фонетической грамотности говорящего важно умение расставить фразовые ударения и при этом не нарушить ритмический строй речи. Изучение и дальнейшее овладение такими средствами оформления речи, как ударение, является важным этапом в формировании навыков владения языками. Считается, что для правильного оформления речи необходимо знать особенности расстановки ударения в русском, английском и армянском языках ритмических структур фраз. Ведь в разных языках ударение складывается из различных фонетических компонентов. При этом чаще всего выделение ударного гласного происходит с использованием всех указанных компонентов ударения (интенсивности, высоты тона, длительности).

**ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԵՐԵՆ, ԱՆԳԼԵ-
ՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ԼԵՁՈՒՆԵՐՈՒՄ – ԵԼԵՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ** - Այս հոդվածում վեր-
լուծվել է դիտարկվել է այնպիսի հնչյունական երևույթ, ինչպիսին շեշտադրումն է:
Արդյունքում պարզվել է, որ ինչպես ռուսերենում, այնպես էլ անգլերենում և
հայերենում, խոսքի ձևավորման գործում կարևոր դեր են խաղում շեշտադրման բոլոր
տեսակները. դրանք կառուցվածքային, տեքստային և արտահայտչական դրսևորման
միջոցներ են, զգացմունքային գործառույթ: Տարբեր լեզվակիրներ ակնկալում են լսել
շեշտված բառեր, քանի որ դրանք կարևոր տեղեկատվություն են տալիս: Ուստի
բանախոսի հնչյունական գրագիտության համար կարևոր է նախ՝ ֆրազային
շեշտադրումներ տեղադրելու ունակությունը, երկրորդ՝ խոսքի ռիթմիկ կառուցվածքը
չխախտելու ունակությունը: Խոսքի ձևավորման այնպիսի միջոցների ուսումնասի-
րությունն ու հետագա յուրացումը, ինչպիսին շեշտադրությունն է, կարևոր քայլ է
լեզվական հմտությունների ձևավորման գործում: Խոսքի ճիշտ ձևավորման համար
անհրաժեշտ է իմանալ բառակապակցությունների ռիթմիկ կառուցվածքների ռուսե-
րեն, անգլերեն և հայերեն շեշտադրության տեղաբաշխման առանձնահատկություն-
ները: Երոք, տարբեր լեզուներում շեշտը կազմված է տարբեր հնչյունական բաղադրիչ-
ներից: Այս դեպքում, ամենից հաճախ, ընդգծված ձայնավորի տեղաբաշխումը տեղի է
ունենում՝ օգտագործելով բոլոր նշված շեշտադրության բաղադրիչները (ինտենսի-
վություն, բարձրություն, տևողություն):

Բանալի բառեր՝ շեշտ, ինտոնացիա, արտասանված վանկեր, արտասանու-
թյան նորմերի տարասեռություն և շարժունակություն, բառաձևեր, պարադիգմ, հնչյու-
նային շղթա, ամրացում, թեքություն, քերականական ձև:

¹¹ Աճառյան Հ.Բ. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Ե.1974

FEATURES OF STRESS IN RUSSIAN, ENGLISH AND ARMENIAN LANGUAGES - YELENA GRIGORYAN - There was analyzed and researched such a phonetic phenomenon as stress in this article. As a result, was researched that in Russian, as well as in English and Armenian, all types of stress play an important role in the formation of speech: they are a means of manifesting a structuring, text-forming and expressive-emotional function.

When native speakers listen to their interlocutors, they expect to hear stress words because they provide important information. Therefore, for the phonetic literacy of the speaker, it is important:

First, the ability to arrange phrasal stresses;

Secondly, the ability not to break the rhythmic structure of speech.

The study and further mastery of such means of speech formatting as stress is an important step in the formation of language skills. For the correct formulation of speech, it is necessary to know the peculiarities of the arrangement of stress in Russian, English and Armenian languages of the rhythmic structures of phrases. Indeed, in different languages, stress is made up of various phonetic components. In this case, most often, the allocation of a stressed vowel occurs using all of the specified components of stress (intensity, pitch, duration).

Key words: *stress, intonation, pronounced syllables, multi-locality and mobility of pronunciation norms, word forms, paradigm, sound chain, affixation, inflection, grammatical form.*

ԷԼԼԱԴԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՕՔՄԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՄԲԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԻՑ ԿՈՒԵԿՏԻՎ
ԵՂԱՆԱԿԻ ԱՆՑՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Կրթական համակարգի ներկայիս խորը ճգնաժամային իրավիճակից դուրս գալու համար նախ անհրաժեշտ է ստեղծել նոր բնույթի ուսուցման գործընթաց, որի հիման վրա հնարավոր կլինի կառուցել էապես նոր կրթական համակարգ: Ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացումը պայմանավորված է էապես նոր՝ կոլեկտիվ (համագործակցային) բնույթի ուսուցման գործընթացի ստեղծմամբ: Կոլեկտիվ ուսուցման գործընթացը կազմակերպվում է հարափոփոխ (համահավաք) խմբերով, ուսումնական ծրագրերի յուրացման երթուղիների և տեմպերի անհատականացմամբ, համընդհանուր համագործակցային փոխազդեցությունների միջոցով:

Ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացումը բնական-տարերայնորեն ընթացող և արհեստական-նպատակաուղղված կերպով իրականացվող ենթագործընթացների ամբողջություն է:

Ընդհանուր համամարդկային մակարդակով կոլեկտիվ ուսուցմանն անցնելու գործընթացը բավականին բարդ ու երկարատև է: Նրան բնորոշ են աստիճանականությունը և անցման փուլերը:

Արդյունքում ձևավորվում են համագործակցային մթնոլորտ, երկխոսական և հաղորդակցական կարողություններ:

Կոլեկտիվ ուսուցման եղանակի հիմքում խմբերով աշխատանքն է: Ուսուցումն իրականացվում է փոփոխվող զույգերով, երբ ամեն մի աշակերտ սովորեցնում է մյուսին: Այս եղանակի կիրառումը ներառում է տարամակարդակ կամ ավանդական առաջադրանքների միջոցով գիտելիքների յուրացման մակարդակի ստուգում:

Ուսուցման այս եղանակը նպատակային է իրականացնել գործնական աշխատանքների, ամփոփիչ ընդհանրացնող դասերի ժամանակ: Դասագործընթացում սովորողները հնարավորություն ունեն ավելի ազատ ու հետաքրքիր շփվել միմյանց հետ: Այդ պահին առաջանում է փոխօգնության ցանկություն, և նյութը համեմատաբար լավ է յուրացվում:

Կոլեկտիվ աշխատանք կարելի է իրականացնել դասի տարբեր հատվածներում, քարտերով աշխատանքները կարող են լինել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Կոլեկտիվ ուսուցման գործընթացում անհրաժեշտ է, որ ուսուցիչը նախապատրաստի անհրաժեշտ նյութ, կարևոր է նաև դպրոցականների նախապատրաստումը:

Քանալի բառեր՝ կոլեկտիվ ուսուցում, ուսումնական խումբ, աշակերտների համագործակցություն, Բիվինի մեթոդիկա, փոխուսուցում, փոփոխական կազմով զույգեր, կոլեկտիվ պարապմունք, խմբային քննարկում, ուսուցման կոլեկտիվ շարժում, յուրացման գործընթացի մեկնարկ, ուսուցման խմբային եղանակ:

Ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակը ենթադրում է ուսումնական խմբի անդամների համընդհանուր համագործակցության վրա հիմնված ուսումնական

պարապմունքներ: Այլ կերպ ասած, ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամ իր ուսումնական խնդիրներն ու նպատակներն իրագործում է խմբի մյուս անդամների օգնությամբ, միաժամանակ ինքն էլ օգնում է մյուսներին՝ լուծելու իրենց ուսումնական հարցերը:

Աշակերտների համագործակցությունն ու փոխօգնությունը կարող են դրսևորվել հետևյալ ձևերով՝ փոխուսուցում, համատեղ ուսումնասիրություն, թեմատիկ քննարկում, փոխստուգում, փոխվարժանք:

Այս ձևերը փոխկապակցված են, և աշակերտների հաղորդակցման ժամանակ բոլորն էլ այս կամ այլ կերպ առկա են¹:

Մակայն կախված դիդակտիկ խնդիրներից, որոշակի իրադրություններում համագործակցության և փոխօգնության վերոհիշյալ տեսակները որևէ մեկը, որպես կանոն, հանդիսանում է հիմնականը:

Օրինակ, Բիվինի մեթոդիկան կառուցված է գրավոր տեքստերի համատեղ ուսումնասիրման ձևի վրա: Այս մեթոդիկայում փոխուսուցումն ու փոխստուգումը առկա են միայն տարերային դրսևորումներով:

Առաջադրանքների փոխանակման մեթոդիկան կառուցված է համագործակցության փոխուսուցման և փոխստուգման ձևերի վրա: Այս մեթոդիկայում թեմատիկ քննարկման ու փոխվարժանքի գործընթացները հազվագյուտ երևույթներ են:

Փոխուսուցումը հանդիսանում է համագործակցության գլխավոր ձև ուսուցման գործընթացում, մասնավորապես թեմաների փոխհաղորդման մեթոդիկայում:

Փոփոխական կազմով զույգերով կազմակերպված աշխատանքի վրա հիմնված այս մեթոդիկան նախատեսված է ուսուցանվող նյութի տեսական մասի յուրացման համար: Այն մշակել ու ձևավորվել է ուսուցման խմբային եղանակից ուսուցման կոլեկտիվ եղանակի անցնելու նպատակով:²

Կարևոր են թեմաների փոխհաղորդման մեթոդիկայի տրամաբանությունը, մեխանիզմը, առանձնահատկությունները:

Այն նախատեսված է նրանց համար, ովքեր կցանկանան ծանոթանալ, օգտագործել տվյալ մեթոդիկան իրենց աշխատանքում: Ովքեր հետաքրքրվում են ուսուցման կոլեկտիվ եղանակի անցման անհրաժեշտության փաստարկներով (հիմնավորումներով):

Թեմա ասելով հասկանում ենք որոշակի ուսուցանվող նյութ և դրան համապատասխան ընտրված երեք խումբ խնդիրներ, վարժություններ, հարցեր և այլն:

Առաջին խմբի խնդիրներն ու հարցերը բավականին պարզ են և վերաբերում են տեքստի միայն առանձին պարբերություններին (փոքր իմաստային մասեր): Դրանք նախատեսված են ստուգելու, ինքնաստուգելու, թե որքանով է հասկացվել տվյալ պարբերությունը և տեքստում շարադրված են համապատասխան պարբերությունից անմիջապես հետո:

Երկրորդ խմբի խնդիրներն ու հարցերն ավելի բարդ են և վերաբերում են ամբողջ ուսուցվող նյութին: Դրանք նախատեսված են տեքստի տեսական մասն

¹Աստվածատրյան Ա. և ուրիշներ, *Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը* /, - Երևան, Այոթես, 2003, 42 էջ:

²Վարդույան Ս., *Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը*, Երևան, 2003, էջ 128:

ամրապնդելու, ավելին խորն ըմբռնելու, համապատասխան գործնական ունակություն ձեռք բերելու համար, ինչպես նաև ստուգելու և ինքնաստուգելու, թե որքանով է հասկացվել սովորածը:

Երրորդ խմբի խնդիրներն ու հարցերն առավել բարդ են: Դրանց սովորողներն անդրադառնում են տվյալ առարկայի ուսումնասիրության ամբողջ ընթացքում:

Աշակերտը պատրաստ է համարվում թեման մեկ ուրիշին հաղորդելու այն ժամանակ, երբ յուրացրել է թեմայի տեսական մասը, ունի մանրամասն պլան, որը կազմված է տեքստի պարբերությունների վերնագրերից, լուծել է առաջին և երկրորդ խմբի բոլոր խնդիրները և պատասխանել հարցերին:

Շատ կարևոր է թեմայի յուրացումն ինքնուրույն աշխատելիս: Թեման ինքնուրույն սովորելու ժամանակ աշակերտն աշխատում է հետևյալ ձևով:

Սկզբում կարդում և հասկանում է տեքստի առաջին պարբերությունը, վերնագրում է այն և գրում վերնագիրը դրա համար հատուկ առանձնացված տետրում: Այնուհետև լուծում է առաջին խմբի այն խնդիրները, որոնք վերաբերում են տվյալ պարբերությանը: Լուծված խնդիրները գրվում են մեկ ուրիշ տետրում կամ այն նույն տետրում, որտեղ գրված են վերնագրերը, բայց մեկ ուրիշ մասում: Հետո աշակերտը անցնում է հաջորդ պարբերության մշակմանը:

Այսպիսով, տեքստը մինչև վերջ մշակելով՝ աշակերտն ունենում է ուսումնասիրվող թեմայի տեսական մասի մանրամասն պլանը (ըստ պարբերությունների) և առաջին խմբի խնդիրների լուծումը:

Դրանից հետո նա անցնում է երկրորդ խմբի խնդիրների լուծմանը:

Երկրորդ խմբի բոլոր խնդիրները լուծելուց հետո աշակերտը ստուգվում է ուսուցչի կամ թեման վաղուց յուրացրած աշակերտներից մեկի կողմից:

Աշակերտը երրորդ խմբի լուծմանն անդրադառնում է ամբողջ տարվա ընթացքում: Դա արվում է այն դեպքում, երբ նա ունի ազատ ժամանակ, ցանկություն, կամ անհատական պլանով նախատեսված է այդ խնդիրների լուծումը: Վերջում իրականացվում է թեմայի ստուգում, և ուսուցչին աշակերտին ստուգում է (ընդունում է աշակերտից թեման) սովորական ձևով: Սկզբում ստուգում է պլանի առկայությունը, արդյոք այն բավականին մանրամասն է, արդյոք բաց չեն թողնված տվյալ թեմայի որոշ մանրամասնություններ և ասպեկտներ: Հետո պլանի կետերով ստուգում է թեմայի յուրացման աստիճանը: Այնուհետև ստուգում է առաջին և երկրորդ խմբի խնդիրների լուծման ճշտությունը: Ստուգողը, անհրաժեշտության դեպքում, կարող է առաջարկել աշակերտին նորից վերադառնալ տեքստի որոշակի մասերի յուրացմանը, ճշգրտել պլանը, վերանայել որոշ խնդիրների լուծումը և այլն:

Նա աշակերտին պետք է տա որոշակի մեթոդական ցուցումներ թեման մեկ ուրիշին վերապատմելու և հաղորդելու վերաբերյալ: Չափազանց կարևոր է աշխատաձևը երկյակում: Աշխատելով գույգերով՝ աշակերտները մեկը մյուսին սովորեցնում են մեկական թեմա: Անվանենք այդ գործընթացը թեմաների փոխհաղորդում:

Չափազանց կարևոր է ուսուցչի դերը կոլեկտիվ պարապմունքների կազմակերպման գործընթացում:

Ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի իրականացման հիմքում ընկած է դիդակտիկ նյութերի նախապատրաստումը, որը հիմք է հանդիսանում յուրացվող ծրագրի իրագործմանը: Սկզբում յուրացվող ծրագիրը բաժանվում է թեմաների: Այդ թեմաների համար կազմվում են հատուկ տեքստեր: Որոշվում, կառուցվում է թեմաների միջև տրամաբանական կախվածության սխեման: Կազմվում են

ծրագրերի անցման, յուրացման երթուղիներն՝ ըստ թեմաների: Կազմվում է հաշվառման աղյուսակ, որի վրա պետք է նշվի այն, թե որ թեմաներն է աշակերտը յուրացրել ինքնուրույն, դրանցից որոնք են արդեն ստուգված (հանձնված), որ թեմաներն են յուրացրել երկյակներով, որ թեմաներն է աշակերտն ինքը հաղորդել (սովորեցրել) ուրիշին, որ թեմաների շուրջն են կազմվել զեկուցումներ, տվյալ պահին ինչով է զբաղված աշակերտը և այլն: Այս ամբողջի իրականացման համատեքստում ակնառու են որոշ առանձնահատկություններ.

- Աշակերտը հնարավորություն է ստանում խնդիրների յուրաքանչյուր տեսակին տրամադրել այնքան ժամանակ, որքան իրեն անհրաժեշտ է նյութի լիակատար յուրացման համար:
- Խնդիրների յուրաքանչյուր տեսակից առնվազն մեկ հատ աշակերտը լուծում է ինքնուրույն:
- Խնդիրների մեծ մասն աշակերտը ստիպված է նորից լուծել ուրիշին սովորեցնելիս:
- Մեթոդիկան հնարավորություն է տալիս յուրաքանչյուր երեխայի նկատմամբ դրսևորել անհատական մոտեցում:
- Տվյալ մեթոդիկայով պարապմունքների կազմակերպման ժամանակ հնարավորություն է առաջանում աշակերտին միաժամանակ ծանոթանալու որոշակի տեսական հասկացությունների և փաստերի հետ³:

Թեման ինքնուրույն յուրացնելու ժամանակ վտանգ կա, որ յուրացումը կարող է լիակատար որակյալ չլինել, փոխադարձ ուսուցման ընթացքում կարող է տեղի ունենալ փաստերի աղավաղում կամ տեղեկատվության կորուստ: Այդ պատճառով յուրաքանչյուր թեմա, որ աշակերտները յուրացնում են ինքնուրույն, անպայման պետք է հանձնեն ուսուցչին: Տեղեկատվության կորուստ չլինելու համար անհրաժեշտ է, որ հարցումը կատարվի թեմայի համար գրված պլանի մանրամասն կետերով: Որպեսզի ուսուցումը չվերածվի թեմայի սովորական վերապատումի, անհրաժեշտություն է առաջանում առանձնացնել առաջին խմբի խնդիրները, որոնք լուծում են յուրաքանչյուր կետից հետո:

Կողեկտիվ պարապմունքների կազմակերպման գործում անհրաժեշտ է հստակ աշխատակարգ: Այս պատճառով թեմաների փոխհաղորդման մեթոդիկան ոչ միշտ է հնարավոր կիրառել: Զգացնել է տալիս նաև սուբյեկտիվ գործոնը: Օրինակ՝ աշակերտների իմացության ոչ բավարար մակարդակը թեմաներն ինքնուրույն յուրացնելու, թեմայի պլանը կազմելու, ուրշներին սովորեցնելու ժամանակ:

Ուստի երբեմն հարկ է լինում օգտագործել մեթոդիկայի առանձին տարրեր, մտահաղացումներ: Առաջին փուլ – ռուսուցիչն ընտրում է (կամ կազմում) ուսուցվող թեմայի մի քանի հիմնարար (առանցքային) պարբերություններ: Առաջարկում է աշակերտներին 2-3 թույլների ընթացքում վերլուծել առաջին պարբերությունը, հասկանալ նրա բովանդակությունը և ձևակերպել վերնագիր այդ պարբերության համար: Այդ աշխատանքը աշակերտները կատարում են՝ աշխատելով երկյակով՝ յուրաքանչյուրն իր նստարանին նստած ընկերոջ հետ: Այստեղ կարևոր է, որ աշակերտները սովորեն համատեղ քննարկել, առաջադրեն տարբեր վարկածներ

³Ղազարոսյան Ա. Ըիվիլի մեթոդական - //Գրքության կազմակերպումը XXI դարում, երրորդ թողարկում – Երևան, Նոյան Տապան, 1999 թ. 567 էջ 62

(տարբերակներ, կարծիքներ), հիմնավորեն իրենց պնդումները, համատեղ ջանքերով գտնեն վերնագրի համապատասխան տարբերակը:

Հետո ուսուցիչը քննարկումը կազմակերպում է ամբողջ խմբում: Նա հարցնում է տարբեր աշակերտների, թե պարբերության վերնագրի ինչ տարբերակներ ունեն (հարմար է, որ դրանք գրվեն գրատախտակին): Առաջարկում է հիմնավորել իրենց տարբերակները, արտահայտել վերաբերմունք մյուս տարբերակների նկատմամբ, կազմակերպում է բանավեճ մյուս աշակերտների միջև: Այդ բանավեճի հիման վրա ուսուցիչը բացահայտում է թեմայի բովանդակության որոշակի հատվածը: Նման ձևով կազմակերպվում է մյուս պարբերությունների ուսումնասիրումը և քննարկումը:

Մի որոշ ժամանակ այսպես աշխատելուց հետո, երբ զգացվում է, որ աշակերտները ձեռք են բերել պարբերությունները մշակելու և վերլուծելու որոշակի ունակություն, կարելի է անցնել հաջորդ փուլին:

Երկրորդ փուլ – աշակերտներին հանձնարարվում է յուրացնել ոչ թե առանձին պարբերություններ, այլ ամբողջ թեման:

Աշակերտները՝ աշխատելով հաստատուն կազմով՝ զույգերով ուսումնասիրում են նոր թեման՝ մշակելով և յուրացնելով յուրաքանչյուր պարբերություն: Արդյունքում յուրաքանչյուր աշակերտ ունենում է տրված թեմայի մանրամասն պլանը:

Այնուհետև ուսուցիչը կազմակերպում է ընդհանուր քննարկում, որի ընթացքում համեմատվում են թեմաների՝ աշակերտների կատարած պլանները, ստուգվում է թեմայի բովանդակության յուրացման ճշտությունը և այլն:

Երրորդ փուլ – աշակերտների մի մասը՝ աշխատելով հաստատուն զույգերով, սովորում է մի թեմա, իսկ մյուս մասը՝ մեկ ուրիշ թեմա: Այնուհետև առաջին և երկրորդ խմբերի աշակերտներից ձևավորվում են նոր զույգեր: Այդ զույգերում աշակերտներն իրենց թեմաները սովորեցնում են միմյանց: Վերջում կազմակերպվում է երկու թեմաների ընդհանուր խմբային քննարկում:

Ուսուցիչն այս փուլում ուշադրություն է դարձնում աշակերտների ուսուցանելու ունակությունների վրա: Հատկապես կարևոր է զարգացնել աշակերտների մեջ հարցադրման ունակությունը:

Չորրորդ փուլ – ուսուցիչն առաջարկում է աշակերտներին տանը սովորել նոր թեմա, ընդ որում՝ տարբեր աշակերտներ ստանում են տարբեր թեմաներ: Իսկ դասարանում, աշխատելով փոփոխական կազմով զույգերով, աշակերտները սովորեցնում են միմյանց և աստիճանաբար յուրացնում ամբողջ ծրագիրը:

Կոլեկտիվ ուսուցման գործընթացում դժվարությունները ծագում են ուսուցման կազմակերպման խմբային եղանակից կոլեկտիվ եղանակի անցման ժամանակ⁴:

Ուսուցման խմբային եղանակից կոլեկտիվ եղանակի անցման ժամանակ շատ կարևոր է ուսումնական նյութի նախապատրաստումը ուսուցչի կողմից: Անհրաժեշտ է նախապես ուսումնասիրել ծրագրի բաժինները, կազմել այնպես, որ յուրաքանչյուր բաժնի համար հնարավոր լինի կազմել հետևյալ պայմանները բավարարող առաջադրանքներ.

ա. յուրաքանչյուր բաժնի համար առաջադրանքների քանակը քիչ չլինի 6-ից և շատ՝ 10-ից,

⁴Մկրտչյան Մ. Ուսուցման կազմակերպման խմբային եղանակից կոլեկտիվ եղանակի անցման անխուսափելիությունն ու անհրաժեշտությունը: /Գրթության կազմակերպումը 21-րդ դարում-Երևան, Նոյյան Տապան, 1988թ./, 68էջ:

բ. նույն բաժնի տարբեր առաջադրանքները կազմված լինեն տարբեր տիպի խնդիրներից,

գ. նույն բաժնի յուրաքանչյուր առաջադրանք հնարավոր լինի իրականացնել:

Հետաքրքիր է կատարել որոշակի դիտողություններ այդ կապակցությամբ: Ենթադրենք, ուսումնական խումբը կազմված է 30 աշակերտներից: Աշխատանքի առաջին օրը որոշակի դժվարություններ կառաջանան: Դա պայմանավորված է այն բանով, որ երբ ուսուցիչը մեկ ենթախմբում սկսում է որևէ բաժնի յուրացման գործընթացի մեկնարկը, մնացածները անգործության են մատնվում:

Այսպիսի դեպքերում իրավիճակից կարելի է դուրս գալ տարբեր ձևերով: Օրինակ, բոլոր մասնակիցների համար առաջին օրը կարելի է կազմակերպել ինքնուրույն աշխատանք, օրինակ՝ անցած տարվա նյութի կրկնություն: Միաժամանակ մի քանի աշակերտներից կազմելով ենթախումբ՝ սկսել ծրագրի որոշակի բաժնի յուրացման գործընթացի մեկնարկը: Հետո նրանցից, ովքեր արդեն վերջացրել են աշխատանքը, կազմել հաջորդ ենթախումբը և սկսել ուրիշ բաժնի յուրացման գործընթացի մեկնարկը և այլն: Հաճախ նմանատիպ իրավիճակ է ստեղծվում, երբ մի որևէ ենթախմբում ուսուցիչը սկսում է որևէ բաժնի յուրացման գործընթացի մեկնարկը: Մեկնարկի իրագործման համար նա պետք է յուրաքանչյուրին մանրամասն բացատրի, թե ինչպես է կատարվում իր առաջադրանքը: Բայց երբ նա աշխատում է մեկի հետ, մյուսները դուրս են մնում ուսումնական գործընթացից: Այդպիսի դեպքերում նպատակահարմար է սկզբից մոտենալ ենթախմբի յուրաքանչյուր անդամի և հուշել առաջին քայլը: Երբեմն լինում է այսպես. A բաժնի բոլոր առաջադրանքները կատարած վեց աշակերտները պատրաստ են անցնել B բաժնին, իսկ B բաժնի առաջադրանքները կատարած մյուս վեց աշակերտներից բաղկացած ենթախումբը կարող է անցնել A բաժնի առաջադրանքների կատարմանը: Այդ դեպքում մի ենթախումբը ուսուցչի փոխարեն կարող է իրականացնել մյուս ենթախմբի յուրացման գործընթացի մեկնարկը:

Սկզբում առաջին ենթախմբի յուրաքանչյուր անդամ աշխատում է մյուս ենթախմբի աշակերտներից մեկի հետ՝ կազմելով երկյակ, այսպիսով կազմվում է վեց զույգ: Զույգերից մեկում աշակերտները կարող են փոխանակել A և B բաժինների առաջին առաջադրանքները, մյուս զույգում՝ երկրորդ առաջադրանքները և այլն: Դրանից հետո աշակերտները վերադառնում են իրենց ենթախմբերը, և յուրաքանչյուր ենթախումբ շարունակում է աշխատել առաջադրանքների փոխանակման մեթոդիկայով:

Հաճախ այսպիսի իրավիճակ է ստեղծվում. ենթախումբն աշխատում է որոշակի բաժնի առաջադրանքների կատարման վրա, իսկ այդ ենթախմբի աշակերտներից մեկն արդեն կատարել է բոլոր առաջադրանքները: Այդ դեպքում նա կարող է դուրս գալ այդ ենթախմբից և միանալ մեկ ուրիշ ենթախմբի կամ անցնել ուրիշ բաժնի առաջադրանքների կատարմանը:

Եթե ենթախմբի բոլոր անդամները, բացի մեկից, կատարել են բաժնի բոլոր առաջադրանքները, այդ աշակերտը կարող է ժամանակավորապես թողնել այդ բաժինը և անցնել մյուս բաժնին, իսկ նախորդ բաժնին կվերադառնա այն ժամանակ, երբ նորից կազմվի ենթախումբ այդ բաժնի առաջադրանքների կատարման համար:

Աշակերտը հնարավորություն է ստանում առաջադրանքի յուրաքանչյուր տեսակին տրամադրել այնքան ժամանակ, որքան իրեն անհրաժեշտ է նյութի լիակատար յուրացման համար:

Առաջադրանքի յուրաքանչյուր տեսակից առնվազն մեկ հատ աշակերտը լուծում է ինքնուրույն:

Առաջադրանքների մեծ մասն աշակերտը ստիպված է նորից լուծել ուրիշին սովորեցնելիս:

Մեթոդիկան հնարավորություն է տալիս յուրաքանչյուր երեխային նկատմամբ դրսևորել անհատական մոտեցում:

Տվյալ մեթոդիկայով պարապմունքների կազմակերպման ժամանակ հնարավորություն է առաջանում աշակերտին միաժամանակ ծանոթացնել որոշակի տեսական հասկացությունների և փաստերի հետ:

Յուրաքանչյուր աշակերտ ունի իր թեման: Յուրաքանչյուր աշակերտ ստանում է իր թեմայի մանրամասն պլանը: Նրա նպատակն է վերականգնել թեմայի բովանդակությունը և ձևակերպել բովանդակության տեքստը:

Պլանի առաջին կետի մշակման համար աշակերտը զուգընկեր է գտնում, որի հետ կարդում է այդ կետը, քննարկում, վերականգնում է պլանի այդ կետին համապատասխանող բովանդակությունը: Այնուհետև զուգընկերները քննարկում են ստացված բովանդակությունը ոչ մեծ պարբերությամբ տեքստի վերածելու հնարավոր տարբերակը: Առաջին աշակերտն այս տեքստը գրանցում է տետրում: Դրանից հետո այդ աշակերտը օգնում է իր ընկերոջը նույն ձևով վերականգնել վերջինիս պլանի համապատասխան կետը, ստացված բովանդակությունը գրավոր ձևակերպել և գրանցել տետրում:

Իր պլանի երկրորդ կետի մշակման համար աշակերտը նոր զուգընկեր է գտնում, պատմում է նրան պլանի առաջին կետի բովանդակությունը, ապա կարդում, քննարկում, վերականգնում է պլանի այդ կետի հնարավոր բովանդակությունը (անհրաժեշտության դեպքում նրանք կարող են դիմել տարբեր աղբյուրների՝ դասագրքեր, գրքեր, հանրագիտարաններ և այլն): Այնուհետև զուգընկերներն ընդհանուր ուժերով տեքստի են վերածում ստացված բովանդակությունը և առաջին աշակերտի տետրում գրանցում հերթական պարբերության տեքստը: Դրանից հետո առաջին աշակերտն օգնում է իր ընկերոջն ըմբռնել վերջինիս պլանի հերթական կետը՝ նախապես լսելով նրա պլանի նախորդ կետերի բովանդակությունը: Երբ ընկերոջ հերթական պարբերությունը գրանցվում է տետրում, զույգը բաժանվում է:

Այսպիսով, պլանի հերթական կետի մշակման համար աշակերտը նոր զուգընկեր է գտնում, վերապատմում է նրան պլանի նախորդ կետերի բովանդակությունը, քննարկում է նրա հետ պլանի հերթական կետը, վերականգնում այդ կետի մոտավոր բովանդակությունը, ընկերոջ հետ ստացված բովանդակությունը վերածում է տեքստի և այն, որպես պարբերություն, գրանցում իր տետրում: Այնուհետև նա նույն ձևով օգնում է իր ընկերոջը մշակել նրա պլանի հերթական կետը, վերածել ստացված բովանդակությունը տեքստի և գրանցել այն վերջինիս տետրում:

Մշակելով պլանի բոլոր կետերը՝ աշակերտը արդյունքում ստանում է իր թեմայի ամբողջական տեքստը: Դրանից հետո նա կարող է վերցնել նոր թեմա և, ունենալով պլան, վերականգնել այն նույն ձևով:⁵

Այսպիսով՝ պատմական իրադարձությունների վերլուծության և ապագայի նախագծման համար ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակը ծնում է մեկ այլ մեթոդաբանական սկզբունք: Բոլոր հնարավոր փոփոխությունները և վերափոխումները բխում են միևնույն անհրաժեշտությունից և կատարելագործման ու զարգացման ընթացքում ինտեգրվում են մի ամբողջականության մեջ՝ ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի դրսևորումներ:

⁵Мкртчян М.А., Бондаренко Л.В. Изучение текстов по методике Ривина. - Саяногорск. т/о "Мысль", 1989, 132

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքները թույլ են տալիս հայտնաբերել ուսուցման կոլեկտիվ եղանակի կայացման բնական-տարերային գործընթացները: Պատահական չէ, որ խմբային ուսուցման անցնելու անհրաժեշտության հիմնավորման մեջ այդ եղանակի գլխավոր գաղափարախոս Յ.Ա.Կոմենսկին, որպես ամենուժեղ փաստարկ, ընդգծում է սովորողներին որպես սովորեցնող հանդես գալու գաղափարը: Չէ որ ուսումնական խմբի տարբեր անդամներ ուսումնական պարապմունքների միևնույն պահին զբաղվում են տարբեր հարցերով: Մեկը կարող է ուսումնասիրել մի թեմա մյուսը՝ մեկ այլ թեմա: Մեկը կարող է զբաղվել յուրացրածը ամրապնդելով, իսկ մյուսը՝ ստուգարք հանձնելով: Մեկը կարող է շարունակել իր թեմայի յուրացումը, մյուսը՝ անցնել նոր թեմայի յուրացմանը:

Տարբեր սովորողներ միևնույն պահին տարբեր ձևերով են աշխատում, մի քանի հոգի ինչ-որ թեմա է ուսումնասիրում, մի աշակերտ իր դասընկերոջը նոր թեմա է բացատրում, մի խումբ երեխաներ ուսուցչի հետ ինչ-որ հարց են ուսումնասիրում: Ընդհանուր ծրագիրը տարբեր սովորողների թեմաների ու բաժինների տարբեր հաջորդականությամբ են յուրացնում:

Աշակերտն ամեն մի հարցին հնարավորություն ունի հատկացնելու այնքան ժամանակ, ինչքան իրեն անհրաժեշտ է այդ հարցը լրիվ յուրացնելու համար: Ինֆորմացիայի սկզբնական աղբյուր են դասագիրքը, այլ գրքեր, դասընկերներ, ուսուցիչներ, այլ անձինք:⁶

Այսպիսով, 20-րդ դարը մարդկությանը նվիրել է բազմաթիվ մանկավարժական գաղափարներ և գործնական հայտնագործություններ, որոնք վաղուց արդեն հավակնում են լինելու փոխհամադրված, փոխմիացված, համակարգված և վերածվելու ուսուցման կազմակերպման ապագա եղանակի հիմքի: Մյուս կողմից՝ հենց 20-րդ դարը հիմք դրեց ապագա կյանքի և մասնավորապես կրթության ոլորտի գիտակցված, նպատակաուղղված կառուցման մեթոդների յուրացմանը մարդկության կողմից:

Այսօր ուսուցման կոլեկտիվ շարժումը հատուկ տեղ է զբաղեցնում ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի շարժման գործընթացում, որի գործունեությամբ իմաստավորվում է «ուսուցման կոլեկտիվ եղանակի կայացման գործընթացների արհեստական-տեխնիկական բաղադրիչը»:

СЛОЖНОСТИ ПЕРЕХОДА ГРУППОВОГО ПРИЕМА ОРГАНИЗАЦИИ ОБУЧЕНИЯ В КОЛЛЕКТИВНЫЙ И ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ – ЭЛЛАДА БАГДАСАРЯН, ОКСАНА ГАСПАРЯН - Чтобы выйти из сложившейся ситуации, необходимо создать процесс обучения нового характера, который можно будет построить на основе новой системы обучения. Организация обучения обусловлена созданием нового процесса обучения, в основе которого лежит коллективное обучение. Процесс основан на применении информационных учебных программ с персонализацией темпа усвоения учебных программ.

Создание такого способа организации обучения – целеустремленно. Переход к такому виду обучения – процесс сложный и длительный.

В основе коллективного обучения лежит работа в группах, которая осуществ-

⁶Дьяченко В.К., Архипова В.В. Коллективный способ обучения – Учительская газета. 8 сентября, 1987, 286.

ляется сменой пар, где ученики учат друг друга. Применение такого метода включает в себя многоуровневую или традиционную систему, включающую проверку уровня усвоения знаний с помощью заданий. Этот метод обучения предназначен для выполнения практических заданий во время урока. В процессе обучения у учащихся возникает желание взаимопомощи; они становятся более свободными в общении.

Коллективная работа может проводиться в различных классах на разных этапах урока с применением карточных заданий, которые можно проводить как письменно, так и устно.

В процессе обучения необходимо, чтобы учитель подготовил необходимый материал, а учащиеся были готовы к нему.

Ключевые слова: коллективное обучение, обучающаяся группа, сотрудничество студентов, методика Ривина, взаимообучение пар, коллективные занятия, групповые обсуждения, коллективная подвижность обучения, начало учебного процесса, метод коллективного обучения.

THE DIFFICULTIES OF TRANSITIONING FROM A GROUP METHOD OF TEACHING TO A COLLECTIVE METHOD AND WAYS TO OVERCOME IT - **ELLADA BAGHDASARYAN, OKSANA GASPARYAN** - In order to get out of the current deep crisis situation of the educational system, it is first necessary to create a new kind of learning process, on the basis of which it will be possible to build an essentially new educational system. The establishment of a collective method of organizing learning is due to the creation of a new, collective (cooperative) learning process. The process of collective learning is organized by interchanging (gathering) groups, by individualizing the routes and paces of study programs, through universal cooperative interactions.

Establishing a collective way of organizing learning is a set of sub-processes that proceed naturally and are carried out artificially and purposefully.

The process of transitioning to collective learning at the general universal level is quite complex and very long. It is characterized by gradation and transition stages. As a result, a cooperative atmosphere, dialogical and presentation skills are formed.

The collective learning method is based on group work. Teaching is done in alternating pairs, when each student teaches the other. The application of this method involves checking the level of knowledge acquisition through traditional tasks or tasks of different levels. This method of learning is purposeful to be carried out during practical work and summative generalizing lessons.

During the course, students have the opportunity to communicate more freely and interestingly with each other. At that moment, a desire to help each other arises and the material is mastered relatively well. Collective work can be carried out in different parts of the lesson, card works can be both written and oral. In the process of collective learning, it is necessary for the teacher to prepare the necessary material, it is also important to prepare the schoolchildren.

Key words: Collective learning, learning group, cooperation of students, Rivin's methodology, mutual teaching, interchanging group, alternating pairs, collective training, group discussion, collective learning movement, knowledge acquisition, collective learning method.

**ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի միջին մասնագիտական կրթական համակարգում հայերենի ուսուցումն իրականացվում է բոլոր մասնագիտությունների՝ ուսումնական վեց կիսամյակներում (տարբեր ժամաքանակով):

Հայոց լեզվի ծրագրով սահմանված են առարկայի նպատակները, խնդիրները, վերջնարդյունքները և թեմաները:

Հայերենի ուսուցման ընթացքում ծագող խնդիրներն ունեն իրենց պատճառները, որոնցից հիմնականներն են համացանցում լատինատառ գրությունը, բարբառակիր լինելը, ընթերցանության ցածր մակարդակը, քննադատական և վերլուծական մտածողության թույլ զարգացածությունը, հասարակության մեջ կարծրատիպերի առկայությամբ պայմանավորված բարդությունների առկայությունը:

Հոդվածում ներկայացվում են խնդիրների դրսևորման կոնկրետ ոլորտները, դրանց առաջացման պատճառները և լուծման եղանակները:

Բանալի բառեր՝ *հայերենի ուսուցման խնդիրները, ուղղագրություն, շեշտադրություն, բառապաշար, կետադրություն, տեքստ, քննադատական և վերլուծական մտածողություն, խոսքային սխալներ:*

Շուշիի տեխնոլոգիական համալսարանը (ՇՏՀ) հիմնադրվել է 2015 թ. դեկտեմբերի 28-ին Արցախի Հանրապետության Շուշի քաղաքում: Առաջին ռեկտոր է ընտրվել տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Վաչեի Թոքմաջանը: Համալսարանն իրականացնում է բարձրագույն, հետբուհական և միջին մասնագիտական կրթություն:

Միջին մասնագիտական կրթական համակարգում կրթության տևողությունը 3 տարի է և հայերենի ուսուցումն իրականացվում է բոլոր կուրսերում (6 կիսամյակ): Շաբաթական ժամաքանակը բոլոր մասնագիտությունների համար 5 կիսամյակներում 32 ժամ է (շաբաթական 1 հանդիպում), բացառությամբ «Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտության I կուրսի I կիսամյակի, որտեղ ժամաքանակը 64 ժամ է (շաբաթական 2 հանդիպում), իսկ բոլոր մասնագիտությունների վեցերորդ կիսամյակում՝ 26 ժամ:

Միջին մասնագիտական կրթական համակարգում ուսանողների տարիքը 15-17 է, գերակշիռ մասը՝ արական սեռի:

Դասավանդման հիմքը Հայոց լեզվի ծրագիրն¹ է, որում սահմանված են դասընթացի նպատակը, խնդիրները, վերջնարդյունքները, թեմաները և այլն:

Հայոց լեզվի դասընթացը **նպատակ** է հետապնդում բարձրացնելու սեփական խոսքի գրագիտության նկատմամբ պատասխանատվությունը, սովորողների մեջ մշակելու գրական հայերենի նորմային համապատասխան գրավոր և բանավոր խոսք կառուցելու, խոսքը բարբառային, ժարգոնային արտահայտություններից մաքրելու կարողությունները:

Շեշտադրվում են բառարաններից, հանրագիտարաններից, տեղեկատու գրականությունից, տպագիր և էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու, գեղարվեստական և գիտահանրամատչելի գրականություն կարդալու, կարդացածը ոճական տարբեր սկզբունքներով վերաշարադրելու ունակությունները:

Հայերենի դասավանդումը հետապնդում է հետևյալ կոնկրետ **խնդիրների** լուծումը.

1. Ուսանողների բառապաշարի հարստացում, աշխարհայացքի և ճանաչողության ընդլայնում.

2. Հայոց լեզվի կառուցվածքի, լեզվական միավորների և նրանց միջև առկա հարաբերությունների մասին համակարգված գիտելիքների զարգացում.

3. Լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողությունների ձևավորում.

4. Բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների մշակում.

5. Տեքստի վերլուծության և մեկնաբանության միջոցով գրվածքի լեզվաոճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության կատարելագործում.

6. Գործնական գրություններին ներկայացվող պահանջներին տիրապետում և կիրառում.

7. Տարբեր տիպի բառարաններից, հանրագիտարաններից, տեղեկատու և օժանդակ, տպագիր և էլեկտրոնային ձեռնարկներից օգտվելու և ինքնուրույն կերպով գիտելիքներ ձեռք բերելու հմտությունների մշակում.

8. Գրաբարի, բարբառների, ժամանակակալից արևելահայերենի և արևմտահայերենի լեզվական տարբեր իրողությունների տարբերակում և կիրառություն:

Ծրագրի ավարտին ուսանողից ակնկալվում են հետևյալ **վերջնարդյունքները**.

1. Բացատրել լեզվական տարբեր մակարդակների միավորների վերլուծման սկզբունքները.

2. Որոշել տեքստերի լեզվաոճական առանձնահատկությունները.

3. Անվանել ուսումնասիրության ոլորտին առնչվող գիտական հասկացությունները.

4. Հիմնավորել կատարած ուսումնասիրության արդյունքները.

5. Գործնականում իրականացնել լեզվական վերլուծություններ.

6. Ընտրել ուսումնասիրության համար անհրաժեշտ բանավոր և գրավոր փաստական նյութ.

¹ Հայոց լեզու, Ծրագիր, Միջին մասնագիտական կրթություն, ԱՀ ԿԳՄՄՆ, ՇՏՀ, Շուշի, 2018:

7. Ընտրել և դասակարգել գրաբարի, բարբառների, ժամանակակից արևելահայերենի և արևմտահայերենի լեզվական տարբեր իրողություններին վերաբերող փաստերը.

8. Գնահատել գիտական տարբեր տեսակետներ ու մոտեցումներ.

9. Նկարագրել ուսումնասիրությանն առնչվող փաստական նյութը.

10. Հակադրել և համադրել եղած փաստական նյութին առնչվող տվյալները.

11. Օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (համացանցային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, տպագիր աղբյուրներ, բանավոր խոսքի տվյալներ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), վերլուծել առկա խնդիրները և որոշել դրանց լուծման համար անհրաժեշտ միջոցները և եղանակները:

Թեմատիկ բաշխումն ըստ կուրսերի հետևյալն է.

I կուրսում ուսումնասիրում են հայերենի 5 մակարդակները՝ հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն, ոճաբանություն, գործնական գրություններ:

II կուրսում ուսումնասիրվում են տեքստագիտություն, ճարտասանություն, հայերենի ծագումը, նրա տեղը աշխարհի լեզուների շարքում, լեզվաընտանիքներ, հաղորդակցման տեսակները, հայկական կրթօջախներ, հայ և օտարազգի լեզվաբաններ թեմաները:

III կուրսում ուսումնասիրվում են հայերենի շրջանաբաժանումները, գրաբար, միջին հայերեն, արևմտահայերեն, բարբառներ, խոսքում հանդիպող բառային, բառակազմական, ձևաբանական, շարահյուսական սխալներ թեմաները:

Միջին մասնագիտական կրթական համակարգի ուսանողներին հայերեն դասավանդելու ընթացքում բախվում ենք մի շարք խնդիրների, որոնց առաջացման պատճառներից գլխավորներն են.

1. Համացանցում լատինատառ գրությունը.

2. Բարբառակիր լինելը.

3. Ընթերցանության ցածր մակարդակը.

4. Քննադատական և վերլուծական մտածողության թույլ զարգացածությունը.

5. Հասարակության մեջ կարծրատիպերի առկայությամբ պայմանավորված բարդությունների առկայությունը:

Ըստ կոնկրետ ոլորտների այս խնդիրները դրսևորվում են հետևյալ մասնավոր դեպքերում.

1. **Ուղղագրություն:** Համացանցում լատինատառ գրելու արդյունքում տուժում է հայերենի ուղղագրությունը: Մասնավորապես տառադարձության ընդունված կանոններին չտիրապետելու և կամայական տառընտրության հետևանքով ուղղագրական սխալներ են արձանագրվում **ռ** տառի գրության (գրում են **վո**), **է** և **ե** տառերի ուղղագրության, **բ**, **գ**, **դ**, **ձ**, **ջ** հնչյունների, **ծ** և **ց**, **ր** և **ռ** և այլ բաղաձայնների գործածության մեջ:

Խնդիրը լուծելու համար հորդորում ենք ուսանողներին համացանցում անցնել հայատառ գրությանը և ավելացնում լսարանային թելադրությունների քանակը:

Համացանցային գործիքները ևս հնարավորություն են տալիս ստեղծելու հայերենի ուղղագրության վերաբերյալ խաղարկային առաջադրանքներ և նպաստում ուղղագրության մեխանիկական յուրացմանը:

2. Շեշտադրություն: Քանի որ ուսանողների մեծ մասը բարբառախոս է, իսկ Արցախի բարբառի շեշտը վերջընթեր է, բանավոր խոսքում հաճախ ընդգծվում է բարբառային շեշտադրությունը:

Խնդրի լուծման համար խորհուրդ ենք տալիս հաճախակի ունդկնդրել աուդիոգրքեր և փորձել վերարտադրել ճիշտ արտասանությունը, խոսքի ընթացքում հետևել վերջնականակային շեշտադրությանը:

3. Բառապաշար: Բարբառակիր լինելու հանգամանքն իր ազդեցությունն է թողնում նաև բառապաշարի վրա: Ընդհանրապես բարբառակիր լինելը, ինչպես նաև երկլեզվյան միջավայրում մեծանալը կարող են զարգացնել լեզվամտածական և լեզվավերլուծական կարողությունները և այդպիսով բարձրացնել մետալեզվաբանական հմտությունները²: Բացի այդ՝ բարբառները յուրաքանչյուր ժողովրդի հարստությունն են, գրական լեզուն սնուցող աղբյուրներից, և դրանք իմանալն ու կիրառելը միայն խրախուսելի են, սակայն գրական հայերենով հաղորդակցվելիս հաճախ ուսանողների (և ոչ միայն) խոսքը համալրվում է բարբառային բառերով: Այս խնդիրը պայմանավորված է երիտասարդ սերնդի կողմից ընթերցանության անտեսմամբ և դրա հետևանքով բառապաշարի աղքատությամբ, ինչպես նաև խոսակցական փորձի սահմանափակությամբ:

Խնդրի լուծման համար հանձնարարվում է դասական հայ գրականության ընթերցանություն և դրվում կրթական միջավայրում գրական հայերենով հաղորդակցվելու պահանջ:

Ուսանողների մի մասը խուսափում է գրական հայերենով հաղորդակցվելուց՝ վախենալով ընկերների ծաղրին արժանանալուց: Այս բարդության հաղթահարման համար տարվում են բացատրական աշխատանքներ, իսկ գրական հայերենով հաղորդակցվողները խրախուսվում են:

Բառապաշարի հարստացման համար լսարանային աշխատանքներից զատ կիրառվում են նաև էլեկտրոնային ռեսուրսները, որոնք տարատեսակ առաջադրանքներ կազմելու լայն հնարավորություններ են տալիս:

4. Կետադրություն: Այս ոլորտում դժվարություններ առաջանում են բութի և ստորակետի կիրառության դեպքերում, ինչը պայմանավորված է դպրոցական դասագրքերում տեղեկատվության համակարգված և հստակ չլինելու և գործնականում բավարար չափով պարապմունքների բացակայությամբ:

Տվյալ խնդիրը լուծելու համար կենտրոնանում ենք այս երկու նշանների կիրառության բոլոր դեպքերը գործնականում կիրառելու և ինքնուրույն հիմնավորելու վրա:

²Jessica Carolyn Buehler, *How does speaking a dialect influence the brain?*, 2018 jacobfoundation.org/en/speaking-dialect-influence-brain/ (Որոնման ամսաթիվ՝ 02.02.2022)

5. Սեփական կարծիք արտահայտելու ունակություն: Տեքստագիտություն բաժնում դրսևորվող հիմնական խնդիրն ինքնուրույնության բացակայությունն է, երբ ուսանողները վախենում են սեփական, տարբերվող կարծիք արտահայտելուց:

Այս բարդությոը պայմանավորված է հասարակական կարծրատիպերով և հաղթահարելու համար ուսանողների մեջ սերմանում ենք ինքնավստահություն, խրախուսում համարձակներին և նախնական շրջանում ձեռնպահ մնում գնահատելուց, ինչը ուսանողների վախի հիմնական պատճառներից մեկն է: Երբ այս գործոնը հանվում է, ուսանողներն ավելի համարձակ ու անկաշկանդ են արտահայտվում: Սա օգնում է հաղթահարել դժվարությունը, իսկ երբ արդեն սովորում են արտահայտվել, վերադարձնում ենք գնահատականները՝ որպես խրախուսման տարբերակ:

6. Խոսքային սխալներ: Ցավոք, մեր եթերի լեզուն (չենք խոսում համացանցի մասին, որտեղ վիճակը ողբերգական է) հեռու է օրինակելի լինելուց, իսկ բարբառախոս ուսանողների համար եթերը գրական հայերեն սովորելու կարևոր աղբյուրներից է, ուստի եթերից հնչող տարատեսակ սխալները որպես չափանիշ ընդունվում են ուսանողների կողմից:

Այս արհեստածին խնդիրը լուծելու համար ծրագրում ներառել ենք խոսքում հանդիպող տարածված սխալներին վերաբերող թեմաներ, և գործնական օրինակներով ուսանողները փորձում են ինքնուրույն տարբերակել սխալները և ուղղել:

Ցավոք, ժամաքանակի սահմանափակ լինելը հնարավորություն չի ընձեռում լիարժեք կիրառելու բոլոր հնարավորությունները, բայց և այնպես եղած միջոցներն օգտագործելով՝ փորձում ենք լուծել ծագող խնդիրները և ուսանողների մեջ ձևավորել հարատև ուսումնառության մշակույթ, ինչը թույլ կտա դասընթացն ավարտելուց հետո էլ ինքնուրույն շարունակել կրթությունը:

ПРОБЛЕМЫ ПРЕПОДАВАНИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА В СИСТЕМЕ СРЕДНЕГО ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ ШУШИНСКОГО ТЕХНОЛОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА-ЛИАНА САНТЯН - В системе среднего профессионального образования Шушинского технологического университета армянский язык преподается на всех специальностях в течение шести семестров (разное количество часов).

Цели, задачи, конечные результаты и темы предмета определяются программой армянского языка.

Проблемы, возникающие при обучении армянскому языку, имеют свои причины, основные из которых – использование латиницы в интернете, диалект, низкий уровень чтения, слабое развитие критического и аналитического мышления, наличие комплексов из-за общественных стереотипов.

В статье представлены конкретные области проявления проблем, их причины и пути решения.

Ключевые слова: проблемы обучения армянскому языку, орфография, ударение, лексика, пунктуация, текст, критическое и аналитическое мышление, вербальные ошибки.

*PROBLEMS OF TEACHING ARMENIAN IN THE SECONDARY PROFESSIONAL EDUCATION SYSTEM OF SHUSHI UNIVERSITY OF TECHNOLOGY- **LIANA SANTRYAN***
- In the secondary professional education system of Shushi University of Technology Armenian is taught in all specialties for six semesters (a different number of hours).

The goals, objectives, final results and topics of the subject are defined by the Armenian language program.

The problems that arise when teaching Armenian have their reasons, the main of which are the Latin script on the Internet, the dialect, the low level of reading, the poor development of critical and analytical thinking, the presence of complexes due to social stereotypes.

The article presents specific areas of manifestation of problems, their causes and solutions.

Keywords: *problems of teaching Armenian, spelling, stress, vocabulary, punctuation, text, critical and analytical thinking, verbal errors.*

HYBRID TRAINING AS A GUARANTEE TO ENSURE CONTINUATION OF EDUCATION

The article refers to the study of the hybrid learning model, and presents the advantages of hybrid learning.

Based on the research, it is proposed to enshrine the hybrid education model in the RA Law on General Education, as a guarantee for the realization of the right to education and the continuation of education.

The application of the hybrid learning model will enable smooth transition to distance learning in force majeure situations, to ensure the continuity of education.

Keywords: education, training, hybrid learning, distance learning, continuing education, guarantee.

At present, one of the main priorities in human development policy is to ensure the quality, accessibility and efficiency of education, as it is education through which the strategic problems of the state can be solved, such as sustainable economic development, poverty alleviation, national security, democratic society and knowledge-based society.

There is a widespread understanding around the world that new approaches to learning need to be introduced to improve education systems. In order to ensure quality education, it is necessary to review the teaching-assessment methods, the roles of teachers and students in the educational environment.

The Republic of Armenia declares and guarantees the progressive development of the field of education as a key factor in strengthening the statehood. The guarantees of the right to education are enshrined in Articles 15, 38 of the Constitution of the Republic of Armenia, և 13 of Article 86.

The most important guarantee in the field of education is Article 38 of the RA Constitution, which states: "Everyone has the right to education."

It is very important today to create equal opportunities in the field of ensuring the right to education, so that education is related to human abilities and not to material wealth. According to the RA Law on Education, the Republic of Armenia ensures the right to education, regardless of nationality, race, sex, language, religion, political or other views, social origin, property status or other circumstances. "The state ensures the right to education through the normal operation of the education system, by creating socio-economic conditions for receiving education" (Article 6).

Since independence, the Republic of Armenia has adopted a number of laws¹, implemented a number of organizational measures to guarantee the right to education, to

¹ RA Law on Education (adopted on April 14, 1999), RA Law on Higher and Postgraduate Professional Education (adopted on 14.12.2004), RA Law on Preschool Education (adopted on 15.11.2005), RA Law on Education of Persons with Special Educational Needs (adopted on 25.05.2005), RA Law "On Primary Vocational (Vocational) և Secondary Vocational Education" (adopted on 08.07.2005), RA Law on State Education Inspectorate (adopted on 15.11.2005), RA Law on General Education (adopted on 10.07.2009):

ensure the regulation of the education sector in new conditions. The issues of state policy in the field of education have changed significantly. If in the first years of independence the main task was to maintain the existing education system in the conditions of economic crisis and blockade, to ensure the further development of the education system, then, due to the coronavirus (Covid-19) epidemic, the 2020 declaration of state of emergency in the Republic of Armenia, after the decision of the Government of the Republic of Armenia N 298-N of March 16, 2006, one of the most serious issues of the state policy in the field of education was to ensure the continuity of education by creating equal opportunities. Naturally, the only solution to the problem in this situation was the organization of distance learning.

Moreover, if in the case of universities the law related to the implementation of distance learning was regulated by law², then there was no legislative basis for the implementation of distance learning under the RA Law on General Education.

First of all, it was necessary to provide a legal basis for distance learning in secondary schools. The RA Law on Making Amendments to the Law on General Education, adopted on March 6, 2020, defined the legislative bases for distance learning, on the basis of which Order No. 09-N of May 20, 2006 by the Minister of Education and Science 2020 approved the "Procedure for organizing distance (online) education in general education institutions", Article 8, which guarantees the continuity of education through the implementation of distance learning, both in case of emergency in force majeure (paragraph 8 (2)) and in a number of cases: if the institution does not have a specialist in the relevant subject, until the filling of the vacancy of a teacher on a competitive basis (sub-item 1 of item 8)); for parents (legal representatives) who have worked in diplomacy or children temporarily staying with parents (legal representatives) in foreign countries, if the right to education has not been exercised in that country, for children who need long-term treatment that makes existing education impossible; for children who take part in international subject or sport Olympiads or tournaments and are often absent from the country; for those who have to take external exams to obtain a basic or secondary education diploma; for children of families living in the Diaspora, as well as those living in the Diaspora wishing to return to the Republic of Armenia, who intend to master basic programs for inclusion in general education in the Republic of Armenia through additional education (sub-items 3-7 of point 8).

Thus, in the context of guaranteeing the right to education, as well as ensuring the quality of education, the use of distance technologies is imperative. The availability of information and communication technologies (ICT) allows to continue learning when face-to-face communication is no longer possible. However, in order to ensure the effectiveness of teaching, it is necessary for both teachers and students to be familiar with information technologies and their application.

To assess the readiness of teachers and students for online lessons, it is necessary to find out how often these technologies were used in the classroom before the crisis.

First of all, it should be noted that the possibility of using ICT is fixed in the legal sphere. In particular, Article 5, Point 4 of the RA Law on General Education stipulates that the state guarantees the promotion of creative work in educational institutions, ensuring the principle of priority of students' analytical and critical thinking, independent acquisition and application of knowledge, and the priority principle of skill improvement in information technologies. In order to ensure the application of the mentioned principle, ICT is defined as a

²Article 10 of the RA Law on Higher Postgraduate Professional Education, Article 1 of the Procedure for Distance Learning of Higher Postgraduate Professional Professions.

part of the content of general education programs by the 4th sub-item of the 15th point of the "Procedure for the formulation and approval of the state standard of general education" approved by the RA Government Decision N 136-N of February 4, 2021:

2nd sub-point of the 33rd point (c) stipulates that "Information and communication technology education in 2-6 school classes for is presented in a separate or integrated curriculum that enables the use of digital devices and programs, in school classes 7-12, through the study of applications, a separate subject that develops the necessary computer skills that meet the needs of life and future education, work activities".

However, the challenges posed by the epidemic crisis have shown that one in five students is unable to use information technology or has no access to digital learning tools or the Internet. In addition, there is no common platform for organizing training, no set of tools, the teaching staff does not have the necessary level of skills in the use of ICT³:

Although schools have done a great deal to distance learning, school leaders acknowledge that there is huge work to be done to ensure the participation of all students in the learning process.

Results from Teaching and Learning International Survey (TALIS) show that 56% of teachers in OECD⁴ countries have reported that the use of ICT for teaching purposes was included in their formal education or training. 67% of teachers felt that they could support student learning through the use of digital technologies (e.g. computers, tablets, smart boards)⁵.

The use of ICT for teaching purposes is not enough to ensure effective distance learning. Indeed, as learning technologies are characterised by a rapid pace of change, it is imperative for teachers to get continuous training. 60% of teachers in OECD countries have reported that ICT skills for teaching were included in their professional development activities. At the same time, 18% of teachers have reported a high level of need for professional development in ICT skills for teaching.

In Finland, for example, 20% of principals have reported that the lack of digital technologies is hampering quality education. Insufficient internet access was also registered.

Data from the 2018 cycle of the Programme for International Student Assessment (PISA) provide further insights into schools' capacity to enhance teaching and learning using digital devices. According to that information, in OECD countries, 54% of students were enrolled in the schools where an effective online learning support platform is available.

The coronavirus crisis forces us to radically reconsider teaching approaches, to think "outside the box", to come up with innovative and pragmatic solutions to ensure the continuity of distance education.

Moving to online environment is not just about distance learning, it is about introducing solutions that enable students and pedagogues to use educational technologies smoothly when needed. Because the future is still uncertain, we need a systematic, sustainable approach to overcoming any unpredictable circumstances. There is a growing demand for information and communication means in the educational process in the world today, the

³ <https://escs.am/files/files/2020-07-08/7d2cd52ba1106d36cc35bdf5eaabc0ee.pdf>

⁴ The Organisation for Economic Co-operation and Development (OECD) is an intergovernmental economic organisation with 38 member countries, founded in 1961 to stimulate economic progress and world trade.: <https://www.oecd.org/about/document/ratification-oecd-convention.htm>

⁵ https://scholar.google.com/scholar?hl=en&as_sdt=0%2C5&as_ylo=2022&as_vis=1&q=member+countries+of+teaching+and+learning+international+survey&btnG=

demand for hybrid (combined or mixed) format classes, when some of them are held in the classroom, and some online.

Hybrid learning, which incorporates elements of both online and traditional education, is a new direction in education. This type of training combines the benefits of both traditional and face-to-face online education.

Hybrid learning is a relatively "young" term coined by foreign researchers. In particular, Pete Sharma, Curtis Bonk, Barney Barrett, Martin Oliver first tried to define the concept of "hybrid learning", and then to implement the idea of this model in science.

Initially, hybrid learning was considered as a learning method based on e-learning technology. It was mainly used in large teams whose employees needed professional training.

The first results of the application of the hybrid learning model in educational institutions appeared in Randy Gerson's and Norman Vogan's «Blended Learning in Higher Education: Framework, Principles, and Guidelines»⁶, Curtis Bonk's and Charles Graham's Global perspectives, local designs»⁷ manuals.

"Blended Learning System" by Curtis Bonk and Charles Graham means learning systems that are a synthesis of face-to-face learning and computer learning:

Russian researchers have tried to define this model. For example, by Yu. Mishota "mixed learning" is means "mixed course", which "combines real-time e-learning with face-to-face learning"⁸. According to other authors, "hybrid learning" is a combination of both traditional and e-learning formats⁹.

Foreign authors Chris Reed, Harvey Singh point out the undeniable advantages of this model and believe that it ensures the effectiveness of training, proper time management, and the ability to take an individual approach¹⁰:

In the last 10-15 years, hybrid education has not only gained significant popularity in the system of general and higher education, but also has become one of the most promising areas which many experts link the future of the education system to in the 21st century.

John Young, president of the University of Pennsylvania, US, believes that the combination of distance learning and face-to-face learning is the greatest, not yet fully accepted, trend in modern education¹¹.

In 2003 the American Association for Learning and Development considers blended learning to be one of the top 10 learning technologies based on a knowledge-based economy¹²:

According to the National Education Association of the United States, in 2000, about 45,000, in 2009 - 3,000,000, in 2011 - 4,000,000 students studied through distance learning

⁶ Garrison D. Randy. *Blended Learning in Higher Education: Framework, Principles, and Guidelines* / D. Randy Garrison, N. D. Vaughan; 1st edition, 1960.

⁷ Bonk C. J. *The handbook of blended learning environments: global perspectives, local designs* / C. J. Bonk, C. R. Graham. San Francisco: Jossey-Bass/ Pfeifer, 2006.

⁸ Мишота И. Ю. Применение «смешанного» обучения ("blended learning") в образовательном процессе в ВУЗах / И. Ю. Мишота // Сборник трудов Историко-архивного института: рецензируемый сборник научных трудов. М., 2012. Т. 39. С. 453.

⁹ Dede C., Ketelhut D. J., Whitehouse P., Breit L., McCloskey E. M. *A Research Agenda for Online Teacher Professional Development* // *Journal of Teacher Education*. 2009. Vol. 60. 1. P. 8–19.

¹⁰ Singh H. *A white paper: achieving success with blended learning* / H. Singh, C. Reed // *American society for training and development*, 2001.

¹¹ Young J.R. «Hybrid» teaching seeks to end the divide between traditional and online instruction. *Chronicle Of Higher Education*, 2002. Vol. 48, no. 28, pp. 33–34.

¹² Rooney J.E. *Blending learning opportunities to enhance educational programming and meetings*. Association Management, 2003, vol. 55, no. 5, pp. 26–32.

courses. In 2019 more than 50% of all high school courses are online¹³.

According to analysis on online learning strategies carried out by the US Department of Education, hybrid courses performed better than full face-to-face courses¹⁴.

Michigan schools enhance student academic experience by integrating online learning into school improvement programs to help meet student's special needs:

The Virtual University of Michigan (MVU) encourages school leaders to develop strategic plans that incorporate innovative models. The University has developed a Hybrid and Distance learning standards Manual to help school board members, administrators, teachers, parents, and others meet the needs of students¹⁵.

National education programs in Finland include training activities and research projects to develop ICT, e-learning, digital / media literacy skills in schools. In elementary and secondary schools, ICT is taught as a general tool for other subjects or as a tool for performing specific tasks in other subjects. For the purposes of ICT education, there are relevant acts that regulate the use of computers, electronic applications, information retrieval and the use of multimedia at both primary and secondary education [12]. Moreover, these acts stipulate that both teachers and students of the secondary school must use ICT in all subjects, both in the classroom and at home, when performing additional assignments.

The most important and difficult part of designing and teaching hybrid courses is the proper combination of face-to-face teaching and online teaching components. An effective hybrid course is not just adding a face-to-face component to an online course. The curriculum should take into account the content of the course, the interaction between students, as well as interaction between students and faculty.

The main advantages of the hybrid learning model are:

1. Innovation, new teaching approaches and tools;
2. Flexibility. the teacher can alter the material being studied and adapt it to the student's educational level;
3. Creative freedom of the teacher and possibility to transfer more information;
4. Active student participation and promotion of independence;
5. Opportunity to develop an individual approach to children.

The widespread use of online learning in the last decade has enabled educators to expand and deepen student learning through the use of new technologies while meeting the needs of a wider, multi-layered group of learners. In this sense, hybrid learning can be considered one of the most demanded and effective technologies in both schools and universities.

Based on the research, we conclude that it is necessary to enshrine the hybrid education model in the RA Law on General Education as a guarantee for the realization of the right to education and the continuation of education, to introduce a single remote platform, which will serve as a means of ensuring the acquisition of knowledge (test tasks, assignments, tasks, individual work, group work), transfer of materials, test of knowledge during the organization of the existing learning process. This will enable a smooth transition to distance learning in force majeure situations, to ensure the continuity of education.

¹³ *Great Public Schools for Every Student*. URL: www.nea.org. National Education Association [Электронный ресурс]:

¹⁴ <https://www.yaxisfoundation.org/blog/hybrid-courses-in-usa/>

¹⁵ <https://swsu.ru/sbornik-statey/onlayn-i-smeshannoe-obuchenie-v-ssha.php>

ՀԻՔԴԴԴԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԿԸԹՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ - **ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ** – Հոդվածում անդրադարձ է կատարվում հիբրիդային ուսուցման մոդելի ուսումնասիրությանը, ներկայացվում հիբրիդային ուսուցման առավելությունները: Արված ուսումնասիրության հիման վրա առաջարկվում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում հիբրիդային ուսուցումը ամրագրել որպես կրթության իրավունքի իրացման, կրթության շարունակականության ապահովման երաշխիք:

Հիբրիդային ուսուցման մոդելի կիրառումը հնարավորություն կընձեռի ֆորս-մաժորային իրավիճակներում սահուն անցում կատարելու հեռավար ուսուցմանը և ապահովելու կրթության շարունակականությունը:

Բանալի բառեր՝ կրթություն, ուսուցում, հիբրիդային ուսուցում, հեռավար ուսուցում, կրթության շարունակականության ապահովում, երաշխիք:

ГИБРИДНОЕ ОБУЧЕНИЕ КАК ГАРАНТИЯ ОБЕСПЕЧЕНИЯ ПРЕЕМСТВЕННОСТИ ОБРАЗОВАНИЯ - **АСМИК СТЕПАНЯН** - В статье рассматриваются модели гибридного обучения, представлены преимущества гибридного обучения.

На основе исследования предлагается закрепить модель гибридного образования в в Законе РА "Об общем образовании" как гарантию реализации права на образование и преемственности образования.

Применение гибридной модели обучения позволит плавно перейти на дистанционное обучение в форс-мажорных ситуациях, обеспечить преемственность образования.

Ключевые слова: образование, обучение, гибридное обучение, дистанционное обучение, обеспечение преемственности образования, гарантия.

ՆԺԴԵՀԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2020 թ. աշնանային ռազմարշավի և Արցախի Հանրապետության ինքնիշխան տարածքի 75 տոկոսի բռնազավթման հետևանքով ստեղծված ռազմաքաղաքական ու սոցիալ-տնտեսական ճգնաժամը հաղթահարելու հրամայականը առաջանցիկ է դարձրել երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգի որակական ու բովանդակային բարելավումը, որի արդյունավետության բարձրացմանը մեծապես կարող է նպաստել զինվորական ու քաղաքական գործիչ, գաղափարախոս ու ռազմավար, իր՝ հիրավի պատմաստեղծ կենսագործունեությամբ հայոց առաջնակարգ մեծերի շարքը մշտնջենաբար դասվող Գարեգին Նժդեհի ուսմունքը¹:

Հոդվածի նպատակն է ներկայացնել Գարեգին Նժդեհի ուսմունքի այն հիմնական դրույթները, որոնք, ըստ էության, կարող են արդյունավետորեն կիրառվել երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

Բանալի բառեր. Գարեգին Նժդեհ, Արցախի Հանրապետություն, ռազմահայրենասիրական դաստիարակություն, գաղափարախոսություն, Հայրենիք, ազգ, զինվոր, կրթություն, պատերազմ, ռազմարվեստ:

Գ. Նժդեհի ստեղծագործությունները² վերահրատարակվել և նրա ուսմունքի կիրառական նշանակության ու արդիականության մասին բավական հարուստ գրականություն է ստեղծվել Սփյուռքում, Արցախյան շարժման քաղաքական փուլում,

¹ Տե՛ս **Աթոյան Վ.**, Գարեգին Նժդեհի ուսմունքը և դրա արդիականությունը, Ե., 2007, Գարեգին Նժդեհի ուսմունքը և դրա արդիականությունը, հոդվածների ժողովածու, Ե., 2009, **Աթոյան Վ.**, Գարեգին Նժդեհի ուսմունքը. հավիտենարժեք դասեր, Ե., 2011, **Ստեփանյան Խ.**, Հայապահպանության և ազգային դաստիարակության խնդիրը Գարեգին Նժդեհի աշխատություններում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Գիտական տեղեկագիր» (Հումանիտար գիտություններ), №2 (19), Ե., «Մանկավարժ» հրատ., 2013, էջ 53-60 և այլն:

² Բանտային գրառումներ, Ե., 1993, Ջորաշարժային կանոնադրություն: Խուստուփյան կանչեր, Ե., 1993, Էջեր իմ օրագրեն: Բաց նամակ հայ մտավորականությանը: Որդիների պայքարը հայրերի դեմ, Ե., 1998, Յեղակրոնության ուխտ, Ե., 1998, Յեղի հավիտենական զենքը, Ե., 1998, Ազատ Սիւնիք, Պ., 1999, Լեռնահայաստանի գոյամարտը, Պ., 1999, Յեղի արթնություն, Ե., 1999, Ամերիկահայությունը՝ ցեղը և իր տականքը, Ե., 2000, Յեղի ոգու շարժը, Ե., 2000, Յեղի ոգու շարժը: Ամերիկահայությունը՝ ցեղը և իր տականքը, Ե., 2000, Յեղակրոնությունն իբր յաղթանակի գորոյթ: Յեղային արթնություն: Ինչ է ճեղակրոնությունը, Ե., 2001, Հատընտիր, Ե., 2001, Էջեր իմ օրագրեն: Բաց նամակ հայ մտավորականության, Ե., 2002, Երկեր, հատ. 1 և 2, Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2002, Նամականի (1920-1921), Ե., 2002, Նորահայտ մասունքներ, Ե., 2002, Մեծ գաղափար (նորահայտ մասունքներ), Ե., 2003, Որդիների պայքարը հայրերի դեմ, Պ., 2005, Հատընտիր /երկրորդ լրացված հրատարակություն/, Ե., 2006, Բաց նամակ Մայքլ Արլենին, Լ.-Ա., 2008, Հայ ռազմիկին (Հաղթելու արվեստը), Ե., 2010, Աշխարհայեցողություն, Ե., 2011, Նորահայտ նամակներ, Ե., 2011, Գրական երկեր, Ե., 2012, Բանտային կյանք: Նամակներ: Գրառումներ, Ե., 2016, Հիշի՛ր պատերազմը: Խուստուփյան կանչեր, Ե., 2017, **Աթոյան Վ.**, Նժդեհի՝ մարտի վարման տեսության արդիականությունը, «Հայկական բանակ», 2010, N 2(64), էջ 121-122, **Դանիելյան Հր.**, Գարեգին Նժդեհի գաղափարախոսության նշանակությունը, <http://www.hhk.am/hy/analysis/item/2012/02/25/Nzhde/> (ներբեռնումը՝ 31.10.2022 թ.):

հատկապես ՀՀ անկախության տարիներին³:

Տոդերիս հեղինակը ևս տարբեր առիթներով անդրադարձել է Նժդեհի ուսմունքի դրույթներով երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության առանձնահատկություններին⁴:

Գ. Նժդեհը երիտասարդ սերնդի դաստիարակության հիմքը համարել է հայրենաճանաչումը, որը սնում է հայրենասիրության գաղափարը և ազգային գաղափարախոսության ամուր հիմքերի վրա ձևավորում աշխարհաճանաչումը: Այդ մասին է վկայում նաև նրա բանտային գրառումներում հայազգի սերունդներին հղված պատգամը. «Հայրենիքը չի տրուում այնպես, ինչպես ժառանգում է հայրենական հարստություն: Դա ձեռք է բերում ամեն մի սերունդի եւ նրա առանձին անդամի կողմից. ձեռք է բերում հայրենաճանաչումով, հայրենապաշտությամբ, նրան արժանի դառնալու ձգտումով»⁵:

Գարեգին Նժդեհը հայրենիքի գաղափարն արտահայտում է անսահման խորիմաստ ու բացարձակ զգացմունքային բնորոշումներով, «հոգևոր հայրենիք»-ի իմաստասիրությամբ: Օրինակ, նրա «Երբեք և ոչ մի տեղ՝ առանց հոգևոր հայրենիքի» ասույթը կարևոր ուղերձ է ապագա սերունդներին և հատկապես հայրենիքից հեռացած աշխարհասփյուռ հայության զավակներին՝ հայրենիքը նախ ունենալ հոգու խորքում, որպես սրբազան գաղափար, առանց որի անհնարին է հաջողել իրական ու անկախ հայրենիքի համար պայքարը:

Գարեգին Նժդեհի շատ ասույթներ ուղղված են սերունդների ճիշտ ու

³ **Գեորգեան Վ.**, *Լեոնահայաստանի հերոսամարտը (1919-1921 թթ.)*, Պ., 1923, 2-րդ հրատ., Ե., 1991, 3-րդ հրատ., Ե., 2010, **Աւօ**, Նժդեհ (Կենսն ու գործունեությունը: Նշխարներ, Վկայություններ), Պ., 1968, 2-րդ հրատ., Լ. Ա., 1989, **Մեան Ա.**, *Բանտարկելալի մը յուշերը (Տառապանքի տարիներ Գ. Նժդեհի հետ)*, Պ.Ա., 1970, 204 էջ, 2-րդ հրատ., Ե., 2012, **Լալայան Մ.**, *Գարեգին Նժդեհի կյանքն ու գործունեությունը*, Ե., 1997, **Բունիաթյան Ա.**, *Սպարապետի վերադարձը*, Ե., 1999, 2-րդ հրատ., Ե., 2002, **Վարդանյան Ա.**, *Նժդեհյան մատունքներ*, Ե., 2001, **Ղազարեցյան Վ.**, *Նժդեհը Զանգեզուրում (1920 թվականի վերջ - 1921 թ.)*, Ե., 2001, *Սպարապետ Նժդեհ, Պ., 2001, Առաքելյան Վ.*, *Նժդեհ, Ե., 1989, Համբարձումեան Ռ.*, *Վարդ Նժդեհի: Ասույթներ*, Ե., 2001, **Նույնի**, *Գարեգին Նժդեհ (Ամբողջական կենսագրություն)*, Ե., 2007, **Հարությունյան Ա.**, *Գարեգին Նժդեհը և 1921 թ. Թավրիզյան դատավարությունը*, Ե., 2001, **Պետրոսեան Ա.**, *Գարեգին Նժդեհը և քրիստոնեությունը*, Ե., 2001, **Վարդանյան Ա.**, *Նժդեհյան մատունքներ*, Ե., 2001, *Գարեգին Նժդեհ - 115 (Գիտաժողովի նյութեր)*, Ե., 2001, **Միրզոյան Վ.**, *Գարեգին Նժդեհի փիլիսոփայությունն ու լեզվաշխարհը*, Ե., 2001, **Ջաքարյան Մ.**, *Գարեգին Նժդեհ (ձեպանկար)*, Ե., 2001, *Սպարապետ Նժդեհ, Պ., 2001, Ազատ Մյունիք: Արևոտ գիրք, խմբ. Ավագ Հարությունյան, Ե., 2007, Գևորգ Գ., Նժդեհը Մյունիքում 1919-1921 թթ., Ե., 2007, Զիֆուլադյան Մ.*, *Լեոնահայաստանի հանրապետությունը: Մյունիքի սահմանադրությունը*, Գորիս, 2008 և այլն:

⁴ **Հարությունյան Մ.**, *Նժդեհյան գաղափարախոսության դերը ազգային ոգով դաստիարակման գործում, «Բանակ - հասարակություն» համաբանակալի գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ, Էլույթներ, Ստ., 2002, էջ 85-94, Նույնի*, *Ինչպե՞ս էր հաղթում Նժդեհը, «Արցախ», 14 հոկտեմբերի, 1992, N 52, էջ 2, Նույնի*, *Հարցազրույց Հայ ազգայնական դաշինքի համանախագահ Մուշեղ Լալայանի հետ, Նժդեհյան գաղափարախոսություն՝ բանակին, «Մարտիկ», 30 նոյեմբերի - 5 դեկտեմբերի, N 47(292), էջ 5, Նույնի*, *Գարեգին Նժդեհի հաղթելու արվեստը (ըստ նրա «Լեոնահայաստանի գոյամարտը» կոթողային աշխատության) [Հայ ռազմարվեստի պատմությունից], «Մարտիկ», 31 հուլիսի - 7 օգոստոսի, 2004, N 33(586), էջ 4, 7-14 օգոստոս, N 34 (587), էջ 4, Նույնի*, *Գարեգին Նժդեհը հայրենասիրության մասին, «Մարտիկ», 7-12 հունվարի, 2008, N 1(763), էջ 3 (ստորագր.՝ Մ. Ահյան), Նույնի*, *Հայոց ազատագրական պայքարի նվիրյալը (Գարեգին Նժդեհի ծննդյան 127-րդ տարեդարձի առթիվ), «Մարտիկ», 8 - 15 հունվարի, 2013 N 1 (1019), էջ 4 (ստորագր.՝ Մ. Ահյան), Նույնի*, *Նժդեհյան գաղափարախոսությունը և ռազմահայրենասիրական դաստիարակությունը, «Ազատ Արցախ», մարտի 16, 2016 թ., <https://www.artsakhtert.com/arm/index.php/carriage/item/20297-njdehyan-gaxaparakhosutyun> (ներբեռնումը՝ 31.10.2022 թ.):*

⁵ *Գարեգին Նժդեհ. Ասույթներ*, Ե., 2020, էջ 11:

հայրենասիրական ոգով դաստիարակությանը, որով առաջնորդվելու դեպքում, նրա համոզմամբ, մեր ժողովրդի տառապանքի չնչին մասն իսկ չէր լինի և պետականությունը պահպանելու հնարավորություն կունենայինք: Օրինակ, նրա «հայրենապաշտական դաստիարակություն - ահա մեր փրկության խարիսխը: Հայրենապաշտության՝ մարդկային առաքինությունների այդ աստվածային մոր համար պետք է ջախ քարձրացնել մեր հոգիների մեջ, մեր դպրոցներում, մեր ընտանեկան հարկի տակ, մեր գաղթականական վրանների տակ, ամեն տեղ, ուր կապրի, ուր կշնչի հայ մարդը»⁶ ասույթում հայրենիքը դարձնում է ոչ միայն սիրո, այլ նաև պաշտամունքի առարկա, աստվածային սրբություն, կարևորում հոգևորն ու ընտանեկանը, ոգևորում և քաջալերում է գաղթականներին՝ հոգեբանորեն վերականգնվելու ու արևի տակ իրենց տեղը վերագտնելու ջանքերում:

Գարեգին Նժդեհը գտնում էր, որ լուրջ խնդիր ունի մեր ժողովուրդը և տարանջատում էր ժողովուրդը ազգից, որովհետև ազգը վերնախավն է ժողովրդի: Մենք ունենք լուրջ կրթական, բարոյական խնդիրներ, որը ոչ եկեղեցին, ոչ կառավարությունը չի կարող լուծել: Դա շատ խորը խնդիր է և մինչև չախտորոշվի մեր ժողովրդի հոգին, խորը վերլուծության չենթարկվեն մեր պարտությունների ու հաղթանակների պատճառները, բուժումի մասին խոսք լինել չի կարող, պետք է սկսել մանկապարտեզներից, դպրոցներից՝ առաջնորդվելով «ցեղի բովանդակ ուժերն օգտագործել, այլ ոչ թե հովանավորներ փնտրել» կարգախոսով: Հատկապես վճռորոշ կարող է լինել երիտասարդության դերը, որի մասին Նժդեհն ասում էր. «Ես ճշմարտություններ գիտեմ, որոնցից մեկն ասում է. ուզում էս գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան, նայիր նրա երիտասարդությանը»⁷:

Նժդեհի աշխատություններում կարմիր թելի պես անցնում է նրա գաղափարական պայքարը հայ ժողովրդի ու մանավանդ երիտասարդության բարոյահոգեբանական հատկանիշների, մարտիկների բարոյական կոփվածության, ասել է թե՛ նրանց ռազմահայրենասիրական դաստիարակության համար:

Այդ նպատակին կարող է ծառայել Գարեգին Նժդեհի վերականգնած, հարստացրած ու կիրարկած հայոց կորսյալ ու մոռացված մարտաբառապաշարը: Հիմնվելով Մամիկոնյանների մշակած ռազմագիտության, ռազմարվեստի տեսության ու ռազմահոգեբանության վրա, նա գտնում էր, որ երկրի իրական տերերն իսկական ազնվական այրերն են, երկրի գեներտիկական հատկանիշները կրողները, նրանց գեներում առողջ սերմ կա և հարկավոր է այն աճեցնել, տերն է, որ պետություն ու ազգ է պահում, իսկ ծառայի հոգեբանությամբ մարդը տրամադիր չէ ոչ միայն երկիր պահելու, այլև հայրենիքի համար կռվելու, որոնց մասին նա ասում էր. «կռվա-դաշտում փախչող զինվորը ազգից ու հայրենիքից է փախչում»⁸:

1933-1934 թվականներին Նժդեհը հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության առաջադրանքով գտնվել է ԱՄՆ-ում և կազմակերպել «Ցեղակրոն ուխտեր», որոնք դաշնակցական երիտասարդական կազմակերպություններ էին: Նժդեհը կարևոր խնդիր էր համարում Ամերիկայի հայ երիտասարդության դաստիարակությունը ազգային-հայրենասիրական ոգով, որին (երիտասարդությանը) սպառնում էր օտարացումը ազգային խնդիրներից: Նժդեհը բազմաբովանդակ ուսումնասիրություններ և վերլուծություններ է կատարել՝ քննարկելով հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմական շրջադարձային երևույթները: Աշխատությունների միջով

⁶ Գարեգին Նժդեհ, *Երկեր, հատ. 1, Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2002, էջ 43:*

⁷ Գարեգին Նժդեհ, *Հատընտիր, Ե., 2001, էջ 31:*

⁸ Գարեգին Նժդեհ, *Ասույթներ, Ե., 2002, էջ 20:*

կարմիր թելի պես անցնում են հեղինակի մտահոգությունները հայ ժողովրդի, Հայաստանի ճակատագրի նկատմամբ: Նժդեհը կարևոր դեր է հատկացրել մտավորականության և ամբողջ հայ ժողովրդի գաղափարական դաստիարակությանը, նրա բարոյական ոգու ամրապնդմանը: Իր ասույթներից մեկում Գ. Նժդեհը հատկանշում էր. «Պետք է վերադաստիարակություն – իմաստուն դաստիարակություն է պետք՝ վերջին խաղաթուղթը (իմա՝ հաղթաթուղթը,՝ Մ. Հ., Գ. Մ.) ապագան վտանգված ժողովուրդների:

Դաստիարակություն, որ հեղաշրջեր մինչայժմյա թույլի մեր հասկացողությունը իրավունքի և քաղաքական բարոյականի, քրիստոնեության, ուժի և թուլության, պատերազմի և խաղաղության մասին»⁹:

Նժդեհը իրավացիորեն շատ մեծ տեղ է տալիս մատաղ սերնդի ճիշտ դաստիարակությանը, ազգային հզոր զգացումով և արթուն գիտակցությամբ երիտասարդությանը զինելու գաղափարապաշտությամբ, որը կմղեր հայ մարդուն մեռնել՝ ապրելու և ապրեցնելու և ոչ թե ապրել՝ մեռնելու համար: Դաստիարակությունը հոգեփոխիչ առաքելություն ու իրական փրկություն պիտի բերի մեր ժողովրդին: Նժդեհը հայրենիքը դիտում էր իբրև ընդհանուր աստվածություն, իսկ հայրենասիրությունը՝ կրոն, պատմության քառուղիներում հատկապես կարևորելով Վարդանանց պատերազմը՝ այն անվանելով նրա հանճարեղ պատմիչ Եղիշեի անմահ հերոսների դար կամ Ոսկեդար, որոնք բարոյական մեծություններով և փառքի գործերով հարստացրին մեր պատմությունը:

Նպատակահարմար ենք գտնում արձանագրել, որ երիտասարդ սերնդի շրջանում ըմբռնում կա այն մասին, որ «Կրթական համակարգի միջոցով է հայրենիքի գաղափարը ժողովրդի գիտակցության մեջ մտնում և միա ու արյուն դառնում, ինչի արդյունքում էլ ամբողջ երկրում ազգային, հայրենասիրական մթնոլորտ է ստեղծվում»: Գնալով ավելի ու ավելի շատ երիտասարդներ են գիտակցում, որ «Հայրենասիրությունը առաջին հերթին փոխանցվում է կրթական համակարգի միջոցով. այն պետք է սրբությամբ պահպանել և հեռու պահել ապագային ուժերից: Այդ բոլորից մենք հանգում ենք պատմության փորձով հաստատված այն եզրակացության, որ ամեն մի ժողովրդի հաղթության, պարտության և ընդհանրապես գոյատևման հարցը որոշվում է ոչ այնքան ռազմի դաշտում, որքան ազգային դպրոցում, ազգային կրթական համակարգում»¹⁰:

Այժմ փորձենք դիտարկել, թե կոնկրետ ինչ դեր կարող է խաղաղ նժդեհյան գաղափարախոսությունը երիտասարդ սերնդին ազգային ու ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու հույժ կարևոր գործում:

Հուրախություն մեզ բանակում ազգային ոգով դաստիարակությունը առաջնահերթ խնդիրներից է, ինչը հաջողությամբ լուծվում է նաև նժդեհյան գաղափարախոսության միջոցով: Հասկանալի է, որ միայն կանոնադրական պահանջները կամ ընդամենը ուսադիրներ կրող սպայի անհոգի հրամանը բավական չեն զինվորներին սխրագործության մղելու համար: Ոգեշունչ գաղափարն ու դրանով

⁹ Գարեգին Նժդեհ, *Բաց նամակներ հայ մտաւորականութեան, Պէրուի, «Հրազդան», 1929, էջ 29, հմմտ՝ «Հյ գիվոր» N18 (1036) 15.05.2014 – 21.05.2014, <http://www.hayzinvor.am/26243.html> (ներբեռնումը՝ 31.10.2022 թ.):*

¹⁰ **Եղիազարյան Ա.**, Պատմական հայրենիքը և նրա ճանաչման նշանակությունը հայ զինվորականների ազգային-պետական մտածելակերպի պահպանման գործում, Ե., 2001. Հմմտ՝ **Գարսպետյան Մ.**, Հայրենասիրությունը հայոց մեջ, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Հանրապետական ուսանողական գիտաժողով, 29 սեպտեմբերի, 2020, Գյումրի, ԾՊՀ, 2021, էջ 138-139:

ապրող հրամանատարի կրակոտ խոսքը կարող են զինվորին առաջնորդել իմաստավորված մահվան:

Նժդեհականությունը, որպես ռազմաշունչ, ուժապաշտ, երիցս հայկական, տեսականորեն ու գործնականորեն փորձարկված, ամբողջական գաղափարախոսություն, զինանձնակազմի գիտակցությանը պետք է հասցվի ոչ թե մասնակիորեն՝ առանձին դրույթներով, այլ լիակատար կերպով՝ իբրև մի կուռ աշխարհայացք, ուսմունք:

Նժդեհյան գաղափարախոսության առանցքը կազմում են Ցեղի և Հայրենիքի հավիտենական արժեք ներկայացնող հասկացությունները: Ի սկզբանե գոյություն ունեցող հայերիս բնատարածքը՝ Հայկական բարձրավանդակը, մեր մշտնջենական Հայրենիքն է: Հայրենասիրություն ներարկելով հայ մարդուն, նժդեհյան գաղափարախոսությունը սահմանում է Հայրենիքի կորսված բեկորներին վերատիրելու դրույթը: Այն հաստատագրում է, որ պայքարի վերջնական նպատակը Հայկական բարձրավանդակն ընդգրկող համահայկական պետականության վերականգնումն է՝ որպես ազգի կենսունակության ու արժանապատիվ հարատևության գրավական: Դրանով զինվորի և ուսանող երիտասարդի գիտակցությանն է հասցվում այդ մեծ նպատակին առօրյա, մանր-մունր հիմնախնդիրները զոհաբերելու անհրաժեշտությունը:

Նժդեհյան գաղափարախոսության հիմնադրույթներից է ազգային անկախության կամ պետական ինքնիշխանության գաղափարը, որը ուսուցանում է երիտասարդներին, թե առանց անկախության ու ինքնիշխանության ազգերը զրկվում են ապրելու բարոյական իրավունքից, իսկ նրանց ապագան մշտապես վտանգված է: Հետևաբար, հայ զինվորը պետականությունը հուսալիորեն պաշտպանելու մղում կարող է ստանալ և ավելի իմաստավորված տանել մարտական հերթապահությունը մեր հանրապետության սահմաններում: Նմանապես և ուսանողը շարժառիթավորվում է ավելի լավ սովորելու և պետության արժանի քաղաքացի ու պիտանի մասնագետ դառնալու համար:

Գոյության կովի, պատերազմի ու խաղաղության նժդեհյան մեկնաբանությունները հայրենիքի մարտիկին զինում են ոգեղեն պաշարներով երկարատև պայքարին դիմանալու, մինչև հաղթական ավարտ մաքառելու վճռականությամբ: Դրանք կարող են նպաստել նաև զինվորների զգոնության ու աչալրջության բարձրացմանը:

Ներքեղային բարոյականի հիմնարար սկզբունքը քարոզում է համահայաստանյան հայրենասիրություն և համահայկական ազգասիրություն, պահանջում յուրաքանչյուր հայորդուց մնալ Ցեղի հպատակն ու մարտիկը՝ անկախ քաղաքական կամ կրոնական համոզմունքներից, սոցիալական դիրքից ու բնակության վայրից:

Նժդեհյան գաղափարախոսությունը Հայոց պատմությունը գնահատում է ամբողջության մեջ, արժեքավորելով ամենայն հայկականը, որն առկա է թե՛ նախաքրիստոնեական և թե՛ քրիստոնեական ժամանակաշրջաններում, ընդամին, անցյալը, ներկան ու ապագան դիտարկելով որպես մի անխզելի հավիտենություն: Գաղափարախոսության խորհուրդներից է Աստված-Ցեղ-անհատ օրգանական կապը, որի մեկնությունը հետևյալն է. անհատի կապը Բացարձակի ու Հավերժի հետ հնարավոր է Աստծուց իրեն տրված տեսակի՝ Ցեղի անընդհատ զարգացման ու հավերժացման միջոցով միայն: Այս մեկնությամբ է իմաստավորվում մահը և հնարավորություն ընձեռում անհատին՝ հոգեբանորեն հաղթահարելու այն ու զոհաբերվելու

հանուն Ցեղի հավերժացման, մի հանգամանք, որի նշանակությունը հայ զինվորի և ընդհանրապես երիտասարդի դաստիարակության գործում անգնահատելի է:

Նժդեհյան գաղափարախոսության անքակտելի մասն է ցեղակրոնի վարքականոնը, որից ուսանելի շատ բան կարելի է վերցնել երիտասարդ սերունդներին և հատկապես զինանձնակազմին ազգային ոգով դաստիարակելիս: Ցեղը, նրա արժանիքները, հերոսականը, համաշխարհային քաղաքակրթության մեջ նրա ունեցած ավանդը ճանաչելու և ցեղի ուժին, հանճարին, նրա հավաքական կամքին ու կարողություններին հավատալու պատգամը զինվորին տոգորում է ինքնաճանաչությամբ, հպարտությամբ և հավատով:

Անհատական երջանկությունը Ցեղի հավաքական երջանկությամբ պայմանավորելու պահանջը հուշում է որոնել հայության անընդհատ զորացման և իր բնական սահմաններում Հայաստանի վերականգնման մեջ: Ցեղակրոնի վարքականոնի ուսանելի դրույթներից են ուժապաշտ, հոգով, մտքով ու մարմնով զորեղ լինելը, Հայրենիքի համար իրենց արյունը շոյված մեր մեծ մեռելների նկատմամբ պաշտամունք ունենալը, նախնյաց գործին ու նպատակներին հոգեհաղորդակից դառնալը, ցեղային բարոյականի կրողն ու ուսուցիչը հանդիսացող առաջնորդի պաշտումը, «Արիացիր, արիացրու» նշանաբանով արիադավանությունը և այլն: Թևակոր արտահայտություն է դարձել հետևյալ պահանջը. «Մահը մի համարի՛ր հավիտենական կորուստ, և եթե հարկ է՝ մեռի՛ր, որ ապրի ցեղը Հայոց, մեռի՛ր այնպես, որ մահդ էլ ծառայի Հայրենիքիդ»¹¹: Ուշագրավ են նաև «սեփական ուժին ապավինելով՝ վճռական մենակի հոգեբանությամբ համակվելու», «Հայոց պատմության մեջ ամենայն գեղեցիկի, վսեմի, հերոսականի և, ընդհանրապես, հայ լինելու համար հպարտանալու», «հանցավոր թշնամուց վրեժխնդիր լինելու, այլապես նրան մի հանցանք ներելը կնշանակի նորերը արտոնել» և արդիական այլ պատգամները:

Հետաքրքիր է քարոզչին, գաղափարադաստիարակչական աշխատանքն անմիջապես իրականացնողին ներկայացվող պահանջը՝ անձնական օրինակով ամրապնդել խոսքը:

Շատ արժեքավոր են նաև Գ. Նժդեհի ռազմական խոհերը պատերազմի, ռազմարվեստի, զինվորի, զորավարի մասին:

Ցեղակրոնության էական խորհուրդներից է Ցեղի մարտական ուժի հանդեպ պարտադիր պաշտամունքը: Այդ մարտական ուժը մեր բանակն է: Հետևաբար, այն ավելի պաշտելի դարձնելու համար հարկ է բանակը վերածել կամքի ու ոգու դարբնոցի, որի քուրայով անցած յուրաքանչյուր հայորդի առաջնորդվեր հետևյալ նշանաբանով. «Ինձ հաջողվեց ստանալ Հայրենիքիս համար կոմեդիու և մեռնելու հնարավորություն»¹²:

Այսպիսով, նժդեհյան գաղափարախոսության ամենաէական կողմերին անդրադառնալը թույլ տվեց մեզ որոշել նրա տեղն ու դերը բարձրագույն ուսումնական, միջին մասնագիտական ու հանրակրթական հաստատությունների, բանակի անձակազմերին ազգային ոգով, ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Նպատակահարմար կլիներ այսուհետև ևս շարունակել աշխատանքները նժդեհյան գաղափարների տարածման, քարոզման ուղղությամբ, այնպես, որ դրանք

¹¹ Հմմտ.՝ **Ավետյան Ա.**, *Հին ու նոր հայերի օրգանական կապը-2*, «Լուսանք», 7-13 սեպտեմբերի, 2007 թ., N 24, էջ 2:

¹² Գարեգին Նժդեհ, *Մեռնելու կամք (Մի զինվորի ճշմարտություններ)*, «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1939թ., թիվ 7. Հմմտ.՝ Գարեգին Նժդեհ, *Հատընտիր*, Ե., 2006, էջ 556-561:

հաստատուն տեղ բռնեն հայրենյաց ներկա ու ապագա պաշտպանների գիտակցության մեջ՝ որպես ոգեղեն պաշարներ, բարոյահոգեբանական լիցքեր: Քանի դեռ հայ ռազմիկի ամենահիմնական գենքը մնում է ոգին, ուստի նժդեհյան գաղափարախոսությունը լինելու է նրա սնուցիչը, ստնտուն: Ահա թե ինչու այն ձեռք է բերել երիտասարդությանը, մանավանդ զինծառայողներին ազգային ոգով դաստիարակելու հիմնական միջոցի նշանակություն և օրըստօրե կարող է ընդլայնվել ու կատարելագործվել, անշուշտ, շնորհիվ կրթության բնագավառի պատասխանատուների ու գորամասերի հրամանատարական կազմի ճիշտ ու հետևողական մոտեցման:

УЧЕНИЕ НЖДЕ О ПАТРИОТИЧЕСКОМ ВОСПИТАНИИ ПОКОЛЕНИЙ - МГЕР АРУТЮНЯН, ГЕГАМ МИКАЕЛЯН - Настоятельная необходимость преодоления военно-политического и социально-экономического кризиса, возникшего в результате осенней кампании 2020 года и оккупации 75 процентов суверенной территории Республики Арцах, обусловила качественное и существенное совершенствование системы военно-патриотического воспитания молодого поколения. Учение Гарегина Нжде, военного и политического деятеля, идеолога и стратега, который своей поистине исторической жизненной активностью всегда занимает место в числе ведущих армянских деятелей, может во многом способствовать повышению эффективности этой системы.

Цель статьи - представить основные положения учения Гарегина Нжде, которые, собственно, и могут быть эффективно применены в военно-патриотическом воспитании подрастающего поколения.

Ключевые слова: Гарегин Нжде, Республика Арцах, военно-патриотическое воспитание, идеология, Родина, нация, солдат, образование, война, военное искусство.

NZHDEH TEACHING ABOUT THE PATRIOTIC EDUCATION OF GENERATIONS - MHER HARUTYUNYAN, GEGAM MIKAYELYAN - The urgent need to overcome the military-political and socio-economic crisis that arose as a result of the autumn campaign of 2020 and the occupation of 75 percent of the sovereign territory of the Republic of Artsakh led to a qualitative and significant improvement in the system of military-patriotic education of the younger generation. The teachings of Garegin Nzhdeh, a military and political figure, ideologist and strategist, who, with his truly historical life activity, always ranks among the leading Armenian figures, can greatly contribute to increasing the effectiveness of this system. The purpose of the article is to present the main provisions of the teachings of Garegin Nzhdeh, which, in fact, can be effectively applied in the military-patriotic education of the younger generation.

Key words: Garegin Nzhdeh, Republic of Artsakh, military-patriotic education, ideology, motherland, nation, soldier, education, war, military art.

**ՀՈՒՓՄԻՄԵ ՄԱՐՈՆՅԱՆ
ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆՅԱՆ**

**ՀԱԳՈՒՍՏԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԵՎ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Հողվածում ներկայացվում է հագուստի նախագծման և գծագրության միջառարկայական կապը և նշվում է ընդհանուր առմամբ միջառարկայական կապերի կարևորությունն ու անհրաժեշտությունը արդի ժամանակներում:

Հատուկ ուշադրություն է դարձված հագուստի նախագծման մեջ օգտագործվող գծագրական գիտելիքներին և հմտություններին/ լծորդումներ, մակերեսների հաշվարկ և այլն/:

Հողվածում խոսվում է նաև հագուստի նախագծման համակարգերի մասին, որոնցից հատկապես մեկի՝ հաշվարկագրաֆիկական եղանակի օգտագործումը անպայմանորեն ենթադրում է գծագրական հմտությունների կիրառում:

Բանալի բառեր՝ միջառարկայական, գծագրություն, նախագծում, կապ, համակարգ, ինտեգրում, գիտություն:

Կրթության զարգացման ժամանակակից փուլում դիտվում է գիտությունների ինտեգրման նպատակային գործընթաց: Այն ենթադրում է համակողմանիորեն զարգացած մասնագետների մասնակցություն, որոնց պատրաստմանը կարող են նպաստել ուսուցման ընթացքում միջառարկայական կապերի արդյունավետ ներառումը, խթանելով կրթության տեսական և գիտական մակարդակի զարգացումը: Միջառարկայական կապը որպես դիդակտիկ սկզբունք կիրառելիս համալրում է ուսանողի գործունեության ինքնուրույնությունը, տրամաբանությունը և երևակայությունը: Այս համատեքստում կարևորվում է «Հագուստի նախագծման» և «Գծագրության» միջառարկայական կապերը ամրապնդելով ուսուցման արդյունավետությունը:

Հագուստի նախագծումը դա հագուստի հիմքի՝ տեխնիկական գծագրի, ինչպես նաև հիմնական մասերի ուրվագծի կառուցումն է/ առաջամաս, թիկնամաս, թև, օձիք¹: Հիմքն իրենից ներկայացնում է հորիզոնական և ուղղահայաց հատվող գծերի ամբողջություն: Առաջնային մասերի կառուցման ժամանակ ներկայումս օգտագործում են հաշվարկագրաֆիկական եղանակը՝ հիմնվելով հաշվարկավերլուծային մեթոդի վրա: Կատարվող աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է պարբերաբար կիրառել գծագրական գիտելիքներ և հմտություններ/ լծորդումներ, մակերեսների հաշվարկ և այլն/:

Հագուստն ամբողջությամբ և նրա առանձին տարրեր ծավալատարածական մակերևույթներ են, որոնք ձևվում են հարթ նյութերից՝ գործվածքից, տրիկոտաժից, ոչ հյուսվածքային նյութերից: Այս պատճառով հագուստի նախագծման հիմնական խնդիրն է հարթ մակերեսից ծավալատարածական առարկայի ստացումը միաժամա-

¹Шершнева Л. П. Конструирование женской одежды на типовые и не типовые фигуры- Москва.<<Легкая индустрия>>, 1985, стр 230:

նակ համապատասխանեցնելով որոշակի պահանջների - Էոգոնումիկական /ֆիզիոլոգիական և անտրոպոմետրիկ/, հիգիենիկ /օդանցողիկություն, ջերմապահպանություն/, գեղագիտական և այլն²:

Միաժամանակ պետք է լուծել նաև հակառակ խնդիրը, որն է դետալների վերածումը անհրաժեշտ հարթ երկրաչափական պատկերների:

Վերը նշված երկու նախագծային խնդիրներն էլ կարելի է լուծել կիրառելով հետևյալ գծագրական մոտեցումները.

Բոլոր ծավալային մակերևույթները բաժանվում են երկու խմբի

1. Ճշգրտորեն բացվող-փովող, որոնք անհրաժեշտություն չունեն լրացուցիչ կտրվածքների և ծալքերի,
2. Բացվող-փովող, որոնք պահանջում են լրացուցիչ կտրվածքներ և ծալքեր:

Բացման-փման մակերևույթները բացելիս, գծային չափերը մնում են անփոփոխ ուղիղ գծերը պահպանում են իրենց չափը և ձևը, կորերը պահպանում են իրենց երկարությունը և մակերևույթի վրա իրենց միջև եղած անկյունների չափերը: Իր չափերն է պահպանում նաև ձևվածքի մակերեսը:

Գոյություն ունեն ճշգրտորեն բացվող-փովող մակերևույթների երկու տեսակ՝

1. տարածական կորերի շոշափումով առաջացած
2. պտտման մակերևույթներ:

Կորերի շեղվածության չափը որոշելու համար որպես հիմք են վերցվում Գաուսսի չափորոշիչները, այսինքն ամբողջական կորությունը $K = \frac{1}{R_1 R_2}$, որտեղ R_1 և R_2

գլխավոր մակերևույթների կորության շառավիղներն են: Ըստ Գաուսսի փովող մակերևույթների կորությունները $K = 0$: Այս մակերևույթները գծային են՝ նրանց ծնիչներն ուղիղ գծեր են: Դիտարկելով ուղիղ գծերը որպես շրջանագծի աղեղներ, որի

շառավիղը հավասար է անսահմանության, ապա ստացվում է $K = \frac{1}{\infty R_2} = 0$. :


Ճշգրտորեն բացվող-փովող մակերևույթները կարելի է բացել առանց դեֆորմացիայի:

Լրացուցիչ կտրվածքներով և ծալքերով բացվող մակերևույթների կորերի երկու շառավիղներն էլ հավասար չեն անսահմանության ($R_1 \neq \infty$; $R_2 \neq \infty$), այդ պատճառով K հավասար չէ 0: Այս մակերևույթները չեն կարող ճշգրտորեն բացվել-փովել հարթության վրա: Եթե, այնուամենայնիվ, անհրաժեշտ է ունենալ այսպիսի մակերևույթի փովածք, ապա այն կատարվում է մոտավոր ճշտությամբ³:

Մակերևույթը դիտարկելով ոչ որպես պինդ մարմին, այլ որպես ճկվող ձգվող թաղանթ, կարելի է ստանալ նրա հարթապատկերը, սակայն միայն նրան

² Делль Р. А. Гигиена одежды для ВУЗ-ов, Москва, Легпромбытиздат 1991, с160:

³ Математическая энциклопедия том1 издательство "Советская энциклопедия" Москва, 1977, с 376:



դեֆորմացնելով, կամ օգտագործելով կտրվածքներ և սեղմոններ: Այս դեպքում մարմնի մակերևույթը բաժանվում է մասերի, որոնցից յուրաքանչյուրը ենթարկում են ապալործսիմացիայի* բացվող մակերևույթով և փոխում են: Արդյունքում ստացվում է դետալի մասնատված, մոտավոր հարթապատկերը /ձևանմուշը/:

Այս տեսակի մակերևույթները չեն կարող համատեղվել հարթության հետ առանց կտրվածքների: Այսպիսի փովածքները կոչվում են պայմանական / մոտավոր/ փովածքներ:

Մարդու մարմնի մակերևույթը դա բարդ լրացուցիչ կտրվածքներով և ծալքերով բացվող մակերևույթ է, այդ պատճառով կարելի է ստանալ միայն հագուստի մոտավոր փովածքը, որը կրկնում է մարդու մարմնի ուրվագծերը: Այդպիսի փովածք ստանում են վերը նշված գծագրական մեթոդներով և այն հագուստի նախագծման մեջ անվանում են ինժեներական մեթոդ: Արդի հագուստի նախագծման մեջ օգտագործվում են նաև այլ մեթոդ - համակարգեր, որոնք հիմնված լինելով ինժեներական մեթոդի վրա, կրելով փորձի միջոցով ձեռք բերված շտկումներ, հնարավորություն են տալիս ապահովել հագուստի անթերի նստեցում մարմնաձևի վրա⁴:

Այդպիսի համակարգերից են՝

*ապալործսիմացիա-որոշակի մոտավորությամբ փոխարինում


⁴Коблякова Е. Б. Основы проектирования рациональных размеров и форм одежды-М.: Легкая и пищ. Промышленность. 1994. 447с:




1. Մուլյաժային
2. Հաշվարկահամաչափային
3. Հաշվարկագրաֆիկական

1. Մուլյաժային համակարգով աշխատելու ժամանակ հագուստը ձևավորվում է մանեկենի կամ մարդու կազմվածքի վրա: Այս աշխատանքը կատարելու ժամանակ օգտագործում են մակետային գործվածք, թուղթ կամ միանգամից հիմնական գործվածքը, որն առանց նախօրոք ձևելու ամրացնում են մանեկենի վրա և սկսում ձևավորել առաջադրված նմուշը՝ պահպանելով հենքաթելի և միջնաթելի ուղղությունը, հիմնական նախագծային գծերի ճշտությունը: Այս մոտեցումը օգտագործում են անհատական չափերով կամ բարդ նմուշների ստեղծման ժամանակ:

2. Հաշվարկահամաչափային եղանակի դեպքում որպես հիմք վերցնում են կրծքի շրջագիծը և կազմվածքի երկարությունը, օգտվում մարմնի չափերի մեջ գոյություն ունեցող համաչա օգտագործում են բանաձևեր, որոնք ստացվել են գործնական ձևով: փություններից: Հագուստի նախագիծը կառուցելու համար օգտագործում են բանաձևեր, որոնք ստացվել են գործնական ձևով:



3.Ժամանակակից մասսայական արտադրությունում օգտագործվում է հաշվարկագրաֆիկական եղանակը: Այս համակարգով նախագծում կատարելիս օգտագործում են տիպաչափահասակային աղյուսակից վերցրած չափեր և բոլոր կոնստրուկտիվ կետերը որոշվում են հաշվարկային բանաձևերի միջոցով: Այս համակարգի առավելությունը կայանում է նրանում, որ կիրառելով համապատասխան գծագրական մեթոդներ՝ ստացվում է մարմնի կառուցվածքը լիարժեքորեն կրկնող նախագիծ, որն էլ բացառում է չափափոքների անհրաժեշտությունը⁵:



⁵Сухрев М. И. Бойцова А. М. Принципы инженерного проектирования одежды- М.:1981.с 548:

ОБОСНОВАНИ МЕЖПРЕДМЕТНОЙ СВЯЗИ МЕЖДУ КОНСТРУИРОВАНИЕМ ОДЕЖДЫ И ЧЕРЧЕНИЕМ - **РИПСИМЕ МАРОНЯН, ПЕТРОС МАРОНЯН** - В статье представлена межпредметная связь черчения и конструирования одежды, подчеркивается ее важность и необходимость в наше время. Особое внимание уделено знаниям и умениям черчения, используемых при конструировании одежды/, расчет поверхностей и т.д./. В статье также говорится о системах проектирования одежды, которые особенно предполагают использование навыков черчения.

Ключевые слова - межпредметный, черчение, проектирование, связь, система, интеграция, наука.

THE BASIS OF THE INTERDISCIPLINARY CONNECTEDNESS BETWEEN FASHION DESIGN AND SKETCHING - **HRIPSIME MARONYAN, PETROS MARONYAN** - The article illustrates the interdisciplinary connectedness between fashion design and sketching and also elaborates on the significance and necessity of interdisciplinarity in the contemporary world. Particular attention is given to sketching knowledge and skills used in fashion design, such as conjugations, calculation of surfaces, et cetera.

The article also examines various fashion design systems, one of which, the computational method, necessarily implies the use of sketching skills.

Keywords: interdisciplinary, sketching, design, connection, system, integration, science

ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ԱԶԱՏ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԸ

Սույն հոդվածում մեր քննական անդրադարձի նյութը ժողովուրդների ազատ ինքնորոշման և պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքներն են, որոնք անմիջական առնչություն ունեն Ղարաբայի հիմնախնդրի հետ: Ի՞նչ իմաստ է դրված այդ սկզբունքների մասին ՄԱԿ-ի կողմից ընդունված փաստաթղթերում: Բնչ-պե՞ս պետք է Ստեփանակերտը և Երևանը հակադարձեն այդ սկզբունքների խեղաթյուրմանը տեղեկատվական առճակատումների դաշտում և բանակցային գործընթացում:

Բանալի բառեր՝ ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունք, պետությունների տարածքային ամբողջականության սկզբունք, ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքի խեղաթյուրման հնարքներ:

Ազգերի ինքնորոշում՝ եզրույթն առաջին անգամ հնչել է 1878 թ. Բեռլինյան կոնգրեսում՝ Ռուս-թուրքական պատերազմից հետո Եվրոպայում սահմանների վերաձևման և այդ գործընթացում ազգային գործոնի բարձրացման մի փուլում, երբ այն արդեն որդեգրվում էր տարբեր գաղափարական շարժումների կողմից: 1896 թ. գաղափարը «ազգերի ինքնորոշման իրավունք» ձևակերպմամբ հռչակվեց Երկրորդ ինտերնացիոնալի Լոնդոնյան կոնգրեսի կողմից՝ սկիզբ դնելով քաղաքական դաշտում նրա ամրագրմանը: Առաջին աշխարհամարտի տարիներին, երբ ակնհայտ էր աշխարհի նոր վերաբաժանման անխուսափելիությունը, այն հրատապ ձևով նորից հայտնվեց միջազգային օրակարգում: Այն, որ կայսրությունների փլուզման նախօրյակին հենց ԱՄՆ-ը ի դեմս իր նախագահ Վուդրո Վիլսոնի վերցրեց ժողովուրդների ինքնորոշման գաղափարը իրավական դաշտ բերելու նախաձեռնությունը, պատահական չէր: Այնտեղ դեռ թարմ էին անկախության համար պայքարի հանրային հիշողությունները: Վիլսոնը հետպատերազմյան նոր աշխարհի համակարգաստեղծ գաղափարներից մեկը համարում էր ազգերի ինքնորոշումը, որին իրավական կարգավիճակ տալուն էր միտված նաև նրա ջանքերով հիմնված Ազգերի լիգան¹, մի հանգրվան, որտեղ մարդկությունը գիտակցեց միջպետական ու ազգամիջյան հարցերում ուժի անսանձ կիրառության վտանգն իր համար: Պատմությունն ինքը հասունացրել էր ուժի իրավունքը իրավունքի ուժով փոխարինելու անհրաժեշտությունը: Արդեն ակնհայտ էր, որ քաղաքական, ռասայական, մշակութային և այլ հիմքերով ձևավորված գլոբալ բաժանարար գծերի մեջ ամենից պայթյունավտանգն անցնում է շահագործող ու շահագործվող ժողովուրդների և պետությունների միջև ընկած բաժանարար գծով, որի մի կողմում հզոր գաղութատեր կայսրություններն էին. իսկ մյուսում՝ տնտեսապես ու ռազմապես կախյալ պետություններն ու պետականություն չունեցող գաղութացված ժողովուրդները: Ազգերի լիգան, ցավոք, չկարողացավ կատարել իր վրա դրված առաքելությունը: Արդեն 1933-ին հիտլերյան Գեր-

¹ Բնչպես հայտնի է, անձամբ Վիլսոնին առաջարկվեց կայացնել նաև Հայաստանի անկախ հանրապետության սահմանների մասին իրավարար վճիռը:

մանիան Վերսալյան պայմանագիրը չեղարկելու մտադրությամբ լքեց Լիզան, որին այդպես էլ չհաջողվեց կանխել Երկրորդ համաշխարհային պատերազմը: 1945 թ. հոկտեմբերին նրան փոխարինելու եկավ ՄԱԿ-ը: Նոր կազմակերպության առջև կային Ազգերի լիգայի կողմից լուծում չստացած բազմաթիվ հարցեր, որոնց թվում և միջազգային անվտանգության տեսակետից ամենաբարդ հարցը՝ ազգերի/ ժողովուրդների ազատ ինքնորոշման և պետությունների տարածքային ամբողջականության հարցը: 1946 թ. դեկտեմբերի 11-ին ՄԱԿ-ին կից ստեղծված Վեցերորդ կոմիտեում և նրա կազմում ձևավորած Միջազգային իրավունքի հանձնաժողովում (ՄԻՀ) ժողովուրդների ինքնորոշման հարցի շուրջ ծավալված տեսական քննարկումների լարվածությամբ է բացատրվում, թե ինչու «Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը» վերտառությամբ թիվ 632 (VII) բանաձևն ընդունվեց ՄԱԿ-ի հիմնումից շուրջ յոթ տարի անց: Փաստաթղթում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան (հետայսու նաև ԳԱ) խորհուրդ է տալիս, որպեսզի «Կազմակերպության անդամ պետությունները պաշտպանեն բոլոր ժողովուրդների ու ազգերի ինքնորոշման իրավունքը»: Ինքնորոշման հիմնախնդրով ՄԱԿ-ի ընդունած փաստաթղթերն իրենց իրավական կարգավիճակով տարբեր են: Դրանց մեծ մասն ընդունված են որպես հռչակագրեր, իսկ ահա 1966 թ. դեկտեմբերի 16-ին ընդունված «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին»² և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին»³ միջազգային դաշնագրերն իրենց իրավական ուժով հավասարազոր են միջազգային պայմանագրերի և պարտադիր են կատարման համար նրան միացած բոլոր պետությունների համար (հայկական աղբյուրներում *պակտ* եզրույթը հաճախ թարգմանվում է *դաշնագիր*, որ չի փոխում այդ տերմինի իմաստը): Ի պատիվ ՄԻՀ-ի, որում սովորաբար ընդգրկվում են միջազգային իրավունքի ամենահեղինակավոր մասնագետները, պետք փաստել, որ այդ և հետագա տարիներին նրան հաջողվել է մշակել և Գլխավոր ասամբլեային ներկայացնել հիմնախնդրի վերաբերյալ բանաձևերի նախագծեր, որոնցում ինքնորոշման գաղափարի իրավական իմաստը տրված է տարբերությունները հնարավորինս բացառող ձևակերպումներով: Դրանցում նրանք չեն տվել նույն գաղափարի բովանդակայնորեն համարժեք շարադրանք: Բացառելու համար տարբեր մեկնաբանությունների չնչին հնարավորությունն անգամ՝ նրանք բառացիորեն նույն սահմանումներն ուղղակի տեղադրել են այդ երկու փաստաթղթերում: Ահա դրանք. «1. Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը: 2. Բոլոր ժողովուրդներն իրենց նպատակներին հասնելու համար կարող են ազատորեն տնօրինել իրենց բնական հարստությունները և ռեսուրսները՝ առանց խոչընդոտելու որևէ պարտավորություն, որը բխում է փոխշահավետության սկզբունքի վրա հիմնված միջազգային տնտեսական համագործակցությունից և միջազգային իրավունքից: Ոչ մի ժողովուրդ ոչ մի դեպքում չի կարող զրկվել գոյության՝ իրեն պատկանող միջոցներից: 3. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները, այդ թվում և նրանք, որոնք պատասխանատու են ինքնակառավարում չունեցող և խնամարկյալ տարածքների կառավարման համար, պետք է Միավորված ազգերի կազմակերպության Կանո-

² Միջազգային դաշնագիր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին
<http://www.irtek.am/views/act.aspx?aid=37347>

³ Միջազգային դաշնագիր քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=18500>

նադրության դրույթներին համապատասխան խրախուսեն ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգեն այդ իրավունքը»:

Նույնպիսի հստակությամբ 1970 թ. ընդունված «Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության համաձայն պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին» Հռչակագրում ՄԱԿ-ը բոլոր պետություններին պարտավորեցնում է պաշտպանել ժողովուրդների ինքնորոշման իրավունքը⁴:

Ինչ վերաբերվում է պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքին, ապա Հռչակագիրն այն դիտում է որպես միջպետական հարաբերությունների հարց: Այն ձևակերպված է հետևյալ կերպ՝ *Սկզբունք, որի համաձայն պետությունները իրենց միջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնում ուժի սպառնալիքից կամ նրա գործադրումից ինչպես պետությունների տարածքային ամբողջականության կամ ցանկացած պետության քաղաքական անկախության, այնպես էլ Միացյալ Ազգերի Կազմակերպության նպատակների հետ անհամատեղելի ինչ-որ այլ կերպ*: Սկզբունքի ձևակերպմանը հաջորդում են պետությունների պարտավորությունների մասին ամրագրումները, որոնք սկսվում են «Ամեն մի պետություն պարտավոր է...» բառերով: Ի դեպ, նույն բառերով են սկսվում «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի հոդվածները:

Որպես ամփոփում կարող ենք արձանագրել. ՄԱԿ-ի կողմից ընդունված հիշատակված բոլոր փաստաթղթերը ստորագրողները պետություններ են, և դրանցում բոլոր, այդ թվում և տարածքային ամբողջականությանը վերաբերվող, հոդվածները հասցեագրված են պետություններին, որոնք պարտավորվում են չխախտել միմյանց տարածքային ամբողջականությունը:

Ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավական նորմի խեղաթյուրման հնարքները

Ժողովուրդների ազատ ինքնորոշման մասին ՄԱԿ-ի Կանոնադրության և հետագայում ՄԱԿ-ի ընդունած փաստաթղթերում ամեն ինչ այնքան պարզ է ասված, որ եթե այդ դրույթներն ուղղակի հասկանանք այնպես, ինչպես դրանք գրված են, պետք է ընդունենք, որ ժողովուրդների ինքնորոշման գաղափարին տրված է ոչ թե միջազգային իրավունքի սովորական սկզբունքի, այլ այդ փաստաթղթերին միացած պետությունների համար համապարտադիր իրավական նորմի իմաստ: Բայց այդ փաստաթղթերը, այնուամենայնիվ, վիճարկում են քաղաքական գործիչներ, որոնք իրենց պետության համար ձեռնտու չեն համարում դրանցում ինքնորոշման գաղափարի իրավական իմաստի այն հստակությունը, որը նրան առավելագույնս մոտեցնում է իր «բնածին իմաստին»: «Ինչու՞ ձեռնտու չէ» հարցն ունի ակնհայտ պատասխան: Բազմազգ պետության ժողովուրդներից որևէ մեկի արտաքին ինքնորոշումը ենթադրում է, որ նա իրեն պատմականորեն պատկանող տարածքով դուրս է գալիս «մայր պետության», ենթակայությունից, ինչը սովորաբար հանդիպում է տիտղոսակիր ազգի դիմադրությանը: Այստեղից էլ՝ ինքնորոշման մասին Դաշնագրերի և թեմային առնչվող տեքստերում պատվերակատար փորձագետների կողմից սողանցքների որոնման փորձերը՝ փաստաթղթերին անորոշություն կամ այլ մեկնաբանություն վերագրելու համար: «Բարձր տերմինաբանությամբ» քողաածակված նրանց փաստարկների անհիմն ու մտացածին բնույթն իրապես դժվար չէ բացա-

⁴ <https://digitallibrary.un.org/record/202170?ln=ru>

Ստորին մենք այդ փաստաթղթին հատուկ կանոնադրական:

հայտել ու հերքել: Եվ դա իրականում բարեխղճորեն արվում է իրավունքի իդեալներին հավատարիմ տեսաբանների կողմից: Մակայն դա վերջ չի դնում բանավեճերին, որովհետև չեն վերանում շինծու փաստարկներով ինքնորշման գաղափարը խեղաթյուրելու և արժեզրկելու այն շարժառիթները, որոնցով առաջնորդվում են բազմազգ պետությունների տիտղոսակիր ազգերն ու կառավարությունները: Ի՞նչ փաստարկների և ի՞նչ հնարքների մասին է խոսքը:

Առաջին: Ամենից տարածված հնարքներից մեկը վերաբերվում է «ժողովուրդ» և «ազգ» հասկացությունների իմաստային իբր այնպիսի անորոշությանը, որ անհնարին է դարձնում ինքնորշման գաղափարի հստակ սահմանումը: Լայնորեն տարածված է Այվոր Ջենինգսի թեմավոր խոսքի ուժ ստացած՝ «ժողովուրդը չի կարող ինչ-որ բան որոշել, մինչև ինչ-որ մեկը չորոշի, թե ինչ է ժողովուրդը»⁵ արտահայտությունը: Ազատ ոճով ասված այս արտահայտությունն անորոշ է դարձնում նաև *ինքնորշման սուբյեկտ* հասկացությունը, որի տակ ՄԱԿ-ի փաստաթղթերում սովորաբար նկատի է առնվում հենց ժողովուրդը: Այվոր Ջենինգսին հետևողները դրա մեջ անհեթեթություն պիտի տեսնեն՝ ինչպե՞ս կարելի է ժողովրդին համարել ինքնորշման սուբյեկտ, երբ նրա ինչությունը հայտնի չէ⁶: Իրականում *ինքնորոշվող ժողովուրդ* և *ինքնորոշման սուբյեկտ* հասկացությունների շուրջ նման դատողությունները տեսական հնարախաղեր են, և դա ցույց է տալիս ինքնորոշման համար պայքարի պատմությունը: Եթե որևէ մի հանրություն (մարդկանց հավաքականություն) պայքարի է ելում ինքնորշման համար և հակադրվում է դրան ընդդիմացող որևէ ուժի (օրինակ, տիտղոսակիր ազգին, իշխանություններին), նա հենց այդ պայքարի փաստով դառնում է կոնֆլիկտի կողմ և ինքնորոշման սուբյեկտ, անկախ այն բանից, թե նա էթնիկապես միատարր է, թե՛ ոչ: Արդեն պատմություն ունեցող ավանդությով այն ստացել է *ժողովուրդ* անվանումը, իսկ եթե այդ հանրությունն էթնիկապես միատարր է, որպես հոմանիշ գուցահեռաբար օգտագործվում է նաև *ազգ* եզրույթը: Գիտական հանրույթը սովորաբար լռելյան համաձայնությամբ բավարարվում է օգտագործվող հասկացությունների պայմանականորեն հաստատված այնպիսի իմաստներով, որոնք դիտարկվող թեմայում չեն հարուցում հակասություններ⁷: Հենց այս վերջին տարբերակի հետ գործ ունենք *ժողովուրդի ինքնորոշում հասկացության* դեպքում, ինչն ակնհայտ դրսևորվում է նրա մասին ընդունված փաստաթղթերում և թեմայի քննարկումներում: Հասկացությունների իմաստների շուրջ անհարկի հնարախաղերի չտրվող մասնագետը որևէ հիմք չի տեսնում՝ անհասկանալի համարելու *ազգային ազատագրական պայքար/շարժում* հասկացությունը կամ ՄԱԿ-ի թիվ 632 (VII) բանաձևի «Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը» անվանումը: Ոչ ոք անհարկի վեճերի մեջ չի մտնում *Միացյալ ազգերի կազմակերպություն* անվան շուրջ՝ ապացուցելու համար, որ նա ոչ

⁵ Jennings I. *The approach of self-government*. Cmbrdge Univ. Press. 1956. P.56.

⁶ Հարցը լրացուցիչ կերպով խճճվում է, երբ այդ դատողություններին խառնում են եվրոպական ավանդությամբ ազգ հասկացության կայունացած երկիմաստության փաստը: Այն մի կոնտեքստում կարող նշանակել էթնիկական նույն ծագմամբ մարդկանց հանրություն, մեկ այլ կոնտեքստում՝ պետություն՝ ինչպես, օրինակ, Միացյալ ազգերի կազմակերպության անվան մեջ (իրականում այն պետությունների կազմակերպություն է, և հայերեն պատճենահանված թարգմանությունը անտեսել է անգլերեն *nation* հասկացության երկրորդ իմաստը):

⁷ Ի դեպ, 1933 թ. Մոնտեվիդեոյում ընդունված կոնվենցիայում Ազգերի լիզան անուղղակի ձևով անդրադարձել է հարցին՝ ընդունելով անկախ պետականությանը ներկայացվող ֆորմալ պահանջները: Դրանք են՝ մշտական բնակչությունը, որոշակի տարածքի առկայությունը, կառավարության գոյությունը և այլ երկրների հետ հարբերվելու նրա ունակությունը:

թե ազգերի, այլ պետությունների կազմակերպություն է: Բոլորին հայտնի է այն պայմանականությունը, որ դրված է այդ անվանման մեջ: Նույն կերպ խնդիրը կանխամտածված ձևով բարդացնելուն չհակված մասնագետը տարբերությունների որևէ հիմք չի տեսնի նաև վերն արդեն հիշատակված՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» և «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրերի առաջին կետում տրված ձևակերպման մեջ՝ «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը»:

Պետք է նկատել, որ *ազգ, ժողովուրդ, ինքնորոշման սուբյեկտ* հասկացությունների շուրջ տարվող ակնհայտորեն շահախնդիր տեսախոսությունները գործնական որևէ ազդեցություն չունեն ինքնորոշման համար ազատագրական շարժումների իրական ծագումնաբանության և սոցիալական շարժառիթների վրա: Երբ մարդկային հանրությունները/զանգվածները պայքարի են ելում հանուն ինքնորոշման և իրենց հիմնած պետության ճանաչման համար, նրանց չի հետաքրքրում, թե տեսաբաններն ինչ անվանում կտան իրենց (ժողովուրդ, ազգ, ապստամբներ կամ այլ մի անվանում) և սովորաբար անտեղյակ են լինում, որ նրանք (օրինակ՝ Այվոր Զենինգբը) չեն կարողանում սահմանել *ժողովուրդ* հասկացությունը:

Երկրորդ: Գրականության մեջ շրջանառվում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքն արժեզրկելու մեկ այլ փաստարկ, ըստ որի այն ոչ թե իրավական համապարտադիր նորմ, այլ սոսկ սկզբունք է, և պետություններն ազատ են առաջնորդվելու դրանով կամ անտեսելու այն՝ վերագրելով նրան սոսկ բարոյական իմաստ: Մենք հանգամանալից չենք անդրադառնա դրան, քանի որ 1966 թ. ՄԱԿ-ի ընդունած «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» և «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» վերը հիշատակված միջազգային դաշնագրերը դրանց միացած պետությունների համար պարտադիր կատարման պայմանագրերի ուժ ունեն: Այդ դաշնագրերի շնորհիվ ինքնորոշման գաղափարը վերաճել է իրավական նորմի: Եվ նկատել է պետք, որ դա պատահական չի եղել, քանի որ մինչև դաշնագրի ձևաչափով ինքնորոշման գաղափարի ձևակերպումն այն իր կարևորության փաստի բերումով հանրայնորեն գիտակցվել է որպես իրավունք՝ *ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունք* անվանումով:

Երրորդ: Ինքնորոշման իրավունքի արժեզրկման մեկ այլ հնարք է նրա գործադրումը սոցիալական, քաղաքական, մշակութային ու քաղաքակրթական կոնկրետ հանգամանքներով պայմանավորելը: Պատմական հարաբերականության այս մեթոդաբանության տեսակետից բուն իրավունքի՝ որպես սկզբունքի սահմանները նեղ են ինքնորոշման գաղափարի իմաստավորման համար, քանի որ ինքը՝ խնդրո առարկան, սոսկ իրավական հարց չէ: Ինքնորոշման հիմնախնդրի հարաբերապաշտական ըմբռնման կողմնակիցը պահանջում է այն չբացարձականացնել և խնդիրը միշտ դիտարկել պատմական կոնկրետության մեջ՝ կողմերի փաստերի ու փաստարկների հանգամանալից հաշվառումով: Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարաբերականացման և նրա համընդհանուր ու համապարտադիր բնույթն այս հնարքով կասկածի տակ դնելու ամենահայտնի օրինակն այն ապագադրությամբ գործընթացի հետ քարկապելն է: Ըստ էության ասվում է հետևյալը՝ համաշխարհային պատմությունն իր ընթացքով օրինաչափորեն հասունացրել է գաղութային համակարգի վերացման խնդիրը, որի գործական լուծումը ստացել է *ժողովուրդների*

ինքնորոշման գործընթաց անվանումը: Բուն գաղափարն առաջադրվել է կոնկրետ այդ խնդիրը լուծելու համար և նրա իմաստը պետք է բացահայտվի հենց այդ համատեքստում: Այն, ինչ իմաստ է ունեցել ապագադրության գործընթացում, կարող է գործադրելի չլինել այլ դեպքերում: Հատկանշական է, որ ինքնորոշման գաղափարի համընդհանրական իմաստը մերժող այս «հիմնավորումները» առաջադրվում են այն բանից հետո, երբ համաշխարհային իրավաբանական մտքի ընտրանին տարիներ տևած քննարկումների ու բանավեճերի արդյունքում եզրակացրել է, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ոչ թե ինքնորոշման գաղափարի պատահականորեն ընտրված բառաձև կամ այլաբանություն է, այլ հենց միջազգային իրավունքի հստակ ձևակերպված սկզբունք:

Չորրորդ: Ժողովուրդների ազատ ինքնորոշման միջազգային իրավական նորմի արժեզրկման մեկ այլ հնարք է դրա նկատմամբ պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքի գերակայության «հիմնավորումը»: Համոզիչ լինելու համար հիմքեր են փնտրվում ՄԱԿ-ի ընդունած փաստաթղթերում: Շահարկումների թիրախում հայտնվում են ձևակերպումներ, որոնցում հիշատակվում է նաև պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը: Այդ իմաստով հարմար է դիտվում հատկապես 1970 թ. ընդունված «Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին» Հռչակագիրը, որում ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման գաղափարների բացորոշմանը վերաբերվող հոդվածում խոսվում է նաև պետությունների տարածքային ամբողջականության մասին: Արձանագրելով, որ «Ամեն պետություն պարտավոր է ձեռնպահ մնալ ցանկացած բռնի գործողություններից, որոնք ժողովուրդներին զրկում են ինքնորոշման իրենց իրավունքից» և այնուհետև հաստատելով, որ այդ ժողովուրդներն ընդդեմ այդ բռնի գործողությունների իրենց ձեռնարկումներում... իրավունք ունեն ձեռք բերել և ստանալ աջակցություն Կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին համապատասխան», Հռչակագիրն այնուհետև ամրագրում է՝ «Վերը տրված կետերում ոչինչ չափսի մեկնաբանվի որպես ցանկացած գործողության թույլատրում կամ խրախուսում, որոնք կտանեն ա՛յն ինքնիշխան անկախ պետությունների մասնատմանը կամ տարածքային ամբողջականության ամբողջովին կամ մասնակի կամ քաղաքական միասնության խախտմանը, որոնք իրենց գործողություններում պահպանում են ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը, ունեն կառավարություններ, որոնք ներակայացնում են այդ տարածքում ապրող ժողովրդին՝ անկախ ռասայական տարբերությունից, հավատքից կամ մաշկի գույնից»⁸: Քաղաքական այն գործիչները, որոնք Հռչակագրի «...ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես ցանկացած գործողության թույլատրում կամ խրախուսում, որոնք կտանեն... անկախ պետությունների... տարածքային ամբողջականության... խախտմանը» արտահայտությունը մեկնաբանում են որպես պետության տարածքային փոփոխության բացարձակ արգելք, լուրջան են մատնում, որ այն հասցեգրված է փաստաթղթի տակ իրենց ստորագրությունը դրած պետություններին, որոնք կարող են օգտագործել ինքնորոշման խնդիրը՝ հակառակորդ պետությունների ներսում կոնֆլիկտներ բորբոքելու համար՝ դրանք մասնատելու նպատակով: Ընդգծենք՝ այն հասցեագրված է Հռչակագրին միացած պետություններին (որոնք պարտավոր են չխոչնդոտել ինքնորոշման իրավունքի

⁸ <https://digitallibrary.un.org/record/202170?ln=ru>

գործադրմանը), այլ ոչ թե իրենց անկախության համար պայքարող ժողովուրդներին: Ներքին, բնական մղումներով բազմազգ պետության որևէ ժողովուրդի կողմից ինքնորոշման իրականացման և պետության տարածքային ամբողջականության խախտման հետ Հռչակագիրը ոչ մի առնչություն չի տեսնում: Եթե դա այդպես լիներ, ապա ինքնորոշման իրավունքն ընդհանրապես կզրկվեր իմաստից և կդառնար ավելորդ մի բան: Բայց այն մեր օրերում էլ համառորեն ավելորդ չի դառնում նոր պետությունների ձևավորման չընդհատվող գործընթացում՝ հակառակ այն բազմազգ պետությունների իշխանությունների դիմադրության, որոնք իրենց երկրի ներսում արգելափակում են ինքնորոշման իրավունքի ճանապարհը:

Հռչակագիրն, այնուամենայնիվ, անուղակի վերապահում ունի ինքնորոշման իրավունքի հարցում: Նա չի խրախուսում սկզբունքի գործադրումն այն պետություններում, «որոնք իրենց գործողություններում պահպանում են ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը, ունեն կառավարություններ, որոնք ներակայացնում են այդ տարածքում ապրող ժողովուրդին՝ անկախ նրանց ռասայական տարբերությունից, հավատքից կամ մաշկի գույնից»: Ակնհայտ է, որ Հռչակագիրը պահպանում է ինքնորոշման իրավական նորմի համընդհանուր ու անվերապահ բնույթը բոլոր այն դեպքերի համար, երբ բազմազգ պետության որևէ ժողովուրդ գտնում է, որ այդ պետության սահմաններում ինքը չի ստանում իր զարգացման համար այն պայմանները, որ նա կարող է ունենալ անկախ պետականության դեպքում և գործունեություն է ծավալում դրա իրականացման համար («մայր պետության» դիմադրության դեպքում այն առանձին դեպքերում վերաճում է նաև զինված պայքարի): Հռչակագիրը հեղինակող ՄԻՀ-ի իրավագետները, պահպանելով ինքնորոշման իրավունքի համընդհանուր բնույթը, խորհրդատվական տոնով բազմազգ պետությունների ժողովուրդներին հորդորում են, որ եթե «մայր պետությունը» ապահովում է նրանց զարգացման բոլոր պայմանները, ապա այդ ժողովուրդների համար ներքին ինքնորոշման (դաշնային կամ համադաշնային) ձևերը կարող են ավելի նպաստավոր լինել նրանց զարգացման համար, քան անջատումը «մայր պետությունից»: Այս պայմանական-խորհրդատվական վերապահումը տիտղոսակիր ազգերի ազդեցիկ հեգեմոնության ձգտող քաղաքական գործիչները սովորաբար փոխակերպում են այլ մի պնդման, թե իբրև Հռչակագիրը «մայր պետությանը» հիմքեր է տրամադրում ցանկացած դեպքում արգելափակելու ինքնորոշման իրավունքը, եթե այն անհամատեղելի է նրա շահերի հետ: Հասկանալով, որ նման հարցադրումը խոցելի է, նրանք իրենց փաստարկները տեղափոխում են «համամարդկային շահերի դաշտ», «հիմնավորելով», թե իբրև անջատողական գործընթացով նոր պետությունների ձևավորումը գլոբալ քառսի վտանգ է պարունակում: Որևէ տեսական հիմնավորում այս տեսակետը հնչեցնող քաղաքական գործիչները չեն բերում⁹: Նման պնդումը ենթադրում է անդրադարձ պատմական փորձին՝ պարզելու համար, թե, օրինակ, եվրոպական գաճաճ պետությունները միջազգային անվտանգային համակարգում նոր լարվածության օջախներ են ստեղծել, թե՞, հակառակը, կանխել են հնարավոր կոնֆլիկտները: Կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, թե ինչպես

⁹Այդ «փաստարկը» 2022 թ. Սանկտ-Պետերբուրգում տեղի ունեցած Միջազգային տնտեսական ֆորումում բարձրաձայնել է Ղազախստանի նախագահ Ղասթում-ժոմարտ Տոկանը: «Ընդհանրապես հաշված է, որ եթե ազգերի ինքնորոշման իրավունքն իրականության մեջ իրագործվի ողջ Երկիր մոլորակի վրա, ապա 193 պետության փոխարեն, որոնք այժմ Միացյալ ազգերի կազմակերպության կազմում են, աշխարհում կառաջանան ավելի քան 500 կամ 600 պետություն: Իհարկե, դա կլինի քաոս»:
<http://kremlin.ru/events/president/news/68669>

ինքնորոշման ձևով ազգային հարցի արդարացի լուծումները մարել են կոնֆլիկտածին այն շարժառիթները, որոնք այլ դեպքերում կտանեին դեպի ազգամիջյան բախումներ:

Ակնհայտ է՝ ինքնորոշման հարցի շուրջ կոնֆլիկտները ծագում են բոլոր այն դեպքերում, երբ տիտղոսակիր ազգը ներկայացնող իշխանությունները խոչընդոտում են բազմազգ պետության ժողովուրդներից որևէ մեկի ինքնորոշման ձգտմանը: Նման կոնֆլիկտը մի կողմից տիտղոսակիր ազգի որդեգրված տիրապետության ու գաղութակալության և մյուս կողմից՝ անկախության համար պայքարող ժողովրդի որդեգրված ազգային իրավահավասարության ու արդարության գաղափարների կոնֆլիկտն է՝ մարմնավորված այդ ժողովուրդների վարքում: Այստեղից հետևում է, որ էթնոքաղաքական կոնֆլիկտների լինել-չլինելու խնդիրը պետականակիր էթնոսի/ազգի քաղաքականությունից է կախված: Նա պիտի ապահովի ազգային փոքրամասնությունների ու անդրենածին ժողովուրդների համար գոյության ու զարգացման այնպիսի պայմաններ, որ պետության մյուս ժողովուրդների քաղաքական օրակարգում չդրվի արտաքին ինքնորոշման խնդիրը: Բայց եթե բազմազգ պետության ժողովուրդներից որևէ մեկը գտնում է, որ իր զարգացման երաշխիքն անկախ պետականությունն է, ապա ինքնորոշման միջազգային իրավունքն իր իմպերատիվ ուժով գործում է նրա օգտին:

Հինգերորդ: Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի համապարտադիր բնույթը հաճախ կասկածի տակ է դրվում նաև մեկ այլ փաստարկով: Խոսքը միջազգային իրավունքի դիտարկվող երկու սկզբունքների միջև այն «անհաղթահարելի հակասության» մասին է, որ շահախնդիր քաղաքագետները «հայտնաբերել են» պատվիրատու պետական գործիչների համար: «Անհաղթահարելի հակասության» փաստարկին առանձնահատուկ տեղ է տրվում, քանի որ այն, ինչպես իրենք են կարծում, անհերքելի տրամաբանության անունից է ասվում: Մեր օրերում այն թերևս ամենատարածվածն է: Գլխավոր գաղափարը մնում է նույնը՝ բազմազգ պետության որևէ ժողովրդի կողմից արտաքին ինքնորոշման ակտով անկախ պետության հիմնումը (իր պատմական տարածքներով անջատումը «մայր պետությունից») իբր հակասում է պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքին, քանի որ ենթադրում է պետության տարածքի մասնատում: Մենք արդեն նշել ենք, որ ՄԱԿ-ի փաստաթղթում ամրագրված պետությունների տարածքային ամբողջականության խախտումից գերծ մնալու պահանջներն ու հանձնարարականները հասցեագրված են դրանց տակ իրենց ստորագրությունը դրած ՄԱԿ-ի անդամ պետություններին, այլ ոչ թե ինքնորոշման իրենց իրավունքն իրացնող ժողովուրդներին: Եվ դա չի նշանակում, թե պետության տարածքը չի կարող փոխվել նրանում ապրող ժողովուրդների արտաքին ինքնորոշման արդյունքում, որը, ինչպես արդեն նշվեց, տարածքային ամբողջականության սկզբունքի խախտում չի կարող դիտվել:

Ի հավելումն արդեն ասվածի՝ նկատենք, որ «Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն՝ պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին» Հռչակագիրը (1970 թ.), որին սովորաբար դիմում են «անհաղթահարելի հակասության» կողմնակիցները, ներքին տրամաբանության իմաստով բացառիկ փաստաթուղթ է: Նրանում նախ համակարգվում են այն սկզբունքները, որոնցով հանուն միջազգային անվտանգության ու խաղաղության պետք է

ղեկավարվեն դրան միացած պետությունները¹⁰: Հռչակագիրը բացորոշում է *ինքնորոշման իրավունք* հասկացությունը նրա իրագործման ձևերի տեսակետից և արձանագրում, որ «Բնքնիշխան և անկախ պետության ստեղծումը, անկախ պետությանը միանալը կամ նրա հետ միավորվելը, կամ ժողովրդի կողմից ազատորեն սահմանված ցանկացած այլ քաղաքական կարգի հաստատումը տվյալ ժողովրդի կողմից ինքնորոշման իրավունքի իրականացման ձևեր են»: Թեմայի ծավալման մեջ ժողովուրդների ազատ ինքնորոշման ընդհանրական բնույթը բանաձևող դրույթն այն մասին, որ «Յուրաքանչյուր պետություն պարտավոր է համատեղ և անհատական գործողությունների միջոցով նպաստել ժողովուրդների հավասար իրավունքների և ինքնորոշման սկզբունքի իրագործմանը՝ համաձայն Կանոնադրության դրույթների ...», հանում է բոլոր այն հիմքերը, որ կարող են օգտագործվել տարածքային ամբողջականության և ժողովուրդների ինքնորոշման գաղափարներն ու սկզբունքները միմյանց հակադրելու համար: Հանում է նաև այն բացասական իմաստային երանգը, որ սովորաբար վերագրվում է անջատողականությանը:

Հռչակագրի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի թեմային անդադառնող ՄԱԿ-ի փաստաթղթերում տրամաբանական որևէ հակասություն չի հայտնաբերվում: Դրանք ի խախտումն տրամաբանության օրենքների վերագրվում են այդ փաստաթղթերին: Վերադառնալով ամենաթարմ օրինակին: 2020 թ. Սանկտ-Պետերբուրգում Միջազգային տնտեսական ֆորումում Ղազախստանի նախագահ Տոկանի բերած «փաստարկին». «ՄԱԿ-ի Կանոնադրության հիմքում դրված երկու սկզբունքները... ներկա ժամանակում ելել են փոխադարձ հակասության միմյանց հետ. Դրանք պետությունների տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման սկզբունքներն են: Միացյալ ազգերի կազմակերպության հիմնադիր-հայրերը այդ հանգամանքը, ըստ երևույթին, իրենց ժամանակին հաշվի չեն առել»¹¹: Ղազախ-ժորմատ Տոկանը որևէ ձևով ՄԱԿ-ի փաստաթղթերի տեքստերի վրա չի հիմնավորում այդ դրույթը: Ողդակի հայտարարում է, և վերջ: Միակ «հիմնավորումը» պետությունների թվաքանակի աճին ուղեկցող վտանգի մասին ոչնչով չհիմնավորված մտահոգությունն է:

Մենք դիտարկեցինք ժողովուրդների ինքնորոշման միջազգային իրավական նորմի արժեզրկման հիմնական հնարքներն ու փորձերը: Դրանցից ոչ մեկը չի դիմանում քննադատության: Փաստարկները, որոնք բերվում են ապացուցելու համար միջազգային իրավական այդ նորմի և տարածքային ամբողջականության սկզբունքի միջև հակասությունը, ոչ միայն թույլ են, այլև ակնհայտորեն անհիմն:

¹⁰ Դրանք են՝ պետությունների կողմից այլ պետության տարածքային ամբողջականության դեմ ուժ կամ ուժի սպառնալիք չգործադրելու, վիճելի հարցերը խաղաղ միջոցներով կարգավորելու, միմյանց ներքին գործերին չմիջամտելու, ՄԱԿ-ի Կանոնադրության հիման վրա միմյանց հետ համագործակցելու, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման պետությունների ինքնիշխան հավասարության, ՄԱԿ-ի Կանոնադրության համաձայն պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների պարտաճանաչ կատարելու մասին սկզբունքները:

¹¹ <http://kremlin.ru/events/president/news/68669>

ИСКАЖЕНИЯ ПРИЦИПА МЕЖДУНАРОДНОГО ПРАВА О СВОБОДНОМ САМООПРЕДЕЛЕНИИ НАРОДОВ - АЛЕКСАНДР МАНАСЯН – В статье на основе контент-анализа раскрывается смысл, который отцами-учредителями ООН был вложен в принцип международного права о свободном самоотрделении народов. Обосновывается императивный характер этого важнейшего принципа права. Анализом относящихся к теме принятых ООН документов показывается отсутствие какого-либо противоречия между принципом о свободном самоопределении народов и принципом территориальной целостности государств.

Ключевые слова: принцип международного права о свободном самоопределении народов, принцип международного права о территориальной целостности государств, приемы искажения принципа самоопределения народов.

DISTORTIONS OF THE PRINCIPLE OF INTERNATIONAL LAW ON THE FREE SELF-DETERMINATION OF PEOPLES - ALEXANDER MANASYAN – Based on content analysis, the article reveals the meaning that the founding fathers of the UN put into the principle of international law on the free self-determination of peoples. The imperative nature of this most important principle of law is substantiated. An analysis of documents related to the topic adopted by the UN shows the absence of any contradiction between the principle of free self-determination of peoples and the principle of the territorial integrity of states.

Keywords: principle of international law on the free self-determination of peoples, principle of international law on the territorial integrity of states, methods of distorting the principle of self-determination of peoples.

ՍՈՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԽԱՆՏՄԱՆ ԵՎ ՊԱՏԺԻ
ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ
«ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ» ՊՈԵՄՈՒՄ
(ԲԱՆ Ա- ԲԱՆ ԺԹ)

Հոդվածում ներկայացվում է Գրիգոր Նարեկացու ապրած ժամանակաշրջանը, վերլուծության է ենթարկվում նրա «Մատյան Ողբերգության» ստեղծագործությունը՝ որպես հայ միջնադարյան գրականության մտքի մեծագույն արձագանք: Պոեմում մարդասիրության, իրավախախտման և պատժի համաչափության գաղափարների արտացոլումը, Աստված՝ որպես վերին դատավոր, և հողեղեն մարդը՝ իր բնական ու հիմնարար իրավունքներով, մեղքերով ու պատասխանատվությամբ ուսումնասիրության նյութ են հեղինակի համար:

Բանալի բառեր: Աստծո պատվիրան, աղոթք, մարդասիրություն, մեղք, պատասխանատվություն, իրավունք, միջնադար, արդարություն:

.... Ապրեցէ՛ք որպէս ազատներ և ազատութիւնը իբրև չարիքի պատրուակ մի՛ բռնէք, այլ ապրեցէ՛ք որպէս Աստծու ծառաներ: Յարգեցէ՛ք բոլորին, սիրեցէ՛ք եղբայրութիւնը, վախեցէ՛ք Աստծուց, պատուեցէ՛ք թագաւորներին:

Պետրոս 2:13-17

Գրիգոր Նարեկացին իրավացիորեն համարվում է հայ գրականության վերածնության հիմնադիր, հայ վերածնության փիլիսոփայական գագաթը: Այս ճշմարտությունը վաղուց ի վեր ամրագրված է մեր գրականագիտական մտքի պատմության մեջ: Բավականին ընդրկուն են ոչ միայն հայկական, այլ նաև համաշխարհային չափանիշներով, գիտական անդրադարձումները նրա քերթողական արվեստին: Նրա մասին գրել են ձեռագիր և տպագիր, հայալեզու և օտարալեզու մտածողները: Եվ ահա 1173 թվականին Նարեկացուն առաջին անգամ հիշատակող ձեռագրերից մինչև 1512 թվականի առաջին տպագիր գիրքը, մինչև մեր օրերը հսկայական աղբյուրներ կան, որոնցում արժեքավորում է մեծ գրողի վաստակը: Այս ուսումնասիրության հիմքում են ընկած նրանց գիտական դիտարկումները՝ ճշմարիտ հետևությունների ու եզրակացությունների հանգելու համար, մանավանդ, հերքելով նաև այն թյուր կարծիքները, որոնցում Նարեկացուն երբեմն մոտենում են միակողմանիորեն: Խոսքը խորհրդային շրջանում կատարված որոշ մեկնաբանությունների մասին է: Նարեկացուն մեկ ներկայացնում էին զուտ կրոնական տեսանկյունից, մեկ՝ միանգամայն աշխարհիկ գաղափարներով: Մինչդեռ Նարեկացին այնքան հզոր ու տիեզերական անհատականություն է, որ նման մոտեցումները ճշմարտության հետ չեն խոսում: Նա իր մեջ միավորում է հոգևորն ու աշխարհիկը, այն, ինչ մարդկային է ու վեհ:

Իսկ 2015 թվականի փետրվարին Հռոմի Ֆրանցիսկոս պապը հայ միջնադարյան հոգևորական, աստվածաբան, բանաստեղծ և փիլիսոփա Գրիգոր Նարեկացուն դասել է Կաթոլիկ Եկեղեցու ուսուցիչների շարքում՝ նրան շնորհելով «Տիեզերական եկեղեցու վարդապետ» տիտղոսը: Նույն թվականին՝ նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ

տարելիցին, Երևանում Տիգրան Մեծ հրատարակչության կողմից տպագրվեցին մատենագետ Աստղիկ Ղափլանյանի «Գրիգոր Նարեկացի. Մատենագիտություն» և «Վերամարդկայինը՝ Գրիգոր Նարեկացի» գրքերը: Հեղինակի խոսքով՝ «Աշխատանքի շարժառիթն է դարձել այն անվերապահ, ակնածոտ սերը, որ տածում ենք Ս. Գրիգոր Նարեկացու անուան ու ժառանգության նկատմամբ»¹:

«Գրիգոր Նարեկացի. Մատենագիտություն»-ը ծավալուն աշխատանք է, որի մեջ դիտարկվել են Սուրբ Գրիգոր Նարեկացու և «Մատյան ողբերգության» մասին ամբողջ աշխարհում լույս տեսած հայերեն ու օտարալեզու հրատարակությունները, հոդվածները, վերլուծությունները:

Գրիգոր Նարեկացին ապրել և ստեղծագործել է Միջնադարյան Հայաստանում /428-1375/, երբ, ի դեպ, գործում էին դատական տարբեր ատյաններ, որոնց որոշումներում կարևոր էին օրինականությունն ու հիմնավորվածությունը: Հետագայում դրանք դարձան այժմյա դատական ատյանների նախատիպերը: Այդ ժամանակաշրջանում բնական օրենքի դոկտրինան ավելի շուտ վերաբերում էր մարդու պարտավորություններին, քան իրավունքներին:

Բայց մեր գլխավոր ասելիքին հասնելուց առաջ նշենք: Միջնադարյան Հայաստանում հասարակական կարգ ու կանոնի, մարդկային հարաբերությունների կարգավորման որակապես նոր աստիճան հանդիսացող պետականության խորհրդանիշը թագավորն էր, հաջորդաբար գահ բարձրացած հետևյալ երեք թագավորները՝ հոգևոր, մշակութային, տնտեսական զարգացմանն ուղղված գործունեություններ ձեռնարկելով:

Աշոտ Գ Ողորմած. նրա օրոք Հայաստանն ապրում էր տնտեսական և մշակութային վերելք, Խոսրովանույշ թագուհին, 966թ.-ին հիմնեց Սանահինի, իսկ 976-ին՝ Հաղպատի վանքերը, որոնք գիտակրթական կենտրոններ դարձան: Բացվեցին դպրոցներ, հիվանդանոցներ, անկելանոցներ, նրանց պահպանման համար հատկացվեցին որոշ եկամուտներ. դա բացառիկ երևույթ էր այդ ժամանակի համար: Մեր ժամանակներում մարդու բնական իրավունքների ու ազատությունների խմբին պատկանող աշխատանքային իրավունքն է, որը իրավունք է ընձեռում յուրաքանչյուրին իր ֆիզիկական գոյությունը, հոգևոր ու նյութական պահանջմունքները բավարարելու նպատակով սեփական աշխատանքով միջոցներ վաստակել:

Սմբատ Բ Տիեզերակալ. նա մեծ ուշադրություն դարձրեց արտաքին քաղաքականությանը՝ ձգտելով հարևան արաբական ամիրայությունների և Բյուզանդական կայսրության հետ վեճերը լուծել դիվանագիտական ճանապարհով: Կաթողիկոսարանը Արգինայից տեղափոխեց Անի և հիմնեց նոր Կաթողիկեն:

Գագիկ Ա. նա՝ հենվելով երկրի տնտեսական և ռազմաքաղաքական հզորության վրա, հաջողությամբ շարունակեց պայքարը Բագրատունյաց Հայաստանը միասնական թագավորության մեջ միավորելու համար: Կազմակերպեց արքունի մշտական զորք: Զարգացան տնտեսությունը, մշակույթը, արհեստագործությունը, ներքին և արտաքին առևտուրը:

Այսպիսի հզոր ու զարգացող հասարակական միջավայրում, այնուամենայնիվ, Գրիգոր Նարեկացին նախընտրեց մեկուսանալ աշխարհիկ կյանքից և միայնակ խորհել: Մինչև կյանքի վերջին տարին ստեղծած «Մատյան ողբերգության» երկի մեջ նա աղոթքի և մաքրագործման պես անդրադարձել է բոլոր ժամանակներում կատարվող և հնարավոր մեղքերին և ներումներին:

¹ Գրիգոր Նարեկացի, Մատենագիտություն, աշխատասիրութեամբ Աստղիկ Ղափլանյանի, Ե., 2015, էջ 5:

Մարդու իրավունքների պաշտպանության հիմնական կոնցեպցիաները զարգացել են 18-19-րդ դարերում՝ մասնավորապես կապված բացառապես դատավճռի հիման վրա անձին մեղավոր ճանաչելու, իրավախախտման և պատժի համաչափության սկզբունքի, պատշաճ իրավական ընթացակարգերի նախատեսման, անմեղության կանխավարկածի, խոսքի, կրոնի ազատության, ազատ տեղաշարժման իրավունքի արձանագրման և կիրարկման հետ: Դրանք թեև շարադրվել են դեռևս Ազատությունների մեծ խարտիայում (Magna Carta, 1215 թ.), իրենց հետագա զարգացումն են ստացել Հաբեաս Կորպուս Ակտում (Habeas Corpus Amendment Act 1679 թ.), Իրավունքների մասին բիլլում (The Bill of Rights, 1689 թ.), ԱՄՆ Անկախության հռչակագրում (The Declaration of Independence United States Code, 1776 թ.), Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում (Ֆրանսիա, 1789 թ.) և այլ իրավական փաստաթղթերում: Մինչդեռ Նարեկացին մարդու իրավունքների խնդրին անդրադարձել է դեռևս տասներորդ դարում: Այս իրավական հիմնարար իրավունքների և սկզբունքների աստվածային մեկնությունների կիրառությունն ենք տեսնում նաև թե՛ «Մատյան ողբերգության» պոեմում, թե «Գանձեր» ու «Տաղեր», «Աղոթքներ» գործերում:

Շուրջ տասը դար է, ինչ հայ միտքը սրբազան երկյուղածությամբ է խոսում Նարեկացու «Մատյանի» մասին, որն, անտարակույս, մնում է Նարեկացու և հայ բանաստեղծության բարձունքը²:

Այն հայ միջնադարյան գրականության մտքի ամենամեծ արգասիքն է, որը պատկանում է մարդկության ստեղծած գեղարվեստական մեծագույն արժեքների թվին: Պոեմն ամփոփում է այն լավագույնը, ինչ ստեղծել է հայ քերթողական միտքը հնագույն ժամանակներից մինչև 10-րդ դարը: Ինչու չէ՝ նաև մեր ժամանակները: Չնայած ժանրային առումով այն քնարական-հոգևոր է, սակայն մենք այն ընդունում ենք որպես աշխարհը տեսնելու և զգալու մանրադիտակ: Հայտնի չէ, թե քանի տարի է գրվել՝ պոեմը, սակայն ավարտվել է Նարեկացու մահվանից մեկ տարի առաջ՝ 1002 թվականին:

Նարեկ աղոթագիրքը ապաշխարություն է, որտեղ հստակ երևում է անկեղծության, խոստովանության համարձակության, անձի խոնարհեցման կարևորությունը՝ որպես Աստծո և մարդու միջև ամենակարճ ճանապարհ: Այն ճշմարտությունը, որը մեզ քարոզում է Աստվածաշունչը, որին ինքնամաքման միջոցով ուզում է հասնել Նարեկացին, դա միայնակ իրավունքների և ազատությունների գիտակցումն ու պահպանումն է, դա ազատություն է, որտեղ մարդը կարող է լիարժեք երջանիկ լինել:

Նարեկացին խորը երկյուղածությամբ, սակայն համարձակ ազնվությամբ է աղոթում, ներկայացնում մեծն դատավորին՝ Աստծուն, ով գործերով գրավվող և բանաստեղծությամբ չկաշառվող է.³

«... արդարակշիռ ձեռք, Անաչառ աչք... /ԲԱՆ Գ/»

«Հրեշտակներն անողորմ են, և դատավորն՝ անկաշառ»

Ատյանն հզոր է, և բեմն անաչառ /Բան Ը/»

«Ինչպե՞ս պիտի ներկայանամ ճշմարիտ դատավորին / ԲԱՆ Է/»

«...Ով արդարադատ» /ԲԱՆ Ե/

Ինչու գործերով գրավվող, քանզի նա սպասում է մեզինից ոչ թե խոսք /բանաստեղծություն/, այլ գործ՝ առաքինի և օրինական:

² Եղիազարյան Վ., Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2021-640 էջ, էջ 389

³ Նարեկացի, Նարեկ, Մ. Էջմիածին-2015-688 էջ, ԲԱՆ Բ, Ա

Այս դատավորի առջև Նարեկացին կանգնել է կորուսյալ⁴, հանցապարտ⁵, կորստյան որդի⁶, անօրենության մեջ ընդերկար մոլորյալ⁷, անքավելի մահացու մեղքերով հանցավոր⁸ անձի կերպարով և լի անչափելի մեղքերով.

*«Քանզի եթե ես ծովի ջրերը մելանի փոխեմ
Եվ բազմասպարեզ ընդարձակությամբ
Դաշտերը թղթի նման տարածեմ,
Կտրեմ եղեգնի անտառները և գրիչներ շինեմ՝
Մի մասն իսկ բազում անօրինական իմ արարքների
Դարձյալ չեմ կարող ես գրի առնել:
Եվ Լիբանանի մայրիներն եթե իրար գողելով
Շինելու լինեմ կշեռքի լծակ,
Ու նժարներից մեկի մեջ դնեմ լեռն
Արարատյան
Դարձյալ չի կարող հավասարվել նա իմ
Մեղքերի հետ:»⁹*

Նարեկացու ստեղծագործական երևակայության անսահման թռիչքը, իրարամերժ խոհերի ու զգացմունքների նրբերանգներով հյուսված «Մատյան ողբերգության» պոեմի հավերժ մնայուն արժեքը, բովանդակության խորությունն ու մեծությունը պայմանավորված են նրա պոետիկական արվեստի անսահման հարստությամբ:

Նարեկացու բանաստեղծական արտահայտչական միջոցներն ու ձևերն անսպառ են, բազմազան ու գունագեղ, իսկ բառարանը՝ հայ գրականության մեջ ամենահարուստը: Մատյանում մենք տեսնում ենք Նարեկացու անձի խոնարհումն Աստծո առջև: Աստծո խոսքն ասում է. «Ով բարձրացնում է իր անձը, կխոնարհվի, և ով խոնարհեցնում իր անձը, կբարձրացվի» (Մատթ. 23:12): Հիրավի խոնարհ Նարեկացուն Աստված է բարձրացնում: «Միանգամայն ինքնուրույն բանաստեղծ է, իսկ նրա մտահղացումը, ներքին իդեան բոլորովին նոր ու միակն է աշխարհի գրականության մեջ»:¹⁰ Նա մնաց անգերազանցելի:

Նարեկացին՝ խոսելով վերոնշյալ երկու կողմերի՝ դատավորի և հանցավորի մասին, նշում է՝ իրավունքի մեջ է ուժեղ դատավորը, իսկ հանցավորը անիրավությամբ՝ հավետ պարտական.

*«Մեղանշած հոգուս ապերախտությունն
Համեմատելով երախտիքիդ հետ,
Պիտի ցույց տամ, թե գորեղ ես դու միշտ
Իրավունքիդ մեջ,
Եվ հանիրավի գործերովըս ես՝ հավետ
Պարտական:»¹¹:*

«Արդար ես դու իրավունքիդ մեջ և հաղթող՝

⁴ ԲԱՆ Ը

⁵ ԲԱՆ Է, Բ

⁶ ԲԱՆ ԺԹ, Դ

⁷ ԲԱՆ ԺԵ, Գ

⁸ ԲԱՆ ԺԱ

⁹ ԲԱՆ Թ, Ա

¹⁰ Մայիսայանց Ստ., Մատենագիտական դիտողություններ, Երևան, 1966, էջ 229:

¹¹ ԲԱՆ Ե, Ա

Քո դատաստանում.» /ԲԱՆ ԺԹ, Ա/

*«Ով դու անարժան անձն իմ մեղավոր,
Չարագործ, պոռնիկ*

Բազմաբիծ և ամբողջապես անմաքրության անդաստան»։ Բան Ը.

«Հեռացել ես արդարությունից և պարկեշտության կարգ ու կանոնից.» Բան Ը

Մենք տեսնում ենք, որ Նարեկացին նաև կիսվում է մեզ հետ՝ ինչո՞ւ է Աստծուն ընտրել դատավոր.

«Քանզի, արդարև, երբ Աստված ինքն է մեզ արդարացնում,

Ոչ ոք չի կարող մեզ դատապարտել,» /ԲԱՆ ԺԱ/

«Դու ես սկիզբն ու վերջը:

Մրտմտության խավարը երբեք չի ստվերում

Լույսը քո ողորմության,

Քանզի լինելով ինքդ մտքից վեր՝ զերծ ես դու

Նաև որևէ ախտից:»¹²

Իրավացիորեն են նկատել **Միսաք Մեծաբեկը**՝ նշելով, որ Նարեկացին **«գիտեր ծովաձայն հնչեցնել բառերը», Վիլյամ Սարգսյանը**՝ «Օր մը ամբողջ աշխարհ քիչ-շատ պիտի Նարեկին ճանչնայ»: «Մատյան ողբերգության» պոեմի գեղարվեստական անընդգրկելի մեծությունն ու բացառիկությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր ընթերցող այնտեղ կգտնի իր խառնվածքին, մտածումներին, նախասիրություններին ու զգացմունքներին համահունչ ինչ-որ բան: Այս ամենին նպաստում է հեղինակի բացառիկ դերը, որ իրեն է վերագրում մարդկային հասարակության մեջ կատարված և հնարավոր բոլոր մեղքերը: «Մատյան Ողբերգության» պոեմը, ամբողջական կամ մասնակի, թարգմանվել է աշխարհի շուրջ **30** լեզուներով:

Մատյանում, որին հեղինակը տվեց այս բնութագրումը՝ **«սկսելով ողբերգությունն այս աղերսանքների, Ես հավատքի շենքը պիտի կառուցեմ»**, կարևոր փաստերի մասին է խոսում, որոնք կազմում են մարդու բնական իրավունքների և ազատությունների առանցքը, հիմքում դնելով մարդասիրությունը, քանզի այն ամենից առաջ նշանակում է արդարացիություն.

«Մարդասիրաբար ներիր ինձ, ներող» /ԲԱՆ Բ, Բ/

«Մարդասիրաբար անարժան անձիս հայր անվանակնքեցիր /Բան Ե, Բ/»

Խոսելով հոգևոր առաքինությունների և գորությունների մասին, Աստծո՝ որպես միակը, ով կարող է հոգով մեռածին կյանք պարգևել և անոխակալ կերպով ձեռք կարկառել օգնելու իրեն՝ դատապարտվածին,¹³ վեհացրել է մարդկային ու աստվածային բոլոր միջոցներով, օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքի աստվածային մեկնություններով.

«Բոլորին տիրող հավասարապես... /Բան Գ, ա/»

«Ստրկամեծար թագավոր, աղքատասեր պաշտպան, մշտահարուստ տվող /Բան Գ, ա/»:

Փորձելով ողջ ծավալով ներկայացնել յուր անձնին վերագրյալ մարդկային մեղավորությունը, Նարեկացին նաև խորապես դատապարտում է կանանց նկատմամբ բռնությունը.

¹² ԲԱՆ ԺԶ, Ա

¹³ ԲԱՆ Ե, Գ

Անպարկեշտության մեջ սպիտակած մազերն եմ Եփրեմի¹⁴ : / Բան Բ/

Աստծո խոսքը, պատգամը կարևորելու և նրա բարձր արժեքը նկարագրելու նպատակով երբեմն դրանք ներկայացվում են որպես հրաման՝ «Հրամանն ահարկու է...» /ԲԱՆ Ը, Ա/:

Պատասխանատվության ենթարկելու նպատակն է իրավախախտում կատարած անձին դաստիարակել օրենքները հարգելու ոգով, կանխել ինչպես իր իսկ՝ իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը: Նշված նպատակներին հասնելու լուրջ երաշխիքը պատասխանատվության չափը սահմանելիս և նշանակելիս արդարության և համաչափության սկզբունքների պահպանում է: Իրավախախտման և պատասխանատվության չափի համաչափության սկզբունքը մեկնաբանվել է նաև Մատյանում.

«Եվ քանզի մեղքերս նման են իրար,
Ուրեմն և նրանց հատուցումներն էլ պետք է
որ նման լինեն իրարու...» /ԲԱՆ ԺԹ, Գ/

Միննույն ժամանակ սարսափելով այդ հավասար պատժից, Նարեկացին ներում է աղերսում.

«Մեղքերով ապրած օրերիս չափով
Տանջանքի տուգանք վճարել մի՛ տա ինձ՝ չարագործիս:» /ԲԱՆ Բ, Բ/

Ստի ու մեղքի դեմ պայքարը բոլոր հասարակություններում արդիական է: Դեռևս 5-րդ դարում Եղիշեն նշել էր՝ «Անիրավությունից արդարություն չի ծնվում, ստությունից ճշմարտություն»:

Պոեմում մարդկային սուտը, խորամանկելու կարողությունը, մեղքի գիտակցումից փրկվելու բոլոր ուղիները նշելով, Նարեկացին փաստում է նաև մարդու անգործությունն Աստծո արդարության դեմ, որի աչքից ոչինչ ծածուկ չի մնում.

«Քանզի ծածկվածները բաց են քեզ համար և աներևույթներն՝ հրապարակված:» /Բան Դ/:

Անգամ իրեն՝ ամենամեղավորին, անաչառ ու անխուսափելի դատաստան ուղարկելուց առաջ գրություն է խնդրում տիրոջից.

«Քո կամքով, օրհնյալ, թող որ նա ե՛ս համարվեմ փրկված:» /ԲԱՆ Գ, Ա/
«Պարզևիր վերին կյանք՝ անապական մեղքով մեռածիս,
Եվ փրկություն՝ պարտքերի տակ կործանվածիս:» /ԲԱՆ Բ/:

Այսպիսով, թե աշխարհիկ, թե հոգևոր իրավունքների և ազատությունների առաջին ու միակ նպատակը մարդու կյանքն ու երջանկությունն են, բնական և անօտարելի իրավունքների և ազատությունների պահպանումը, որոնց կարող են հասնել միայն արդար և օրինական միջոցներով, ինչպես կասեր Նարեկացին՝ երջանիկ և ընտրյալ բառով՝ հավատքով.

«Մեր հավատքը նա պահանջեց մեզնից:
Նա է մոտեցնում մարդուն առ Աստված,
Կյանք ընձեռելով մեզ իր ինքնիշխան ընդունակությամբ,
Զի օրհնաբանված Աստուծո բերանն ր, որ վկայեց,
Թե՛ «Հավատքը քո փրկեց քեզ»:» /ԲԱՆ Ժ, Բ/

Չհամաձայնելով, որ «Մատյան ողբերգության» աղոթագիրքը ներառում է միայն հոգևոր մեղքեր ու պատասխանատվություններ, որոնք, իբրև, չեն կարող նույնաստիպ

¹⁴ Եփրեմն աստվածաշնչյան կերպար է, որը սանձարձակորեն էր վարվում կանանց հետ, որի համար ըստ Օսսեյի առակի, մեծ պատժի կարժանանա Եփրեմը՝ Ո՛վ Եփրեմ, դու զարհուրելի տեսարան կդառնաս հանդիմանության օրը / Օսսե 5:9/

լինել աշխարհիկ օրենքների և իրավական մշակույթի սկզբունքների հետ, մենք կատարեցինք որոշակի դիտարկումներ, ուսումնասիրություն, քանզի Աստծո խոսքում թեև բաժանվում են մարդու և Աստծո գործերը, ինչպես նաև ապրելակերպը, սակայն, ի վերջո, պետության և իրավունքի պատմության մեջ մենք տեսնում ենք, որ առաջին իրավական նորմերից են եղել եկեղեցական կանոնները /որոշումները/: Մահ-մանադրության առաջին նախատիպերից էր եկեղեցական գազաթնաժողովում հաստատված կանոնագիրքը, ավելին Աստծո պատվիրաններն իրավական բոլոր ճյուղերի մեջ ներառված հիմնաքարային սկզբունքներ են:

"ИДЕИ ЧЕЛОВЕКОЛЮБИЯ И ПРАВОНАРУШЕНИЯ И СОРАЗМЕРНОСТИ НАКАЗАНИЯ В ПОЭМЕ "КНИГА СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ" ГРИГОРА НАРЕКАЦИ" (БАН А- БАН ЖТ) - СОНА АМБАРЦУМЯН - В статье представлена эпоха проживания Григора Нарекаци, анализируется его произведение « Книга скорбных песнопений», как наибольший продукт мысли армянской средневековой литературы. В поэме материалом исследования становится отражение симметрии идей наказания, правонарушения и гуманизма в нем; Бог- судья и земельный человек со своими естественными и обоснованными правами, грехами и ответственностью.

Ключевые слова: Божья заповедь, молитва, гуманизм, грех, ответственность, закон, средний век, справедливость.

THE IDEAS OF HUMANITARIANISM, PROPORTIONALITY OF OFFENSE AND PUNISHMENT IN GRIGOR NAREKATSI'S POEM "BOOK OF SORROWS" (BAN A- BAN ZT) – SONA HAMBARDZUMYAN - The article presents the period of Grigor Narekatsi's life, analyzes his work "The Book of Tragedy" as the greatest product of Armenian medieval literary thought. In the poem, the reflection of the ideas of humanity, offense and proportionality of punishment, God as the supreme judge and the earthly man with his natural and fundamental rights, sins and responsibility are the subject of study for the author.

Key words: God's commandment, prayer, humanity, sin, responsibility, law, middle age, justice.

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐՆ ԱՐՑԱԽԻ ՎԻՍԱԳՐԵՐՈՒՄ

Մույն հոդվածում քննության են առնված պատմական Արցախի տարածքում հայտնաբերված այն վիմագրերը, որոնք կարևոր տեղեկություններ են պարունակում եկեղեցական և աշխարհիկ իրավունքի վերաբերյալ: Այդ տեղեկությունները բազմազան են՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական և այլն:

Միաժամանակ, հեղինակը փորձ է կատարում բացահայտելու և բնութագրելու մեր երկրամասում գտնվող վիմագրերի պատմաիրավական արժեքն ու նշանակությունը՝ խորապես գիտակցելով և չբացառելով հանդերձ, որ իր ուսումնասիրությունը գերծ չի լինելու թերություններից:

Իր հերթին, վիմագրերը վկայում են, որ Արցախում ազգային-պետական իշխանությունը երբեք չի ընդհատվել, չի մարել և շարունակվել է մինչև 19-րդ դարի 10-ական թվականները, որպես հայոց պետականության մի փոքրիկ, բայց կարծր բեկոր:

Արցախի վիմագրերը ոչ միայն խոստում վկաներ են հայ ժողովրդի բազմադարյա պատմության էջերը լիարժեք լուսաբանելու, այլև կարևոր կտվան Արցախի հարցի արդարացի լուծման գործընթացում, քանզի, անկասկած, էականորեն պարունակում առարկայական բանակցությունների համար:

Բանալի բառեր՝ վիմագիր, եկեղեցական իրավունք, աշխարհիկ իրավունք, կանոնական իրավունք, Տիգրանակերտ, Գանձասար, Դադի վանք, Եսայի Աբու Մուսե, Հասան Ջալալ Մելիք Եզան, տապանաքար, պետականություն, զինանշան, նվիրատվություն, հողային վեճ, պայմանագիր:

Այնքան անհոգ եւ անտարբեր ենք, որ չգիտենք, թե ինչ հնութիւններ կան մեր հայրենիքում՝ մեր նախնիքներից մեզ աւանդ մնացած. չգիտենք, թե ազգային անցեալ պատմութեան մութ կէտերը լուսաբանող ինչ արձանագրութիւններ կան աւերակ վանքերի եւ անապատների, մատուռների եւ եկեղեցիների, խաչարձանների եւ տապանաքարերի վերայ...Մեր անտարբերութիւնից օգուտ են քաղում օտարները:

Մակար Բարխուդարյան

Վիմագիր (պահլավերեն՝ vem-քար և հայերեն՝ գիր բառերից) բառը նեղ իմաստով նշանակում է քարի վրա փորագրված գրություն, սակայն գործածության ընթացքում իմաստն ընդլայնվել է՝ ընդգրկելով նաև իրերի, առարկաների, պատերի վրա փորագրված հիշատակության և մակագրության նմուշները: Վիմագիր արձանագրությունները չափազանց ստույգ և կարևոր տեղեկություններ են պարունակում հայ ժողովրդի բազմադարյա պատմության տարբեր հարցերի վերաբերյալ: Այդ տեղեկությունները բազմազան են՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական և այլն: Ընդունված է վիմագրերը բաժանել 4 խմբերի.

- ա) շինարարական,
- բ) հիշատակագրային և նվիրատվական,
- գ) կրոնաբարոյական,
- դ) իրավականոնական:

Հայ իրավունքի իրավահայտ աղբյուրներից մեկն էլ այն վիմագրերն են, որոնք

կարևոր տեղեկություններ են պարունակում եկեղեցական և աշխարհիկ իրավունքի հարցերի վերաբերյալ: Ուսումնասիրելով Անիի հնագիտական հուշարձանները՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին նշել է, որ «Մխիթար Գոշի, Սմբատի և ուրիշների Դատաստանագրքերի և այլ իրավաբանական ժողովածուների ու տրակտատների վրա կառուցված հայ իրավունքի պատմությունը, առանց հայկական վիճագրական նյութերի սպառիչ օգտագործման, պիտի տառապի նույնպիսի պակասությամբ, թերասածությամբ, անճշտությամբ և երբեմն նույնիսկ հետևությունների լիակատար սխալությամբ, ինչպես արդեն հնացած ու դեն նետված Շիրակի պատմությունը, որը կազմված էր միայն մատենագրական տվյալների հիման վրա, առանց հնագիտական ու վիճագրական հուշարձանների իրական լուսաբանության»:¹ Պատմական Արցախի վիճագիր արձանագրություններն առաջին անգամ մասնակիորեն ուսումնասիրվել են Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի, Հովհաննես վարդապետ Շահխաթունյանցի, Հովհաննես Ղրիմեցու և Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի կողմից: Վիճագրերի հայտնաբերման, ուսումնասիրման և տպագրման հարցում քիչ է Մակար Եպիսկոպոս Բարխուդարյանի², Խաչիկ վարդապետ Դադյանի, Հովսեփ Օրբելու³ և Աշոտ Հովհաննիսյանի⁴ ներդրումը: Մակար Բարխուդարյանը, ուղղվ շրջելով և մեկ առ մեկ գրի առնելով պատմական Արցախի բնակավայրերը, ավերակները և արձանագրությունները, ընթերցողին ընդամենը մի բան է խնդրել՝ չձանձրանալ դրանք կարդալուց: 1960 թվականին Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի գիտությունների ակադեմիաների համաձայնությամբ անհրաժեշտ համարվեց երկու հանրապետությունների տարածքների վրա սփռված և երկու ժողովուրդների պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցող հայերեն և արաբատառ արձանագրությունների հավաքումն ու հրատարակությունը: Երկու հանրապետությունների միացյալ արշավախումբն իր աշխատանքն սկսեց պատմական Արցախ նահանգից: Գիտարշավի ընդհանուր ղեկավարն էր հայագիտության նվիրյալ Սեդրակ Բարխուդարյանը, իսկ ադրբեջանական խմբի ղեկավարը՝ արաբատառ արձանագրությունների մասնագետ Մ.Նեյմաթովան: Արցախում եղած արձանագրությունների ուսումնասիրությունը տևեց 4 տարի՝ 1960-1964 թթ.: Գիտարշավի հայ մասնակիցները հայտնաբերեցին, վերծանեցին, գծագրեցին և լուսանկարեցին 1071 արձանագրություններ, իսկ ադրբեջանցի մասնակիցները պատմական Արցախի տարածքում, բացի շուրջ 50 արաբատառ պարսկերեն տապանաքարերից, ադրբեջանական ոչինչ չգտնելով, սկսեցին տրտնջալ: Հայ և ադրբեջանական գիտնականներից կազմված արձանագրագիտական հատուկ գիտարշավի 1960-1964 թթ. աշխատանքի արդյունքները պետք է լույս տեսնեին Հայաստանի և Ադրբեջանի գիտությունների ակադեմիաների տիտղոսաթերթիկներով, սակայն հայտնի պատճառներով ադրբեջանցիները հրաժարվեցին դրանից: Այն լույս տեսավ միայն 1982թ. Հայկ. ԽՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ՝ դիվան հայ վիճագրության V պրակում (այսուհետ՝ Դիվան):⁵

Արցախի վիճագրերի ուսումնասիրման հարցում չափազանց մեծ է ականավոր հայ գրող և պատմաբան Բագրատ Ուլուբաբյանի կատարած աշխատանքը, առանց որի պատմական ժառանգության՝ մեր երկրամասի բազմադարյա պատ-

¹ Դիվան հայ վիճագրության, պրակ 1, Երևան 1996, էջ 8:

² Մակար Բարխուդարյան, Արցախ, Երևան, 1996, (այսուհետ՝ Արցախ):

³ Ի. Ա. Օրբել, Избранные труды, Ереван, 1963 г.:

⁴ Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, գիրք երկրորդ, Երևան 1959:

⁵ Դիվան հայ վիճագրության պրակ V, Արցախ, 1982, (այսուհետ՝ Դիվան):

մության շատ հարցեր կմնային չհետազոտված և չլուսաբանված:⁶ Այդ տեսակետից որոշակի արժեք են ներկայացնում Շահեն Մկրտչյանի⁷, Վահրամ Բալայանի⁸ և Սամվել Կարապետյանի աշխատությունները⁹:

Մեր երկրամասում ստեղծված իրավական մտքի խոշոր հուշարձանները՝ Վաչագան Բարեպաշտ թագավորի Կանոնական Սահմանադրությունը, Դավիթ Ալավկա որդու Կանոնական օրինադրությունը և Մխիթար Գոշի Դատաստանագիրքը չէին կարող հասու լինել հասարակ ժողովրդին, և այդ աշխատությունների մի շարք դրույթներ, բնականաբար, այս կամ այն ձևով պետք է իրենց արտացոլումը գտնեին պատմամշակութային հուշարձանների վրա փորագրված արձանագրություններում: Նկատի առնելով այդ համագամանքը՝ մեր կողմից փորձ է արվում պետականության և իրավունքի տեսանկյունից բացահայտելու և բնութագրելու պատմական Արցախի տարածքում գտնվող վիճագրերի պատմաիրավական արժեքն ու նշանակությունը՝ խորապես գիտակցելով ու չբացառելով հանդերձ, որ այն, այնուամենայնիվ, գերծ չի լինելու թերություններից:

Արցախի տարածքում ամենահին արձանագրությունը հայտնաբերվել է 2008 թվականին՝ արցախյան Տիգրանակերտի պեղումների ժամանակ: Քաղաքը գտնվում է արցախյան գոյամարտի տարիներին (1991-1994 թթ.) հայոց բանակի ազատամարտիկների կողմից ազատագրված նախկին Ադդամի շրջանի Վանքասարի Շահբուլաղ կոչվող աղբյուրի մոտ: Պեղումների ընթացքում երևան է հանվել հայկական եկեղեցի, որի պատի տակ հայտնաբերված և V-VII դարերին վերագրվող խեցեղեն փոքրիկ սկավառակի վրա հայերեն բովանդակությամբ արձանագրությունը մասնագետները վերծանել են. «ԵՍ (ՎԱԶ) Է ԾԱՌԱՅ Տ (ԵԱՌ) Ն» կամ «ԵՍ ՎԱԶ (ԱԳԱՆ) ԾԱՌԱՅ Տ (ԵԱՌ) Ն»:¹⁰ Մասնագետները հավանական են համարում, որ կլոր խեցեղեն սկավառակն արքայական կամ իշխանական կնքադրոշմի դեր է կատարել, որով կարող էին վավերացվել աշխարհիկ կամ հոգևոր փաստաթղթեր կամ եկեղեցական մասնատուփեր: Հարկ է նշել, որ Վաչ է կամ Վաչագան անձնանուն կրողները վաղ միջնադարյան Արցախում իրական և հանրահայտ անձնավորություններ են եղել: Պատմիչ Մովսես Կաղանկատվացին հայտնում է, որ Վաչագան արքան Ամարասում հայտնաբերված սրբերի մասունքները կնքել է արքայական մատանիով, իսկ արքայի կողմից Աղվենի ժողովում ընդունված Կանոնական Սահմանադրությունը կնքվել է ինչպես Վաչագան արքայի, այնպես էլ ժողովի բոլոր մասնակիցների կնիքներով:¹⁰

Հայերեն արձանագրություններ են հայտնաբերվել նաև Տիգրանակերտի մերձակայքում գտնվող ժայռափոր համալիրում, որոնք նույնպես վերծանության ընթացքի մեջ են:

Հայկական հողի վրա մինչև այժմ հայտնի գիր-թվական ունեցող հնագույն վիճագիր արձանագրությունը (853 թ.) հայտնաբերվել է Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի մոտ գտնվող Մեծառանից Սբ. Հակոբա վանքի արևմտյան պատի մեջ: Դա մի խաչքար է, որի պատվանդանի վրա փորագրված արձանագրության համաձայն՝ խաչը կանգնեցվել է Հայաղվանքի իշխան Հովհաննեսի ժամանակներում՝ վանքի եպիսկոպոս Սողոմոնի կողմից: Հովհաննեսը հայազգի այն իշխանն էր (837-854 թթ.), ով իր կատարած քաջագործությունների համար արաբների կողմից

⁶ Բագրատ Ուլուբաբյան, *Արցախի պատմությունը*, Երևան, 1994, Գանձասար, Երևան, 1981; *Խաչենի իշխանությունը X-XVI դարերում*, Երևան, 1975; *Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը*, Երևան 1998; *Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության*, Երևան, 1981 և այլն:

⁷ Շահեն Մկրտչյան, *Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները*, Երևան, 1985:

⁸ Վահրամ Բալայան, *Արցախի պատմություն*, Երևան, 2002:

⁹ Самвел Карапетян, *Памятники армянской культуры в зоне Нагорного Карабаха*, Ереван, 2000:

¹⁰ Հնագիտական ուսումնասիրություններ Արցախում 2005-2010 թթ., *Ստեփանակերտ*, 2011, էջ 12:

արժանացավ բարձր պաշտոնի /Հայոց, Վրաց և Աղվանից աշխարհների տեր/ և պարգևների: Խոսքը վերաբերում է այն ժամանակներին, երբ արաբական զորավար Բուղան գրավել էր ամբողջ Այսրկովկասը, բայց անկոտրում դիմադրության հանդիպել Արցախում: Հետագայում քաջ Հովհաննեսի եղբոր՝ Ատրնեսեսի որդին, Արևելքի մեծ իշխան Համամ-Գրիգորը, վերականգնեց Հայաղվանքի թագավորությունը (881 թ.):

Արցախի Տիգրանակերտից մոտ 6 կմ հեռավորության վրա, աղբբեջանաբնակ Սոֆուլու գյուղում, ազերի գիտնականները 1950-ական թվականներին հայտնաբերեցին հայերեն արձանագրությամբ մի տապանաքար: Ըստ ուսումնասիրողների՝ տապանաքարը դրված էր Համամ թագավորի՝ ողբերգաբար մահացած ավագ որդու գերեզմանի վրա: Ազերիները տապանաքարի հայտնաբերման վայրն անվանեցին Գյավուր կալա (Անհավատի բերդ) և տապանաքարը տեղափոխեցին Աղբբեջանի պատմության պետական թանգարան: Համամ-Գրիգորն արքայական թագ է կրել և այնքան մեծ է եղել նրա հեղինակությունը, որ նրա միջամտությամբ՝ փրկագնի վճարման դիմաց, արաբների կողմից գերված Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսն ազատվել է գերությունից: Հասկանալի է, որ նման գործ կարող է կատարել հզոր իշխանություն ունեցող մարդը: Ըստ ՀՀ ԿԳՆ ԿԱԻ ԼՂՀ մասնաճյուղի նախկին փոխտնօրեն Ա. Մարտիրոսյանի հետազոտությունների՝ Համամ թագավորի և նրա կնոջ գերեզմանը գտնվում է Մարտակերտի շրջանի Գառնաքար գյուղի հին գերեզմանատանը: Տապանաքարի վրա փորագրված են Համամ-Գրիգորի և նրա կնոջ պատկերները:

Հովհաննես իշխանի ժամանակներում արաբների դեմ մղվող պայքարում Հովհաննեսից ոչ պակաս աչքի են ընկել նաև Արցախի հարավային մասի իշխանապետերը: Իշխան Եսայի Աբու Մուսեն, որին արաբական աղբյուրները «հայոց պատրիկ» են կոչել, իր հետնորդներին թողել է մի այնպիսի ժառանգություն, որի կրողները «քարակերտ մատյաններում» հանդես են եկել իշխանաց իշխան կամ թագավոր տիտղոսներով: Հաղորդի շրջանի Տումի գյուղի մոտ գտնվող «Կարմիր եղու» (եկեղեցի) պատուհանի կամարի քարն ունեցել է հետևյալ արձանագրությունը. «Ի Նևեթ (1000 թ.) թուին Հայոց, ի թագաւորութեանս տեառն Գագիկա՝ որդու Մուսէի, ես՝ Սոփի, դուստր Մուսէի շինեցի տուն Աստծո» (Դիվան, էջ 173): Քարն այժմ պահվում է Ստեփանակերտում՝ Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում: Այդ նույն Գագիկ թագավորը, ինչպես արդեն նշել ենք, Ջուխտ Բարևածառ ավերակ երկու եկեղեցիներից մեկի խաչքարի վրա փորագրված արձանագրության մեջ հանդես է գալիս որպես Աղվանից պետության (նեղ իմաստով՝ Արցախ՝ Վ.Հ.) իշխանաց իշխան (Դիվան, էջ 169): Վերոնշյալ երկու վիմագրերը, ինչպես նաև Տումի գյուղի մոտ գտնվող «թագավորի պալատ», «թագավորի գերեզման», «թագավորի աղբյուր» և թագավորի անունը կրող մի շարք այլ վայրեր վկայում են, որ Գագիկ թագավորն իրական իշխանություն է ունեցել Արցախի հարավային մասում, ու այդ իշխանությունը դարերի ընթացքում չի ընդհատվել և տարբեր անվանումներով շարունակվել է մինչև XIX դարը: Դժվար չէ վիմագրերով ճշտել նաև Արցախի հարավային սահմանները: Արցախի հարավային մասը, որը միջնադարում կոչվում էր մյուս Հաբանդ կամ ուղղակի Հաբանդ, նշանավոր է եղել իր Ամարաս և Գտիչ եպիսկոպոսանիստ վանքերով: Ուշ միջնադարում, Հաբանդը վարչականորեն բաժանվելով, ստացել է Դիգակ՝ Հաբանդի (հարավային մասը) և Վարանդա (հյուսիսային մասը) անունները՝ մոռացության տալով երկրամասի հին անունը: Հաղորդի շրջանի Տող գյուղի մոտ գտնվող Գտչավանքը, որն ավերվել էր մոնղոլ-թաթարական արշավանքների ժամանակ, 1241 թվականին վերանորոգման ենթարկվեց Ամարասի երկու վանական եղբայրների կողմից, որոնց վանքի հյուսիսային պատին թողած արձանագրության տվյալներից կարելի է պատկերացում կազմել Արցախի հարավային սահմանների և նրա մեջ մտնող եկեղեցական թեմերի վերաբերյալ: Արձանագրության մեջ թվարկված են եկեղեցական երեք թեմ և

վարչատարածքային տասներկու միավորներ՝ իրենց անվանումներով, սահմաններով և սահմանային գետերով (Դիվան, էջ 182, 183): Բնակավայրերի ու գետերի աշխարհագրական անվանումները մեզ հուշում են, որ Արցախի հարավային սահմանն Արաքս գետն էր, ինչպես կար մինչև 44-օրյա պատերազմը, իսկ հյուսիս-արևմտյան սահմանը ներառել է Քաշաթաղի շրջանի մի մասը:

Արցախի կենտրոնական և հյուսիսային մասերում Առանշահիկ Համաժողովրդի տոհմաշրջան անխափան շարունակվեց նաև նրա սերունդների կողմից: Այդ շրջայում իր պատվավոր տեղն ունի Հաթերքի տեր և խաչենի իշխանաց իշխան Հասան Մեծը, ով Դադիվանքում իր իսկ անունից փորագրել տված արձանագրության մեջ (1182 թ.) մատնանշել է, որ 40 տարի շարունակ պատերազմներ է մղել հայրենի երկրի թշնամիների դեմ և միշտ էլ հաղթել: Ակնհայտ է, որ միայն հզոր պետականություն ունեցող մարդը կարող է իր երկրում նման բովանդակությամբ արձանագրություն փորագրել տալ: Ճիշտ է, արձանագրությունից չի երևում, թե Հասան Մեծն ում դեմ է պատերազմել, սակայն նույն վանքի վրա իշխանուհի՝ Արզու խաթունի անունից փորագրված արձանագրությունը հուշում է մեզ, որ պատերազմը մղվել է թուրքերի դեմ և հանուն քրիստոնեական հավատի, որի ժամանակ նահատակվել են նաև քաջ իշխանի երկու որդիները (Դիվան, էջ 198, 199): Այդ երկու արձանագրությունները նաև կարևոր տվյալներ են պարունակում մեր երկրամասի ռազմագիտական պատմությունն ուսումնասիրողների համար: Հասան Մեծին փոխարինել է նրա ավագ որդին՝ իշխանաց իշխան Վախթանգը (1182-1214 թթ.), այն Վախթանգը, որի մոտ Մխիթար Գոշը ձեռնամուխ եղավ իր հռչակավոր Դատաստանագիրքը գրելուն:

Արցախի հռչակավոր իշխանաց իշխան Հասան-Ջալալն իր հայրենանվեր գործունեությամբ ու թողած ժառանգությամբ հավերժացավ ոչ միայն գրչագիր մատյաններում, այլև քարագիր արձանագրություններում:

Գանձասարի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու ներսում, հյուսիսային պատի ամբողջ լայնությամբ Հովասափ Միակյացը (ճգնավոր) 1240 թ. 27 տողերի վրա արձանագրել է Հասան-Ջալալ Դուլայի ուխտը կամ կտակը: Կտակում Հասան-Ջալալը հանդես է գալիս «ԲՆԱԿԱԻՈՐ ԻՆՔՆԱԿԱԼ ԲԱՐՉՐ ԵՒ ՄԵԾ ԱՐՑԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ, ԹԱԳԱԻՈՐ ԽԱԻԽԱՆԱԲԵՐԴԻ ՅՈՐԴԱՆԱԿԱՆ ՆԱԿԱՆԳԱԻՔ» խրոխտ տիտղոսներով, իսկ Առաջածոր գյուղի արևելյան մասում գտնվող եկեղեցու մեծ քարի վրա փորագրված արձանագրության մեջ Հասան-Ջալալն իրեն անվանում է «Աստծո արքա... Իշխան խաչենի և Առանի»¹¹: Հասան-Ջալալի եղբայրը՝ Սմբատը, խանչալ խաչ կոչվող վայրում կանգնեցրած արձանագրության մեջ եղբորը ևս «արքա» տիտղոսով է անվանում: Դժվար չէ կռահել, որ նման բարձրահունչ տիտղոսներ կրող անձն օժտված է եղել պետական հզոր իշխանությամբ, որի տիրապետությունը տարածվել է ամբողջ Հայադվանքի վրա՝ ներառյալ մինչև Կուրի և Արաքսի միախառնման վայրը:

Ճիշտ է, Հասան-Ջալալը հարկատու էր մոնղոլ-թաթարներին և նրա աղջիկներից մեկը՝ Ռուզուբանը, մոնղոլ զորավար Բորա-Նոյինի կինն էր, սակայն այդ քայլը կատարվել է դիվանագիտական նկատառումներով, և դա տվել է իր արդյունքները: Հասան-Ջալալի միջնորդության շնորհիվ, հայկական Կիլիկիայի Հեթում թագավորի և մոնղոլական մեծ խան Մանգուի միջև 1253 թ. կնքված պայմանագրի ուժով Կիլիկյան հայկական պետությունը մոտ մեկ հարյուրամյակ զերծ մնաց հարևան պետությունների ավերածություններից:

Հասան-Ջալալն անձամբ պատկառելի շքախմբով եղել է Բաթու խանի մոտ, արժանացել պատիվների և կարողացել հետ վերադարձնել թուրքերի կողմից խլված հայրենի մի շարք բերդեր և բնակավայրեր: Հասան-Ջալալի իշխանապետությունն

¹¹ Մովսես Գաղանկատվացի, պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 59, 60, 62, 69:

օժտված է եղել պետականության ակնհայտ բնորոշիչներով:

Կտակում Հասան-Ջալալը հանդես է գալիս որպես թագավոր խոխանաբերդի «ՅՈՂԱՍԱՍԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԱԻՔ» եզրույթով: Խոխանաբերդը թագավորի կենտրոնական բերդն էր և գտնվում է Մարտակերտի շրջանի Վանք գյուղի դիմաց: Կտակում Հասան-Ջալալի տիրապետության սահմանները նշված չեն, և այդ առումով միայն շեշտված է դեռևս ոչ մի աշխատությունում չօգտագործված և բառարաններում չստուգաբանված «յոզնասահման» բարդ բառը (յոզ-շատ, բազում, հոգնակի): Մեր կարծիքով, «յոզնասահման» բառի տակ փորագրողը նկատի է ունեցել երկրի բազմաբնույթ և տարատեսակ աշխարհագրական սահմանագծերը: Իսկ արձանագրության մեջ օգտագործված «ԲՆԱԿԱԻՈՐ» բառի տակ նկատի է ունեցվել, որ Հասան-Ջալալն իր երկրի բնիկ տերն է:

Վիճագրության և մատենագրության մեջ չափազանց աղքատիկ տվյալներ են պահպանվել Արցախի արտաքին սահմանների և ներքին վարչատարածքային սահմանաբաժանումների վերաբերյալ: Այդ հարցում մեզ օգնության է գալիս Մ.Գոշը, ով սահմանները բաժանում է չորս խմբերի՝ գավառների, գյուղերի (համայնքների), հողամասերի, շենքերի և շինությունների: Համաձայն Գոշի Ղատաստանագրքի Մխե գլխի՝ «Գավառների, նմանապես և գյուղերի սահմանները հաստատվում են լեռներով, գետերով և արձաններով: Եվ գյուղերը, որոնք շինված են երկու կամ երեք գավառների մոտ, երկուսի բաժանվեն առավելությամբ և նվազությամբ. նմանապես հանդերն ու գյուղերի մոտ տարածքները, որոնք բուսնել են հանդերի սահմանների վրա: Իսկ այգիների ցանկապատերը թող կրկնակի լինեն, ամեն մեկն ունենա իր ցանկապատը, թեպետ սկզբից դրված ցանկապատը բավական էր երկուսին էլ, բայց, այնուամենայնիվ, թող առաջին բաժանարար ցանկապատը արգելք չհանդիսանա, որ մյուս կողմն էլ դնի իր ցանկապատը: Ըստ այս կանոնի դրվեն նաև տների պատերն ու սրա նման մնացած ամեն ինչը»¹²: «Արձանների» տակ Գոշը նկատի է ունեցել սահմանաքար կոթողները, որոնք գոյություն ունեին դեռևս Արտաշեսյան թագավորության ժամանակ: Ա.Սարտիրոսյանը, Քարվաճառի շրջանի Ղադիվանքի հյուսիսային լեռնաբազուկի վրա (նախկին Քելբաջարի շրջանի Բալուղայա քրդաբնակ գյուղի մոտ) հայտնաբերել և նկարել է սահմանակոթող հիշեցնող քար, որը նման է այն սահմանաքարերին, որոնք դրվել են գյուղերի և ագարակների սահմանագլուխներին՝ Արտաշես Ա թագավորի ձեռնարկած հողային բարեփոխումների կապակցությամբ և որոնցից մի քանի տասնյակ հայտնաբերվել են Սյունիքում և Սևանա լճի առափնյա շրջաններում: Կարծում ենք՝ Շահումյանի շրջանում հայտնաբերված սահմանաքարի տեղը Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանը պետք է լիներ, քանի որ այն կարող է լույս սփռել պատմական Արցախի վարչատարածքային սահմանաբաժանումների և հողային հարաբերությունների հարցերի վրա, միաժամանակ լուրջ կրված կհանդիսանար, որ պատմական Քարվաճառի շրջանի օրինական տերերը հայ ժողովուրդն է: Ամենայն հավանականությամբ, միջնադարյան Արցախում սահմանային հարցերի և սահմանավեճերի լուծման գործընթացում առաջին հերթին ղեկավարվել են Գոշի Ղատաստանագրքի դրույթներով: Հողային վեճերով կարևոր նշանակություն է ունեցել վիճելի տարածքի սահմանային եզրը կամ ծայրը որոշելու հարցը: Մինչխորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղի գյուղերում ավանդական սովորություն կար՝ պապերից ժառանգած կամ սեփականության իրավունքով պատկանող հողամասի անկյուններում կես մետրից ավել խորության վրա հողի մեջ ածուխ էին թաղում և վեճ ծագելու դեպքում դրա միջոցով շատ հեշտ որոշում սեփականատիրոջ հողի սահմանները:

¹² Մխիթար Գոշ, Գիրք Ղատաստանի (աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի), Երևան, 1975, էջ152 (այսուհետ՝ Գիրք Ղատաստանի): Ռուբեն Ավագյան, Հայ իրավական մտքի գանձարան, գիրք 1, Երևան, 2001, էջ 527 (այսուհետ՝ Գանձարան):

Արցախի Հասան-Ջալալ իշխանաց իշխանի պետականության բնորոշիչներից մեկն էլ նրա զինանշանն է: Գանձասարի վանքի գավթի հյուսիսային մուտքի դռան վերևի մասում պատկերված են դեպի իրար մոտեցող երկու կենդանիներ՝ բացված երախներով, կատաղի աչքերով, սուր ձանկերով, դեպի վեր ցցված պոչերով: Կենդանիների վզի ակոսավոր փոսիկները առյուծների բաշեր են ենթադրում: Քանդակագործին հաջողվել է ընդգծել կենդանիների իշխանատենչ, կամային հատկանիշները: Աջակողմյան առյուծի դիմաց փորագրված է վեցաթև աստղ՝ իշխանության նշանը, որը պատմությանը հայտնի է Սողոմոնի աստղ անունով: Հասան-Ջալալի զինանշանի մասին մեր ձեռքի տակ գրավոր տեղեկություններ չունենք, սակայն որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ զույգ առյուծները Հասան-Ջալալի զինանշանն է, և նա ներկայացված է աջակողմյան առյուծի պատկերում, իսկ որդին՝ Աթաբեկը, ձախակողմյան: Ջույգ առյուծներ են առկա նաև Գյուլիստանի մելիքության զինանշանում, որը փորագրված է հակառակորդի կողմից բռնազավթված ԼՂՀ Շահումյանի շրջանի Կարաչինար կամ Աղջակալա գյուղում գտնվող մելիքական շինության դարպասի բարավոր քարին¹³: Ձինանշանում մարտնչող առյուծները պատկերված են իրար դեմ դիմաց, բաց երախներով հետևի ոտքերի վրա հենված և պոչերը վեր ցցած դեպի մեջքները: Մարտնչող առյուծների պատկերաքանդակով բարովաքարը՝ ՌՅԺԷ (1868 թ.) արձանագրությամբ, մինչև հակառակորդի կողմից ԼՂՀ Շահումյանի շրջանը բռնազավթվելը, պահվում էր շրջկենտրոնի պատմաերկրագիտական թանգարանում: Ջույգ առյուծները հայկական հավատալիքներում դրսևորվում են նաև որպես տան, շինության, բնակավայրի, երկրի հսկիչ-պահապաններ:

Հասան-Ջալալի պետականության հզորության մասին է վկայում նաև Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժում պահվող՝ նրան պատկանած դաշյունի մուգ կանաչ նեֆրիտե երախակալը, որը պարունակում է կցագրերով փորագրություն՝ «ՀԱՍԱՆ ԶԱԼԱԼ ԻՇՆԱԼ ԽԱԶԵՆՈՅ»: Հասան-Ջալալին փոխարինեց նրա անդրանիկ որդին՝ Աթաբեկը, ով Արցախի վիմագիր արձանագրություններում նույնպես հանդես է գալիս Արցախի իշխանաց իշխան խրոխտ տիտղոսով: Վիմագրերը վկայում են, որ պետականության մի շարք բնորոշիչներով օժտված են եղել նաև Արցախի մելիքները:

Դիզակի մելիք Եզանի անձնավորությանն ու հասարակական-քաղաքական գործունեության վերաբերյալ տվյալներն արձանագրված են Հաղորդի շրջանի Տող գյուղում գտնվող նրա ապարանքի ընդունարանի մուտքի ձակատակալ քարին: Արձանագրությունը, որը գրված է բարբառային լեզվով, գրչության որոշ օրինաչափ շեղումներով, պարսկա-թուրքական բառերի առկայությամբ, առավել հաջող վերծանել է պատմաբան, իրանագետ Հակոբ Փափազյանը, մեջբերում ենք. «ՌՋԶԶ» (1737 թ.): Այս ընդունարանը հիշատակ է: Այսպես է, որ ես՝ Ղուկաս վարդապետի որդիս, որ իմ անունն է մելիք-Եզան, նախապես ժողովուրդը հավաքեց և ինձ քոխսվա (տանուտեր) կարգեց: Դրանից հետո, երբ երկիրը խառնակության մատնվեց, շահ Սուլթան-Հուսեյնի որդի շահ Թահմասաթ թագավորին որոշ ծառայություններ մատուցեցի, և նա բերեց սրանց վրա ինձ մելիքություն տվեց: Այնուհետև օսմանցին և երկիրը նրա ձեռքից վերցրեց: Սրան էլ այս չափ ծառայություն ցույց տվի, որ երբ բերին Դիզակ, ես չթողեցի, որ Հայաստանից գերի գնան: Արաղից (Կենտրոնական Իրան) շահ Նադիր գորեղ թագավորը իր գործով եկավ, երկիրը օսմանլուի ձեռքից առավ: Նրան էլ այնքան ծառայություն մատուցեցի, որ նա քրիստոնյա ազգի 6 մահալների՝ Թալիշի,

¹³ Հայկ Դեմոյան, *հայկական ազգային խորհրդանշաններ*, Երևան, 2012, էջ 165, Արտակ Ղուլյանի իր «Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները» աշխատությունում (Երևան, 2001) Գյուլիստանի մելիքության Աղջակալա գյուղը հայերեն սխալմամբ թարգմանել է Աղջկաբերդ անունով (էջ 128, 129): Թուրքական Աղջակալա անունը հայերեն նշանակում է Սպիտակ բերդ, Նախկին Կարաքենդ կամ Ղրզղալա գյուղը, գտնվում է Արցախի Մարտունու շրջանում:

Չարաբերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիզի և Դիզակի վրա, ինձ որպես խան և բեկլարբեկի կարգեց. շնորհ արեց: Ով հետո կարդա, այս գրությունից կիմանա, որ մեր որպիսությունը այդպես է եղել և թող մի ողորմի ասի: Եղավ: Ամեն»:¹⁴

Հ. Փափագյանը, ճիշտ վերծանելով արձանագրությունը, միևնույն ժամանակ սխալմամբ եզրահանգել է, որ հայկական ինքնուրույն վարչաքաղաքական միավորման մեջ, հայտնի 5 մահալներից կամ մելիքություններից բացի, սկզբնապես մտնում էր նաև Քոչիզի կամ Քաշաթաղի մահալը, որտեղ վաղ ժամանակներից իշխում էին մելիք Հայկազի սերունդները: Պարզապես Հ.Փափագյանը Քաշաթաղի շրջանի նախկինում հայաբնակ Քոչիզ գյուղը շփոթեցրել է Վարանդա գավառի Քոչիզ ամրոցի (սղնախ) հետ, որը գտնվել է ԼՂՀ Մարտունու շրջանի Հերիեր և Ծովատեղ գյուղերի թիկունքում և մինչև մելիք Շահնազարյանների հետգրավումը՝ որպես մահալ, ենթարկվել է մելիք Եզանին: Քոչիզ բնակավայրը 3 անգամ հիշատակված է Հերիերի Սբ. Գրիգորիս եկեղեցու արձանագրություններում (Դիվան, էջ 166 -168):

Մելիք Եզանի ընդունարանի մուտքի արձանագրությունը վկայում է, որ XVIII դարի 30-ական թթ. Անդրկովկասում ձևավորվել էր մի նոր վարչաքաղաքական միավոր, որի ղեկավարն իր իրավունքներով հավասար էր Վրաստանի վալիներին, իսկ այդ ժամանակներում բեկլարբեկի տիտղոսը կրել են միայն Երևանի, Գանձակի և Թավրիզի խաները: Սա ցույց է տալիս, որ զենքի ուժով ձեռք բերված ազատությունը և ինքնավարությունը ձանաչվել էր Պարսկաստանի կողմից:

Մելիք Եզանը, լինելով հզոր անհատականություն, ձկուն և հավասարակշիռ քաղաքականություն է վարել պարսիկների և թուրքերի միջև և Արցախը համարել է որպես Հայաստան. «Ես թողեցի ոչ Հայաստանաս եսիր (զերի՝ Վ.Հ.) գնալու», -նշված է արձանագրության մեջ:

Հզոր է եղել մելիք Եզանի բազուկը նաև հոգևոր գործերում: Գտնվածքի եպիսկոպոս Մեսրոպ վարդապետի տապանաքարի վրա փորագրված գրությունը վկայում է, որ մելիք Եզանն է նրան եպիսկոպոս ձեռնադրել և կարգել վանքի առաջնորդ:¹⁵

Ղարաբաղի մելիքների գահերեց մելիք Եզան խանն ուներ իր իշխանապետությանն արժանի զինանշան, որի քանդակը պահպանվել է Հաղորդի շրջանի պատմական Հողեր գյուղի մոտ գտնվող Կավաք վանքի ներսում: Ըստ պատմաբան Տ. Հայազնի, զինանշանը պատկերված է երկգլխանի արծվի տեսքով: Թռչնի մարմինը վահանաձև է: Մարմնի վերնամասից դուրս են գալիս երկու համաչափ, աղեղնաձև երկար վզեր, որոնք ավարտվում են կլոր գլխով. ընդգծված աչքերով ու սուր կտուցով: Արծվագլուխների վրա եռաձյուղ թագեր են: Թռչունը հենված է եռանկյունաձև պոչի վրա՝ ձախ ոտքի մագիլներով թևի վրա պահելով գնդավոր գլխով իշխանության նշան-մականը, իսկ աջ ոտքի մագիլներով՝ խաչը: Փաստորեն, արծիվը մագիլներում պահում է աշխարհիկ և հոգևոր իշխանության նշանները՝ մականը և խաչը: Պատմաբան Տ.Հայազնն առաջինն է նկատել, որ մելիք Եզանի զինանշանը որոշ նմանություն ունի նույն ժամանակաշրջանի ռուսական զինանշանին, որտեղ առկա է գրեթե նույնանման պատկերը, միայն այն տարբերությամբ, որ ռուսական արծիվը թևաբաց է և գլուխների արանքում առկա է ռուսական կայսրության թագը:¹⁶

Անձնական զենքը ևս կարող է լույս սփռել պատմական անձնավորության՝ աշխարհիկ իշխանության հզորության և կարգավիճակի մասին: Ներկայումս մասնագետների տրամադրության տակ կան բացարձակ արժեք ներկայացնող երեք թուր և մեկ գավազան՝ հայերեն մակագրություններով: Նախնական ուսումնասիրությամբ

¹⁴ Հակոբ Փափագյան, Մելիք Եզանի ընդունարանի մուտքի արձանագրությունը :

¹⁵ Արցախ, էջ 54:

¹⁶ Տիգրան Հայազն («Պետրոսյան»), Հայկական իշխանական զինանշաններ, Երևան, 2005, էջ 86-88:

յունները ցույց են տվել, որ դրանք պատկանում են մելիք Եզանին և, ըստ երևույթին, շահական ոսկեջրված կնիքով շքերթային թուրը և գավազան սուսերը մելիք Եզանը ստացել է Նադիր շահից¹⁷:

Արցախի գերագահ իշխանի տիրապետության սահմանները և փառքը հաստատում է Հադրութի շրջանի Տոդ գյուղի հանգստարանում գտնվող նրա տապանագիրը.

Եղև սիրեցեալ ամենայնին Նատիր անուն թագաւորին Տիրապետաց սայ ի երկրին Ի Աղուանից ի նահանգին Յոյժ պատուեցաւ Պարսից ազգէն Քան զիշխանս հայոց երկրին... ՌՃՂԳ (1744 թ.)¹⁸

Մելիք Եզանից ոչ պակաս հզոր աշխարհիկ իշխանություն է ունեցել Վարանդայի մելիք Հուսեյնը, որի տապանագրի գովեստը բնավ էլ ձևի համար չի գրվել, ըստ որի՝ երեսունհինգ գյուղերի տեր Վարանդայի հզոր իշխանը որևէ մեկին հարկատու չի եղել, թուրքերի դեմ պատերազմում միշտ հաղթող է դուրս եկել, հանդիսանալով հայոց աշխարհի թագն ու պարծանքը¹⁹:

Վարանդայի մելիքները նույնպես ունեցել են իրենց զինանշանը, որը, համաձայն տոհմական ավանդույթի, գրավել էր Պետրոս Մեծի և Նապոլեոնի ուշադրությունը: Զինանշանի վրա առկա է երեք տառից կազմված փակագիր. «Հայաստան», «Մելիք», «Շահնագար»: Արծվի գլխին պատկերված է եկեղեցու գմբեթ՝ խաչը վրան: Ներկայումս զինանշանը պահվում է ԱՄՆ Բոստոն քաղաքում²⁰:

Անդրադառնալով կանոնադրական վիճադրերին, հարկ է նշել, որ դրանց մեջ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նվիրագրերը և այն հիշատակագրերը, որոնց հեղինակներն իրական անձնավորություններ էին: Դրա հետ մեկտեղ, բավական շատ են այն նվիրագրերը, որոնց հեղինակներին (նվիրատուներին) հնարավոր չէ պարզել: Մի կողմից էլ, ժամանակը կատարել և կատարում է իր սև գործը, և անխաթար վիճակում գտնվող արձանագրությունների թիվն օրեցօր նվազում է: Եթե վիճադրերով ոչ միշտ է հաջողվում պարզելու նվիրատուների անձը և սոցիալական կարգավիճակը, ապա ամեն պարագայում՝ նվիրառուները վանքերը կամ եկեղեցիներն են: Վիճադրերում նվիրատվության առարկա են հանդիսանում տարբեր տեսակի անշարժ կամ շարժական իրերը, առարկաները, գույքային պարտականությունները և այլն: Որոշ արձանագրություններում շոշափվում են գույքի պատկանելիության, քանակի, արժեքի և օտարման պայմանների, ինչպես նաև նվիրառուների պարտավորությունների վերաբերյալ հարցեր: Քննարկենք դրանցից մի քանիսը.

Արցախի տարածքում նվիրատվության վերաբերյալ թվագրով ամենահին արձանագրությունը գտնվում է Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղից 6-8 կմ դեպի արևմուտք մի սարահարթի վրա գտնվող Խաղավանք կամ Խաթրավանք եկեղեցու արևելյան պատի վրա: Արձանագրության համաձայն՝ Տեր-Հովհաննեսը 1204 թ. վերակառուցել է այդ եկեղեցին, այնտեղ հավաքել զրքեր, խաչեր և մատյաններ, տնկել Ջոթաց այգին, ապա նոր մի այգի ևս գցել և այդ բոլորը Հաթերքի իշխանաց իշխան Վախթանգի միջնորդությամբ հանձնել իր եղբայր Հասանին ու նրա որդիներին: Նույն արձանագրության երկրորդ մասի համաձայն՝ Հասանն էլ ընդունել է ընծան, ինքն էլ իր հերթին Խնձորաբակի այգին իր սահմաններով նվիրել է վանքին (Դիվան, էջ 121, 122): Այս փաստերը հիմք են տալիս դատելու, որ Խաչենի տարածքում տեղական իշխանությունների այսօրինակ գործարքներն անգամ

¹⁷ Արտակ Մադալյան, *Մելիք Եզանի նորահայտ թրերի արձանագրությունները, Պատմա-բանասիրական հանդես*, 2013, հ.2, էջ 180-192:

¹⁸ Արցախ, էջ 50:

¹⁹ Դաֆֆի, *Խախտալի մելիքությունները, հատոր 10, Երևան, 1964*, էջ 178:

²⁰ Ярый Асадов, *Родословные тайны армянских князей, Москва, 1997*, стр. 91, 92:

կատարվում էին Վախթանգի և նրա հետնորդների միջամտությամբ:

Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի մոտ գտնվող Մեծառանից Սբ. Հակոբա վանքի սրահի հարավային պատի արձանագրությունից իմանում ենք, որ Սմբատի որդի Գրիգորը Տեր-Սարգսի և Տեր-Վարդանի առաջնորդության տարիներին վանքին նվիրել է իր հայրենաբաժնից մեկ կիսավար իր հողով (Դիվան, էջ 13): Թվականն անհայտ է:

Վերոնշյալ կարգի արձանագրությունները շատ են տարածված Արցախի Հանրապետության բոլոր շրջաններում: Հատկանշական է, որ նվիրատուները գույքը նվիրում են իրենց հոգու փրկության և մեղքերի թողության համար: Մյուս կողմից, հոգևոր հաստատությունը պարտավորվում է օրինանք տաժել, պատարագ մատուցել նվիրատուի կամ նրա մերձավոր հարազատների համար կամ էլ նրանց անունները նշել ժամասացության մեջ: Վերջում հավելվում է, որ արձանագրության պայմանները խափանողները պետք է արժանանան Աստծո դատաստանին և 318 հայրապետների նգովքին, անեծքին:

Վիմագրերի մեջ մի առանձին խումբ են կազմում այն նվիրատվությունները, որոնք կոչվում են «վախմ» (արաբերեն և թուրքերեն՝ վազըֆ)՝ եկեղեցուն կտակված բարեպաշտական նվեր, որոնք հարկման ենթակա չեն եղել: «Վախմ»-ները եղել են տարբեր տեսակների՝ ագարակներ, այգիներ, արտեր, հանդեր, հողեր, ձիթհանքներ, անասուններ, դրամական միջոցներ և այլն: Ասկերանի շրջանի Պոկեսբերգ վանքի արձանագրության համաձայն՝ Ղուկաս վարդապետը խաչենագետի վրա կառուցած իր ջրաղացը հոգու փրկության համար նվիրել է վանքին (Դիվան, էջ 138): Քաջաթաղի շրջանի Քոչիզ գյուղի եկեղեցու արձանագրությունից նկատելի է, որ ոմն Հայկազ սրանոցը (ձիթհանք) «վախմ» է արել եկեղեցուն: Մարտունու շրջանի Հերիեր գյուղի Սբ. Գրիգորիս եկեղեցու մուտքի հյուսիսային կողմի արձանագրությունը փաստում է, որ Հերիերի ժողովուրդը, տանուտեր Ղասումի գլխավորությամբ, մեծ և փոքր ճանապարհի վերևի տափը, որն ի սկզբանե «վախմ» էր Սբ. Աստվածածնին, այժմ իրենք «վախմ» են անում Սբ. Գրիգորիս եկեղեցուն (Դիվան, էջ 167):

Նման կարգի վիմագրերը ցույց են տալիս, որ «վախմ»-ի ձևով նվիրատվությունները տարածված են եղել XIII-XVI դարերում: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ մոնղոլ-թաթարները, Լենկ-Թեմուրը և թուրքմենական վաչկատուն ցեղերն ասպատակում էին ամբողջ Այսրկովկասը: Իսկ ի՞նչն էր ստիպում հայ ավատատերերին՝ իրենց գույքը նվիրելու կամ էժան վաճառելու հոգևոր հաստատություններին: Պատճառներից մեկը պետք է որոնել նրանում, որ քաղաքական նկատառումներով միջնադարյան ավարառու ցեղերի որոշ ղեկավարներ բարյացակամ վերաբերմունք էին ցուցաբերում հայ հոգևորականության նկատմամբ՝ իրենց համար անհրաժեշտ դեպքերում վանքապատկան հողերն ազատելով հարկերից ու տուրքերից: Պատմությանը հայտնի է Ջահանշահի կին Բեգում խաթունի 1462 թ. հրովարտակը՝ ուղղված Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին, նույն կաթողիկոսին տրված Յաղուբի 1478 թ. հրովարտակը, վանքին տրված՝ Շահ Աբաս 2-րդի 1650 թ. հրովարտակը, որոնց ուժով Գանձասարը գերծմնաց բռնակալների հարստահարություններից և տնտեսական մեծ առաջընթաց ունեցավ: Մյուս կողմից՝ հնուց ի վեր պատիվ էր համարվում եկեղեցիների ու վանքերի սրբազան համարված հողում թաղվելու իրավունքը: Այդպիսի պատվի արժանացողը, թաղվելուց առաջ, իր հոգու պարտքն էր համարում շարժական կամ անշարժ գույքի նվիրաբերումով արտահայտել իր երախտագիտությունը սուրբ ուխտի նկատմամբ: Իսկ երբ մի վանք դառնում էր որևէ գերդաստանի տոհմային տապանատունը, այդ գերդաստանի ժառանգներն արդեն ոչինչ չէին խնայում իրենց տապանատունն առատության ու շքեղության մեջ պահելու համար: Եվ պատահական չէ, որ եկեղեցիներն ու վանքերը հենց այս եղանակով էլ դառնում էին ամենահարուստ հողատերերը, և նրանցից ամենանշանավորներն իրենց ավատական իրավունքներով

ետ չէին մնում աշխարհիկ հզորագույն իշխանավորներից²¹:

Հենց վերոնշյալ հանգամանքներով պետք է բացատրել, որ Արցախի ավատատերերի կողմից ամենամեծ նվիրատվություններն արվել են Գանձասարի վանքին: Կա նաև ուշադրության արժանի մեկ այլ հանգամանք. հայտնվելով քաղաքական անբարենպաստ պայմաններում, իրենց հողային տիրույթները հափշտակումից փրկելու նպատակով հայ ավատատերերը դրանք նվիրում էին հիմնականում սեփական տիրույթի սահմաններում գտնվող վանքերին: Գանձասարի վանքի վրա առկա 182 արձանագրություններից 35-ը վկայում են նվիրատվությունների մասին: Մեջքերում ենք գավթի հյուսիսային պատի արևելյան մասի եռատող արձանագրությունը. «Ես շահնշես որդի Աղաուղին, վերին նովերին հողն տվի ի սբ. ուխտս Գանձասարայ, ով հողն հանե սուրբ Ովանեսիս կապած է» (Դիվան, էջ 58): Այս արձանագրության մեջ հետաքրքիրն այն է, որ «վերին նովերին» հողին հանդիպում ենք նույն արձանագրության կողքին Իսուբի՝ 1495 թ. արձանագրության մեջ. այստեղ ևս այն նվիրաբերվում է «Ի սուրբ ուխտս Գանձասարա» (Դիվան, էջ 56): Համանման օրինակի հանդիպում ենք նաև «Աշմանայ տափի հողն» երկու անգամ վանքին նվիրելու արձանագրություններում: Բ.Ուլուբաբյանը միանգամայն ճիշտ նշել է, որ զարգացած միջնադարում նվիրատվություններն այնքան էլ հաստատ ու անբեկանելի գործարքներ չէին և խախտվում էին նվիրատուի հարազատների կամ ազդեցիկ իշխանավորների կողմից: Այլապես ավելորդ պիտի լինեին նվերները, հանողների ու խախտողների հասցեներին ուղղված զանազան անեծքները, որ այնպես առատությամբ սփռված են մեր վիմագրերում²²:

Շարժական գույքի նվիրատվության առարկա են հանդիսացել անասունները (եզներ և կովեր), դրամական միջոցները (դեկան, թուման, ստակ), սպասներ-իրեր-գործիքները (ավետարան, գավազան, խաչ, սկիհ և այլն): Նվիրատվության պայմանագրում, որպես նրա ենթատեսակ, առանձնանում է նվիրաբերությունը, որի տակ նկատի է ունեցվել գույքի կամ իրավունքի նվիրատվությունը հանրագուտ նպատակներով, ինչն էլ շեշտվում է գործարքում: Եթե պայմանագրում գույքի օգտագործման նպատակը չի նշվում, ապա այն դիտվում է որպես սովորական նվիրատվություն: Նվիրաբերությունը նոր ինստիտուտ չէ, այն տարածված է եղել շատ հնուց: Գանձասարի վանքի հյուսիսային պատի կենտրոնական մասում, մեծ կամարի ներքո հիշատակված է, որ Պողոս-բեկ Ջալալյանցի կինը՝ Նազլուն, իր կամքով գրած կտակագրի համաձայն (1864 թ.)՝ ամուսնու և զավակների մեղքերի թողության համար վանքի միաբանությանը դրամական միջոցներ է տվել (գումարը չի նշված՝ Վ.Հ.), իր հերթին, կտակակատարը (վանքը) պարտավորվել է գումարը չծախսել, այլ միայն կարող էր գումարը տոկոսով տալ և ստացված տոկոսների գումարից վարձատրել վանքի սրբերին՝ եկեղեցական նախատոների կապակցությամբ պատարագ մատուցելու համար²³:

Ինչպես Դադիվանքի, այնպես էլ Գանձասարի վիմագրերը վկայում են, որ աշխարհիկ և հոգևոր իշխանությունները կենտրոնացված են եղել իշխող տոհմի ձեռքում, ինչը խոշոր խթան էր եկեղեցական հարստության աճի և զարգացման համար:

Վիմագրերից մի քանիսը կարգավորում են առուծախի պայմանագրերից բխող իրավահարաբերություններ: Ջրվշտիկ կամ Եղիշե առաքյալի վանքի արձանագրությունների համաձայն՝ միաբանությունը վանքի համար գնել է այգիներ, հողամասեր և ավետարան (Դիվան, էջ 107): Մեկ այլ արձանագրություն փաստում է, որ Շերբարիք անունով մեկն իր ռազմի սայլերի կեսը 25 դեկանով (դահեկան, պարսից

²¹ Բագրատ Ուլուբաբյան, *Խաչենի իշխանությունը X-XVI դարերում*, Երևան, 1975, էջ 383:

²² Նույնի, էջ 384:

²³ Գիրք Դատաստանի, էջ 44, Գանձասար, Երևան, 1981, էջ 101:

Դարեհ արքայի պատկերով դրամական միավոր՝ Վ.Հ.) վաճառել է Շահի որդուն՝ Տեր-Ռուբենի ներկայությամբ: Առուծախի գործարքի ժամանակը նշված չէ, բայց Տեր-Ռուբենը հիշատակված է Խաթրավանքի 1267 թ. մեկ այլ արձանագրության մեջ (Դիվան, էջ 128, 129): Արձանագրությունը վկա է հանդիսանում հեռավոր անցյալում մեր երկրամասում եղած առևտրի և դրամաշրջանառության մասին:

Մի եզակի արձանագրություն եղել է Արցախի հյուսիսային բնակավայրերից մեկի՝ պատմական Գետաբակի (ներկայումս՝ Ադրբեջանի Գետաբեկի շրջան) Չարեքա անապատ եկեղեցու պարսպի մուտքի գլխին, որը շինարարական կապալի պայմանագրի տարրեր է պարունակում: Համաձայն արձանագրության՝ վարպետ Սկրտիչը 1717 թ. կառուցել է եկեղեցու պարիսպը՝ 28 թունամ ստանալու պայմանով, և վարդապետ Օվանեսը վարձատրել է նրան (Դիվան, էջ 268): Անհամեմատ քիչ խումբ են կազմում այն վիմագրերը, որոնք վերաբերում են Արցախի հարկապարհակային քաղաքականությանը:

Վիմագրերը մեզ նաև պատկերացում են տալիս հասկանալու, թե անցած դարերում ինչպիսին է եղել հասարակ ժողովրդի իրավական դրությունը: Դադիվանքի գմբեթավոր եկեղեցու հարավային պատի կենտրոնական կամարի 19-տողանոց արձանագրությունը փորագրված է մեծ իշխան Վախթանգի կնոջ՝ Արզու խաթունի անունից (1214 թ.): Հայոց Արևելից կողմանքի թագուհին, պատմելով վանքի կառույցի, կառուցողի և թուրքերի դեմ մղված պայքարում իր որդիների զոհվելու հանգամանքների մասին, միաժամանակ մեծամեծ նվերներ է տալիս վանքին՝ հողատարածքներ իրենց անվանումներով, նրանց հետ նաև՝ «երկու տուն» (ծուխ՝ Վ.Հ.) Յարփա: Նույն եկեղեցու արևմտյան պատի հարավային մասում արձանագրված է, որ Հաթերքի մեծ իշխան Հասանի որդի Գրիգորը 1224 թ. տվել է «Ի Դադի գերեզմանս (իրենց տոհմական տապանատանը) Դ (չորս) տուն շինական» (Դիվան, էջ 198-201): Մեծ իշխանի որդի Սակը 1216 թ. Վաղուհասի Կարմիր վանքին նվիրած անշարժ գույքի թվում նշում է նաև «Թղեկրա այգին իւր հողով կատապանավ» (Դիվան, էջ 114): Հունարեն «կատապան» կամ «կատեպան» բառը հայերենում օգտագործվում է այգեպան, այգեգործ, այգի մշակող իմաստներով: Արցախի այցեքարտի՝ Գանձասարի վանքի տաճարի ներսի արձանագրությունը փաստում է, որ Հասան-Ջալալը վանքին նվիրել է անշարժ և շարժական գույք, այդ թվում՝ երկու գյուղ՝ իրենց շրջակայքով («գեղորայս Մաչեղ, Հարջանտուս բոլորքոջն»), Խաչենաձորը, Այգեստան գետը, Խաչվառներ, գրբեր, մատյաններ և այլն: Տաճարի արևմտյան պատի կամարազարդ որմնախորշի ամբողջ տարածությամբ փորագրված արձանագրության համաձայն՝ Հասան Ջալալը վանքին ևս մի գյուղ է նվիրել, իսկ որդին՝ Աթաբեկը, իր հերթին վանքին նվիրել է ոսկետուփ ավետարան և երկու դաշտ՝ դրանք անփոփոխ շրջագծով (Դիվան, էջ 40, 41):

Վերոնշյալ վիմագրերն ի՞նչ իրավիճակ են պարզում: Այն, որ միջնադարյան Արցախում հայ գյուղացին գտնվել է կատարյալ ճորտության մեջ և ամրացված հողին: Նա հողատեր իշխանների սեփականությունն էր հանդիսանում և տերը ցանկացած ձևով կարող էր վարվել նրա հետ՝ նվիրել, վաճառել, կտակել: Մեր օրինակները ցույց են տալիս, որ այդ իրավունքները հողատերը կարող էր իրականացնել ինչպես առանձին-առանձին, այնպես էլ ամբողջ գյուղերի նկատմամբ: Հայ պատմագիտության մեջ դեռևս վիճելի է մնում գյուղացիության ճորտացման գործընթացի պարբերացումը միջնադարյան Հայաստանում: Սակայն Արցախի վիմագրերն անառարկելի վկայություններ են, որ անկախ օտար տիրապետությունից, ճորտատիրական իրավունքը Վաչե թագավորից մինչև XIX դարն արմատավորված է եղել Արցախում: Դրա օրինակն է հենց Մարտակերտի շրջանի Վանք գյուղը, որի բնակիչները մինչև ցարական Ռուսաստանում ճորտատիրական կարգերի վերացումը (1861թ.) Գանձասարի ճորտերն են հանդիսացել: Այդ հարցում որոշակի պարզություն է մտցնում Գոշի Դատաստանագիրքը: Գոշը նշում է, որ մարդկային բնությունը ազատ եղավ

Արարչի կողմից, իսկ կարիքների համար տերերին ծառայելը՝ հողից և ջրից: Ովքեր չունեն հող և ջուր, ազատ են, ուր կամենան, կարող են գնալ և բնակվել, և թագավորներն ու իշխաններն իրավունք չունեն ստիպել նրանց բնակվելու որևէ գյուղում կամ երկրում²⁴: Մեր կարծիքով, Գոշը հասարակ ժողովրդին բաժանել է երկու խմբերի՝ շինականների և գեղջուկների: Առաջինները եղել են երկրի գլխավոր հարկատու ուժը: Գոշը մեծ անիրավություն է համարել տերերի կողմից շաբաթվա ընթացքում մեկ օրից ավելի գյուղացուն աշխատեցնելը:

Ինչպես վերոնշյալ, այնպես էլ մի շարք այլ վիճաբեր ցույց են տալիս, որ Արցախի ամենախոշոր հողատերը Հասան-Ջալալյան իշխանական և հոգևոր տոհմն է հանդիսացել: Այդ հռչակավոր տոհմը հոգևոր իշխանությունը հզորացնելու համար ոչ միայն ինքն է վանքին նվերներ տվել, այլ նաև իր պահանջով հանդես են եկել այլ նվիրատուներ: Իսկ Հասան-Ջալալի անունից վանքի հոգևոր հաստատությանն Այգեստան անունով գետ նվիրելը միայն կարող է վկայել, թե Արցախ աշխարհում որքան խորն են եղել միախուսված միմյանց հետ հողային և ջրային ինստիտուտները: Բոլոր դեպքերում հողային իրավունքը գերակա է եղել ջրային իրավունքի նկատմամբ: Միջնադարյան Արցախում ջրային իրավունքի վերաբերյալ պատմությունը շատ աղքատիկ տվյալներ է թողել, բայց կասկած լինել չի կարող, որ այդ հարաբերությունները կարգավորվել են ինչպես կանոնական, այնպես էլ սովորության իրավունքի նորմերով: Ջրային ինստիտուտի վերաբերյալ Գոշի հայացքներն ինչ-որ չափով հակասական են: Մի դեպքում Գոշը նշում է, որ ջուրը չի կարող իշխանին կամ թագավորին պատկանել, այլ հողն է միայն նրանց պատկանում («Բայց ջրարբի անդաստանները հնգեմասնյա հարկի տակ լինեն, իսկ տնկիները՝ տասանորդի, որովհետև հողն է միայն իշխանինն ու թագավորինը, այլ ոչ ջուրը: Այդպես և այգեստուններն ու ծառաստանները»): Ակնհայտ է, որ ռոբոզվի հողերից մեկ հինգերորդ մասով հարկ վերցնելն անուղղակի կնշանակի, որ հարկման առարկա էր հանդիսանում նաև ջուրը՝ լինելով իրավունքի նույնպիսի օբյեկտ, ինչպես և հողը: Մյուս կողմից, Գոշը նշում է, որ «գետերը նրանցն են, ում տարածքից սկզբնավորում են, և ոչ թե նրանցը, ուր հասնում են», այսինքն, Գոշը սեփականության իրավունքի ծագման ելակետային հիմքը համարել է գետի ակունքի պատկանելիությունը: Գոշի վերոնշյալ նորմը մեզ նաև հուշում է, որ հարկման իմաստով ջրագուրկ հողը նվազ կարևոր արժեք է ներկայացրել:

Մեր կարծիքով, ջրի օգտագործման հարցում Արցախում դարեր շարունակ արմատավորված են եղել սովորության իրավունքի նորմերը: Բնական ջրերից (գետեր, վտակներ, լճակներ, աղբյուրներ) օգտվելու իրավունք են ունեցել տվյալ տարածքի բոլոր բնակիչները, իսկ արհեստական միջոցներով հանած ջրերը (առուներ, ջրանցքներ, ջրհորներ և այլն) համայնքային կամ մասնավոր սեփականություն են հանդիսացել:

Վիճաբերը տվյալներ չեն պարունակում ծագած հողային վեճերի լուծման վերաբերյալ: Սակայն այլ աղբյուրներից պատկերացում ենք կազմում, որ նման վեճերը քննվել և լուծվել են տեղական իշխանավորների կողմից: Հասան-Ջալալյան տոհմից էր քաջ իշխան Աղբաստը, որի անունը հիշատակված է Գանձասարի վանքի հյուսիսային պատի արևմտյան անկյունում: Արձանագրությունից նկատելի է, որ Ջալալի որդի Տեր-Վարդանը, Աղբաստի իշխանության տարիներին, 1443 թ. Ծակ-խաչի հողը նվիրել է վանքին (Դիվան, էջ 55): Արքեպիսկոպոս Սարգիս Ջալալյանը և Մակար Բարխուդարյանը Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցում մի ձեռագիր Աստվածաշունչ են տեսել, որի Հռութի գրքի վերջում գրված էր, որ Հասան Ջալալյան տոհմից երկու հոգու միջև 1456թ. վեճ է ծագել հողային և ջրային հարցերի վերաբերյալ: Տոհմի երկու իշխանագույնները գնացել են պարոն

²⁴ Գանձարան, էջ 410:

Աղբաստի մոտ, ով և վեց հոգևոր այրերի ներկայությամբ քննել և լուծել է վեճը՝ սահմանելով յուրաքանչյուրի հայրենաբաժին հողերի եզրը և ջրօգտագործման հարցը (վեճի առարկան գտնվում էր Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղի տարածքում)²⁵:

Օտար նվաճողները մի այսպիսի օրենք էին սահմանել, համաձայն որի՝ ուժով նվաճված երկրի այն հարստությունները, որոնց տերերը վախճանվում էին՝ առանց ժառանգ թողնելու, պիտի անցնեին իսլամի հոգևոր և աշխարհիկ Գերագույն իշխանությանը (Բեյթ-ուլ-մալը): Այդ օրենքն ինչ-որ չափով պաշտպանվում էր արաբական իշխանության օրոք: Սակայն թաթար-մոնղոլների և թուրքմենական ցեղերի տիրապետության շրջանում նրանց վերակացուների շահատակություններին չափ ու սահման չկար, որոնք առանց որևէ պատճառի Բեյթ-ուլ-մալի էին ենթարկում տեղական իշխանավորների կալվածքներն ու շարժական գույքը: Բայց կային հայ իշխանավորներ, որոնք պայքարում էին իրենց օրինական իրավունքների և շահերի համար: Ծարա (ԼՂՀ Շահումյանի շրջան) իշխանագույնները, որոնց թվում էր նաև Տուրսունի որդի Այտինը, մի շարք գյուղեր, դաշտեր և հանդեր են նվիրել գավառի վանքերի առաջնորդ կարգված Ավագ եպիսկոպոսին: Վիճաբար արձանագրությունն անձօք է ուղղում նվիրատվության պայմանները խախտող անձանց, մասնավորապես այլազգիների կամ թուրքերի դեպքում, Աստուծոց խնդրելով, որ նրանց «հալալն հարամ լինի և իւր փեղամբարէն (մահմեդական հոգևոր առաջնորդ՝ Վ.Հ.) ապիզար լիցի ամեն» (Դիվան, էջ 216): Փաստորեն, մահմեդական հրոսակների և բռնակալների ազդեցությունն այնքան իրական ու վտանգավոր է եղել, որ նրանց ուղղված հատուկ նզովք է նշվել արձանագրության մեջ: Պատմական փաստերը վկայում են, որ հետագայում օտար բռնակալները հարքունիս գրավեցին իշխան Այտինի սեփականությունը, բայց քաջ իշխանը չնահանջեց և իր իրավունքները վերականգնելու համար երեք տարի պայքարեց մահմեդական դատարաններում՝ կարողանալով ետ վերցնել իր նախնիների սեփականությունը: Շուշիի խանության տարիներին պատմական Քարվաճառում /ներկայումս՝ ԼՂՀ Շահումյանի շրջան/ հայկական տարրը դուրս մղվեց, և շրջանը բնակեցվեց խաշնարած քուրդ ցեղերով: Դադիվանքին պատկանող լայնատարած կալվածական հողերն անիրավությամբ տրվեցին քրդերին և ազերիներին: Կարծես դա քիչ էր, Դարաբաղի վանքապատկան հողերի մի մասն էլ անցավ եկվոր ցեղերի ձեռքը: Այդ անարդարության դեմ անհաշտ պայքար մղեց Դարաբաղի հոգևոր առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտը: Նա ցարական դատարաններում տարիներ շարունակ դատ վարեց խաների ժառանգների և թուրք բեկերի դեմ՝ ծախսելով մինչև 30.000 ռուբլի, և կարողացավ հետ վերցնել սեփականության իրավունքով հայ ժողովրդին պատկանող հողերը: Սակայն նրա մահից հետո նրա հաջորդների անհոգության և ընչաքաղցության պատճառով մեր ժողովրդի ազգային հարստությունը նորից անցավ մահմեդականների ձեռքը:

Խորհրդային Միության տարիներին պատմական Քարվաճառի /ադրբեջաներեն՝ Քյալբաջար/ շրջանը վերածվել էր մի հավաքատեղիի, որտեղ պատսպարված անասնազոդերի նշանակետը Լեռնային Դարաբաղի տարածքն էր, որոնք էլ Դադիվանքը դարձրել էին ոչխարների մակաղատեղ: Դեռ ավելին, նրանք վնասել էին վանքի շենքերը, որմնակարները և արձանագրությունները: Արցախի ինքնապաշտպանության ուժերը, կատարելով նախնյաց պատգամը, կարողացան 1993 թ. մարտ-ապրիլ ամիսներին ազատագրել պատմական Քարվաճառի շրջանը: Դադիվանքն իր արժեքավոր արձանագրություններով և աշխարհում հավասարը չունեցող բարձրարվեստ երկու խաչքարով մշտապես դարձավ հայ ժողովրդի սեփականությունը:

Մեր նախնյաց պատգամներին հանդիպում ենք նաև Գանձասարի վանքի

²⁵ Արցախ, էջ 120:

տաճարի արևմտյան պատի հարավային մասում՝ Հասան-Ջալալի և նրա որդու՝ Աթաբեկի թողած արձանագրության մեջ, որտեղ հայր ու որդի սերունդներին ավանդում են թույլ չտալ, որ վանքապատկան հողերը մահմեդականների սեփականությունը դառնան (Դիվան, էջ 40): Հասան-Ջալալյան տոհմը կարծես կանխատեսել էր, որ օտար ցեղերը միշտ դրան են ձգտելու: Այդպես եղել է, բայց հուսանք, որ չի շարունակվի: Իր ազգակիցներին աղվանների հետնորդներ համարող պատմաբան Ֆարիդա Մամեդովան, լսելով (աղբյուրը չի նշում՝ Վ.Հ.), որ Ամենայն Հայոց կաթողիկոս, երջանկահիշատակ Վազգեն Ա-ն Խորհրդային Ադրբեջանի կառավարությունից թույլտվություն է վերցրել՝ Գանձասարի վանքը վերանորոգելու համար, հայերի «գեղծարարությունների» առաջն առնելու նպատակով ոտքի է կանգնեցրել ազգակից գիտնականներին և 1978 թ. մի գիշեր եկել, հասել Գանձասար: Վանքի պահակը բացել է դուռը, և նրանք, ջահերով մտնելով վանքի ներսը, բոլորի համար բարձրաձայն «կարդացել են» այն արձանագրությունը, որի մեջ իբր թե գրված էր, որ Հասան-Ջալալը Գանձասարը կառուցել է «իր աղվանից ազգի համար»²⁶: Համոզված ենք՝ կեղծիքներից չխորշող վայ-գիտնականը միայն կարող է մնան հերյուրանքներ թույլ տալ իրեն: Քսաներորդ դարավերջին Ադրբեջանի կողմից Արցախին ու նրա ժողովրդին պարտադրված պատերազմը վերստին բացահայտեց ադրբեջանական իշխանությունների նենգ նպատակները: 1992 թ. հոկտեմբերի 28-ին և 29-ին վանքը հրթիռակոծության ու ռմբակոծության ենթարկվեց: Սակայն արձակված բոլոր ռումբերը և հրթիռները պայթել են եկեղեցուն չհասած՝ գմբեթի վերևում: Գանձասարն անխոցելի մնաց: Եկեղեցուն հասած միակ արկը մխրձվեց պարսպի մեջ: Ասում են, թե եկեղեցու խորանի երկու կողմերում գտնվող հրեշտակների պատկերները հայտնվել են հենց այդ օրերին:

Արցախի վիճագրերում ոչ սակավ հանդիպում ենք «պարոն» և «պատրոն» եզրույթներին, որոնցից էլ ծագել է «պարոն-տերության» ինստիտուտը: «Պարոն» բառը փոխառված է միջնադարյան Եվրոպայում լայնորեն տարածված «բարոն» տիտղոսից, և այդ բառը հայերենում առաջին անգամ գործածվել է Կիլիկյան Հայաստանում ու նշանակել «իշխան, մեծավոր»: Սակայն այդ ինստիտուտը Կիլիկյան Հայաստանում չունեցավ այնպիսի դրսևորում, ինչպես բուն Հայաստանում: Անկախ, կենտրոնաձիգ պետականության բացակայության պայմաններում «տեր», «իշխան», «իշխանաց իշխան» եզրույթներին աստիճանաբար փոխարինելու եկան նույնանման իմաստ ունեցող «պարոն» և «պատրոն» բառերը: Այդ տիտղոսը կրողները, որպես կանոն, զբաղվում էին հովանավորչությամբ, որի համար կոչվում էին պարոնտերեր: Սա տեղի էր ունենում հատկապես այն դեպքում, երբ աշխարհիկ հայ մեծավորները հովանավորության տակ էին առնում իրենց տիրույթներում գտնվող վանքերը: Պարոնտերության ինստիտուտը կարող է միայն վկայել, որ Արցախում աշխարհիկ իշխանությունը երբեք չոչնչացավ և պարոնտերերը, իրենց ձեռքում պահելով հայրենական կալվածքները, իսկ մի մասն էլ նվիրելով հոգևոր իշխանությանը, հիմք ստեղծեցին մի նոր պետական կազմավորման, որը պատմության մեջ կոչվում է Արցախի մելիքություններ:

Ամենավաղ հիշատակված «պատրոն» բառին հանդիպում ենք Դադիվանքից ներքև Թարթառ գետի ափին, հին կամրջի մոտ կանգնեցված խաչքարի վրա: Խաչքարը կանգնեցրել է Հաթերքի, Հանդաբերդի և Հավթախաղացի տեր, Հասանի որդի Կյուրիկիեյի թագավորի թոռ «բարեպաշտ պատրոնիկն Վասակ»-ը 1209 թ. (Դիվան, էջ 129): XIII-XVIII դարերի վիճագրերում հիշատակված «պատրոն» բառն այլ բան չի նշանակում, քան այն, որ դրանց կրողներն ազգային իշխանությամբ օժտված անձինք էին: Ծարա վանքի գեղաքանդակ խաչքարի վրա արձանագրության մեջ (1430 թ.) Այդինը հանդես է գալիս խրոխտ տիտղոսով՝ որպես փոքր Սյունիքի,

²⁶ www.Erevangala500.com 06.03.2012:

Ականայի, Հաթերքի, Հանդաբերդի և Գեղամա ծովակի հարավ-արևելյան շրջանների տեր, որպես մեծ իշխան, քաջ և հաղթող զորավար, պարոն Շամշինի որդի (Դիվան, էջ 224): Ծարա վանքի մեծ արձանագրությունը վաղուց է ոչնչացվել մահմեդականների կողմից, դրա բովանդակությանը կարելի է ծանոթանալ միայն գրքերում: Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի «Մուղղուսին գերեզմանոտ» կոչվող հին հանգստարանում բազմաթիվ խաչարձաններ են եղել, որոնց կանգնեցնողները հիշատակված են պարոնտեր տիտղոսով: Ահա դրանցից մեկի արձանագրությունը. «Կամաւն աստուծոյ պարոն տեր Ռհանէս կանգնեյի սուրբ խաչերս թագավոր Շահ Աբազն, երկրիս պարոն տէր Ռհանէս»²⁷:

Վիմագրերից կարելի է կռահել, որ XIV-XVIII դարերում պատմական Արցախում գահերեց կամ իշխանաց իշխան տիտղոսներ կրողներ չեն եղել, բայց գավառների իշխանագույնները, պարոնները, պատրոններն ազգային իշխանություն են ներկայացրել և պետականության հարցերում միմյանց հետ համերաշխ եղել, օտար տիրապետության պայմաններում կարողացել պահպանել հայրենի հողը, ազգային շահը: Օրինակ, Մարտունու շրջանի Հերիեր գյուղի 1667 թ. կառուցված Սբ.Գրիգորիս եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի վրա փորագրված է, որ եկեղեցին կառուցվել է Սուլեյման շահի թագավորության, Վարանդայի մելիք Բադրի իշխանության և Միրզա Դուլի բեկի պարոնության տարիներին (Դիվան, էջ 165):

Նյութական մշակույթի մի շարք աղբյուրներ վկայում են, որ Արցախի բնիկ տերերը կարողացել են քոչվոր տիրակալների սեփականությունը դարձած հայկական հողերի մի մասը և որոշ գյուղեր գոնե առուվաճառքի պայմանագրերի ձևով հետ վերցնել: Ահա մի այդպիսի վավերագիր. «Երևելիներից լավագույնը՝ Նաֆասկուլի Թուշմալ Խալիլֆախր-եղ-դինլուն, իր նմանների մեջ լավագույնին՝ Ֆաղանի Աշեղ Դիվանլուին, շարիաթական վաճառքով, քաղաքներում ընթացիկ Թավրիզի տասներկու թումանով, որի կեսը պարզ լինելու համար Թավրիզի վեց թուման է լինում, վաճառեց. Քոչիզի Խազազ գյուղի (ԼՂՀ Մարտունու շրջանում՝ Վ.Հ.) ամբողջ վեց դանգ մուլքը իր չորս սահմաններով»²⁸:

Վիմագրերը նաև վկայում են, որ նույնիսկ օտարների տիրապետության պայմաններում քաղաքացիական գործերի մի մեծ շրջանակ ընդդատյա է եղել հայոց աշխարհիկ և հոգևոր դատարաններին:

Պատմական Արցախի տարածքում շատ քիչ ենք հանդիպում արաբատառ պարսկերենով, արաբատառ ադրբեջաներենով և ռուսատառ ադրբեջաներենով վիմագիր արձանագրությունների, իսկ եղածներն առնչություն ունեն միայն XIX դարի հետ: Վիմագրերը մեզ աներկբա հուշում են, որ մահմեդական տարրը մեր երկրամասում բնավորվել է նոր ժամանակներում՝ հասցնելով 4 անգամ փոխել իրենց այբուբենը և ազգությունը:

Այսպիսով, պատմական Արցախ աշխարհի վիմագրերում օգտագործվող «ինքնակալ», «տիրակալ», «թագավոր», «թագավորություն», «թագավորագուն», «թագուհի», «իշխանաց իշխան», «իշխան», «իշխանություն», «իշխանուհի», «հայրապետ», «հայրապետություն», «կաթողիկոս» եզրույթները և տարբեր տեսակի գործարքներից բխող հիշատակությունները միայն կարող են վկայել, որ Արցախը կույ չգնաց օտար ցեղերի ասպատակություններին, երկրամասում երբեք չմարեց հոգևոր և աշխարհիկ իշխանությունը, այլ ընդհակառակը, այն XVII և XVIII դարերում ազգային-ազատագրական պայքարի պատվար հանդիսացավ, որտեղ զուխ բարձրացրեց հայրենիքի ազատագրության գործը: Սակայն այդ ժամանակաշրջանում քաղաքական անբարենպաստ հանգամանքների պատճառով, այն չիրականացավ, արցախյան

²⁷ Արցախ, էջ 129:

²⁸ Հակոբ Փափազյան, «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», պրակ 1 (ԺԴ-ԺԶ դարեր), Երևան, 1968, էջ 116:

հիմնախնդիրը միշտ էլ մնաց և Խորհրդային Միության փլուզման նախօրյակին նոր թափ ստացավ ու ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ պսակվեց հաջողությամբ, որի առիթավառության ազատ և անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն է՝ պետականության բոլոր բնորոշիչներով:

Խորհրդային իշխանության օրոք Ադրբեջանը, շարժվելով ավագ եղբոր՝ Թուրքիայի ծրագրերով, իր տարածքում գտնվող հայկական մշակույթի նկատմամբ աչքի ընկավ աննկարագրելի բարբարոսական ակտերով՝ նպատակ ունենալով մշակութային ջարդի միջոցով վերացնել հայկական հետքը: Առաջին հերթին, հայկական բոլոր հուշարձանները, Խորհրդային Ադրբեջանի կառավարության 1988 թ. ապրիլի 27-ի թ. 145 որոշմամբ, համարվեցին աղվանական: Համարելով, որ դա քիչ է, Ադրբեջանն ավելի հեռուն գնաց: Նա հայ մշակույթի արժեքներից իր վրեժը լուծելու համար չխորշեց նույնիսկ պայթեցնել հայկական եկեղեցիները և Արաքս գետը լցնել պատմական Ջուղայի խաչքարերը: Նույն ձակատագրին արժանացան նաև Հաթերք գյուղի «Մուղդուսին գերեզմանոտ» կոչվող հին համազատարանի վիմագիր խաչարձանները: Խորհրդային Միության տարիներին Բաքվի կողմից Արցախի վարչատարածքային սահմանների կամայական վերաձևման արդյունքում, վերոնշյալ տարածքը հանձնվեց ադրբեջանական Ումդուլու /ներկայումս՝ Ականաբերդ հայկական համայնք/ գյուղին, որի սովխոզի տնօրեն Աբիլովն անցյալ դարի 80-ական թվականներին բուլդոզերով հողին հավասարեցրեց գերեզմանոցը՝ հողով ծածկելով պատմաիրավական արժեք ներկայացնող խաչարձանները: Արցախյան շարժման տարիներին Գետաշենի մոտ գտնվող Եղնասարի վանքը տանկերի և թնդանոթների համազարկով նույնպես հողին հավասարեցվեց: Միայն Արցախի հարակից տարածքների ազատագրումից հետո լիովին ակնհայտ դարձան կատարված վայրագության նողկալի հետքերը: Ծարա վանքը, որը հիմնադրվել էր 1301 թ. և գտնվում էր ներկայիս Շահումյանի շրջանի Ծար գյուղում (Թարթառ և Ծարա վտակի խառնարանի անկյունի բարձրադիր բլուրի վրա), Խորհրդային Ադրբեջանի կողմից քանդվել է և նրա քարերով մոտակա քրդաբնակ գյուղում դարձրել շենք կառուցվել: Ֆիզուլի շրջկենտրոնից դեպի Հադրուս քաղաքը տանող ճանապարհի եզրին, նախկին Կարգաբազար գյուղի մոտ, կա մի հին իջևանատուն՝ կառուցված հայ ճարտարապետության միջնադարյան լավագույն ոճով: Իջևանատունն ունեցել է 1681 թ. հայատառ արձանագրություն: Հայաստացության վանդալիզմը չի խորշել նաև այդ արձանագրությունը ոչնչացնելուց:

Հանուն ճշմարտության պետք է ասել, որ արձանագրությունների մի մասի անհետացումն էլ կապված է մեր իրականության մեջ երբեմնակի կամա-ակամա տեղ գտնող բացասական երևույթների հետ: Ակադեմիկոս Հ.Օրբելին մի այսպիսի դեպք է նկարագրել. «Բավական էր անհեթեթ լուր տարածվեր, թե դատարանը Խաչենի բեկերի և հայկական հոգևոր իշխանության միջև ծագած հողային վեճերը լուծելիս ղեկավարվելու է ոչ միայն ռուսական կալվածատիրական իրավունքի նորմերով, այլև հայկական հնագույն արձանագրություններով, որպեսզի բեկերի ամբոխը Գանձասարի շրջակայքում քերեր XII-XIII դարերի մեկ ու կես տասնյակ արձանագրություններ, նպատակ ունենալով ոչնչացնել այդ հողերի վանքապատկան լինելն ապացուցող վավերագրերը»²⁹:

Մեր օրերում, երբ Ադրբեջանի ղեկավարությունը ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության տարածքը լկտիությամբ ադրբեջանական է համարում, իսկ գրավյալ տարածքներում մշակույթի հուշարձանները ոչնչացնում կամ ուղիմա-աղվանական անվանում, ավելի հրատապ է դառնում պահպանել հայ ժողովրդի դարաբաղյան հատվածի մնացյալ քարակերտ ժառանգությունը, որն, ի տարբերություն ձեռագիր մատյանների, օրեցօր, մեր աչքից հեռու, մեր աչքի առաջ

²⁹ Դիվան, պրակ 1, էջ 13:

վնասվում, փչանում և ոչնչանում է: Հենց դրան է ուղղված Արցախի Սահմանադրության 15-րդ հոդվածը, որից նկատելի է, որ պատմական և մշակութային հուշարձանները պետության հոգածության և պաշտպանության ներքո են:

1994 թ. մայիսյան հրադարարից հետո հայ ժողովուրդն իր պատմության հուշարձանների մի մասը գտավ ավերակների կույտի մեջ, իսկ մյուս մասն էլ դեռևս թաքնված հողի տակ, սպասում էր իր հետազոտողին: Կատարվեցին բազմաթիվ պեղումներ և հետազոտություններ, սակայն վերջին հայ-թուրքական պատերազմը խառնեց ամեն ինչ: Ամեն պարագայում, օրենքը պետք է խիստ լինի պատմության և մշակույթի հուշարձանները ոչնչացնողների կամ վնասողների հանդեպ: Մեր կարծիքով, ԼՂՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված պատիժները շատ մեղմ պետք է համարել պատմության և մշակույթի հուշարձանների նկատմամբ ոտնձգություն կատարողների նկատմամբ:

Այսպիսով, Արցախի վիճական արձանագրությունները վկայում են, որ ազգային-պետական իշխանությունը մեր երկրամասում երբեք չի ընդհատվել, չի մարել, և այն շարունակվել է մինչև XIX դարի սկիզբը, որպես հայոց պետականության մի անմար փարոս:

Արցախի վիճագրերը ոչ միայն խոսում վկաներ են հայ ժողովրդի բազմադարյա պատմության էջերը լիարժեք լուսաբանելու, այլև՝ կարևոր կոչվան Արցախի հարցի արդարացի լուծման գործընթացում, քանզի, անկասկած, ելակետային դրույթներ են պարունակում առարկայական բանակցությունների համար:

ВОПРОСЫ ГОСУДАРСТВЕННОСТИ И ПРАВА В ЛИТОГРАФИЯХ АРЦАХА - ВЛАДИМИР ОСИПЯН - В статье автор пытается обнаружить и описать историко-юридическую ценность и значение литографии, находящиеся на нашей планете, глубоко осознавая и не исключая то, что его исследование не останется в стороне от недостатков.

Автор обосновывает то, что согласно литографии, в Арцахе никогда не прерывалась, не угасала национально- политическая власть; она продолжалась до 10-х гг. 19-ого века, как твердый фрагмент армянской государственности.

Арцахские литографии –не только говорящие свидетели, полноценно освещающие не только многовековые страницы армянской истории, но и важнейшей борьбой в процессе справедливого решения арцахского вопроса, так как , несомненно, содержат исходные уровни для предметных переговоров.

Ключевые слова: *литография, церковное право, светское право, законное право, Тигранакерт, Гандзасар, Дадиванк, Есаи абу Мусе, Гасан- Джалал, Мелик Еган, надгробие, государственность, герб, пожертвование, земельный спор, договор.*

THE QUESTIONS OF A STATEHOOD AND LAW IN ARTSAKH'S INSCRIPTIONS

- **VLADIMIR HOVSEPYAN** - *The article examines the lithographs found in the historical territory of Artsakh, which contain important information about ecclesiastical and secular law. These information are diverse: political, economic, social, legal, etc.*

In this article, the author tries to discover and describe the historical and legal value and significance of lithographs logated on our planet, deeply realizing and not excluding the fact that this research will not stay away from the disadvantagesfor .

The author substantiates that according to the lithography, the national- political power in Artsakh has never been interrupted it continued unfil the 19th century.

The Artsakhian lithographs are not only speaking witnesses, fully covering not only the centuries old payes of Armenian history, but also the most imposrtand struggle in the process of a fair salution of the Artsakh issue, since they undoubably contain the initial levels for substantive negotiations.

Keywords: *lithography, ecclesiastical law, secular law, legal law, Tigranakert, Gandzasar, Dadivank, Yesai abu Musa, Hasan- Jalal, Meliqk Yegan tombstone, statehood, coat of arms, donation, land dispute,contract.*

**ԳՐԵՏԱ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՔԱՐԴՈՒՄՅԱՆ**

**ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՋ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հոդվածը նվիրված է հայրենական քրեական դատավարությունում ամենաճանաչված սկզբունք համարվող անմեղության կանխավարկածին: Պարզաբանվել է սկզբունքի էությունը և նշանակությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել անմեղության կանխավարկածի ազդեցության վերլուծությանը ապացուցման պրոցեսի և ամբողջությամբ վերցրած՝ արդարադատության իրականացման վրա: Վեր են հանվել տեսական, օրենսդրական, իրավակիրառական բնույթի հիմնախնդիրները, ներկայացվել համապատասխան առաջարկներ:

***Քանալի բառեր**՝ քրեական դատավարություն, իրավական սկզբունք, իրավական կանխավարկածներ, փաստական կանխավարկածներ, անմեղության կանխավարկած, ապացուցման ծանրություն, արդար դատաքննության իրավունք, քրեական գործի կարճում, մեղավորության կանխավարկած, լռելու իրավունք:*

«Կանխավարկած»՝ պրեզումպցիա (լատիներեն praesumptio) եզրույթը թարգմանաբար նշանակում է «ենթադրություն»: Տրամաբանական առումով կանխավարկածը պայմանական կամ հիպոթետիկ հավանական դատողություն է հետևյալ բնույթի՝ «Եթե կա Ա, ապա շատ հավանական է, որ կա նաև Բ»: Քանի որ կանխավարկածները հիմնված են մարդկային բազմադարյա փորձի ընդհանրացման վրա, այդ պատճառով դրանցում ամրագրված գիտելիքը բարձր աստիճանի հավանական է, այսինքն՝ ավելի բարձր է դրա ճշմարտացիության, քան հակառակի հավանականությունը: Հենց դրանով է պայմանավորված կանխավարկածների օգտագործման հնարավորությունը ապացուցման պրոցեսում: Բնդուկտիվ ընդհանրացման վրա հիմնված կանխավարկածները հնարավորություն են տալիս դրանք օգտագործել նույնական երևույթների և իրավիճակների գնահատման ժամանակ¹: Եվ պատահական չէ, որ կանխավարկածները հետազոտության առարկա են ոչ միայն իրավագիտության, այլև տրամաբանության, փիլիսոփայության, հոգեբանության ու մի շարք այլ գիտությունների համար²:

Իրավագիտությունում կանխավարկածները բաժանվում են իրավականի և փաստականի: Տեսության մեջ կարելի է հանդիպել իրավական կանխավարկածի՝ որպես ի սկզբանե իրավական երևույթի, իրավունքի ոլորտում գործադրվող տրամաբանական երևույթի, իրավական կարգավորման եղանակի և բազմաթիվ այլ բնորո-

¹ Տե՛ս Գ. Բաղդասարյան, Անմեղության կանխավարկածը՝ որպես ապացույցների բավարարության չափանիշ, հոդված:

² Կանխավարկածների մասին մանրամասն տե՛ս Белкин А. Р., Теория доказывания. Научно-методическое Б 43 пособие. — М.: Издательство НОРМА, 1999, էջ 21 : Ա. Ղամբարյան, Իրավական կանխավարկածները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում, Հոդված, Արդարադատություն, 2014, 4/27/:

շումներ³: Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0252/01/13 գործով ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ տվել է իրավական կանխավարկածի հետևյալ բնորոշումը. «Դատավարական իրավունքում իրավական կանխավարկածը օրենքով կամ նախադեպային իրավունքով հաստատված այն կանոնն է, որի համաձայն որոշակի հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը»: Այդ բնորոշումը լրիվությամբ համահունչ է 2021 թ. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում նորամուծություն հանդիսացող 106-րդ հոդվածին (փաստերի իրավական կանխավարկածը): Այսպիսով, իրավական կանխավարկածի բնորոշման մասին վեճը հայրենական իրավունքում կարելի է սպառնալից համարել:

Այս կամ այն փաստի առկայության կամ բացակայության մասին նորմատիվ ենթադրությունն ինքնին լրացնում է այդ փաստի մասին տեղեկատվության պակասը, ինչպես նաև վարույթն իրականացնողին ազատում է իրավաբանական փաստի հաստատման կամ հերքման ուղղությամբ լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու պարտականությունից: Փաստական կանխավարկածները սահմանված չեն իրավունքի նորմերով, սակայն նույնպես թույլ են տալիս փոխհատուցել փաստական ինֆորմացիայի պակասը:

Ի դեպ, կանխավարկածների նկատմամբ հետաքրքրությունն աճել է միջնադարում: Միջնադարի իրավաբանների կարծիքով, այն դեպքերում, երբ օրենքը թույլ է տալիս մի փաստի հիման վրա հետևություն անել երկրորդի մասին, առկա են ապացույցի ինքնություն տեսակ հանդիսացող կանխավարկածներ, որոնք նույնացվել են անուղղակի ապացույցների հետ: Խորհրդային քրեական դատավարության իրավունքին ու տեսությանը, մանավանդ նրա գոյության առաջին տասնամյակներում, բնորոշ էր կանխավարկածների, այդ թվում՝ անմեղության կանխավարկածի մերժումն այն հիմնավորմամբ, որ դրանք ստեղծում են վերացական ճշմարտություն՝ հակադրվելով ճշմարտության որոշակիության մասին մարքս-լենինյան դիալեկտիկային, բացարձակացված էր յուրաքանչյուր փաստի կատարյալ ապացուցման գաղափարը և սվիններով էր ընդունվում որևէ փաստի բարձր հավանականության մասին պնդումը: Անմեղության կանխավարկածի սկզբունքը հռչակվել է միայն ԽՍՀՄ 1977թ. սահմանադրությամբ: ՀՀ-ում անմեղության կանխավարկածի սկզբունքն առաջին անգամ ամրագրվել է 2005թ. սահմանադրությամբ, Արցախի Հանրապետությունում՝ 2006թ. Սահմանադրությամբ, այնուհետ՝ 2017թ. Սահմանադրությամբ: Սակայն ներկայումս իրավունքի բոլոր ճյուղերում նկատվում է իրավական կանխավարկածների թվաքանակի ավելացման միտում⁴: Ասվածը վերաբերում է նաև հայրենական քրեական դատավարության օրենսդրությանը: Այսպես, ՀՀ քրեական դատավարության 2021թ. օրենսգիրքն⁵ առաջին անգամ համակարգված կերպով ամրագրվել է փաստերի իրավական կանխավարկածների վերաբերյալ դրույթը, որն

³ Sk' u O.E. Зацепина, СООТНОШЕНИЕ ПРАВОВЫХ ПРЕЗУМПЦИЙ И ИНЫХ СРЕДСТВ ЮРИДИЧЕСКОЙ ТЕХНИКИ, Вестник Томского государственного университета. 2017, № 424, էջ 226–233. DOI: 10.17223/15617793/424/32 УДК 340: У. Ղամբարյան, Իրավական կանխավարկածները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում, Հոդված, Արդարադատություն, 2014, 4/27: Бабаев В.К., Теория современного советского права: фрагменты лекций и схемы. Н. Новгород, 1991, էջ 156:

⁴ Քաղաքացիական դատավարության օրենսդրության մեջ ապացուցելուց ազատելու հիմքերը (նախադատելի փաստերը) վաղուց են ներդրվել:

⁵ Ընդունվել է 30.06.2021թ., ուժի մեջ է մտնում 2022թ. հուլիսի 1-ից:

առավելապես փոխառվել է Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքից⁶։ Օրենսգրքի «Փաստերի իրավական կանխավարկածը» վերտառությամբ 106-րդ հոդվածն ունի հետևյալ բովանդակությունը. «Եթե քրեական վարույթի ընթացքում հակառակը չի ապացուցվում, ապա ապացուցված են համարվում՝ 1. հանրաճանաչ փաստը, 2. արդի գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառների համընդհանուր ճանաչում ստացած մեթոդիկաների ճշմարտացիությունը, 3. փաստը, որը անձին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ նորմատիվ ակտերով սահմանված իր մասնագիտական կամ պաշտոնական պարտականությունների կապակցությամբ, 4. փաստը, որը մեղադրյալին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ՝ որպես նրա բացառիկ իրազեկվածության հանգամանք։ Եթե վարույթի մասնակիցը վիճարկում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստերի հավաստիությունը, ապա կրում է հակառակն ապացուցելու պարտականությունը»։

Քրեական արդարադատության համակարգի ամենաճանաչված կանխավարկածն անմեղության կանխավարկածն է։ Կանխավարկածի էությունն այն կանոնի պահպանման մեջ է, որ անձը, ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, համարվում է մեղավոր միայն այն դեպքում, երբ նրան այդպիսին համարում է դատարանը՝ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով։

Անմեղության կանխավարկածը, որպես արդար դատաքննության իրավունքի անբաժան տարր, իր կարևորությամբ և հիմնարար բնույթով վաստակել է ինքնուրույն քրեադատավարական սկզբունքի կարգավիճակ և ամրագրում ստացել քրեական արդարադատության ժողովրդավարական համակարգ ունեցող գրեթե բոլոր պետությունների օրենսդրություններում։

Ավելորդ չէ նշել, որ թեպետև մեղադրյալի մեղավորության և քրեական պատժի կիրառման հարցերը վերաբերում են քրեական դատավարությանը, սակայն անձի մեղավորության մասին հարցեր առաջանում են նաև վարչական և քաղաքացիական գործեր քննելիս, ու անմեղության կանխավարկածը տարածվում է պատասխանատվության բոլոր տեսակների վրա։ Ի դեպ, անմեղության կանխավարկածի հասկացությունը հայտնի է դեռևս հռոմեական քաղաքացիական իրավունքից, որտեղ այն անվանվում էր բարեխղճության կանխավարկած (*Praesumptio boni viri*) ու ելնում էր նրանից, որ իրավահարաբերությունների մասնակիցը համարվում էր բարեխիղճ (*bona fide*), իսկ եթե որևէ մեկը հակառակն էր պնդում, նա էլ պարտավոր էր դա ապացուցել։

Ամեղության կանխավարկածի սկզբունքը այն արժեքներից է, որը կոչված է ապահովելու քրեական արդարադատության ոլորտում մեղադրյալի իրավունքների պաշտպանությունը։ Ամեղության կանխավարկածը ոչ պակաս չափով նաև հենց արդարադատության իրականացման երաշխիք է։ Մեղադրանքի անկասկածելի ապացուցվածության և չփարատված ողջամիտ կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու պահանջները պայմանավորում են քրեական դատավարության սուբյեկտների կողմից գործի հանգամանքներն օբյեկտիվ ու անկողմնակալ պարզումը, ինչը հանդիսանում է արդարացի դատավճիռ կայացնելու անհրաժեշտ պայման։

Ի դեպ, մեղադրյալի անմեղության կանխավարկածը, իբրև քրեադատա-

⁶ Տե՛ս Ա. Ղամբարյան, *Իրավական կանխավարկածները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում, Հոդված, Արդարադատություն, 2014, 4/27/*։

վարական սկզբունք, որն ուղղված էր ֆեոդալական դատարանների չարաշահումների դեմ, առաջին անգամ ձևակերպել է 1764 թվականին իտալացի լուսավորիչ-իրավաբան Չեզարե Բեքարիան՝ իր «Հանցագործությունների և պատիժների մասին» աշխատության «Խոշտանգումները» վերտառությամբ գլխում: Իրավունքի և օրենսդրության ժողովրդավարացմանը գուզնթաց հետազայում այն դարձել է միջազգային իրավունքի սկզբունք ու ամրագրվել «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում» (1948 թ., հոդ. 11), «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում (1966 թ.), «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում» (1950 թ., հոդ. 6, մաս 2): Արցախի Հանրապետությունում անմեղության կանխավարկածի սկզբունքն առաջին անգամ ամրագրվել է 2006 թ. Սահմանադրությամբ, իսկ այնուհետև ամրագրվել է 2017 թ. Սահմանադրությամբ, որի 66-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Անմեղության կանխավարկածի սկզբունքն առավել մանրամասն կարգավորված է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածում, համաձայն որի՝

1. Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

2. Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը:

Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են իսկապես մեղադրյալի կամ կասկածյալի:

5. Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր:

Շնորհանրապես քրեական դատավարությունում ապացուցման բեռի բաշխումն իրականացվում է կանխավարկածների հիման վրա: Ապացուցման պարտականությունը կողմի վրա դնելիս ենթադրվում է, որ՝ ա) տվյալ կողմը ապացուցման պրոցեսում իր նյութական և կազմակերպական հնարավորություններով փաստացի ավելի ուժեղ է, քան հակառակ կողմը, բ) հանգամանքները, որոնք ակնկալվում են, որ կապացուցի տվյալ կողմը, նրա համար օբյեկտիվորեն հասանելի են: Կողմերի մրցակցային հավասարությունն ապահովելու նպատակով նույն կանոնն է գործում նաև վարչական դատավարությունում:

Քանի որ ապացուցման գործընթացում վարույթն իրականացնող մարմնի և քրեական հետապնդման ենթարկված անձի հնարավորությունները հավասար չեն, ուստի օրենսդիրը, փորձելով մեղմացնել ապացուցման գործընթացում առկա անհավասարությունը, մեղադրյալի համար սահմանում է որոշակի

առավելություններ, նրա վրա չի դնում իր անմեղությունն ապացուցելու պարտականություն, իսկ մեղադրանքի ապացուցման և ի պաշտպանություն մեղադրյալի բերված փաստարկների հերքման պարտականությունը հանրային քրեական հետապնդման դեպքում դնում է հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, իսկ մասնավոր քրեական հետապնդման դեպքում՝ տուժողի և նրա ներկայացուցչի վրա, ինչը բխում է անմեղության կանխավարկածի սկզբունքից:

Պետական մարմինները ապացուցման պարտականություն են կրում այն իմաստով, որ նրանք դատավարության համապատասխան փուլերում գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտման համար հավաքում, ստուգում և գնահատում են ապացույցները:

Քրեական գործով մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, քանի որ նա, մինչև մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մեջ մտնելը, համարվում է անմեղ: Մեղադրյալը պարտավոր չէ նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին ցույց տալ որևէ աջակցություն: Մեղադրյալի անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել նաև նրա պաշտպանի, օրինական ներկայացուցչի, պատասխանողի և նրա ներկայացուցչի վրա: Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր ողջամիտ կասկածները, որոնք չեն կարող փարատվել օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածալի: Ընդ որում, կասկածները կարող են վերաբերել ոչ միայն մեղադրանքի ողջ ծավալին, այլև մեղադրանքի առանձին դրվագներին, մեղքի ձևին, հանցագործությանը մասնակցության աստիճանին և բնույթին, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներին, առանձին վերցրած ապացույցներին:

Անթույլատրելի է մեղադրյալին հարկադրել ցուցմունքներ տալ ոչ միայն իր կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, այլև իր պաշտպանության օգտին, իսկ մեղադրյալի կողմից մեղքի ընդունումը քրեական հետապնդման մարմնին չի ազատում մեղադրանքի ապացուցման պարտականությունից:

Պաշտոնատար անձինք իրենց հրապարակային ելույթներում պարտավոր են պահպանել անմեղության կանխավարկածի սկզբունքը և մեղադրյալին (կասկածյալին) չհամարեն մեղավոր մինչև դատավճիռն ուժի մեջ մտնելը (տվյալ դեպքում ճիշտը «հանցագործության մեջ մեղադրվող կամ կասկածվող» ձևակերպումն է): Ինչպես քննիչը, այնպես էլ դատախազը չեն որոշում մեղադրյալի վերջնական մեղավորությունը, այդ մասին նրանց հետևությունները միայն ենթադրություններ են:

Դատարանը մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացման պահին իր գործողություններով, այդ թվում՝ որոշումներով, որևէ կերպ չպետք է սուբյեկտիվ դիրքորոշում հայտնի ամբաստանյալին ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածության կամ անհիմն լինելու մասին: Դատարանը չի կարող հանդես գալ ոչ մեղադրանքի, ոչ էլ պաշտպանության կողմում, չի կարող կատարել նրանց պարտականությունները: Պետությունը պետք է ապահովի դատարանի անկախությունը և անկողմնակալությունը:

Քանի դեռ ապացուցված չէ անձի մեղավորությունը, նա անմեղ է. չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղությանը: Ընդ որում, անմեղության կանխավարկածի սկզբունքը ենթադրում է ապացույցների այնպիսի ամբողջության առկայություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար: Միայն այդ դեպքում

անմեղության կանխավարկածը կարող է համարվել հաղթահարված:

Արդյո՞ք մինչդատական վարույթներում ոչ ռեաբիլիտացնող (ոչ արդարացնող) հիմքերով քրեական գործի վարույթը կարճելու դեպքում չի խախտվում անմեղության կանխավարկածի սկզբունքը:

Այս հարցը քննադատության առարկա է դեռևս խորհրդային ժամանակներից: Որոշ դատավարագետներ պնդում են, որ նախաքննության ընթացքում քրեական գործի կարճման ոչ ռեաբիլիտացնող հիմքերի կիրառումը հակասում է անմեղության կանխավարկածի հիմնարար սկզբունքին, քանի որ քննիչը դրանով իսկ հաստատում է անձի մեղավորությունը հանցագործության կատարման մեջ: Մինչդեռ անմեղության կանխավարկածի սկզբունքի համաձայն, անձը հանցագործության կատարման մեջ մեղավոր կարող է ճանաչվել բացառապես դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Դրանից հետևություն էր արվում, որ անհրաժեշտ է նախաքննության մարմնին զրկել ոչ ռեաբիլիտացնող (ոչ արդարացնող) հիմքերով քրեական գործի վարույթը կարճելու իրավունքից: Կամ ընդհանրապես վերացնել այդ ինստիտուտը, կամ էլ այդ իրավունքով օժտել միայն դատարանին, որտեղ նախաքննության մարմինը կարող է ներկայացնել համապատասխան միջնորդություն:

Սակայն նշված քննադատությունը տեղին չէ: Գրականության մեջ իրավացիորեն նշվել է, որ քննիչը ոչ ռեաբիլիտացնող հիմքերով կարճելով քրեական գործը, հաստատում է անձի օբյեկտիվ կարգավիճակը, իսկ անմեղության կանխավարկածի ուժով շարունակում է գործել անձի անմեղության ենթադրությունը, որը կարող է հաղթահարվել միայն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով⁷:

Գրականության մեջ իրավացիորեն նշվել է, որ նման դեպքերում քննիչը, կարճելով քրեական գործը, հաստատում է անձի օբյեկտիվ կարգավիճակը, որ անձը քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո անմեղության կանխավարկածի ուժով համարվում է անմեղ, իսկ մեղադրյալի մեղավորությունը կարող է հաստատվել միայն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով⁸:

Գրականության մեջ իրավացիորեն նշվել է, որ նման դեպքերում քննիչը, կարճելով քրեական գործը, հաստատում է անձի օբյեկտիվ կարգավիճակը, որ անձը քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո անմեղության կանխավարկածի ուժով համարվում է անմեղ, իսկ մեղադրյալի մեղավորությունը կարող է հաստատվել միայն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով⁹:

Արդյո՞ք ոչ ռեաբիլիտացնող (ոչ արդարացնող) հիմքերով քրեական գործի վարույթը կարճելու դեպքում չի խախտվում անմեղության կանխավարկածի սկզբունքը: Գրականության մեջ իրավացիորեն նշվել է, որ նման դեպքերում քննիչը,

⁷ Տե՛ս, օրինակ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, *Ընդհանուր մաս*, Երևան- 2006, էջ 161: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, *գիտ.խմբ. Ա. Ղամբարյան*,

Եր.-2016, էջ 425:

⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, *Ընդհանուր մաս*, Երևան- 2006, էջ 161: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, *գիտ.խմբ. Ա. Ղամբարյան*, Եր.-2016, էջ 425:

⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, *Ընդհանուր մաս*, Երևան- 2006, էջ 161: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, *գիտ.խմբ. Ա. Ղամբարյան*, Եր.-2016, էջ 425:

կարճելով քրեական գործը, հաստատում է անձի օբյեկտիվ կարգավիճակը, որ անձը քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո անմեղության կանխավարկածի ուժով համարվում է անմեղ, իսկ մեղադրյալի մեղավորությունը կարող է հաստատվել միայն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով¹⁰:

Դատավարական իրավունքի զարգացումների ներկա պայմաններում առաջացել է առանձին վարկածների ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելու թույլատրելիության հիմնախնդիրը:

Այս կապակցությամբ ուշադրության է արժանի Եվրոպական դատարանի պրակտիկան, մասնավորապես, կոնկրետ գործով պաշտպանության կողմը չի ներկայացրել արդարացնող ապացույցներ, իսկ մեղադրյալը հրաժարվել է տալ որևէ բացատրություն: Եվրոպական դատարանը, քննելով դիմողի բողոքը, ընդունել է, որ անթույլատրելի ոչինչ չկա այն ենթադրությունում, թե անձը, ով տիրապետում է ընդհանուր առմամբ արգելված որևէ բանի, պարտավոր է բավարար չափով բացատրել այդ փաստը, հակառակ դեպքում նա կճանաչվի մեղավոր/ *St u Pham Hoang v. France* //Ser.A. N 243. 25. 09. 1992/:

Եվրոպական դատարանը նման հետևության է հանգել նաև «X.- ն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով: Հանձնաժողովը կիրառելի է համարել այն կանխավարկածը, որ դիմողը, որը, ինչպես պարզվել էր, ապրում էր մարմնավաճառությամբ զբաղվող մի կնոջ հետ, և հնարավոր է՝ հանդիսանում էր նրա կավատը, գոյատևում էր բարոյագուրկ ճանապարհով ստացվող եկամուտներով (X.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության. 42 CD 135):

Կոնկրետ գործով, որը վերաբերում էր պահատուփի առաքում իրականացրած դիմողին և բեռնավորված է եղել թմրամիջոցներով, Դատարանը հանգել է հետևյալ եզրակացությանը. «Քանի որ ազգային դատարանն իրավիճակի գնահատման հարցում ազատ է եղել, հաշվի է առել գործի փաստերը և վերացրել է ավելի վաղ ընդունված դատավճիռներից մեկը, ապա Կոնվենցիայի 6- րդ հոդվածի 2-րդ կետը չի խախտվել: Մեղադրանքի կողմի վրա ապացուցման պարտականությունն դնելը բխում է վարույթի իրականացնող մարմնի վրա դրված պարտականություններից, մասնավորապես՝ քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, բացահայտել հանցագործությունները և ի հայտ բերել հանցանք կատարած անձին: Այդ պարտականությունների իրականացումը պետության կողմից երաշխավորվում է՝ քրեական հետապնդում իրականացնող մարմիններին նյութական և կազմակերպական այնպիսի միջոցներով և հնարավորություններով օժտելը, որը կապահովի նրանց առջև դրված խնդիրների իրականացումը: Իհարկե, այդ բոլորը մեղադրանքի կողմի համար անհրաժեշտ է դատարանի առջև անձի մեղավորությունը հիմնավորելու համար: Իհարկե, Եվրոպական դատարանը չի բացառում ազգային օրենսդրությունում իրավական կամ փաստական կանխավարկածների առկայության հնարավորությունը, որն անմեղությունն ապացուցելու պարտականությունը որոշակի դեպքերում փոխանցվում է պաշտպանության կողմին: Սակայն յուրաքանչյուր դեպքում ապացուցման բեռը պետք է փոխանցվի ողջամիտ սահմաններում՝ հաշվի առնելով մեղադրյալի պաշտ-

¹⁰ *St u Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, Երևան- 2006, էջ 161: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, գիտ.խմբ. Ա. Ղամբարյան, Եր.-2016, էջ 425:*

պանության իրավունքը» (Մալաբյակուն ընդդեմ Ֆրանսիայի, 1988 թ. հոկտեմբերի 7):

Ներկայումս էկոլոգիական իրավախախտումների կանխմանն ուղղված քաղաքականության գործիքներից է իրավախախտման օբյեկտիվ կողմի առկայությունը կամ բացակայությունը հաստատող առանձին փաստերի ապացուցման պարտականության բաշխման փոփոխությունը: Օրինակ՝ ապացուցման պարտականության բաշխման փոփոխությունը կիրառվում է կոնկրետ պետության բացառիկ տնտեսական գոտում այլ պետության նավի ապօրինի ձկնորսության գործերի քննության ընթացքում: Այս դեպքում ավանդական անմեղության կանխավարկածի կիրառությունը սահմանափակվում է, քանի որ մեղադրյալը պարտավոր է ներկայացնել այնպիսի ապացույցներ, որոնց ձեռք բերումն առավել դյուրին է պաշտպանության կողմի, քան մեղադրողի համար:

Ապացուցման պարտականության բաշխման հարցում հետաքրքիր է բրիտանական փորձը: Անգլիական ստատուտներով և դատական նախադեպերով սահմանվում են մի շարք դեպքեր, երբ մեղադրյալի վրա է դրվում առանձին փաստերի ապացուցման պարտականությունը: Այսպես, դրամանենգության մասին 1936թ. օրենքի համաձայն՝ անգլիական քրեական դատավարությունում դրամի կեղծման և դրամահատման համար նախատեսված սարքավորումների տիրապետման օրինականության ապացուցման պարտականությունը դրվում է մեղադրյալի վրա: Անմեղսունակության ապացուցման պարտականությունը կրում է պաշտպանության կողմը: Այս դրույթն առաջին անգամ ձևակերպվել է Նոուտենի գործով (1843 թ.) և հաստատվել Ուոլմինգտոնի գործով (1935 թ.): Ուոլմինգտոնի գործով լորդ կանցլերը Լորդերի պալատին է ներկայացրել մի ամբողջ հետազոտություն, որտեղ եզրակացնում է. «Անգլիական իրավունքում կարմիր թելի պես անցնում է այն կանոնը, որ մեղադրյալի մեղավորության ապացուցման պարտականությունը դրվում է մեղադրողի վրա, եթե խոսքը չի վերաբերում հոգեկան հիվանդությանը կամ էլ օրենքով նախատեսված այլ բացառություններին»¹¹:

Հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգրքում ապօրինի հարստացման դեմ պայքարի իրականացման համար կատարված օրենսդրական փոփոխությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 310.1 հոդված) ուղղակի կարող է առնչվել անմեղության կանխավարկածի սկզբունքին այն իմաստով, որ ապօրինի հարստացման մեջ մեղադրվող անձի վրա կարող է դրվել պարտականություն ապացուցելու հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը կամ պարտականությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով:

Ապացուցման բեռը մեղադրանքի կողմից պաշտպանության կողմի վրա տեղափոխելը նոր մոտեցում է քրեական դատավարությունում, որն ուղղակի հակասում է այն հանրահայտ գաղափարին, որ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը¹²:

Ապացուցման պարտականության հետ սերտորեն կապված է «լռության իրավունքի» հիմնախնդիրը, երբ անձի կողմից իր անմեղության վերաբերյալ ապացույցներ չներկայացնելը չի դիտարկվում իբրև նրա մեղավորության ապացույց:

¹¹ Skeu՝ Вульф В. Я. О бремени доказывания в английском уголовном процессе. Советское государство и право. - 1962, N 7, էջ 127-131:

¹² Skeu՝ Դիրանդյան Ս., Անմեղության կանխավարկածը և ապացուցման պարտականությունը քրեական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2017:

Հնդհանուր առմամբ, քանի որ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր մեղավորությունը, վերջինիս կողմից լռություն պահպանելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա: Մինևույն ժամանակ. «լռության իրավունքը» բացարձակ չի համարվում: Այսպես, Ջոն Մայերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրադատարանը նշել է. «Չնայած որ անթույլատրելի է մեղադրանքը կառուցել բացարձակապես կամ հիմնականում մեղադրյալի լռության կամ նրա հարցերին պատասխանելուց հրաժարվելու հանգամանքի վրա, միանգամայն ակնհայտ է, որ նշված առավելությունը չի կարող կանխել այն, որ մեղադրյալի լռության փաստը հաշվի կառնվի այնպիսի իրավիճակներում, որոնք բացատրության կարիք են զգում/.../: Տրամաբանական եզրակացությունների կիրառումն առողջ բանականության դրսևորում է համարվում այն պայմաններում, երբ դիմումատուն հրաժարվել է իր գործողություններին հիմնավորված բացատրություններ ներկայացնելուց»:

Այսպիսով, հայրենական քրեական դատավարության իրավունքում անմեղության կանխավարկածի սկզբունքի ուժով մեղադրանքի ապացուցման և ի պաշտպանություն մեղադրյալի բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը, բացառությամբ այն դեպքերի, երբ գործում են օրենքով սահմանված այլ կանխավարկածներ: Սակայն յուրաքանչյուր նման դեպքում ապացուցման բեռը պետք է փոխանցվի ողջամիտ սահմաններում և պետք է հաշվի առնվի մեղադրյալի պաշտպանության իրավունքը:

НЕКОТОРЫЕ ОСНОВЫ ПРЕЗУМПЦИИ НЕВИННОСТИ В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ - ГРЕТА АРЗУМАНЯН, АРМИНЕ КАРДУМЯН - Некоторые проблемы презумпции невиновности в уголовном процессе РА. Статья посвящена самому признанному принципу отечественного уголовного процесса- презумпции невиновности. Разъяснено значение и сущность принципа. Особое внимание уделено анализу влияния презумпции невиновности на доказательственный процесс и процесс правосудия в целом. Выявлены проблемы теоритического, законодательного и правоприменительного характера, представлены соответствующие предложения.

Ключевые слова: уголовный процесс, правовой принцип, правовые презумпции, фактические презумпции, презумпция невиновности, бремя доказывания, право на справедливое судебное рассмотрение, прекращение уголовного дела, презумпция виновности, право на молчание.

SOME BASIC ISSUES OF THE PRESUMPTION OF INNOCENCE IN CRIMINAL PROCEEDING IN THE REPUBLIC OF ARTSAKH - GRETA ARZUMANYAN, ARMINE KARDUMYAN - The article is dedicated to the presumption of innocence, considered the most recognized principle in national criminal proceedings. The essence and meaning of the principle has been clarified. Special attention was paid to the analysis of the impact of the presumption of innocence on the proof process and the administration of justice as a whole.

The problems of theoretical, legislative and jurisprudential character were raised, relevant proposals were presented.

Key words: criminal procedure, legal principle, legal presumptions, factual presumptions, presumption of innocence, burden of proof, right to fair trial, dismissal of criminal case, presumption of guilt, right to remain silent.

«ВОЛКИ-ВОИНЫ» КАК ОСОБЫЙ ФЕНОМЕН КИТАЙСКОЙ ДИПЛОМАТИИ И ПОЛИТИЧЕСКИХ ЭЛИТ В ГОДЫ ПРАВЛЕНИЯ СИ ЦЗИНЬПИНА

Статья рассматривает «дипломатию волков-воинов» как особый феномен в китайской дипломатической практике. В статье были изучены истоки ее появления, рассмотрены примеры применения данной тактики со стороны официальных лиц МИД КНР, которых в научной печати называли «волками-воинами». Были изучены причины появления данного явления и его широкого использования во время второго срока правления председателя КНР Си Цзиньпина. Сделан вывод о том, что в структуре МИД КНР, а так же в ряде китайских СМИ, существует прослойка деятелей, которые регулярно применяют данную тактику с целью повышения как собственного авторитета, так и популярности действующей китайской политической элиты среди той части китайского социума, которая имеет правые взгляды. Это возможно благодаря тому, что была обнаружена общемировая тенденция к росту правых националистических настроений, связанных с ухудшением социально-экономического положения в мире. Кроме того, повышению правых настроений в китайском социуме способствовала сама китайская политическая элита, сделав выбор модели развития в пользу традиционной конфуцианской парадигмы развития.

Ключевые слова: КНР, Китай, волки-воины, дипломат, МИД, радикализация, национализм, правые, внешняя политика, Си Цзиньпин, кризис.

Приход к власти Си Цзиньпина и его сторонников в 2012 году стал во многом поворотным моментом в истории современного Китая. Это дало старт масштабным преобразованиям как внутри Китая, так и вне Поднебесной.

Впервые за долгие десятилетия с момента смерти Мао Цзедунa Китайская Народная Республика активизировала ведение внешней политики, отойдя от предложенной Дэном Сяопином концепции *tāoguāng-yǎnghuì* (держаться в тени и стараться ничем не проявлять себя)¹. Когда-то она была предложена товарищем Дэном во времена, когда Китай просто не имел возможности прямо противостоять остальным влиятельным государствам, таким как СССР или США. Во внешней политике данная концепция подчеркивала необходимость избегать открытых споров и использовать компромиссную и максимально корректную риторику.

Следование данной концепции было своеобразной визитной карточкой китайской дипломатии в течение правления как Цзянь Цземина, так и Ху Цзиньтао, несмотря на то, что в годы правления обоих лидеров нередко случались серьезные внешнеполитические кризисы. Среди таких кризисов можно отметить инцидент с американским самолетом-разведчиком в 2001 году или непрекращающиеся провокации, связанные со спорными островами, такими как, например, Архипелаг Сэнкаку.

Однако с приходом к власти Си Цзиньпина ситуация стала меняться.

¹ Денисов И.Е. Эволюция внешней политики Китая при Си Цзиньпине// *Международная жизнь*, No 5, 2015, стр. 40-54. Доступ к ресурсу-https://interaffairs.ru/virtualread/ia_rus/52015/files/assets/downloads/publication.pdf

Некоторые официальные лица КНР, в основном из структуры Министерства иностранных дел и организаций, связанных с китайскими СМИ, стали позволять себе гораздо больше эмоциональности на публичных выступлениях и мероприятиях, отвечая на критику со стороны западных политических деятелей, или же наоборот, обвиняя своих внешнеполитических конкурентов в тех или иных проступках. Со временем это привело к тому, что данное явление было замечено в западной печати и получило название «дипломатии волков-воинов».

Это название появилось в мировой печати относительно недавно. Англоязычная газета *«Global Times»*, которая является структурным подразделением официальной газеты Коммунистической партии Китая «Жэньминь жибао», так описывает историю появления данного термина.

Фраза «дипломатия воина-волка» происходит от патриотического китайского боевика «Воина волков 2», который стал первым фильмом, собравшим более 874 миллионов долларов в китайском прокате. В нем рассказывается история китайского спецназовца, который спасает медицинских работников от местных повстанцев и злобных торговцев оружием в африканской стране. Некоторые западные СМИ исказили эту фразу, сделав ее символом агрессивного национализма².

Западные СМИ очень быстро обратили внимание на «Войну Волков 2». Так, *The New York Times* дала достаточно широкий обзор на фильм с политическим подтекстом после его премьеры³. Более того, авторитетное издание, специализирующееся на внешней политике *The Diplomat*, так же обратило внимание на вторую часть «Войны Волков»⁴. Обе статьи рассматривали фильм как образец современной китайской пропаганды и отмечали тенденцию к ура-патриотизму в китайском обществе на основе впечатляющих кассовых сборов. Более того, оба издания отметили схожесть фильма с другой политизированной франшизой, американским «Рэмбо» и указали на то, что ее главный герой похож на Джона Рэмбо.

Параллельно появлению нового типа китайского пропагандистского кино стали учащаться случаи, когда отдельные китайские дипломаты стали употреблять достаточно грубые формулировки в ответ на те или иные обвинения, звучащие со стороны иностранных политиков, бизнесменов, журналистов и других публичных деятелей. Их в научной и публицистической печати стали называть «Волками-воинами».

Стоит отметить, что «волки-воины», в отличие от других кадровых дипломатов, достаточно активно используют современные цифровые средства и социальные сети, такие как Твиттер и Фейсбук. Чаще всего именно через соц.сети они доносят до широкой аудитории как свое собственное мнение, так и официальную позицию тех органов власти КНР, к которым имеют отношения.

Наиболее известным китайским дипломатом, которого в западной печати называют одним из «волков-воинов», является Чжао Лицзянь, занимающий должности заместителя директора Департамента информации МИД КНР и пресс-секретаря МИДа.

² Yang S. Hu Y. Lin X. China's 'wolf warrior sentiment' shows confidence, correction to 'irrational worship of the West'// *Global Times*, 08.12.2020. Доступ к ресурсу-<https://www.globaltimes.cn/content/1209277.shtml>

³ In China, an Action Hero Beats Box Office Records// *The New York Times*, 16.08.2017. Доступ к ресурсу-<https://www.nytimes.com/2017/08/16/world/asia/china-wolf-warrior-2-film.html>

⁴ VornDick W. Analysts Take Note: Wolf Warrior Is the New Chinese Rambo// *The Diplomat*, 20.09.2017. Доступ к ресурсу-<https://thediplomat.com/2017/09/analysts-take-note-wolf-warrior-is-the-new-chinese-rambo/>

На западе он известен своими крайне грубыми выступлениям, обличающими внешнюю политику США и ее союзников⁵.

Так, например, в ноябре 2020 года после публикации так называемого Отчета генерального инспектора Сил обороны Австралии о расследовании в Афганистане, известном как отчет Бреретона о военных преступлениях австралийских военнослужащих, Чжао Лицзян с помощью своего аккаунта в Твиттере опубликовал изображение, на котором австралийский солдат держит окровавленный нож у горла афганского ребенка. На изображении была сделана надпись: «Не бойтесь, мы идем, чтобы принести вам мир!». Кроме того, под изображением была сделана следующая ремарка: «Шокирован убийством афганских мирных жителей и пленных австралийскими солдатами. Мы решительно осуждаем такие действия и призываем привлечь их к ответственности»⁶.

Это привело к серьезнейшему политическому скандалу и, по мнению австралийского премьер-министра Скотта Моррисона: «Это совершенно возмутительно и не может быть оправдано никакими основаниями. Китайскому правительству должно быть крайне стыдно за этот пост. Это умаляет их в глазах всего мира»⁷.

Это далеко не первое заявление подобного рода. Однако, несмотря на то, что резонансная публикация явно не пошла на пользу двухсторонним отношениям, которые и так находятся не в лучшем состоянии из-за постоянных скандалов и участия Австралии в военном блоке QUAD, Чжао Лицзян по-прежнему занимает должность пресс-секретаря МИД и продолжает делать одно резонансное заявление за другим.

Кроме того, в китайском МИДе, и не только, образовалась целая прослойка дипломатов, ведущих себя аналогично Чжао Лицзяну. В условиях устоявшейся властной вертикали и жесточайшей внутренней дисциплины в рядах как государственного, так и партийного аппарата КПК подобного не могло бы произойти без неофициального дозволения или прямого приказа от высшего руководства партии и правительства КНР.

Выступления «волков-воинов» несут в себе не только критику геополитических противников Китая, но и, как утверждают западные исследователи, солидную долю китайского национализма, в связи с чем, достаточно активно поддерживаются китайскими правыми⁸.

При изучении «волков-воинов», лишь недавно проявивших себя в китайском государственном аппарате, стоит учитывать один важный факт. В целом правые настроения в китайском обществе вписываются в наблюдаемую в последнее десятилетие тенденцию к радикализации внешней политики ведущих геополитических игроков. Официальные сообщения и высказывания высших чиновников ведущих стран

⁵ Dai Y. Luqiu L.R. *China's Wolf Warrior Diplomacy and Xi Jinping's Grand Diplomatic Strategy*// *The China Review, The Chinese University of Hong Kong Press, Vol.22, No.2, May 2022, pp.253-283*. Доступ к ресурсу-https://www.researchgate.net/publication/350677590_China's_Wolf_Warrior_Diplomacy_and_Xi_Jinping's_Grand_Diplomatic_Strategy

⁶ Rej A. *Australia Livid as Chinese Foreign Ministry Spokesperson Tweets Offensive Image*// *The Diplomat, 30.11.2020*. Доступ к ресурсу-<https://thediplomat.com/2020/11/australia-livid-as-chinese-foreign-ministry-spokesperson-tweets-offensive-image/>

⁷ Nidham K. *Australia demands apology from China after fake image posted on social media*// *The Reuters, 30.11.2020*. Доступ к ресурсу-<https://www.reuters.com/article/us-australia-china-idUSKBN28A07Y>

⁸ Golley J. Jaivin L. *Strange S. The China Story Yearbook 2020: Crisis*. ANU Press, The Australian National University, Canberra, 2021. P. 36. Доступ к ресурсу-https://books.google.am/books?Id=D1crEAAAQBAJ&pg=PA36&redir_esc=y#v=onepage&q&f=false

становятся грубее и смелее, а из политического лексикона уходят неопределенные формулировки. Чаще возникают ситуации, где политики одних государств прямо указывают на своих геополитических противников в качестве виновников кризисных явлений внутри собственных стран, чего ранее старались избегать.

Это происходит из-за того, что в условиях радикализации общественного мнения у политиков возникает соблазн использовать правые настроения в обществе для укрепления личной или коллективной власти. Политические элиты стран достаточно часто используют правый популизм как оружие, способное поддержать рейтинги доверия со стороны населения. Поиски внешних врагов, которых можно было бы обвинить в неудачах действующей администрации и снять с себя хотя бы часть вины за внутриполитические просчеты являются лишь частью подобного поведения.

Наиболее свежим примером продвижения подобного рода нарратива является так называемая «Путинская инфляция». Согласно этому нарративу, запущенному администрацией президента Байдена, именно из-за действий или бездействий российского лидера в США начались серьезные экономические проблемы. Этот нарратив продвигается даже несмотря на то, что серьезные проблемы в экономике США и общественное неудовольствие действующей администрацией существовали еще до начала Боевых действий на Украине⁹.

Другим примером, который относится к данной категории, можно назвать обвинение США в разработке и распространении вируса COVID-19 со стороны китайских властей, которое впервые озвучил вышеупомянутый Чжао Лицзянь.¹⁰ После этого китайская пропаганда стала активно раскручивать данную идею.

Опираясь на вышеназванный тезис, мы можем заметить, что существует прямая закономерность между радикализацией политики и экономическими процессами, протекающими в мире. Ухудшение экономической ситуации приводит к тому, что внутриполитическая и внешнеполитическая повестка становится более радикальной. Как правило, после экономического кризиса общество начинает праветь, а националистические и популистские силы приобретают весьма серьезное влияние на процесс принятия решений¹¹.

В таких условиях важнейшее значение приобретает не то, как дипломат исполняет свои непосредственные обязанности, а какое восприятие по отношению к нему будет со стороны политического руководства и населения его страны. Так Питер Мартин, автор книги «China's Civilian Army: The Making of Wolf Warrior Diplomacy», вышедшей в 2021 году, в своем интервью отметил, что многие китайские дипломаты знают, что реакция на дипломатию «волков-воинов» была очень негативной и фактически наносила ущерб интересам Китая в самых разных случаях. Однако, как и ранее, основной аудиторией для работников китайского МИДа являются местные политики. Поэтому реакция иностранцев и посторонних не является главным

⁹ This Isn't Putin's Inflation// *The Wall Street Journal*, 12.04.2022. Доступ к пєсцпсц-<https://www.wsj.com/articles/it-isnt-vladimir-putins-inflation-white-house-joe-biden-consumer-price-index-energy-wages-11649792567>

¹⁰ Westcott B. Jiang S. Chinese diplomat promotes conspiracy theory that US military brought coronavirus to Wuhan// *CNN*, 14.03.2020. Доступ к пєсцпсц-<https://edition.cnn.com/2020/03/13/asia/china-coronavirus-us-lijian-zhao-intl-hnk/index.html>

¹¹ Funke M. Schularick M. Trebesch C. *Politics in the Slump: Politics after financial crises, 1870–2014. European commission report*, Berlin, 23.09.2015. Доступ к пєсцпсц-https://ec.europa.eu/economy_finance/events/2015/20151001_post_crisis_slump/documents/c_trebesch.pdf

мотиватором для китайских дипломатов¹².

Дипломатия волков-воинов достаточно неплохо вписывается в указанный нарратив, как один из множества методов, используемых действующей политической элитой КНР для укрепления собственной власти. Особенно активно тактика «волков-воинов» стала применяться во время пандемии коронавируса, имевшего очень серьезные экономические и политические последствия. Именно к этому периоду приходятся наиболее резонансные заявления вышеупомянутого Чжао Лицзяна и других «волков-воинов».

Кроме того, именно в этот период времени замечен настоящий всплеск публикаций о «дипломатии воинов-волков» в западной прессе и научной периодике. Это привело к тому, что выражение «дипломатия волков-воинов» стало устойчивым клише не только в западных масс-медиа, но и в научной литературе.

Можно так же отметить, что китайские «волки-воины» и те представители китайских политических элит, которые применяют их тактику, как минимум в публичной политике занимают ту же нишу, что и американские «ястребы» в политической истеблишменте США.

Кроме всего перечисленного необходимо учитывать и тот факт, что правые настроения в КНР имеют гораздо большие институциональные основы, чем принято считать. Еще в 2014 году на Центральной конференции по рабочим вопросам во внешней политике председатель Си заявил, что «мы никогда не откажемся от наших законных прав и интересов и не позволим подорвать множество интересов Китая». Си Цзиньпин подчеркнул важность подхода к защите интересов Китая и отстаивания духа «отваги на борьбу». В то время как Китай может и должен идти на уступки в создании «Сообщества общего будущего», мышление «итогового уровня» означает, что нет места для компромисса по вопросам, которые считаются ключевыми национальными интересами¹³.

Кроме того, важнейшие изменения произошли в восприятии китайскими элитами традиционных китайских ценностей. Так, в ноябре 2013 г. председатель КНР посетил храм Конфуция на родине мыслителя в г. Цюйфу провинции Шаньдун, где заявил, что высоко ценит работы философа. В сентябре 2014 г. он выступил с речью на международном семинаре в Пекине по случаю дня рождения Конфуция и подчеркнул значимость традиционной китайской культуры¹⁴.

Профессор Сергей Грачиков в своей работе «Геополитика Китая: эгоцентризм и пространство сетей» указал на данные факты как на признак того, что политические элиты страны сделали выбор в пользу традиционного конфуцианского пути развития, то есть построение китаецентричного мира, уже существовавшего на региональном уровне вплоть до Опиумных войн. Это особенно важно в свете того, что Китай, по его мнению, все прошедшие десятилетия находился в непрерывающемся поиске модели развития, выбирая между современным прочтением традиционного конфуцианства и с идеями

¹² Nawrotkiewicz J. *Understanding Chinese "Wolf Warrior Diplomacy"* // *The National Bureau of Asian Research*, 22.10.2021. Доступ к тексту - <https://www.nbr.org/publication/understanding-chinese-wolf-warrior-diplomacy/>

¹³ Dai Y. Luqiu L.R. Pp. 253-283. Доступ к тексту - https://www.researchgate.net/publication/350677590_China's_Wolf_Warrior_Diplomacy_and_Xi_Jinping's_Grand_Diplomatic_Strategy

¹⁴ Грачиков Е.Н. *Геополитика Китая: эгоцентризм и пространство сетей*. М.: Издательство «Русайнс», 2015. – 234 с. Стр. 13. Доступ к тексту - https://www.researchgate.net/publication/284186891_Geopolitika_Kitaa_egocentrizm_i_prostranstvo_setej

Мао Цзедунa. С приходом к власти Си Цзиньпина, выбор был сделан¹⁵.

Впрочем, это совершенно неудивительно, учитывая политический бэкграунд и особенности биографии действующего председателя КНР. Кроме того, что сам Председатель Си является одним из так называемых «принцев», то есть потомственных функционеров Коммунистической партии Китая, он так же имеет отношение к китайским силовикам. В годы своего первого срока он последовательно укреплял свою власть внутри страны, эффективно используя не только борьбу с коррупцией, жертвами которой стали многие функционеры из конкурирующих с председателем Си внутрипартийных группировок «Комсомольцев» и «Шанхайцев», но и популистские лозунги, что обеспечило ему широкую поддержку населения¹⁶.

Опираясь на вышеназванные факты, можно утверждать, что «дипломатия воинов-волков» стала важным элементом сохранения и укрепления власти действующей китайской администрации. Данное явление отлично вписывается в мировой тренд по радикализации внешней политики и привнесению в него элементов патриотической риторики, тенденции, которая наблюдалась после финансово-экономического кризиса 2008-2009 годов в ряде стран, в том числе и считающихся демократическими.

Кроме того, важно понимать, что появление столь радикальных чиновников не могло быть заслугой только лишь внешних факторов, таких как критика проводимой администрацией Си Цзиньпина политики в области прав человека, пограничных споров, Тайваньского вопроса итд. В своей сути «волки-воины» являются выразителями интересов действующего китайского правительства и явно выполняют волю высшего руководства страны в лице председателя Си Цзиньпина и его сторонников.

Данный вывод сделан на основе анализа как политических взглядов самого Си Цзиньпина, который явно тяготеет к китайскому традиционализму, так и временного промежутка, во время которого появилось само явление «волков-воинов».

В 2017 году в Пекине прошел XIX съезд КПК, во время которого Си Цзиньпин и его сторонники не только укрепили свою власть в Политбюро и его Постоянном Комитете, главном органе управления Коммунистической партии Китая, но и добились права на проведение беспрецедентных поправок в Конституцию КНР, благодаря которому председатель Си получил право переизбраться на третий срок. В том же году вышел фильм «Война Волков 2», на выход которого обратили внимание не только ведущие издания США и ее союзников, но и научные круги.

Уже после 2017 года исследователи наблюдали скачкообразный рост враждебных высказываний со стороны официальных лиц КНР по отношению к геополитическим соперникам Китая. Эти данные особенно интересны в связи с тем, что в период с 2014 по 2017 год, то есть перед съездом КПК, частота враждебных высказываний, наоборот, уменьшалась¹⁷.

Однако начиная с мая 2021 года обозреватели отметили реорганизацию проводимой КНР внешней политики, путем перестановок в государственном аппарате КНР. Так, по сообщению The Diplomat, из наиболее одиозных «волков-воинов» были

¹⁵ Грачиков Е.Н. Стр.13. Доступ к ресурсу- https://www.researchgate.net/publication/284186891_Geopolitika_Kitaa_egocentrizm_i_prostranstvo_setej

¹⁶ Shukla S. The Rise of the Xi Gang: Factional politics in the Chinese Communist Party// ORF Occasional Paper No. 300, 2021. Доступ к ресурсу- <https://www.orfonline.org/research/the-rise-of-the-xi-gang/>

¹⁷ Dai Y. Luqiu L.R. Pp. 253-283. Доступ к ресурсу-https://www.researchgate.net/publication/350677590_China's_Wolf_Warrior_Diplomacy_and_Xi_Jinping's_Grand_Diplomatic_Strategy

отстранены от должностей или направлены на другую работу главный редактор англоязычной газеты *Global Times* Ху Сицзинь, которого называют создателем самого явления «дипломатии волков-воинов», и посла в Швеции Гуэй Конгю. Более того, вышеупомянутый Чжао Лицзянь хоть и сохранил свою должность, но серьезно уменьшил свою активность в соцсетях, что так же свидетельствует о том, что китайское руководство решило уменьшить информационное давление. Все вышеназванные действия произошли после того, как председатель Си Цзиньпинь сделал несколько замечаний на групповом заседании Политбюро ЦК КПК в мае 2021 года. На заседании Си подчеркнул необходимость для Китая улучшить свои международные связи, чтобы «расширить круг друзей, понимающих Китай». Для этого он призвал чиновников создать «надежный, привлекательный и респектабельный» образ Китая за границей¹⁸.

Однако это не значит, что тактика «дипломатии волков-воинов» перестала использоваться. Из недавних выступлений Чжао Лицзяня и других официальных лиц по поводу Боевых действий на Украине можно утверждать, что данная тактика продолжает оставаться в арсенале ведущих китайских дипломатов, занимающихся пропагандистской работой. Так, во время одного из официальных пресс-релизов МИД КНР Чжао Лицзянь прямо назвал США ответственным за политический кризис на Украине.¹⁹

Справедливости ради стоит отметить, что далеко не все китайские дипломаты и пропагандисты используют тактику «волков-воинов». Например, согласно анализу более 13 000 твитов китайских послов до и после вспышки COVID-19 в период с июня 2019 года по июль 2020 года только 5 процентов содержали гневную риторику в стиле «волков-воинов». Чаще всего китайские дипломаты очень тщательно работают над хорошим имиджем КНР за рубежом²⁰.

Анализируя все вышеприведенные факты, можно с уверенностью утверждать, что появление «волков-воинов» не является спонтанным. «Дипломатия волков-воинов» является частью проводимой действующим руководством КНР внешней политики и направлена в первую очередь на укрепление авторитета правящей элиты Китая внутри страны, поскольку, несмотря на конфронтационность, данная тактика пользуется определенной степенью поддержки в той части китайского общества, которое имеет сравнительно правые взгляды.

Более того, несмотря на то, что подобная риторика явно не пошла на пользу двухсторонним отношениям КНР с рядом стран, руководство Китая не прекратило ее использование. Это говорит нам о том, что положительный эффект на внутреннюю аудиторию превосходить отрицательный эффект на внешнюю, из-за чего применение столь грубого инструмента воздействия остается по-прежнему актуальным для китайских политических элит.

Подводя итоги, можно сказать, что «дипломатия волков-воинов» не является общей для китайского дипломатического аппарата явлением. Данную тактику применяет лишь небольшой процент кадровых дипломатов и пропагандистов, при том,

¹⁸ Powers-Riggs A. Jaramillo E. Is China Putting 'Wolf Warriors' on a Leash?// *The Diplomat*, 22.01.2022. <https://thediplomat.com/2022/01/is-china-putting-wolf-warriors-on-a-leash/>

¹⁹ Foreign Ministry Spokesperson Zhao Lijian's Regular Press Conference on July 19, 2022// Официальный сайт МИД КНР, 19.07.2022. Доступ к ресурсу- https://www.fmprc.gov.cn/mfa_eng/xwfw_665399/s2510_665401/2511_665403/202207/t20220719_10723456.html

²⁰ Atkinson N. China's Wolf

Warriors Aren't the Majority of the Pack// *The Diplomat*, 23.04.2022. Доступ к ресурсу- <https://thediplomat.com/2022/03/chinas-wolf-warriors-arent-the-majority-of-the-pack/>

что основная масса дипломатов работает над положительным имиджем своей страны, что подчеркивает сложный и многосторонний характер китайской дипломатии.

Кроме того, можно констатировать, что «дипломатия волков-воинов» является частью не только той политики, которая проводится действующими властями КНР в интересах правящих страной сил, но и куда более глобальных процессов радикализации на мировом уровне.

Тенденции, которые была отмечена после кризиса 2008-2009 годов, привели к тому, что мировая политика сегодня превратилась в арену жесткого противостояния между основными центрами силы и самого масштабного кризиса после Второй Мировой Войны, где китайские «волки-воины» являются лишь одним из множества инструментов, которые используются в этой борьбе.

«ԳԱՅԼԵՐ-ՌԱԶՄԻՎՆԵՐ»-Ը՝ ՈՐՊԵՍ ՉԻՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՆԱԽԱՎԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՖԵՆՈՄԵՆ ՄԻ ԶԶԻՆՊԻՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐՈՔ – ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՐՆԱԿՅԱՆ - Հոդվածում «գալլ-ռազմիկների դիվանագիտությունը» դիտվում է որպես հատուկ երևույթ չինական դիվանագիտական պրակտիկայում: Հոդվածում ուսումնասիրվել են դրա ծագման ակունքները, դիտարկվել են Չինաստանի ԱԳՆ այն պաշտոնյաների կողմից այս մարտավարության կիրառման օրինակները, որոնց գիտական մամուլում անվանել են «գալլ-ռազմիկներ»: Ուսումնասիրվել են Չինաստանի նախագահ Սի Յզինպինի պաշտոնավարման երկրորդ ժամանակաշրջանի ընթացքում այս երևույթի առաջացման և լայն կիրառման պատճառները: Եզրակացություն է արվում, որ ԶԺՀ-ի Արտաքին Գործերի Նախարարության կազմում, ինչպես նաև չինական մի շարք լրատվամիջոցներում առկա է գործիչների մի շերտ, որոնք պարբերաբար օգտագործում են այս մարտավարությունը ինչպես սեփական, այնպես էլ գործող քաղաքական վերնախավի հեղինակությունը բարձրացնելու համար չինական հասարակության այն հատվածում, որն ունի աջ քաղաքական հայացքներ: Դա հնարավոր է շնորհիվ այն բանի, որ գոյություն ունի աջ ազգայնական տրամադրությունների աճի համաշխարհային միտում՝ կապված աշխարհում սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացման հետ: Բացի այդ, չինական քաղաքական վերնախավն ինքն է նպաստել չինական հասարակության մեջ աջակողմյան տրամադրությունների աճին՝ ընտրելով ավանդական կոնֆուցիական զարգացման մոդելը:

Բանալի բառեր. ԶԺՀ, Չինաստան, գալլ-ռազմիկներ, դիվանագետ, ԱԳՆ, արմատականացում, ազգայնականություն, աջակողմյաններ, արտաքին քաղաքականություն, Սի Յզինպին, ճգնաժամ:

"WOLF-WARRIORS" AS A SPECIAL PHENOMENON OF CHINESE DIPLOMACY AND POLITICAL ELITES DURING THE REIGN OF XI JINPING – HOVHANNES BARDAKCHYAN - The article considers "wolf-warrior diplomacy" as a special phenomenon in Chinese diplomatic practice. The article studied the origins of its appearance, considered examples of the use of this tactic by officials of the Ministry of Foreign affairs of the People's Republic of China, who were called "wolf-warriors". The reasons for the emergence of this phenomenon and its widespread use during the second term of Chinese President Xi Jinping were studied. It is concluded that in the structure of the Ministry of Foreign Affairs of the PRC, as well as in a number of Chinese media, there is a layer of figures who regularly use this tactic in order to increase both their own authority and the popularity of the current Chinese political elite among that part of the Chinese society that has right views. This is possible due to the fact that a global trend towards the growth of right-wing nationalist sentiments were noticed, associated with the deterioration of the socio-economic situation in the world. In addition, the Chinese political elite contributed to the rise of right-wing sentiments in Chinese society itself by choosing a development model in favor of the traditional Confucian development paradigm.

Key words: PRC, China, wolf-warriors, diplomat, MFA, radicalization, nationalism, right-wingers, foreign policy, Xi Jinping, crisis.

ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Դավանանքային ու քաղաքական պայմանների թելադրամբ 552թ. Պարտավում վերահաստատված եպիսկոպոսական աթոռն իրենով սկզբնավորում է Աղվանից կաթողիկոսությունը, որը, հանդիսանալով հայոց եկեղեցական հաստատության կարևորագույն թեմերից մեկը, մշտապես գտնվել է Հայոց կաթողիկոսության հոգևոր ենթակայության տակ: Առկա սկզբնաղբյուրներն ակնհայտորեն մատնանշում են նաև, որ Աղվանից կաթողիկոսությունը հիմնադրվել է որպես ոչ միայն Հայոց եկեղեցու բաղկացուցիչ մաս, այլև այն իր ծագմամբ, էությամբ ու գոյությամբ մշտապես հայ լուսավորչական թեմ է եղել: Եվ ինչպես Ա.Հակոբյանն է իրավացիորեն նշել. «VI դարի երկրորդ կեսին Աղվանից եկեղեցին ազգային տեսանկյունից դարձավ առավել հայկական, քան աղվանական, չնայած որ այն ընդգրկում էր աղվանական տարացեղ բնակչություն ունեցող ձախափնյա լայնարձակ տարածքներ...»¹:

Բանալի բառեր՝ Աղվանք, Ադրբեջան, կաթողիկոսություն, հայկական, քաղաքական, սկզբնաղբյուր, քաղաքակրթություն, առաքելական, հիմնահարց, էթնիկ:

Հատկապես վերջին հայտնի քաղաքական իրադարձություններից հետո աննախադեպ ծավալներ են ընդունել Ադրբեջանի կողմից Հայոց արևելից Արցախ և Ուտիք նահանգների պատմական տարածքներում հայկական ծագման քրիստոնեական արժեքների մի կողմից յուրացման՝ դրանք առավելապես «աղվանական» հայտարարելու և «սեփականաշնորհելու» միջոցով, մյուս կողմից՝ ուղղակի ոչնչացման նպատակային ձեռնարկները: Փաստացիորեն քաղաքակիրթ կոչված 21-րդ դարում համաշխարհային քաղաքակրթական արժեքների պահպանման ու պաշտպանության առաքելությամբ կյանքի կոչված միջազգային կազմակերպությունների գիտությամբ ու թողտվությամբ արդի ժամանակներում իսպառ ոչնչացման վտանգի առաջ են կանգնած դարեր շարունակ տարաբնույթ արհավիրքներին դիմակայած, Հայ առաքելական եկեղեցու անբաժան մաս կազմած Հայ Աղվանից կաթողիկոսության հոգևոր կենտրոններն ու տարատեսակ քրիստոնեափեսք կառույցները: Նպատակային իրականացվող նման քաղաքականությունն ինքնին Աղվանից եկեղեցու էթնիկ պատկանելիության լուրջ փաստարկ է և իրական ընկալման արդյունք, թեկուզև զուգահեռաբար տարվող ու գիտական հիմնավորումները գուրկ քարոզչության ակտիվացմանը:

Աղվանից եկեղեցու պատմության ու էթնիկ պատկանելիության հիմնահարցերը 20-րդ դարի առաջին տասնամյակներից ի վեր և հատկապես վերջին ժամանակներում եղել ու շարունակում են մնալ տարբեր երկրների կոլկասագետների ուշադրության կենտրոնում: Տպագրվել են բազմաթիվ աշխատություններ, մենագրություններ, հոդվածներ, որոնցում ներկայացվել են Աղվանից եկեղեցու գործունեությանն առնչվող տարաբնույթ հիմնահարցեր, որոնց թվում նաև էթնիկ

¹ Տե՛ս՝ Ալ. Ակոպյան, *Ալբանիա-Ալուանկ в греко-латинских и древнеармянских источниках*, стр. 139-140:

պատկանելիության հիմնահարցը՝ թե մակերեսային և թե խորքային ամենատարբեր մեկնաբանություններով ու հիմնավորումներով: Կարևոր է ընդգծել այն փաստը, որ բոլոր այդ ուսումնասիրությունների համար կարևոր հիմք են հանդիսացել հիմնականում հայկական սկզբնաղբյուրները, ինչն էլ միանգամայն պարզ ու տրամաբանական է: Մակայն ստիպված ենք նաև արձանագրել, որ երբեմն հենց սկզբնաղբյուրների օգտագործման գործընթացում թույլ են տրվել նաև գիտական ոչ համարժեք ու պատշաճ մոտեցումներ, որոնք առավելապես պայմանավորված են հատկապես քաղաքական հանգամանքներով: Զավեշտականը թերևս հիշյալ սկզբնաղբյուրների նպատակային խեղաթյուրումներն են: Եվ այս առումով ոչ միայն բացառություն չեն կազմում ադրբեջանցի պատմաբանները, ովքեր, իրենց քաղաքական շահերով պայմանավորված, կամայականորեն օգտագործելով դրանց տարբեր թարգմանությունները, խառնաշփոթ են ստեղծել ինչպես Ադվանից եկեղեցու, այնպես էլ ողջ Արևելյան Այսրկովկասի պատմության շուրջ, իրենց հորինած հակագիտական, միանգամայն հիմնադուրկ այսպես կոչված «պատմությունները» պատմագիտության անվան տակ ողողելով ամենատարբեր գիտական, տեղեկատվական, քարոզչական հարթակները, բացասական ազդեցություն են ունեցել, ունենում և շարունակաբար ունենալու են ժողովուրդների հարաբերությունների վրա՝ քաղաքական անհաճո հետևանքներով: Տեղին է մեջբերել արևելագետ, կովկասագետ Ա.Ա. Ալիկբերովի հետևյալ միտքը. «...նախ և առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ժողովուրդների պատմությունը՝ տարածքների պատմության փոխարեն, սակայն ներդաշնակ քաղաքացիական դաստիարակության համար հավասարապես կարևոր է արձանագրել ժողովրդի և երկրի պատմությունը. որտեղ ապրում է տվյալ ժողովուրդը»²:

Ադվանից կաթողիկոսության էթնիկ պատկանելիության հիմնահարցը գիտահիմնավորված ներկայացնելու տեսանկյունից կարևոր է բացառապես սկզբնաղբյուրների հիման վրա ինչպես նրա ծագման, կազմավորման, բազմադարյա գործունեության գիտահիմնավորված ներկայացումը, այնպես և հոգևոր սահմանների վարչատարածքային սահմանագծերի ճշգրտումը, հիմնահարցեր, որոնց շուրջը նույնպես իրարամերժ մեկնաբանությունների հետևանքով ունենք խճճված իրականություն:

Ադվանից կաթողիկոսության հոգևոր ու վարչաքաղաքական սահմանների ճշգրտումն անուղղակիորեն առնչվում է Մեծ Հայքի և Բուն Ադվանքի վարչաքաղաքական սահմանների իրողություններին, հիմնահարց, որի վերաբերյալ պահպանված թե պատմական տարաբնույթ սկզբնաղբյուրներն են առավել քան բավարար և թե դրանց հիման վրա կատարված ուսումնասիրությունները: Մեծ Հայքի կամ Հայաստանի և Բուն Ադվանքի միջև Ք.ա. 8-7-րդ դարերից ի վեր գոյություն ունեցած ու ռազմաքաղաքական տարբեր իրադարձությունների ազդեցությամբ պայմանավորված վարչաքաղաքական սահմանների փոփոխությունների ու իրողությունների աղբյուրագիտական հենքով ճշգրիտ ու հիմնավոր մեկնաբանություններով գիտական կարևոր ուսումնասիրություններ կատարվել և հընթացս կատարվում են (Պ.Մուրադյան, Հ.Անասյան, Աս.Մնացականյան, Բ.Հարությունյան, Բ.Ուլուբաբյան, Հ.Սվազյան, Ալ.Հակոբյան և ուրիշներ): Ընդ որում, առանձնակի ընդգծման է արժանի այն հստակ իրողությունը, որ հիմնախնդրին անդրադարձած հեղինակների համար, որպես սկզբնաղբյուր, գրեթե մշտապես հիմք են հանդիսացել Ք.ա. 5-րդ դարից ի վեր

² А.Аликуберов, *Кавказская Албания и лезгинские народы, Albania Caucasica, Москва, 2015, стр. 26.*

ստեղծված թե՛ հունահռոմեական և թե՛ հայկական աղբյուրները, որոնք էլ, առանց բացառության, Հայաստանի և Աղվանքի սահմանագիծ են ճանաչել Կուր գետը³: Այս իմաստով հատուկ ուշադրության են արժանի Ալեքսան Հակոբյանի ուսումնասիրությունները, որոնց թվում հարկ է ընդգծել նաև վերջերս հրատարակված «Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղվանքում և Հայոց արևելից կողմանքում անտիկից մինչև ԺԳ դար» աղբյուրագիտական հարուստ հենքով պատմագիտական ուսումնասիրությունը: Գիտական պատշաճ բժախնայությամբ և առկա սկզբնաղբյուրային բազայի՝ այդ թվում և հնագիտական նյութերի հիման վրա հեղինակը ներկայացրել է բուն Աղվանքի և Հայոց արևելից Արցախ և Ուտիք նահանգների պատմական իրողությունները, համապատասխանաբար ընդգծելով նաև այն փաստը, որ Ք.ա. 7-6-րդ դարերից ի վեր Կուրը՝ որպես Հայաստանի եւ աղուանների բնակութեան տարածքի միջեւ սահման, գրեթե անփոփոխ շարունակվել է մինչև 5-րդ դարը՝ Պարսկաստանի կողմից վարչաքաղաքական նոր մարզերի ստեղծումը՝ կապված Արշակունյաց հայկական թագավորության անկման հետ⁴:

Ի դեպ, քննարկվող հիմնահարցի առնչությամբ կարևոր է ընդգծել հեղինակի կողմից շատ կարևոր մի իրողության արձանագրման մասին ևս, համաձայն որի «հայերի որոշ ներթափանցումը Կուրից հիւսիս» տեղի է ունեցել «արդեն Ք.ա. վերջին դարերում»⁵: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ քրիստոնեության սկզբնական տարածման շրջանում Կուրի ձախափնյակում՝ բուն Աղվանքում, հայ ազգաբնակչության առկայությունը ևս պատճառ կարող էր հանդիսանալ տեղում քրիստոնեության ավելի նպատակային տարածման համար: Եվ այնուհանդերձ, ընգծենք, որ քրիստոնեության տարածումը հանընդհանուր նպատակ էր հետապնդում:

Հայտնի փաստ է, որ Հայոց արևելից կողմերի, այսինքն Արցախ և Ուտիք հայաշխարհների, ինչպես նաև բուն Աղվանքում քրիստոնեական քարոզչության արդյունքում կազմավորված հոգևոր առաջնորդությունն, ինքնստիճյան և ի սկզբանե կազմում էր Հայոց եկեղեցու մաս, իսկ հոգևոր առաջնորդարանը սկզբում գտնվում էր Մեծ Հայքի Արցախ նահանգի Ամարաս բնակավայրում: Փ.Բյուզանդը, նկարագրելով Ս.Գրիգորիսի նահատակությունը և մասունքների հուղարկավորությունը, գրել է. «սարկաւագները Գրիգորիսի մարմինը բերին ի գաւառն իւրեանց ի կողմանց Աղուանից, ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գեղն, որ անուանեալ կոչի Ամարագ: Եւ եղին զնա առ եկեղեցեան, զոր շինեալ էր առաջնոյն Մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի՝ քահանայապետին մեծի աշխարհին Հայաստան երկրին»⁶: Հարկ է

³ Բ.Ուլուբաբյան, *Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981*; П.Мурадян, *Нагорный Карабах с древних времен до 1917 г., К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении, Ереван, 1991, стр. 37-49*; А.Акопян, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, стр. 14-17*; Ալ.Հակոբյան, *Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղվանքում և Հայոց արևելից կողմանքում անտիկից մինչև ԺԳ դար, Երևան, 2020*; Б.Арутюнян, *Административно-политическое состояние северо-восточных областей царства Великой Армении в 387-451 гг., К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении, Ереван, 1991, стр. 16-36*; А.Новосельцев, *К вопросу о политической границе Армении и Кавказской Албании в Античный период, Հ.Սվազյան, Աղվանից աշխարհի պատմություն, Երևան, 2006, էջ 55*; М. К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении, Ереван, 1991, стр. 7-15; Bais, *Albania Caucasia. Ethnos, istoria, territorio attraverso le fonti greche, latino e armeno, Milano, 2001, p. 68*; ...

⁴ Ալ.Յակոբյան, *Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղվանքում և Հայոց արևելից կողմանքում անտիկից մինչև ԺԳ դար, էջ 14-65*:

⁵ Նույն տեղում, էջ 20:

⁶ Փ.Բյուզանդ, *Պատմություն Հայոց, Երևան, 1987, էջ 27*:

նկատել, որ պատմիչը նկատի է առել Հայոց Աղվանքը, որովհետև անգամ հատուկ շեշտել է «ի կողմանց Աղուանից, ի սահմանս Հայոց»:

Հովհաննես Դրասխանակերտցին նույն փաստը հետևյալ կերպ է ներկայացրել. «և տարեալ հանգուցանեն զսուրբ մարմին նորա ի գեղն Ամարաս, որ ի Փոքր Սինիս»⁷: Հանրահայտ է, որ «ի Փոքր Սինիս» անվան տակ կաթողիկոս պատմիչը նկատի ուներ Արցախ աշխարհը: Միքայել Չամչյանը, նկարագրելով Ս.Գրիգորի առաքելությունը, գրել է. «Սոյն այս սուրբ Վրթանէս ձեռնադրեալ գերեց որդի իւր ԳԳրիգորիս՝ արխեպիսկոպոս՝ առաքեաց յԱղուանս Հայոց, որ և նա-հատակեցաւ անդ, ի նոցանէ: Եւ, ի սմանէ համարի սկզբնաւորութիւն կաթողիկոսութեան Աղուանից»⁸: Հարկ է ուշադրություն դարձնել հեղինակի մատնանշած «Եւ, ի սմանէ համարի սկզբնաւորութիւն կաթողիկոսութեան Աղուանից» ձևակերպման վրա: Եվ, այնուհանդերձ, աղբյուրների քննության հիման վրա տեղին ենք համարում ընդգծել, որ Ամարասը Հայոց Արևելից կողմանց առաջին հոգևոր կենտրոնն էր, բայց ոչ կաթողիկոսանիստը: Այն կաթողիկոսանիստ կենտրոն ընդունելը պարզապես իրատեսական չէ:

Նշված և միաժամանակ առկա, բայց չնշված աղբյուրների վկայակոչմամբ կարելի է վստահաբար եզրակացնել, որ հայ պատմիչները, սկսած 5-րդ դարից, Աղվանքի մասին հիշատակելով հիմնականում նկատի են ունեցել Արցախ և Ուտիք նահանգները, և այդ փաստն էլ ընդգծելու նպատակով հաճախ միաժամանակ հատուկ շեշտել են «ի կողմանց Աղուանից, ի սահմանս Հայոց», «յԱղուանս Հայոց», «յաշխարհն Աղուանից, որ ասի խորին աշխարհ Հայոց»⁹ և այլն:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո Գրիգոր Լուսավորչի կողմից եպիսկոպոսություններ են հիմնվել նաև բուն Աղվանքում, մասնավորապես Աղվանքի թագավորության մայրաքաղաք Կապադակում: Ա. Հակոբյանի հիմնավորումները, կապված «Աղվանից կաթողիկոսարանը (նախապես, 315-ից՝ եպիսկոպոսարանը) սկզբնապես տեղակայված է եղել թագավորական մայրաքաղաք Կապադակում (շուրջ մեկուկէս դար): Նրա տեղափոխումը Չող տեղի է ունեցել Աղուանից մարզպանութեան կազմավորման արդիւնքում (428թ.), որի կենտրոնը Սասանեանները տեղակայել էին Չող (Դերբենդում)»¹⁰, մեր կարծիքով՝ որոշ ճշգրտման կարիք ունեն: Անշուշտ, ինչպես արդեն իսկ նշվել է, Կապադակում ևս եպիսկոպոսարան գոյություն ուներ: Սակայն սկզբնապես որպես առաջնորդանիստ էր ընդունվում Ամարասը, որին Մ.Չամչյանը և Ս.Ջալալյանցը ներկայացրել են որպես «կաթողիկոսարան», հավանաբար, ընդգծելու համար նրա առաջնորդանիստ լինելու հանգամանքը, և պատահական չէ, որ Աղվանքի առաջին հոգևոր առաջնորդ Գրիգորիսի աշակերտները նրա մասունքները տեղափոխել ու հուղարկավորել են հենց Ամարասում վերը մատնանշված 315 թվականից հետո՝ 348թ.: Այսպիսով, մեր կարծիքով՝ սկզբնապես հոգևոր առաջնորդանիստ է համարվել Ամարասը, այնուհետև, կապված Աղվանքի թագավորության մեջ քրիստոնեական հավատքի առավել հիմնավորման հետ, առաջնորդանիստ է ճանաչվել վարչական կենտրոն Կապադակը: Ինչ վերաբերում է մարզպանության կազմավորումից հետո եպիսկոպոսական աթոռի տեղափոխությանը Չող-Դերբենդ, ապա նույնպես միանգամայն ընդունելի և

⁷ Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1996, էջ 46:

⁸ Միքայել Չամչյան, Խրախճան Պատմութեան Հայոց, Վենետիկ, 1811, էջ 84:

⁹ Մ. Ուտիպեցի, Ժամանակագրութիւն, Երևան, 1991, էջ 230-231:

¹⁰ Ա. Հակոբյան, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղվանքում և Հայոց արևելից կողմանքում անտիկից մինչև ԺԳ դար, էջ 95:

տրամաբանական է հոգևոր աթոռի տեղակայումը վարչական նոր կենտրոնում:

5-րդ դարում Պարսկաստանի կողմից իրականացված վարչական վերաբաժանումների հետևանքով Հայաստանից անջատվեցին Հայոց արևելից Արցախ և Ուտիք նահանգներն ու ներառվեցին նոր կազմավորվող Աղվանից մարզպանության կազմի մեջ¹¹: Հ.Սվազյանի կարծիքով՝ մարզպանությունը ստեղծվել է 461 թվականին Վաչե Բ-ի գահից հեռացվելուց հետո¹², ըստ Ա.Հակոբյանի՝ 428-450թթ. միջակայքում¹³: Հիշյալ ժամանակներում եկեղեցու հոգևոր սահմանները որոշվում էին վարչաքաղաքական այն սահմաններով, որտեղ տեղակայված էր եկեղեցին: Աղվանից մարզպանության կազմավորմամբ անհրաժեշտություն էր առաջացել Հայոց արևելից կողմանց և բուն Աղվանքի եպիսկոպոսական աթոռների միավորման, ինչն էլ տեղի ունեցավ 552թ.: Այդ է վկայում նաև նորաստեղծ առաջնորդության առաջին գահակալ Մեծառանից Աբաս եպիսկոպոսի տիտղոսը՝ «Կաթողիկոս Աղուանից, Լփնաց և Չողայ»:

Պարտավում հաստատված նորահաստատ առաջնորդության պաշտոնական լեզուն դարձավ հայերենը, ինչի մասին հավաստող փաստարկները նույնպես բազմաթիվ են: Ա.Հակոբյանը սկզբնաղբյուրների հիմնավոր ուսումնասիրության արդյունքում իրավացիորեն ընդգծել է. «Աղվանից կաթողիկոսանիստը Կուրի աջափնյակի Պարտավ քաղաքը տեղափոխելուց հետո աստիճանաբար և անշրջելիորեն դարձավ հայերենը: «Վաչագանի մասին վեպը» և «Աղվենի կանոնները», որոնք արտացոլում են Աղվանից եկեղեցու դրությունը Պարտավյան կաթողիկոսության առաջին իսկ շրջանում, գրված են նույն այն լեզվով, ինչպիսին որ 5-6-րդ դարերի հայկական գրություններն են. Դա, այսպես կոչված, «ոսկե դարյան շրջանից» հետո գրաբարն է, որում դեռևս արտացոլված չէին «հունական դպրոցի» նորամուծությունները», որոնք 6-րդ դարից սկսած նկատելիորեն փոխել են գրական հայերեն լեզուն: Մովսես Դասխուրանցու «Աղուանից պատմութեան» մեջ, որում ներկայացված է Աղվանից կաթողիկոսության հովանու ներքո աջափնյա Աղվանքում ստեղծված գրականության մեծագույն մասը, որևէ հիշատակություն անգամ չկա «աղվանական» գրականության մեջ աղվաներեն լեզվի կիրառության մասին»:¹⁴

Առկա սկզբնաղբյուրներն ակնհայտորեն մատնանշում են, որ Աղվանից կաթողիկոսությունը հիմնադրվել է որպես ոչ միայն Հայոց եկեղեցու բաղկացուցիչ մաս, այլև այն իր ծագմամբ, էությամբ ու գոյությամբ մշտապես հայ լուսավորչական թեմ է եղել: Ինչ վերաբերում է բուն Աղվանքի աղվանական ցեղերին, ապա, ինչպես իրավացիորեն ներկայացրել է Հ.Անասյանը. «... աղվանները քրիստոնեության մուտքից հետո և ապա հետզհետե ընկել են հայերի ինչպես քաղաքական, այնպես էլ կրոնական ու մշակութային ազդեցության տակ: Ի վերջո աղվանների ճնշող մասը էթնիկապես համաձուլվել է հայերի հետ: Այդ բանում կարևոր դեր է կատարել Աղվանական եկեղեցին ..., որը Հայ եկեղեցու արքեպիսկոպոսություններից մեկն էր, որի պետը նախկինի պես շարունակում էր կրել Աղվանից կաթողիկոսի տիտղոսը, այնպես, ինչպես Հայկական եկեղեցու կազմում Աղթամարի և Կիլիկիայի կաթողիկոսները»¹⁵:

¹¹ Տես՝ Բ.Հարությունյան, Մեծ Հայքի հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կազմությունը 387-451թթ., Բանբեր Երևանի համալսարանի, 1976, հ.2, էջ 92:

¹² Տես՝ Հ.Ս. Սվազյան, Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը, ՊԲՀ, 1979, հմ. 4, էջ 212:

¹³ Ալ. Աкопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, стр. 120.

¹⁴ Ալ. Աкопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, второе переработанное издание, Ереван, 2022, стр. 124.

¹⁵ Հ. Անասյան, Հայկական Մատենագիտություն, հ.Ս, Երևան, 1959, էջ 614:

Իսկ Ա. Հակոբյանը թե օտար և թե հայկական սկզբնաղբյուրների ուսումնասիրության արդյունքում Աղվանից կաթողիկոսության էթնիկ պատկանելիության վերաբերյալ միանգայն հիմնավոր եզրահանգում է կատարել, նշելով. «Այսպիսով, VI դարի երկրորդ կեսին Աղվանից եկեղեցին ազգային տեսանկյունից դարձավ առավել հայկական, քան աղվանական, չնայած որ այն ընդգրկում էր աղվանական տարացեղ բնակչություն ունեցող ձախափնյա լայնարձակ տարածքներ...»¹⁶:

Պարսկահպատակ Աղվանից մարզպանության ստեղծման արդյունքում քաղաքական մեկ միավորի մեջ էին հայտնվել ձախակողմյան աղվանական ցեղերը և հայ ժողովրդի Հայոց արևելից կողմանց հատվածը: Վերջինս տնտեսական, քաղաքական ու մշակութային ավելի բարձր մակարդակի վրա էր գտնվում՝ ի համեմատ աղվանական ցեղերի, ուստի և նա էր որոշում աղվանական եկեղեցու դավանաբանական դիմագիծը: Ձախափնյա Աղվանքի եպիսկոպոսները Արցախի և Ուտիքի հայոց հոգևոր առաջնորդներին էին ճանաչում իրենց եկեղեցու գլուխ, իսկ վերջիններս իրենց հերթին, նույնը ընդունում էին Ամենայն Հայոց կաթողիկոսին: Սույն փաստի առնչությամբ Մ.Օրմանյանը գրել է. «Քուռ գետից ձախ եւ Կովկասեան լեռնաշղթայից հարաւ ընկած՝ բուն Աղուանքում քրիստոնէական քարոզութեան հետեւանքով առաջացած առաջնորդութիւնը ենթարկւում էր Հայոց եկեղեցուն, իսկ առաջնորդարանը գտնուում էր Մեծ Հայքի Արցախ նահանգի տարածքում՝ Ամարասում. Պարսից Սասանեանները, 387թ. Հայաստանը Բիւզանդիայի հետ կիսելուց ետոյ, Մեծ Հայքի Արցախ եւ Ուտիք նահանգները միացրին բուն Աղուանքին և կազմեցին Աղուանից մարզպանութիւնը: Վարչական այս ինքնուրույնութեան հիման վրայ, 551թ. Դուինի եկեղեցական ժողովից յետոյ Աղուանից մարզպանության առաջնորդութիւնը վերածուեց կաթողիկոսութեան, որ ենթակայ էր Ամենայն Հայոց հայրապետին եւ եղել է Հայ եկեղեցու նուիրապետական կառոյցներից մէկը... Մի խօսքով՝ միշտ եղել է հայկական երևոյթ՝ եւ հասկացութիւն, աղուան ցեղի կամ ցեղախմբի հետ կապ է ունեցել անուղղակիօրէն»¹⁷: Այսպիսով, դավանանքային ու քաղաքական պայմանների թելադրմամբ 552թ. Պարտավում վերահաստատված եպիսկոպոսական աթոռն իրենով սկզբնավորում է Աղվանից կաթողիկոսությունը, որն էլ մշտապես ի հոգևորս ենթակա էր Հայոց կաթողիկոսությանը:

Նորահաստատ Աղվանից կաթողիկոսության հոգևոր սահմանների մեջ սկզբնական շրջանում, անշուշտ, ներառված են եղել նաև բուն Աղվանքի քրիստոնյա բազմաթիվ ցեղեր, ընդ որում, երբեմն աղբյուրներում այդ թիվը հասցվում է 11-ի, որոնց թվում էին լեզգիները, մասքութները, լինաց և այլ ցեղեր: Նրանց մի մասը արաբական տիրապետության արդյունքում ընդունեց մահմեդականությունը, իսկ մյուս մասը շարունակեց մնալ որպես քրիստոնեական հավատքի հետևորդ: Պատմական այս իրողությունը շատ հիմնավոր ու հստակ ներկայացրել է Ալ.Հակոբյանը. «Արաբական խալիֆայութեան տիրապետութեան տակ յայտնուած Արեւելեան Այսրկովկասում մահմեդականութեան տարածման դարաշրջանում աղուանական մետաէթնիկ ընդհանրութեան քրիստոնէայ մնացած հատուածը վերջապէս համախմբուեց իբրեւ «ուդիներ» (նաեւ՝ ուտիներ) ինքնանուամբ միասնական էթնոս, իսկ մահմեդականացած հատուածի գերակշիռ մասն՝ իբրեւ «լեզգիներ» ինքնանուամբ էթնոս-ժողովուրդ (պահպանուեցին նաեւ մի քանի փոքր մահմեդական եւ լեզգիալեզու ժողովուրդներ՝ թաբասարանցիներ, ծախուրներ, ռութուլներ, ագուլներ, բուդուլներ,

¹⁶ Տե՛ս՝ Ալ. Ակոպյան, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, стр. 139-140:

¹⁷ Մ.Օրմանյան, *Հայոց եկեղեցին, Երևան, 1993, էջ 275:*

կռիվներ, խինալուղցիներ են)»¹⁸:

Փաստացի Աղվանից կաթողիկոսությունը աստիճանաբար դարձավ միայն Արցախի, Ուտիքի, ինչպես նաև բուն Աղվանքում բնակություն հաստատած հայ ժողովրդի հոգևոր կառույցը: Այս տեսակետը նոր հիմնավորումներով և գիտական պատշաճ մակարդակով հանրությանը ներկայացնելու անհրաժեշտությունը ներկա քաղաքական իրողությունների պարագայում և արդիական է և հրատապ, մանավանդ, որ Ադրբեջանի հանրապետության կողմից տարվող քաղաքական էքսպանսիան հիմնավորելուն միտված նպատակային ու բավականին տարաբնույթ միջոցառումների արդյունքում ներկա ժամանակներում երբեմն կասկածի տակ է առնվում Հայոց արևելից Արցախ և Ուտիք նահանգների, ինչպես նաև բուն Աղվանքի քրիստոնյա հատվածը ներկայացնող Աղվանից կաթողիկոսության ազգային բնույթը, նրա՝ հայոց եկեղեցական հաստատության կարևորագույն թեմերից մեկը լինելու իրողությունը:

Աղվանից եկեղեցու էթնիկ պատկանելիության հիմնախնդրի պարզաբանման տեսանկյունից կարևոր սկզբնաղբյուր է, բնականաբար, վերստին Մովսես Դասխուրանցու երկը: Սակայն ստիպված ենք նաև արձանագրել, որ նույն հիմնախնդրի շուրջ առաջացած խառնաշփոթի հիմնական պատճառներից մեկը կրկին՝ նույն աշխատանքն է: 1860թ. Մոսկվայում Մ.Էմինի և 1861թ. Փարիզում Ք.Պատկանյանի թարգմանություններով ռուսերեն հրատարակված՝ Մ.Կաղանկատվացու երկի շուրջը սկսեցին ստեղծվել միանգամայն հակասական մեկնաբանություններ: Ինչպես իրավացիորեն նշել է «Պատմություն Աղուանից աշխարհի» երկի բնագրի լավագույն հետազոտող և գիտակ Ալ. Հակոբյանը, «Մ.Դասխուրանցու «Պատմություն Աղուանից»-ի հրատարակումից յետոյ մասնագետները համարեցին, որ, հետեւելով նորայայտ «տեղացի» հեղինակի վերոնշեալ պատկերացմանը՝ կարիք կայ սրբագրելու անտիկ և վաղմիջնադարեան աւանդոյթից բխող նախկին գիտական դրոյթը, ըստ որի՝ մինչեւ Մասանեանների կողմից 428թ. Մեծ Հայքի թագաւորութեան վերացումը էթնիկ Ալբանիա/Աղուանքը տեղորոշուով էր լոկ Կուրից հիւսիս: Ի (20) դարի առաջին կեսի գիտնականները շտապողաբար հակուեցին այն մտքին, թէ Կուրի աջ ափին էլ նախապէս բնակուել են բուն աղուանական ցեղեր, որոնք երկար ժամանակ ապրելով Հայոց պետութեան մէջ՝ ինչ-որ պահի, գուցէ մինչև Ե դարը (կամ ավելի ուշ՝ վաղ միջնադարում) հայացել են»¹⁹:

Ակնհայտ է, որ միանգամայն հիմնագուրկ նման տեսակետի առաջադրման դրդապատճառը բացառապես քաղաքական էր և է ու հեռագնա նպատակներ հետապնդող: Թուրքիայի նախաձեռնությամբ ու հանրահայտ ծրագրերի իրականացման ճանապարհին հերթական կարևորագույն քայլը հանդիսացած «Ադրբեջան» պետության ստեղծումը պետք էր պատմականորեն «օրինականացնել», ինչին էլ լծվեցին սույն երկրի «մասնագետները», մոռանալով կամ անտեսելով, որ 19-րդ դարում Աբասկուլի-Աղա Բաքիխանովը, հիմք ընդունելով բացառապես սկզբնաղբյուրները, ներկայացրել է հետևյալ իրականությունը. «Շիրվան մարզի սահմանները ձգվում են. արևելքից՝ Կասպից ծովը, հարավ-արևմուտքից՝ Կուր գետը, բաժանելով նրան Հայաստանից եւ Մուղանից, հյուսիս արևմուտքից՝ Կանրկ գետից (Ալազան-Արաքս) որոշակի հատվածով ձգվում է մինչև Կովկասյան լեռնաշղթան ...»²⁰: Հարկ է ընդգծել

¹⁸ Ալ.Հակոբյան, *Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղվանքում և Հայոց արևելից կողմանքում անտիկից մինչև ԺԳ դար, էջ 3*:

¹⁹ Ալ.Հակոբյան, *Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղվանքում և Հայոց արևելից կողմանքում անտիկից մինչև ԺԳ դար, էջ 3*:

²⁰ А.Бакиханов, *Гюлистан —и Ирам, Баку, 1926, стр. 3*:

նաև, որ այս աշխատանքն էլ Բաքվում «հատուկ մշակումների» է ենթարկվել Զ.Բունիաթովի կողմից և համացանցում շրջանառված է պարսկերեն բնագրի, անգամ 1926թ. Բաքվում ռուսերեն հրատարակված գրքի միանգամայն խեղաթյուրված տարբերակը:

Թե օտար, թե հայկական սկզբնաղբյուրների ուսումնասիրությունների արդյունքում իրական պատկերը առավել քան ակնհայտ է դառնում, ինչն էլ մշտապես արտացոլվել է բացառապես գիտական նպատակներով կատարված ուսումնասիրություններում:

«Աղվանք» աշխարհագրական անունը կիրառական է դարձել նաև Հայոց արևելից կողմանց Արցախ և Ուտիք նահանգների հարաբերությամբ 428թ. Պարսկաստանի կողմից իրականացրված վարչաքաղական բաժանումներից հետո, երբ հիշյալ նահանգներն ուղղակիորեն կցվեցին պարսկահպատակ Աղվանից մարզպանությանը: Իսկ անվան տարածումն իրենով ոչ միայն չի պայմանավորում էթնիկ վերափոխություններ, այլև միանգամայն անտրամաբանական են հնչում բոլոր այն ձևակերպումները, համաձայն որոնց ստացվում է, որ հիշյալ նահանգները Աղվանքին կցելուց հետո տարածքի «աղվանները» հայացել են թեկուզ և Աղվանից եկեղեցու ազդեցությամբ պայմանավորված: Տրամաբանորեն թերևս հակառակը պետք է տեղի ունենար. Աղվանից եկեղեցին դուրս կգար Հայոց եկեղեցու կազմից, ինչի համար միանգամայն նպաստավոր վարչաքաղաքական պայմաններն էլ առկա էին, ինչպես որ 607թ. վրաց եկեղեցին կատարեց, իսկ աղվաններն էլ Աղվանքին կցվելուց հետո ոչ թե կուծացվեին՝ դառնալով հայեր, այլ հակառակը՝ գոնե կպահպանեին իրենց ինքնությունը:

Ամենից եզրակացնելով արձանագրենք, որ քաղաքական պատվերներ կատարելը թերևս չպետք է լինի գիտության զեղծարարության ու համամարդկային քաղաքակրթության ոչնչացման հաշվին: Յուրաքանչյուր ազգ իր գոյության ու կենսագործնելության ընթացքում կայանում ու զարգանում է իր արժեհամակարգին ու ինքնությանը հավատարիմ, արժանապատիվ հարգանք ցուցաբերելով նաև մյուսների նկատմամբ:

ОБ ЭТНИЧЕСКОЙ ПРИНАДЛЕЖНОСТИ АЛУАНСКОГО КАТОЛИКОСАТА-МЕЛАНЯ БАЛАЯН - По диктовке конфессиональных и политических условий в 552 году подтверждение епископского престола в Партаве знаменует собой начало Алуанского католикосата, который, будучи одной из важнейших епархий Армянского церковного учреждения, всегда находился в духовном подчинении Армянского католикосата. Существующие первоисточники явно указывают также на то, что католикосат Алуанка был основан не только как составная часть Армянской Апостольской церкви, но и по своему происхождению, сущности и существованию всегда был армянской просветительской епархией. И как справедливо отметил А. Акопян: "Ко второй половине VI века Албанская церковь стала в этническом плане больше армянской, чем собственно албанской, хотя она ведала, конечно, и обширными территориями с собственно албанским населением левобережья ...".²¹

²¹ Ал. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, стр. 139-140.

Ключевые слова: Алуанк, Азербайджан, католикосат, армянский, политический, первоисточник, цивилизационный, апостольский, проблема, этнический.

ABOUT THE ETHNIC BELONGING OF THE ALUAN CATHOLICOSATE - MELANYA BALAYAN - According to religious and political conditions in 552 The episcopal seat reaffirmed in Partav marks the beginning of the Aghvan Catholicosate, which, being one of the most important dioceses of the Armenian ecclesiastical institution, has always been under the spiritual subordination of the Armenian Catholicosate. The available primary sources also clearly indicate that the Catholicosate from Aghvan was founded not only as a constituent part of the Armenian Church, but also that it has always been an Armenian Enlightenment Diocese by its origin, nature and existence. And as A. Hakobyan rightly noted. «In the second half of the 6th century, the church from Aghvan became more Armenian than Aghvan from a national point of view, even though it covered vast areas of the left bank with a diverse Aghvan population ...».

Keywords: Aghvank, Azerbaijan, Catholicosate, Armenian, political, primary source, civilization, apostolic, problem, ethnic.

ГЕНДЕРНОЕ РАВЕНСТВО И ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ: ВЗАИМООБУСЛОВЛЕННОСТЬ ПОКАЗАТЕЛЕЙ

Как важная составляющая социально-экономического развития в стратегиях развития международных организаций воспринимается проблема гендерного равенства, являющаяся важным социальным измерением стабильного человеческого развития. Гендерное равенство становится важным рычагом развития, способствуя экономическому росту страны, снижению бедности и эффективному государственному управлению.

На международном уровне важным показателем гендерного равноправия считается участие женщин и мужчин в политике. Ярким примером тому служит распределение позиций в органах государственного управления практически во всех странах.

Ключевые слова: *гендерное равенство, экономический рост, человеческое развитие, социальное измерение, бедность, общественный ресурс, эффективное государственное управление.*

Как важная составляющая социально-экономического развития в стратегиях развития международных организаций воспринимается проблема гендерного равенства, являющаяся важным социальным измерением стабильного человеческого развития.

Гендерное равенство становится важным рычагом развития, способствуя экономическому росту страны, снижению бедности и эффективному государственному управлению. Эмпирическими исследованиями доказано¹, что гендерное неравенство: повышает риск младенческой и детской смертности, снижает уровень иммунизации и образования детей, поддерживает высокий уровень рождаемости при низком уровне жизни (переменная: образование матери); продуцирует потери в производительности труда, рост спроса на медицинские услуги, рост затрат на социальные программы и правоохранительные органы, рост упущенных возможностей как поколений матерей, так и детей и потери в заработках; воспроизводит неэффективное разделение труда в современной высокотехнологичной экономике; увеличивает коррумпированность государственных чиновников и криминальность бизнеса; снижает экономический рост.

Исследования показывают, что эффективность социально-экономического развития возрастет, если уменьшить дискриминацию в профессиональной занятости. При этом нельзя игнорировать, что

а) асимметричность прав и обязанностей в домашнем хозяйстве приводит к ослаблению стимула у женщин заниматься тем, что традиционно считается мужским и
б) увеличение репродуктивных нагрузок приводит к тому, что женщины сами ограничивают выбор экономической деятельности, так как они ищут то, что лучше

¹ Гендерные проблемы и развитие. Стимулирование развития через гендерное равенство в правах, в доступности ресурсов и возможности выражать свои интересы, Пер. с англ. М: Изд-во "Весь Мир", 2001, 408 с., с.75-102.

совмещается с материнством².

На международном уровне важным показателем гендерного равноправия считается участие женщин и мужчин в политике. Ярким примером тому служит распределение позиций в органах государственного управления практически во всех странах. Через распределение форм труда происходит и распределение ключевых позиций власти. Политическая власть является важным общественным ресурсом, доступ к которому отражает равенство полов в обществе. За последние 20 лет концепция парламентов, учитывающих гендерную проблематику, получила большее признание и стала частью международной демократической нормативной базы. В соответствующих международных инструментах указано, что парламенты играют одну из основных ролей в достижении гендерного равенства на глобальном и национальном уровне: по сути, на них возложена демократическая обязанность выполнять свою роль сторонников гендерного равенства.

График 1

Процентная доля женщин в нижних палатах и однопалатных парламентах в регионе



Согласно данным Межпарламентского союза за 2020 г., количество женщин в парламентах стран мира составило более 25%⁴ (см. График 1).

В 2020 году женщины занимали 33% мест в национальных парламентах ЕС и 33% были членами правительства. Доля женщин в национальных парламентах возросла с 2004 года, когда женщины составляли около одной пятой (21%) членов.

Хотя доля "женских" мест существенно отличается в разных странах ЕС, ни в одной стране ЕС количество женщин в парламенте не превышает количество мужчин. В 2020 году самая высокая доля женщин-членов в национальных парламентах была зафиксирована в Швеции, где женщины составляли почти половину парламентариев

² Гендер и экономика: мировой опыт и экспертиза российской практики, Отв. редактор и составитель, к.э.н, Е.Б.Мезенцева. М.: ИСЭПН РАН-МЦГИ, "Русская панорама", 2002, 352 с., Римашевская Н. Гендер и макроэкономика. Теоретические аспекты, Гендер и экономика: мировой опыт и экспертиза российской практики. М.: с. 23.

³ Monthly ranking of women in national parliaments [Межпарламентский союз, Ежемесячный рейтинг доли женщин в национальных парламентах], January 2021, <https://data.ipu.org/women-ranking>

⁴ <https://e-cis.info/news>

(около 50%). За Швецией шли Финляндия (46%), Бельгия (43%) и Испания (42%) . Самые низкие доли были зафиксированы в Венгрии и на Мальте (по 13%)⁵.

В целом на примере ЕАЭС можно увидеть, что гендерные различия в Восточной Европе и Центральной Азии распределены относительно равномерно. По сравнению с 2017 г. две страны (Беларусь и Армения) улучшили свои показатели. Сейчас число женщин, активно участвующих в белорусской политике, составляет 61 против 59 в 2017 г., а в Армении – 32 по сравнению с 20 в 2017 г. В целом по ЕАЭС количество женщин, участвующих в политике, увеличилось на 13 человек: с 245 в 2017 г. до 258 в 2020 г. Доля женщин среди высших должностных лиц также характеризуется, как относительно высокая.

В Беларуси и России суммарно не менее 40% руководящих должностей занимают женщины. При советской власти в Верховном Совете БССР за «слабым полом» была закреплена депутатская квота в 30%. Тем не менее, политическое представительство женщин в большинстве стран региона все еще выражено слабо. Большинство женщин занимают должности, связанные с координацией культуры, образования, науки и социальной сферы⁶.

По данным статистического управления НК, за период 2015 по 2019 гг. представленность женщин в Национальном собрании составляет 15,2 %. Женщины за период 2015-2019гг. в НК на министерских постах в среднем составили соответственно 18,2 ;18,2; 7,7; 7,7; 7,7, %, а на постах заместителей министров –10,5; 10,5; 22,7; 27,3; 27,3 %⁷. Гендерная асимметрия становится особенно заметной на фоне феминизации нижних уровней государственного управления.

Женщины имеют численное превосходство в аппарате Президента, по данным 2013г.- 57,5%, а за период 2015 по 2019 гг. соответственно составили 60,0; 53,1;51,0; 53,8; 56,3% в Правительстве НКР за период 2017 по 2019 гг. в среднем составило 51,3%, в судебной системе женщины - судьи в среднем составляют 28,5%, женщины - адвокаты – 24,5%. Аналогичная ситуация складывается в органах самоуправления как в городских, так и сельских местностях. На руководящих должностях в городских органах самоуправления женщин нет.

Что же касается негосударственного сектора, то женщины сравнительно больше представлены в структуре частного предпринимательства, то есть на уровне частного предпринимательства число задействованных в этой сфере женщин сравнительно высокое⁸.

Сравнивая данные, можно заметить, что на постсоветском пространстве в парламенте всех стран представлено гораздо меньше женщин. Россия, Армения, НК находятся на аналогичных этапах достижения гендерного равенства и расширения прав женщин. В Армении и в НК нет проблем на правовом уровне, но нет и механизмов защиты прав женщин. На уровне Конституции гендерное равенство соответствует принятым международным стандартам, однако Армения и НК относятся к тем странам, в которых женщины по-прежнему составляют незащищенную часть общества, а представленность женщин в руководящих органах не соответствует поставленным

⁵ <https://www.eurointegration.com.ua/rus/news>

⁶ <https://eurasia.expert/skolko-zhenshchin-v-bolshoy-politike-stran-eaes/>

⁷ Վիճակագրական գրքույկ, Արցախի կանայք և տղամարդիկ, 2014, Ստեփանակերտ 2014, 143 էջ, էջ 138.

⁸ http://stat-nkr.am/files/publications/2020/Artsakhi_kanayq_txamardik_2020.pdf

задачам. Наблюдается тенденция увеличения представленности женщин на более низких ступенях власти, то есть они практически лишены возможности участвовать в процессах принятия основных решений. И если в международной практике увеличение политической представленности женщин является необратимым процессом, то для НК это лишь теоретическое обоснование потребности преодоления гендерного дисбаланса. Последнее происходит из-за отсутствия понимания значимости цели гендерного равноправия, а иногда и отрицания наличия неравенства. Процесс институционализации гендерного измерения в НК осложнен и тем, что часто сами женщины ограничиваются теми институциональными механизмами, которые сформированы на уровне гражданского общества, и традиционно считается, что женщины представлены в достаточной мере. Основные причины складывающейся ситуации, на наш взгляд, связаны с прочно укоренившимися представлениями о социальной роли и поведении мужчин и женщин, что имеет своим следствием разный доступ к ресурсам, возможностям трудоустройства и статусу.

Несмотря на значительный прогресс в вопросах гендерных отношений, достигнутый за последние десятилетия во многих странах, гендерное неравенство в силу общественного устройства препятствует развитию. Хотя женщины являются ключевым звеном в управлении домашним хозяйством, рождении и воспитании детей, производстве продуктов питания, выполняемые ими ролевые функции и обязанности часто воспринимаются как должное, они не имеют равных прав, жизненных перспектив или возможностей для принятия самостоятельных решений.

Лидерами по продвижению гендерного равенства являются скандинавские страны, где утверждение гендерного равенства происходит в рамках политики государственного феминизма и связано со спецификой политического устройства "северных демократий", которые особо подчеркивают приверженность ценностям социального равенства"⁹. Здесь в каждой стране есть своя специфика, но везде подчеркивается ведущая роль правительства в продвижении гендерного равенства. В Финляндии для надзора и мониторинга соблюдения гендерного равенства существует институционализированная структура. В 1986 году здесь вступил в силу "Акт о гендерном равенстве", запретивший дискриминацию по признаку пола¹⁰. В Норвегии акцент делается на особом женском опыте, женских ценностях и знаниях, которые как бы дополняют мужские "ценности" и взгляды. Здесь принят закон о гендерном равенстве. В Швеции политика гендерного равенства предполагает реализацию политики "позитивных действий", а национальные механизмы сложились в форме структур в составе правительства. С 1976г. в Швеции, с 1980г. в Финляндии, с 1999г. в Дании назначаются министры по вопросам гендерного равенства. Своеобразным опытом отличается Канада, где в 1967 г. была создана Королевская комиссия по положению женщин, которая выступила с предложением о создании специального государственного ведомства по делам женщин в качестве инструмента преобразования статуса женщин. Следующим шагом стало назначение в 1971 году министра, отвечающего за положение женщин, а затем и учреждение министерства по положению женщин. Межведомственный комитет по интеграции интересов женщин координирует целый ряд подразделений при правительственных

⁹ Воронина О., *Феминизм и гендерное равенство*, М., Едиториал УРСС. 2004, 319с, с. 140.

¹⁰ www.feministki.livejournal.com, Салмenniemi С., *Гендерное равенство в Скандинавских странах: случай Финляндии*. 10.12.2005.

структурах, занимающихся проблемами женщин. Благодаря таким действиям стало возможным сделать все правительство ответственным за положение женщин. В результате с 1980 по 1995 гг. доля женщин в парламенте Канады возросла более чем в три раза¹¹.

Таким образом, реальный опыт скандинавских стран доказывает, что развитие человечества должно основываться на проведении гендерно сбалансированной политики, которая базируется на повышении социальной мобильности общества, подчинении экономических процессов социальным нуждам людей. Решение долгосрочных задач возможно лишь при искоренении неравенства, путем обеспечения равенства прав и ответственности мужчин и женщин на производстве и в домашнем хозяйстве; гарантирования женщине равного доступа к принятию экономических решений, политике, образованию; ликвидации правовых, социальных, национальных и культурных барьеров, которые ставят женщину в невыгодное положение в сфере экономики и принятия решений. Женщины объективно не могут располагать той же свободой действий, что и мужчины, и, следовательно, получение стартовых позиций наравне с мужчинами и равной возможности свободного выбора реально лишь в том случае, если эта свобода подкрепляется гарантиями со стороны государства. Принцип равных возможностей означает применение политики, устраняющей изначально неравные стартовые возможности и барьеры дискриминации, например, облегченный доступ к образованию, занятости, пользованию социальными благами и социальной защитой.

В целях реализации гендерно сбалансированной политики в Нагорном Карабахе существенным фактором является: принятие закона о гендерном равноправии, гендерном квотировании; широкое привлечение женщин в политику для наиболее эффективной возможности представления интересов женщин; развитие институтов гендерного равенства, проведение гендерной экспертизы социально-экономической и демографической политики, применение гендерного аудита, разработка комплекса мер по государственной поддержке женского предпринимательства, т.е. вовлечению их в высокодоходные отрасли экономики.

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ. ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈԽԿԱՆՎՈՐՈՒԹՅՈՒՆ - ՄԱՆՈՒՇԱԿ ՄԿՐՏՅԱՆ - Որպես միջազգային կազմակերպությունների զարգացման ռազմավարություններում սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր բաղադրիչ՝ ընկալվում է գենդերային հավասարության խնդիրը, որը մարդկային կայուն զարգացման կարևոր սոցիալական հարթություն է: Գենդերային հավասարությունը դառնում է զարգացման կարևոր լծակ՝ նպաստելով երկրի տնտեսական աճին, աղքատության կրճատմանը և արդյունավետ պետական կառավարմանը: Միջազգային մակարդակում կանանց և տղամարդկանց մասնակցությունը քաղաքականությանը համարվում է գենդերային հավասարության կարևոր ցուցիչ: Դրա վառ օրինակը պետական կառավարման ոլորտում պաշտոնների բաշխումն է:

¹¹ www.feministki.livejournal.com, Салменниemi С., Гендерное равенство в Скандинавских странах: случай Финляндии. 10.12.2005.

Բանալի բառեր՝ գենդերային հավասարություն, տնտեսական աճ, մարդկային զարգացում, սոցիալական հարթություն, աղքատություն, հանրային ռեսուրս, արդյունավետ պետական կառավարում:

*GENDER EQUALITY AND ECONOMIC GROWTH: INDICATOR INTERDEPENDENCE- **MANUSHAK MKRTCHYAN** - As an important component of socio-economic development in the development strategies of international organizations, the problem of gender equality is perceived, which is an important social dimension of stable human development. Gender equality is becoming an important lever of development, contributing to the country's economic growth, poverty reduction and effective public management. At the international level, the participation of women and men in politics is considered an important indicator of gender equality. The prime example of this is the distribution of posts in the sphere of public management.*

***Key words:** gender equality, economic growth, human development, social dimension, poverty, public resource, effective public administration.*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ՄՀԵՐ ՔՈՒՄՈՒՆՑ** - բանասիրական գիտությունների թեկնածու
2. **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** - ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի սփյուռքահայ գրականության ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու
3. **ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ** - բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող
4. **ԱՐՄԵՆ ԱԿԱՆԵՍՅԱՆ** - բանասիրական գիտությունների թեկնածու
5. **ՏԱԹԵԿ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ** - բանասիրական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս
6. **ԶԻՆԱԻՂԱ ԲԱԼԱՅԱՆ** - բանասիրական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ դոցենտ
7. **ՍՈՍԵ ԲՈՂՈՉՅԱՆ** - ԵՊՀ ասպիրանտ
8. **ԷՂՈՒԱՐԴ ՄԿՐՏՅԱՆ** - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
9. **ԵԼԵՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ** – Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի օտար լեզուների ամբիոնի դասախոս
10. **ԷԼԼԱՂԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ** – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
11. **ՕՔՍԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ** - Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի մանկավարժության և մեթոդիկայի ամբիոնի դասախոս
12. **ԼԻՆԱ ՄԱՆԹՐՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Շուշիի տեխնոլոգիական համալսարան
13. **ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ** - իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
14. **ՄՀԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** - Շուշիի տեխնոլոգիական համալսարան, «Կաճառ» գիտական կենտրոնի ղեկավար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստազորի մայոր
15. **ԳԵՂԱՄ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ** - Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարան, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստազորի գնդապետ

- 16. ՀՈՒՓՄԻՄԵ ՄԱՐՈՆՅԱՆ** - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Կերպարվեստի ամբիոնի դասախոս
- 17. ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆՅԱՆ**- Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Կերպարվեստի
ամբիոնի դասախոս
- 18. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԱՍՅԱՆ** – փիլիսոփայական գիտությունների դոկտոր
- 19. ՍՈՆԱ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ** - Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի»
համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս
- 20. ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ** – ԱՀ վաստակավոր իրավաբան,
Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի իրավագիտության
ամբիոնի վարիչ
- 21. ԳՐԵՏԱ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ** – իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ
- 22. ԱՐՄԻՆԵ ՔԱՂՈՒՄՅԱՆ** – ԱրՊՀ-ի Իրավագիտության ամբիոնի
Մագիստրատուրայի բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի
- 23. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՐՊԱԿՅԱՆ** – Երևանի Հայ-Ռուսական Համալսարանի
ասպիրանտուրայի 3-րդ կուրսի ուսանող, «Միջազգային հարաբերությունների
քաղաքական հիմնախնդիրները, գլոբալ և տարածաշրջանային զարգացումը»
մասնագիտությամբ
- 24. ՄԵԼԱՆՅԱ ԲԱԼԱՅԱՆ** – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
- 25. ՄԱՆՈՒՇԱԿ ՄԿՐՏՉՅԱՆ** – սոցիալական գիտությունների թեկնածու, դոցենտ:

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

1. **МГЕР КУМУНЦ** - кандидат филологических наук
2. **ГРАЧЬЯ САРИБЕКЯН** - кандидат филологических наук, старший научный сотрудник отдела исследования литературы диаспоры литературного института им. М. Абеяна НАОРА
3. **АРКМЕНИК НИКОГОСЯН** - кандидат филологических наук, литературный институт им. Манука Абеяна НАОРА
4. **АРМЕН АВАНЕСЯН** - кандидат филологических наук
5. **ТАТЕВ СОГОМОНЯН** - кандидат филологических наук
старший преподаватель
6. **ЗИНАИДА БАЛАЯН** - доцент АрГУ, доктор филологических наук
7. **СОСЕ БОГОЗЯН** - аспирант ЯГУ
8. **ЭДУАРД МКРТЧЯН** - доктор филологических наук, профессор
9. **ЕЛЕНА ГРИГОРЯН** - преподаватель кафедры иностранных языков университета "Григор Нарекаци"
10. **ЭЛЛАДА БАГДАСАРЯН** - кандидат педагогических наук, доцент
11. **ОКСАНА ГАСПАРЯН** - преподаватель кафедры педагогики и методики
12. **ЛИАНА САНТРЯН** - кандидат филологических наук, доцент, Шушинский технологический университет
13. **АСМИК СТЕПАНЯН** - кандидат юридических наук, доцент
14. **МГЕР АРУТЮНЯН** - Шушинский технологический университет, руководитель научного центра «Качар», кандидат технических наук, доцент, майор запаса
15. **ГЕГАМ МИКАЕЛЯН** - Степанакертский университет «Григор Нарекаци», г. Степанакерт, к.т.н., доцент, полковник запаса
16. **РИПСИМЕ МАРОНИЯН** - Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна, Ереван, Армения
17. **ПЕТРОС МАРОНИЯН** - Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна, Ереван, Армения
18. **АЛЕКСАНДР МАНАСЯН** - доктор философских наук
19. **СОНА АМБАРЦУМЯН** - преподаватель юридической кафедры университета "Григор Нарекаци"
20. **ВЛАДИМИР ОВСЕПЯН** - заслуженный юрист РА, заведующий юридической кафедрой университета "Григор Нарекаци"
21. **ГРЕТА АРЗУМАНЯН** - кандидат юридических наук, доцент
22. **АРМИНЕ КАРДУМЯН** - студентка юридической кафедры 2 курса магистратуры
23. **ОГАНЕС БАРДАКЧЯН** - аспирант 3-го курса обучения Российско-Армянского университета по специальности «Политические проблемы международных отношений, глобального и регионального развития»
24. **МЕЛАНЯ БАЛАЯН** - кандидат исторических наук, доцент
25. **МАНУШАК МКРТЧЯН** - кандидат социологических наук, доцент.

INFORMATION ABOUT AUTHORS

1. **MHER KUMUNTS** - Candidate of Philological Sciences
2. **HRACHYA SARIBEKYAN** - NAS RA, Senior Researcher of the Diaspora Armenian Literature Study Department of Institute of Literature after Manuk Abeghyan, Candidate of Philological Sciences
3. **ARQMENIK NIKOGHOSYAN** - Candidate of Philological Sciences, Senior Researcher of the Literature Institute named after M. Abeghyan
4. **ARMEN AVANESIAN** - Candidate of Philological Sciences
5. **TATEV SOGHOMONYAN** - Candidate of Philological Sciences, Senior Lecturer at the Chair of the Armenian language and Literature, Stepanakert "Grigor Narekatsi" University
6. **ZINAIDA BALAYAN** - Ph.D. Associate Professor, ArSU
7. **SOSEH BOGHOZIAN** - Graduate student of YSU
8. **EDUARD MKRTCHYAN** - Doctor of Philology, Professor
9. **YELENA GRIGORYAN** - Lecturer of the Chair of Foreign Languages Grigor Narekatsi University of Stepanakert
10. **ELLADA BAGHDASARYAN** - M.Sc., Associate Professor
11. **OXSANA GASPARYAN** - Lecturer of the Chair of Pedagogy and Methodology at "Grigor Narekatsi" University of Stepanakert
12. **LIANA SANTRYAN** - Candidate of Philological Sciences, Associate Professor, Shushi University of Technology
13. **HASMIK STEPANYAN** - PhD of Law, Associate Professor
14. **MHER HARUTYUNYAN** - Shushi University of Technology, Head of the Kachar Research Center, Candidate of Historical Sciences, Associate Professor, Reserve Major
15. **GEGAM MIKAYELYAN** - Grigor Narekatsi University of Stepanakert, Candidate of Technical Sciences, Associate Professor, Colonel of the Reserve
16. **HRIPSIME MARONYAN** - Armenian state pedagogical university after K. Abovyan, Yerevan, Armenia
17. **PETROS MARONYAN** - Armenian state pedagogical university after K. Abovyan, Yerevan, Armenia
18. **ALEXANDER MANASYAN** - Doctor of Philosophy
19. **SONA HAMBARDZUMYAN** - Lecturer of Law Department at Stepanakert "Grigor Narekatsi" University
20. **VLADIMIR HOVSEPYAN** - Honored Lawyer of the Armenian Academy of Sciences, Head of the Law Department of "Grigor Narekatsi" University of Stepanakert
21. **GRETA ARZUMANYAN** - Candidate of Law Sciences, Associate Professor
22. **ARMINE KARDUMYAN** - 2nd year student of the Master's Department of the Chair of Law
23. **HOVHANNES BARDAKCHYAN** - 3rd year postgraduate student of the Russian-Armenian University, majoring in "Political Problems of International Relations, Global and Regional Development"
24. **MELANYA BALAYAN** - Candidate of historical sciences, associate professor
25. **MANUSHAK MKRTCHYAN** - PhD in Social Sciences, Associate Professor

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ»
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ 2 (14)-2022

Հասարակական գիտությունների հանդես

СТЕПАНАКЕРТСКИЙ УНИВЕРСИТЕТ
«ГРИГОР НАРЕКАЦИ»

ДПРАТУН 2 (14)-2022

Журнал общественных наук

STEPANAKERT «GRIGOR NAREKATSY»
UNIVERSITY

DPRATUN 2 (14)-2022

Journal of Social Sciences

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84 1/8
Ծավալը՝ 24,25 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 300